Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

**Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով**

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

3822
714

1035

208
Z-85
1874

-.50

2010

3922

# ԾԱՂԻԿ
# ՍՈՒՐԲ ԳՐՈՑ

# ԾԱՂԻԿ

# ՍՈՒՐԲ ԳՐՈՑ

ԸՆԹԵՐՑՈՒԱԾՔ

ՔԱՂԵԱԼ

ՅԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ԳՐՈՑ

Ի ՊԷՏՍ ԴՊՐՈՑԱՑ

Ի Հ. ՂԵՒՈՆԴԵԱՅ Վ. ՅՈՎՆԱՆԵԱՆ

Ի ՄԽԻԹ. ՈՒԽՏԷՆ

Բ. ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

*Ի ՎԻԷՆՆԱ*

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

ՌՅԻԳ. 1874

28534-կ.2

ՀՍՍՌ-Арм ССР
им. А. Мясникяна

11498-57

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ի բազմաց բազում անգամ լուեալ է մեր ասել, նա եւ անձամբ անձին իսկ ընդ փորձ իրացն անցեալ, եթէ չգոն մեր մատեանք՝ որ ձեռնտու օգնական մանկտւոյն յուսումն հայրենի բարբառոյն լինիցին։ Են են յազգի անդ մերում բազում Դպրութիւնք (Քերականութիւնք), որոց թիւ համարոյ՝ ըստ յաճախել դպրոցաց եւ ըստ ուսանելեացն առաւելուլ՝ յաճախէ, եւ ի բազմագոյնսն ի նոցանէ յայտնապէս իսկ տեսանին նշանք յառաջադէմն լինելոյ հայկական բարբառոյն։ Այլ զի դիւրաւ եւ պատրաստագոյնս ելանիցէ ի գլուխ ուսումն այդ, հարկ է թէ իցեն եւ այլ եւս մատեանք, որ նպաստ ի նոյն լինիցին։

Այսպիսի են, բաց յայլոց գրոց կրթութեանց, եւ Գիրք ընթերցուածոց, որ ոչ միայն ազգի ազգի խառնուածովք նիւթոցն՝ սիրելի ուսանելեաց զգրոցն ընթերցումն գործիցեն, եւ զձանձրոյթն յոր դիւրաւն սահեալ անկանին, ի բաց ի սրտից նոցա մերժիցեն, եւ պէսպէս օգտակար տեղեկութեամբք զմիտս զարդարիցեն, այլ զի եւ գործի այնպիսի լինիցին, որով մարթ լիցէ նոցա անջան եւ առանց աշխատութեան՝ զոր ընթեռնուցուն իմանալ։

Արդ ի կամել մեր՝ ըստ չափու զօրութեան մերոյ՝ զայս թերութիւն լնուլ, եւ գիրս ինչ՝ որ զվերագոյն ճառեալ հանգամանս ունիցին, մատակարարել, լաւ այնպէս թուեցաւ սկիզբն ի Գրոց սրբոց առնել, եւ Գիրս ինչ

ընթերցուածոց բանիւք նուիրական Մատենին այնորիկ եւեթ յօրինել, որ առաւել քան զայլ գրենոյն նախնեաց անկ ի սոյն կէտ նպատակի են, զի են ի նոսա խրատք գեղեցիկք եւ պատմութիւնք զարմանալիք, որպիսիս չմարթի այլուր ուրեք գտանել: Մանաւանդ իսկ զի եւ այս առաւելութիւն մերոյ թարգմանութեանս է, զի համօրէն գեղ եւ բովանդակ վայելչութիւն լեզուիս մերոյ ղեղեալ յայս աստուածեղէն Գիրս գտանի. զի է իսկ գործ առաջնոց մերոց Թարգմանչաց, որ փոյթ յանձին կալան զհայ բարբառ իւրով մեծատունն մեծութեամբ արկանել ի կիր՝ ի հանել իւրեանց զԳիրս սուրբս ի մեր լեզու:

Երկու մասունք են Գրոցս: Յառաջնում բաժնի անդ են իմաստուն բանք խրատուց, որ բազում առատութեամբ յամենայն Գիրս աստուածաշունչս գտանին սփռեալ, եւ են իսկ հիմունք վարդապետութեան կրօնից եւ ուսումն բարոյից եւ զգօնութեան: Զայս բանս՝ յուրոց մի մի իւրաքանչիւր են խօսք անթերի, ի կարգ արկեալ տողեցաք՝ յայլեւայլ գլուխս ըստ պէսպէս նիւթոյն հատեալ, եւ ի կատարածի գլխոցն իւրաքանչիւր եւ պատմութիւնս եւս՝ որ յանկ եւ մերձաւոր յայն նիւթս են, ի նոցին Գրոց յաւելաք: Եւ են այս պատմութիւնք՝ երկրորդ բաժին Գրոցս:

Զբանս խրատուցն, բայց միայն ի սակաւուց ոմանց, առանց իրիք փոփոխութեան եւ առանց կարճելոյ կամ ընդ մէջ զկարգն հատանելոյ եդաք, նովին օրինակաւ ամենեւին, որպէս ի սուրբ Գիրսն գտանին: Իսկ ի պատմութիւնսն, թէպէտ ոչ մի բան եւ ոչ կէս բանի ի մէնջ մուծանել կամ յաւելուլ ժտեցաք եւ կամ թէ փոխեցաք ինչ, այլ բազում անգամ հարկ անձին համարեցաք համառօտել զկարի երկայնաձիգ բանսն: Դարձեալ եւ ուրեք երբեք զմի մասնն՝ ի գրոց ինչ, եւ զմիւսն՝ յայլոց ինչ գրոց (զոր օրինակ Թագաւորաց եւ Մնացորդաց, յերկուց կամ յերից Աւետարանագրաց) առեալ յարեցաք ի միմեանս. եւ ի միում տեղւոջ կամ յերկուս զյառաջագոյն գրեալսն յետոյ կարգեցաք, զի այնպէս իմն բովանդակութիւնն պահանջէր, յետ յապաւելոյ զոր յապաւե-



ցաքն: Բազում անգամ ի բաց թողաք եւ զէ—ն բան, եւ զձեւս ինչ բանից՝ որ առանձինն իմն եբրայական բարբառոյ են, որպիսի է՝ օրհնելով օրհնեցից, եւ տեսանելով տեսի, այլովքն հանդերձ. զի եւ չէ իսկ հնար յամենայն բանս խառնիխուռն վարել նոքիմբք:

Կամեցաք իմն յաշակերտացն դիւրութիւն յաւելուլ ուրեք ուրեք եւ մեկնութիւնս, կամ թէ զթարգմանութիւնն ի ռամկաց բարբառ դնել առընթեր: Այլ ապա լաւ եւս համարեցաք յօրինել առանձինն բառագիրս, յորում ոչ միայն զամենայն բանս՝ որ ի գիրս յայսմիկ բովանդակեալ կան, գտանիցեն աշակերտք, այլ եւ զդժուարին ինչ տեղեաց զմեկնութիւն:

Ակն ունիմք եթէ հաճեսցին ընդ դոյզն աշխատութիւնս մեր եւ ուսուցիչք, որոց գործի ինչ այնպիսի լինիցի՝ որ փոքրոգի զբեռն ծանրաբեռն զուսուցչութեան նոցա առնիցէ, եւ ծնողք իսկ, որ գէթ առ ժամանակ մի զերծցին սովին ի բազում ծախուց այլեւայլ գրոց գնելոյ: Եւ ոչ այսչափ միայն, այլ եւ համարիմք իմն այնպէս եթէ ոչ միայն մանկտւոյն՝ որ յուսումն հայրենի լեզուին պարապիցեն, օգտակար լինիցին Գիրքս այս. այլ եւ ո՛ եւ պէտ ոք իբրեւ ընթերցուած ինչ շայեկան կարիցէ արկանել ի կիր: Եւ չհամարիցի մեզ յանդգնութիւն ասել, եթէ եւ վասն քարոզաց իսկ բանին եւ ուսուցչաց կրօնից չլինիցի անօգուտ. զի զոր թերեւս ժամս ձիգս ի մատեանս աստուածեղէնս խնդրել պարտ էր, ի սակաւ ժամանակի օգնականութեամբ Գրոցս կարիցեն գտանել:

# ԾԱՂԻԿ
# ՍՈՒՐԲ ԳՐՈՑ

---

## ԳԼՈՒԽ Ա.

*Աստուածութիւն:*

---

### Ա.

Մեծութիւն, զօրութիւն, սրբութիւն եւ արդարութիւն նորա։

1. Տէր Աստուած մեր՝ Տէր մի է, եւ չիք այլ ոք բաց ի նմանէ։ Բ. Օր. Զ. 4. Դ. 35.

2. Քո է, Տէր, մեծութիւն եւ զօրութիւն եւ կարողութիւն։ Ա. Մնաց. ԻԹ. 11.

3. Մեծ է Տէր եւ օրհնեալ է յոյժ, եւ մեծութեան նորա ոչ գոյ չափ։ Սղմ. ՃԽԴ. 3.

4. Մեծ է Տէր մեր, եւ մեծ է զօրութիւն նորա, եւ իմաստութեան նորա ոչ գոյ բաւ։ Սղմ. ՃԽԶ. 5.

5. Տէր բարձրեալ եւ ահաւոր, թագաւոր մեծ ի վերայ ամենայն երկրի։ Սղմ. ԽԶ. 3.

6. Կամաց նորա ոչ ոք կայ հակառակ։ Հռ. Թ. 19.

7. Զոր սուրբն Աստուած խորհեցաւ, ո՞վ իցէ՝ որ զայն ցրիցէ։ Ես. ԺԴ. 27.

8. Ո՞վ է այն՝ որ կարող լինիցի զարդարել զոր Աստուածն խանգարիցէ։ Ժող. Է. 14.

9. Ոչ ոք է՝ որ ընդդէմ կայ քեզ։ Եսթ. ԺԳ. 9.

10. Զօրութեան բազկի քո ո՞վ է՝ որ ընդդէմ դառնայցէ։ Իմ. ԺԱ. 22.

11. Դու ամենեցուն՝ որք են յերկինս եւ ի վերայ երկրի, տիրես։ Ա. Մնաց. ԻԹ. 11.

12. Դու ես Աստուած՝ որ տիրես ամենայն զօրութեանց եւ իշխանութեանց։ Յուդ. Թ. 19.

13. Դու ես ամենեցուն իշխան եւ տէր, եւ իշխան ամենայն իշխանութեանց։ Ա. Մնաց. ԻԹ. 12.

14. Բարձրեալ ես դու յերկինս, Ա՛ստուած, եւ յամենայն երկրի են փառք քո։ Սղմ. ԾԶ. 6.

15. Դու տիրես ի վերայ ամենայնի, եւ ոչ ոք է՝ որ հակառակ կայ քում տէրութեանդ։ Եզր. ԺԳ. 11.

16. Կենաց եւ մահու դու ունիս իշխանութիւն. ի քումէ ձեռանէ փախչել անհնարին է։ Իմ. ԺԶ. 13. 15.

17. Արդար եւ անարատ է Տէր։ Բ. Օր. ԼԲ. 4.

18. Աստուած դատաւոր, արդար, հզօր եւ երկայնամիտ։ Սղմ. Է. 12.

19. Արդար է Տէր, զարդարութիւն սիրէ։ Սղմ. Ժ. 8.

20. Աստուած հաւատարիմ է, եւ ոչ գոյ ի նմա անիրաւութիւն։ Բ. Օր. ԼԲ. 4.

21. Ոչ գոյ սուրբ իբրեւ զՏէր, եւ ոչ գոյ արդար իբրեւ զԱստուած մեր։ Ա. Թագ. Բ. 2.

22. Ամենայն գործք Աստուծոյ արդարութեամբ են։ Առ. ԺԶ. 7.

23. Արդար է Տէր յամենայն ճանապարհս իւր, եւ սուրբ է յամենայն ի գործս իւր։ Սղմ. ՃԽԴ. 17.

## Բ.

### Արարիչ եւ արարած։

1. Զամենայն ինչ գործէ Տէր վասն իւր։ Առ. ԺԶ. 4.

2. Տեառն է երկիր լրիւ իւրով, աշխարհ եւ ամենայն բնակիչք նորա։ Սղմ. ԻԳ. 1.



3. Իսկզբանէ արար Աստուած զերկին եւ զերկիր։ Ծննդ. Ա. 1.

4. Արար զերկինս եւ զերկիր, զծով եւ զամենայն՝ որ է ի նոսա։ Սղմ. ՃԽԵ. 6.

5. Աստուած մեր յերկինս եւ յերկրի, զամենայն՝ զոր ինչ կամեցաւ եւ արար։ Սղմ. ՃԺԳ. 3.

6. Նա ասաց եւ եղեն, հրամայեաց եւ հաստատեցան։ Սղմ. ՃԽԸ. 5.

7. Ի ձեռս նորա են ամենայն տիեզերք։ Նորա է ծով եւ նա արար զնա, եւ զցամաք ձեռք նորա ստեղծին։ Սղմ. ՂԴ. 4. 5.

8. Իսկզբանէ, Տէր, զհիմունս երկրի հաստատեցեր, եւ գործք ձեռաց քոց երկինք են։ Սղմ. ՃԱ. 26.

9. Քանզի զի՞նչ կայր ինչ, եթէ դու ոչ կամէիր։ Իմ. ԺԱ. 26.

10. Նոքա անցանեն, եւ դու կաս եւ մնաս յաւիտեան։ Սղմ. ՃԱ. 27.

11. Ամենեքեան որպէս զձորձս մաշեսցին. բայց դու նոյն իսկ ես, ամք քո ոչ անցանեն։ Սղմ. ՃԱ. 27. 28.

12. Որպէս զի մեծ են գործք քո, Տէր. զամենայն ինչ իմաստութեամբ արարեր։ Սղմ. ՃԳ. 24.

13. Ետես Աստուած զամենայն՝ զոր արար, եւ ահա բարի են յոյժ։ Ծննդ. Ա. 31.

14. Գործ Տեառն ամենայն բարի են։ Սիր. ԼԹ. 39.

15. Չէ ասել թէ զի՞ այս, կամ է՞ր այս. զի ամենայն ի պէտս իւրեանց հաստատեալ են։ Սիր. ԼԹ. 26.

16. Ոչ է ասել թէ այս քան զայն յուռագոյն է, զի ամենայն ինչ ի ժամանակի ընտիրք եղիցին։ Սիր. ԼԹ. 40.

17. Ի մեծութենէ եւ ի գեղեցկութենէ արարածոց ըստ նմին համեմատութեան եւ արարչագործն նոցա երեւի։ Իմ. ԺԳ. 5.

18. Զի աներեւոյթք նորա՝ արարածովքս իմացեալ տեսանին, այսինքն է՝ մշտնջենաւորութիւն եւ զօրութիւն եւ աստուածութիւն նորա: Հռ. Ա. 20.

## Գ.

### Աստուած եւ մարդ:

1. Աստուած հարց, դու ես՝ որ արարեր զամենայն բանիւ քով եւ իմաստութեամբ քով կազմեցեր զմարդն: Իմ. Թ. 1. 2.

2. Զի տիրեսցէ արարածոց ի քէն եղելոց, եւ վարեսցէ զաշխարհ սրբութեամբ եւ արդարութեամբ. Իմ. Թ. 3.

3. Տէր հաստեաց ի հողոյ մարդ, եւ ըստ պատկերի իւրոյ արար զնա: Սիր. ԺԷ. 1. 3.

4. Խորհուրդ եւ լեզու եւ աչս եւ ականջս եւ սիրտ ետ, եւ զչար եւ զբարի եցոյց նոցա: Սիր. ԺԷ. 5. 6.

5. Ինքն իսկզբանէ արար զմարդ եւ եթող զնա ի ձեռս կամաց իւրոց: Սիր. ԺԵ. 14.

6. Առաջի մարդոյ կեանք եւ մահ, եւ զինչ հաճոյ թուեսցի իւր՝ տացի նմա: Սիր. ԺԵ. 18.

7. Եդ առաջի քո հուր եւ ջուր. ուր եւ կամիս՝ ձգես զձեռն քո: Սիր. ԺԵ. 17.

8. Եթէ կամիս, պահեսցես զպատուիրանս: Սիր. ԺԵ. 16.

9. Աստուած հաստատեաց զմարդն յանեղծութեան. Իմ. Բ. 23.

10. Աստուած զմահ ոչ արար, եւ ոչ խնդայ ընդ կորուստ կենդանեաց: Իմ. Ա. 13.

11. Իսկ ամպարիշտք ձեռօք եւ բանիւք կոչեցին զնա առ իւրեանս: Իմ. Ա. 15.

12. Արար Աստուած զմարդն ուղիղ, եւ նոքա խնդրեցին զխորհուրդս չարութեան: Ժող. Է. 30.



13. Նախանձու բանսարկուին եմուտ մահ յաշխարհ: Իմ. Բ. 24.

14. Տեսի ես զամենայն արարեալս. եւ ահա ամենայն ինչ ընդունայնութիւն է: Ժող. Ա. 14.

15. Ամենայն մարմին իբրեւ զխոտ է, եւ ամենայն փառք մարդոյ իբրեւ զծաղիկ խոտոյ: Ա. Պետր. Ա. 24.

16. Ամենայն մարմին որպէս հանդերձ մաշի. զի ուխտ ի յաւիտենից հետէ այն է թէ մահու մեռցիս: Սիր. ԺԴ. 18.

17. Մարդոյ որպէս խոտոյ են աւուրք իւր, որպէս ծաղիկ վայրի այնպէս ծաղկէ: Սղմ. ՃԲ. 15.

18. Շնչէ ի նմա հողմ եւ ոչ է, եւ ոչ եւս երեւի տեղի նորա: Սղմ. ՃԲ. 16.

19. Մարդիկ ամենայն հող են եւ մոխիր: Սիր. ԺԷ. 31.

20. Ամենայն ի մի տեղի երթայ. ամենայն եղեւ ի հողոյ, եւ ամենայն դառնայ ի հող: Ժող. Գ. 20.

21. Ամենայն ինչ՝ որ յերկրէ է, յերկիր երթիցէ: Սիր. ԽԱ. 13.

22. Որպէս ել յորովայնէ մօր իւրոյ մերկ, դառնայ երթալ, եւ ոչինչ առցէ ի վաստակոյ իւրմէ: Ժող. Ե. 14.

23. Յիշեա զարարիչն քո յաւուրս մանկութեան քո, մինչ չեւ հասեալ իցեն աւուրք չարութեան, եւ դարձցի հողն յերկիր, եւ հոգին դարձցի առ Աստուած՝ որ ետն զնա: Ժող. ԺԲ. 1. 7.

## Դ.

### Թէ յամենայն տեղիս է Աստուած եւ զամենայն տեսանէ:

1. Աստուած մերձաւոր եմ ես, եւ ոչ Աստուած հեռաւոր: Երեմ. ԻԳ. 23.

2. Միթէ զերկինս եւ զերկիր ես ո՞չ լնում, ասէ Տէր: Երեմ. ԻԳ. 24.

3. Եթէ թաքիցէ մարդ ի թաքստեան, եւ ես ոչ տեսից զնա: Երեմ. ԻԳ. 24.

4. Մի ասիցես եթէ ի Տեառնէ թաքեայց, եւ ի բարձանց ո՞ յիշեսցէ զիս: Սիր. ԺԶ. 16.

5. Գործ ամենայն մարմնոյ առաջի նորա, եւ ոչ գոյ թաքչել յաչաց նորա: Սիր. ԼԹ. 24.

6. Յո՞ երթայց ես յոգւոյ քումէ, եւ կամ յերեսաց քոց ես յո՞ փախեայց: Սղմ. ՃԼԸ. 7.

7. Թէ ելանեմ յերկինս, դու անդ ես. եւ թէ իջանեմ ի դժոխս, եւ անդ մօտ ես: Սղմ. ՃԼԸ. 8.

8. Խաւարն քեզ ոչ խաւարանայ, եւ գիշերն որպէս տիւ լուսաւոր եղիցի: Սղմ. ՃԼԸ. 12.

9. Որ տնկեաց զունկն՝ ինքն ո՞չ լուիցէ, կամ որ ստեղծ զակն՝ ինքն ո՞չ տեսանիցէ: Սղմ. ՂԳ. 9.

10. Աչք Տեառն բիւրապատիկ քան զարեգակն լուսաւորագոյն է: Սիր. ԻԳ. 28.

11. Յամենայն տեղիս աչք Տեառն դիտեն զչարիս եւ զբարիս: Առ. ԺԵ. 3.

12. Ճանապարհք նոցա առաջի նորա յամենայն ժամ, ոչ թաքիցեն յաչաց նորա: Սիր. ԺԷ. 13.

13. Չիք արարած աներեւոյթ յերեսաց նորա. այլ ամենայն ինչ մերկապարանոց կայ առաջի աչաց նորա: Եբր. Դ. 13.

14. Առաջի աչացն Աստուծոյ են ճանապարհք առն, եւ յամենայն շաւիղս նորա դիտէ: Առ. Ե. 21.

15. Երիկամանց նորա է վկայ Աստուած, եւ սրտի նորա՝ ստուգական ճշմարիտ, եւ լեզուի նորա՝ ունկնդիր: Իմ. Ա. 6.

16. Որպէս փորձի ի բովս արծաթ եւ ոսկի, նոյնպէս ընտրէ զսիրտս Աստուած: Առ. ԺԷ. 3.

17. Զամենայն սիրտ քննէ Տէր եւ զամենայն խորհուրդս ճանաչէ: Ա. Մնաց. ԻԸ. 9.

18. Քննիչ է մտաց եւ խորհրդոց սրտից: Եբր. Դ. 12.

19. Տէր, դու զամենեցուն զսիրտս գիտես եւ ճանաչես: Գործ. ԺԴ. 15.



20. Ես Տէր քննեմ զսիրտս եւ փորձեմ զերիկամունս, տալ իւրաքանչիւր ըստ ճանապարհաց իւրոց: Երեմ. ԺԷ. 10.

## Ե.

### Թէ բազմագութ է Տէր եւ ամենեւեան խնամէ:

1. Ոչ հեռի իսկ է (Աստուած) յիւրաքանչիւր ումեքէ ի մէնջ. զի նովաւ կեամք եւ շարժիմք եւ եմք: Գործ. ԺԷ. 27. 28.

2. Ողորմած եւ գթած է Տէր Աստուած, երկայնամիտ եւ բազումողորմ: Յովէլ. Բ. 13.

3. Քաղցր է Տէր առ ամենեսեան, եւ գթութիւն նորա ի վերայ ամենայն արարածոց իւրոց: Սղմ. ՃԽԴ. 9.

4. Անկցուք ի ձեռս Տեառն եւ մի ի ձեռս մարդկան. զի որպէս մեծութիւն նորա, նոյնպէս ողորմութիւն նորա: Սիր. Բ. 22. 23.

5. Գթած եւ ողորմած է Տէր, եւ փրկեսցէ ի ժամանակի նեղութեան: Սիր. Բ. 13.

6. Որպէս գթայ հայր ի վերայ որդւոց իւրոց, այնպէս գթասցի Տէր յերկիւղածս իւր: Սղմ. ՃԲ. 13.

7. Միթէ մոռանայցէ՞ կին զմանուկ իւր. եւ եթէ մոռանայցէ զայն կին, սակայն ես ոչ մոռացայց զքեզ, ասէ Տէր: Ես. ԽԹ. 15.

8. Որպէս մայր՝ որ զմանուկ իւր գգուիցէ, այնպէս գգուեցից զձեզ: Ես. ԿԶ. 13.

9. Փայփայեցից զնոսա, որպէս փայփայէ հայր զորդի զբարւոք ծառայեալն նմա: Մաղ. Գ. 17.

10. Ոչ առնու ակն ամենեցունց Տէրն, եւ զմի օրինակ խնամ ունի ամենեցուն: Իմ. Զ. 8.

11. Ողորմութիւն Տեառն ի վերայ ամենայն մարմնոյ. յանդիմանէ եւ խրատէ եւ ուսուցանէ, եւ դարձուցանէ իբրեւ հովիւ զհօտ իւր: Սիր. ԺԸ. 12. 13.

12. Սիրես զամենայն՝ որ ինչ է, եւ ոչ գարշիս յումեքէ՝ յորոց արարեր. զի ոչ եթէ առ ատել հաստատեցեր ինչ: Իմ. ԺԱ. 25.

13. Դու, Աստուած մեր, ողորմութեամբ դարմանես զամենայն: Իմ. ԺԵ. 1.

14. Դու՝ որ տիրեսդ զօրութեամբ, հեզութեամբ դատիս. եւ բազում խնամութեամբ դարմանես զմեզ: Իմ: ԺԲ. 18.

15. Աչք ամենեցուն ի քեզ յուսան, եւ դու տաս կերակուր նոցա ի ժամու: Սղմ. ՃԽԴ. 15.

16. Բանաս զձեռն քո, կերակրես զամենեւեան քաղցրութեամբ կամօք քովք: Սղմ. ՃԽԴ. 16.

17. Ամենեքեան քեզ սպասեն, եւ դու տաս կերակուր նոցա ի ժամու: Սղմ. ՃԳ. 27.

18. Ոչ սովամահ առնէ Տէր զանձն արդարոյ: Առ. Ժ. 3.

19. Աչք Տեառն ի վերայ երկիւղածաց իւրոց, փրկել ի մահուանէ զանձինս նոցա, կերակրել զնոսա ի սովի: Սղմ. ԼԲ. 18. 19.

20. Աստուած տայ մեզ զամենայն առատապէս ի վայելել: Ա. Տիմ. Զ. 17.

21. Ընկեա ի Տէր զհոգս քո, եւ նա կերակրէ զքեզ: Սղմ. ԾԴ. 23.

22. Զամենայն հոգս ձեր ընկեցէք ի նա. զի նա է՝ որ հոգայ վասն ձեր: Ա. Պետր. Ե. 7.

23. Եթէ զխոտն Աստուած այնպէս զգեցուցանէ, ո՞րչափ եւս առաւել զձեզ: Ղուկ. ԺԲ. 28.

24. Հայեցարուք ընդ ագռաւս, զի ո՛չ սերմանեն եւ ո՛չ հնձեն, եւ Աստուած կերակրէ զնոսա. ո՞րչափ եւս առաւել զձեզ՝ որ լաւ էք քան զթռչունս: Ղուկ. ԺԲ. 24.

25. Ամենայն մարդ՝ որ ուտիցէ եւ ըմպիցէ, այն պարգեւ Աստուծոյ է: Ժող. Գ. 13.

26. Քանզի ո՞վ իցէ՝ որ ուտիցէ եւ ըմպիցէ առանց նորա: Ժող: Բ. 25.



27. Օրհնեա զարարիչն քո, որ արբուցանէ զքեզ ի բարեաց իւրոց: Սիր. ԼԵ. 17.

28. Եթէ ոչ Տէր շինէ զտուն, ի նանիր վաստակին շինողք նորա: Սղմ. ՃԻԶ. 1.

29. Եթէ ոչ Տէր պահէ զքաղաք, ընդունայն տքնին պահապանք նորա: Սղմ. ՃԻԶ. 1.

1148-57

## ՕՐԻՆԱԿՔ

### 1.

Յայտնի Աստուած Մովսէսի ի Քորեբ:

Մովսէս արածէր զխաշինս Յոթորայ աներոյ իւրոյ. ած զխաշինսն յանապատ, եւ եկն ի լեառնն Աստուծոյ ի Քորեբ: Եւ երեւեցաւ նմա հրեշտակ Տեառն բոցով հրոյ ի միջոյ մորենւոյ: Եւ տեսանէր զի մորենին վառեալ էր հրով, եւ ոչ այրէր մորենին: Եւ ասէ Մովսէս. Անցեալ տեսից զտեսիլն զայն մեծ, զի՞ է զի ոչ այրի մորենին: Իբրեւ ետես Տէր եթէ մերձենայ տեսանել, կոչեաց զնա, ասէ. Մո՛վսէս, Մո՛վսէս, մի մերձենար այսր, զի տեղիդ՝ յորում կաս դու ի դմա, երկիր սուրբ է: Ես եմ Աստուած հօր քոյ, Աստուած Աբրահամու եւ Աստուած Սահակայ եւ Աստուած Յակոբայ: Եւ դարձոյց Մովսէս զերեսս իւր, քանզի երկնչէր հայել առաջի Աստուծոյ: Եւ ասէ Տէր ցՄովսէս. Տեսի զչարչարանս ժողովրդեան իմոյ, որ յԵգիպտոս, եւ իջի փրկել զնոսա ի ձեռաց Եգիպտացւոցն, եւ տանել զնոսա յերկիրն բարի եւ յընդարձակ: Եւ արդ եկ առաքեցից զքեզ առ փարաւոն արքայ Եգիպտացւոց: Եւ ասէ Մովսէս ցԱստուած. Ո՞վ եմ ես, զի երթայցեմ առ փարաւոն: Ահա ես երթեալ առ որդիսն Իսրայէլի ասիցեմ ցնոսա. Աստուած հարցն ձերոց առաքեաց զիս առ ձեզ, եւ հարցանիցեն զիս թէ զի՞նչ անուն է նորա, զի՞նչ ասացից ցնոսա: Եւ ասէ Աստուած ցՄով-



Гос. Библиотека

սէս. Ես եմ Աստուած որ էն։ Այսպէս ասասցես ցորդիսն Իսրայելի. Որ էն առաքեաց զիս առ ձեզ. այս է անուն իմ յաւիտենական։

Ել. Գ. 1 — 15.

## 2.

### Եղիա եւ ողջակէզ իւր։

Մերձեցոյց Եղիա զամենայն ժողովուրդն եւ ասէ ցնոսա. Մինչեւ ցե՞րբ կաղայք յերկուս հետս. եթէ Տէր է Աստուած, երթայք զհետ նորա. եւ եթէ Բահաղն իցէ, երթայք զհետ նորա։ Ես մնացեալ եմ մարգարէ Տեառն միայն, եւ մարգարէք Բահաղու՝ արք չորեքհարիւր եւ յիսուն։ Տացեն մեզ երկուս եզինս, եւ ընտրեսցեն իւրեանց զմին, եւ յօշեսցեն եւ դիցեն ի վերայ փայտից, եւ հուր մի դիցեն. եւ ես արարից զմիւս եզն եւ եդից ի վերայ փայտից, եւ հուր ոչ մատուցից։ Եւ կարդասջիք զանուն աստուածոյն ձերոյ, եւ ես կոչեցից զանուն Տեառն Աստուծոյ իմոյ. եւ Աստուած՝ որ լուիցէ հրով, նա է Աստուած։ Եւ առին (մարգարէքն ամօթոյ) զզուարակն՝ զոր ետ նոցա, եւ արարին եւ կարդացին զանուն Բահաղու յայգուէ մինչեւ ցհասարակ օր. եւ ասէին. Լուր մեզ, Բա՛հաղ, լուր մեզ։ Եւ ո՛չ գո՛յր բարբառ եւ ո՛չ ունկնդրութիւն։

Եւ այպանեաց ի միջօրէին զնոսա Եղիա եւ ասէ. Մեծաձայն կարդացէք, զի աստուած է. թերեւս զբօսանք ինչ իցեն նմա, կամ թէ ի քուն իցէ եւ յառնիցէ։ Եւ իբրեւ մերձեցան յընթրեկին, խօսեցաւ Եղիա ընդ մարգարէս գարշելեացն եւ ասէ. Ի բաց կացէք. արդ ես արարից զողջակէզն իմ։ Եւ ի բաց կացին եւ գնացին։ Եւ առ Եղիա երկոտասան քար եւ շինեաց զքարինսն յանուն Տեառն. եւ եդեղ զշերտսն ի վերայ սեղանոյն՝ զոր արար, եւ յօշեաց զողջակէզն եւ եդեղ ի վերայ



շերտիցն։ Եւ ասէ. Առէք ինձ չորս սափորս ջրոյ եւ հեղէք ի վերայ ողջակիզին եւ ի վերայ շերտիցդ։ Եւ ասէ. Կրկնեցէք. եւ կրկնեցին։ Եւ ասէ. Երեքկնեցէք. եւ երեքկնեցին։ Գնայր ջուրն շուրջ զսեղանովն։ Եւ աղաղակեաց Եղիա յերկինս եւ ասէ. Լուր ինձ, Տէր, լուր ինձ հրով. եւ ծանիցէ ժողովուրդս թէ դու ես Տէր Աստուած։ Եւ անկաւ հուր յերկնից եւ եկեր զողջակէզն եւ զշերտսն։ Իբրեւ ետես ամենայն ժողովուրդն, անկան ի վերայ երեսաց իւրեանց եւ ասեն. Արդարեւ Տէր՝ նա է Աստուած, Տէր՝ նա է Աստուած։

Գ. Թագ. ԺԸ. 21—40.

## 3.

### Դանիէլ կործանէ զԲէլ։

Էին կուռք մի Բաբելացւոց՝ անուն Բէլ, եւ ելանէր նմա ռոճիկ՝ աւուր միոջ, նաշիհ երկոտասան արդու եւ քառասուն ոչխար եւ գինի վեց մար. եւ թագաւորն պաշտէր զնա։ Բայց Դանիէլ պագանէր երկիր Աստուծոյ իւրոյ։ Ասէ ցնա թագաւորն. Դու ընդէ՞ր ոչ երկիր պագանես Բելայ։ Եւ նա ասէ. Քանզի ոչ պաշտեմ զկուռս ձեռագործս, այլ զԱստուած կենդանի, զարարիչն երկնի եւ երկրի։ Եւ ասէ ցնա թագաւորն. Իսկ Բէլ ո՞չ թուի քեզ թէ իցէ Աստուած կենդանի. եթէ ո՞չ տեսանիցես որչափ ուտէ եւ ըմպէ հանապազ։ Ասէ Դանիէլ ծիծաղելով. Մի խաբիր, ա՛րքայ, զի դա է ի ներքոյ կաւեայ եւ արտաքոյ պղնձի. ո՛չ կերեալ դորա երբէք եւ ո՛չ արբեալ։ Բարկացեալ թագաւորն, կոչեաց զքուրմս նորա եւ ասէ ցնոսա. Եթէ ոչ ասիցէք ինձ ո՛վ ուտէ զսեղանն զայն, մահու մեռանիցիք։ Եկն թագաւորն Դանիելիւ հանդերձ ի տուն Բելայ. եւ ասեն քուրմք Բելայ. Ահաւասիկ մեք արտաքս ելցուք, եւ դու, ա՛րքայ, դիր առաջի դորա զկերակուրդ, եւ զգինիդ խառնեալ

դիցես, եւ փակեա զդուրսդ եւ կնքեա մատանեաւ քով. եւ եկեալ ընդ առաւօտս՝ եթէ ոչ գտցի այդ ամենայն կերեալ ի Բելայ, մեռցուք մեք. ապա թէ ոչ՝ Դանիէլ, որ սուտ խօսեցաւ զմէնջ: Եւ նոքա վստահ էին, զի արարեալ էին ընդ սեղանովն մուտ անյայտ, եւ ընդ այն մտանէին հանապազ եւ ուտէին զայն: Իբրեւ ելին արտաքս եւ թագաւորն եդ զկերակուրն առաջի Բելայ, հրաման ետ Դանիէլ իւրում մանկտւոյ, եւ բերին մոխիր եւ ցանեցին ընդ ամենայն մեհեանն առաջի թագաւորին միայնոյ. եւ ելեալ արտաքս՝ փակեցին զդուռնն, եւ կնքեցին մատանեաւ թագաւորին եւ գնացին: Եւ քուրմքն մտին գիշերի ըստ սովորութեան իւրեանց, կանամբք եւ որդւովք իւրեանց, կերան զամենայն եւ արբին եւ ոչինչ թողին: Կանխեաց թագաւորն ընդ առաւօտն Դանիելիւ հանդերձ, եւ ասէ. Ո՞ղջ են կնիքդ, Դանիէլ: Եւ նա ասէ. Ողջ են, արքայ: Եւ ընդ բանալ դրանցն՝ հայեցեալ թագաւորին ի սեղանն, ի ձայն մեծ աղաղակեաց եւ ասէ. Մեծ ես, Բէլ, եւ ոչ գոյ նենգութիւն ի քեզ եւ ոչ մի: Ծիծաղեցաւ Դանիէլ եւ կալաւ զթագաւորն զի մի մտցէ ի ներքս, եւ ասէ. Աղէ հայեաց ընդ յատակդ, եւ տես ո՞յր է հետդ այդ: Ասէ թագաւորն. Տեսանեմ հետ արանց, կանանց եւ մանկտւոյ: Յայնժամ բարկացեալ թագաւորն՝ կալաւ զքուրմսն, եւ ցուցին նմա զգաղտնի դուրսն՝ ընդ որ մտանէին եւ ծախէին զսեղանն: Կոտորեաց զնոսա թագաւորն եւ զԲէլ ետ ի ձեռս Դանիելի, եւ կործանեաց զնա եւ զմեհեան նորա:

Դան. ԺԴ. 2—21.

## 4.

### Ստեղծումն եւ անկումն Ադամայ:

Ասաց Աստուած. Արասցուք մարդ ըստ պատկերի մերում եւ ըստ նմանութեան, եւ իշխեսցեն



ձկանց ծովու, եւ թռչնոց երկնից, եւ անասնոց, եւ ամենայն երկրի: Ստեղծ Տէր Աստուած զմարդն հող յերկրէ, եւ փչեաց յերեսս նորա շունչ կենդանի. եւ եղեւ մարդն յոգի կենդանի: Եւ տնկեաց զդրախտն եւ եդ անդ զմարդն՝ գործել զնա եւ պահել: Եւ պատուիրեաց Տէր Աստուած Ադամայ եւ ասէ. Յամենայն ծառոց՝ որ է ի դրախտիդ, կերիցես. բայց ի ծառոյն գիտութեան բարւոյ եւ չարի մի ուտիցէք, զի յորում աւուր ուտիցէք ի նմանէ, մեռանիցիք: Եւ ասէ օձն ցկինն. Գիտէր Աստուած թէ յորում աւուր ուտիցէք ի նմանէ, բանայցեն աչք ձեր՝ ճանաչել զբարի եւ զչար: Ետես կինն զի բարի էր ծառն ի կերակուր. առ ի պտղոյ նորա, եկեր, եւ ետ առն իւրում, եւ կերան: Եւ լուան զձայն զգնալոյ Տեառն Աստուծոյ ի դրախտի անդ, եւ թաքեան ի մէջ ծառոց դրախտին: Եւ ասէ Տէր Աստուած ցկինն. Տրտմութեամբ ծնցես որդիս, եւ այր քո տիրեսցէ քեզ: Եւ ցԱդամ ասէ. Քրտամբք երեսաց քոց կերիցես զհաց քո, մինչեւ դարձցիս յերկիր՝ ուստի առար, զի հող էիր եւ ի հող դարձցիս: Եւ եհան արձակեաց զնոսա ի դրախտէ անտի, գործել զերկիր՝ ուստի առաւ:

Ծննդ. Ա. — Գ.

## 5.

### Տեսիլ Յակոբայ:

Արձակեաց Իսահակ զՅակոբ, եւ գնաց ի Միջագետս Ասորւոց: Հասեալ ի տեղի մի, ննջեաց անդ, քանզի արեւն ի մուտս էր: Եւ առ ի քարանց տեղւոյն եւ եդ ընդ սնարս իւր, եւ ննջեաց ի տեղւոջն յայնմ: Եւ ետես տեսիլ. սանդուղք հաստատեալ յերկրի, որոյ գլուխ իւր հասանէր մինչեւ յերկինս. Հրեշտակք Աստուծոյ ելանէին եւ իջանէին ընդ նա, եւ Տէր հաստատեալ կայր ի

նմա: Եւ ասէ. Ես եմ Տէր Աստուած Աբրահամու. մի երկնչիր, զի զերկիրդ՝ յորում դուդ ննջեցեր, քեզ տաց զդա եւ զաւակի քում, եւ օրհնեսցին ի քեզ ամենայն ազգք երկրի: Ես ընդ քեզ եմ՝ պահել զքեզ, ոչ թողից զքեզ: Զարթեաւ Յակոբ ի քնոյ անտի իւրմէ եւ ասէ. Տէր է ի տեղւոջս յայսմիկ: Յարեաւ ընդ առաւօտն, առ զվէմն՝ զոր եդ ընդ սնարս իւր, եւ կանգնեաց զնա արձան. ուխտեաց եւ ասէ. Եթէ եղիցի Տէր Աստուած ընդ իս, եւ տացէ ինձ հաց ուտելոյ եւ հանդերձ զգենլոյ, եւ դարձուսցէ զիս ողջութեամբ ի տուն հօր իմոյ, վէմս՝ զոր կանգնեցի, եղիցի ինձ տուն Աստուծոյ:

ԾՆՆԴ. ԻԸ. 5—22.

## 6.

### Ագար եւ Իսմայէլ:

Տեսեալ Սառայի զորդին Ագարայ Եգիպտացւոյ, որ եղեւ Աբրահամու, զի խաղայր ընդ Իսահակայ որդւոյ իւրում, եւ ասէ ցԱբրահամ. Ի բաց հան զաղախինդ եւ զորդի դորա. զի մի ժառանգեսցէ որդի աղախնոյդ ընդ որդւոյ իմում Իսահակայ: Եւ խիստ թուեցաւ բանն առաջի Աբրահամու վասն որդւոյ նորա: Եւ ասէ Աստուած ցԱբրահամ. Մի ինչ խիստ թուեսցի առաջի քո վասն մանկանն եւ վասն աղախնոյն. զամենայն՝ զոր ինչ ասիցէ քեզ Սառա, լուր ձայնի նորա: Յարեաւ Աբրահամ ընդ առաւօտն եւ առ հաց եւ տիկ ջրոյ եւ ետ ցԱգար, եւ եդ յուս նորա զմանուկն, եւ արձակեաց զնա. եւ երթեալ մոլորեալ շրջէր յանապատի անդ առ Ջրհորովն երդման: Եւ նուաղեաց ջուր ի տկէ անտի. եւ ընկէց զմանուկն ի ներքոյ միոյ եղեւնի ծառոյ. եւ երթեալ նստաւ յանդիման նորա ի բացեայ իբրեւ վտաւանաւ, զի ասէր թէ Ոչ տեսից զմահ որդւոյն իմոյ: Եւ նստէր յանդիման նորա. ձայն բար-



ձեալ մանկանն լայր: Եւ լուաւ Աստուած ձայնի մանկանն ի տեղւոջէ՝ ուր էր. եւ կոչեաց Աստուած զԱգար յերկնից եւ ասէ ցնա. Զի՞նչ է այդ, Ագար. մի երկնչիր, զի լուաւ Աստուած ձայնի որդւոյ քո ի տեղւոջէ այտի՝ ուր է: Արի առ զմանուկն քո եւ զօրացո զնա ձեռամբ, զի յազգ մեծ արարից զնա: Եւ եբաց Աստուած զաչս նորա, եւ ետես ջրհոր ջրոյ կենդանւոյ. եւ չոգաւ ելից զտիկն ջրով եւ արբոյց մանկանն:

ԾՆՆԴ. ԻԱ. 9—20:

## 7.

### Ապաշխարութիւն Նինուէացւոց:

Եղեւ բան Տեառն առ Յովնան եւ ասէ. Արի եւ գնա ի Նինուէ եւ քարոզեաջիր անդ, զի ել աղաղակ չարութեան նորա առ իս: Յարեաւ Յովնան փախչել յերեսաց Տեառն. էջ ի Յոպպէ, եգիտ նաւ՝ որ երթայր ի Թարսիս, եւ եմուտ ի նա: Եւ Տէր յարոյց հողմ, եղեւ մրրիկ մեծ, եւ նաւն ի վտանգի կայր ի խորտակել: Երկեան նաւավարքն երկեւղ մեծ, եւ ասեն իւրաքանչիւր ցընկեր իւր. Եկայք արկցուք վիճակս եւ գիտասցուք վասն ո՞յր են չարիքս այս: Արկին վիճակս, եւ ել վիճակն Յովնանու: Առին զՅովնան եւ ընկեցին ի ծով, եւ դադարեաց ծովն ի խռովութենէ իւրմէ: Հրաման ետ Տէր կիտին մեծի կլանել զՅովնան. եւ էր Յովնան ի փոր կիտին զերիս տիւս եւ զերիս գիշերս: Հրամայեցաւ ի Տեառնէ վիշապ ձկան, եւ եթուք զնա ի ցամաք: Յարեաւ Յովնան եւ գնաց ի Նինուէ, քարոզեաց եւ ասէ. Այլ եւս երեք աւուրք, եւ Նինուէ կործանեսցի: Հաւատացին արք Նինուէացիք յԱստուած, զգեցան քուրձ, եւ դարձան յիւրաքանչիւր ճանապարհաց իւրեանց չարաց: Ետես Աստուած, եւ զղջացաւ ի վերայ չարեացն՝ զոր խօսեցաւ առնել նոցա, եւ ոչ արար:

Տրտմեցաւ Յովնան եւ խռովեցաւ եւ ասէ. Ո՛վ Տէր, գիտէի թէ ողորմած ես դու եւ գթած, երկայնամիտ եւ բազումողորմ, եւ զղջանաս ի վերայ չարեաց: Ել ի քաղաքէ անտի եւ նստաւ յանդիման քաղաքին: Եւ հրաման ետ Աստուած դդմենույն, եւ ել ի վերայ գլխոյն Յովնանու՝ լինել նմա հովանի. եւ ուրախ եղեւ Յովնան ի վերայ դդմենույն: Եւ հրաման ետ Աստուած որդան առաւօտուն ի վաղիւ անդր. եհար զդդմենին եւ ցամաքեցաւ: Անկաւ արեւն զգլխովն Յովնանու եւ քաղէին ոգիք նորա, եւ ասէր. Լաւ էր ինձ մեռանել՝ քան զայս կեանս իմ: Եւ ասէ Տէր. Դու խնայեցեր ի դդմենին՝ յոր ոչ եղեր աշխատ. եւ ես ո՞չ խնայեցից ի Նինուէ, յորում բնակեալ է աւելի քան զերկոտասան բիւր մարդիկ՝ որ ոչ ծանեան զաջ եւ զահեակ իւրեանց:

Յովնան.

## ԳԼՈՒԽ Բ.

*Աստուածպաշտութիւն:*

1. Կրթեա զանձն քո յաստուածպաշտութիւն: Ա. Տիմ. Դ. 7.

2. Շահավաճառ մեծ աստուածպաշտութիւնն է: Ա. Տիմ. Զ. 6.

3. Քան զամենայն ինչ զօրաւոր է աստուածպաշտութիւն: Իմ. Ժ. 12.

4. Աստուածպաշտութիւն առ ամենայն ինչ օգտակար է. Ա. Տիմ. Դ. 8.

5. Մերձեցարուք առ Աստուած, եւ մերձեսցի առ ձեզ: Յակ. Դ. 8.

6. Ոյք խնդրեն զՏէր՝ մի պակասեսցէ ի նոցանէ ամենայն բարութիւն: Սղմ. ԼԳ. 11.



# Ա.

### Պաշտօն Աստուծոյ. Աղօթք:

1. Տեառն Աստուծոյ քում երկիր պագցես, եւ զնա միայն պաշտեսցես: Մատ. Դ. 10.

2. Ի Տեառնէ Աստուծոյ քումէ երկիցես, եւ զնա միայն պաշտեսցես, եւ ի նա յարեսցիս: Բ. Օր. Զ. 13.

3. Պատուեա զՏէր եւ զօրասցիր. եւ բաց ի նմանէ՝ յայլ ումեքէ մի երկնչիր: Առ. Է. 1.

4. Որդի փառաւոր առնէ զհայր, եւ ծառայ երկնչի ի Տեառնէ իւրմէ. իսկ արդ՝ եթէ հայր եմ ես, ո՞ւր է փառքն իմ, եւ եթէ Տէր եմ, ո՞ւր է պատիւն իմ, ասէ Տէր ամենակալ: Մաղ. Ա. 6.

5. Եթէ ծառայեսցես դու Աստուծոյ, հատուսցէ քեզ ի բարիս: Տոբ. Դ. 15.

6. Եթէ մատիցես Տեառն ծառայել, պատրաստեա զանձն քո ի փորձութիւն: Սիր. Բ. 1.

7. Ընդունելի են Աստուծոյ աղօթք, քան մատուցանել պատարագս: Առ. ԺԶ. 5.

8. Բարի են աղօթք՝ պահօք եւ ողորմութեամբ եւ արդարութեամբք: Տոբ. ԺԲ. 8.

9. Կանխեա առ Տէր ամենակալ աղօթիւք. եթէ սուրբ եւ ճշմարիտ իցես, աղօթից քոց լուիցէ: Յոբ. Ը. 5. 6.

10. Աչք Տեառն ի վերայ արդարոց, եւ ականջք նորա յաղօթս նոցա: Ա. Պետր. Գ. 12.

11. Մերձ է Տէր առ ամենեսեան՝ ոյք կարդան առ նա: Սղմ. ՃԽԴ. 18.

12. Հեռի է Աստուած յամպարշտաց, եւ աղօթից արդարոց լսէ: Առ. ԺԵ. 29.

13. Զամենայն ինչ՝ վասն որոյ աղօթս արարեալ խնդրիցէք, եւ հաւատայցէք թէ առնուք, եղիցի ձեզ: Մրկ. ԺԱ. 24.

14. Զի ամենայն՝ որ խնդրէ, առնու, եւ որ հայցէ՝ գտանէ, եւ որ բախէ՝ բացցի նմա: Մատթ. Է. 8.

15. Խնդրէք, եւ ոչ առնուք. վասն զի չարաչար խնդրէք: Յակ. Դ. 3.

16. Պատարագ Աստուծոյ՝ հոգի խոնարհ, զսիրտ սուրբ եւ զհոգի խոնարհ Աստուած ոչ արհամարհէ: Սղմ. Ծ. 19.

17. Զոհ առն արդարոյ ընդունելի: Սիր. ԼԲ. 9.

18. Պատարագք ամպարշտաց պիղծ են առաջի Տեառն: Առ. ԻԱ. 27.

19. Պատուեա զՏէր ի քոց արդար վաստակոց: Առ. Գ. 9.

20. Մի ապաստան լինիր ի զոհ անիրաւ: Սիր. ԼԲ. 15.

21. Զենու զորդի առաջի հօր իւրոյ՝ որ մատուցանէ պատարագ յընչից օտարաց: Սիր. ԼԱ. 24.

22. Անօրէնն՝ որ մատուցանէ ինձ եզն պատարագ, այնպէս է՝ որպէս թէ հարկանիցէ ոք զկառափն մարդոյ: Ես. ԿԶ. 3.

## Բ.

### Երկիւղ Տեառն:

1. Սկիզբն իմաստութեան երկիւղ Տեառն: Առ. Ա. 7.

2. Պսակ իմաստութեան երկիւղ Տեառն: Սիր. Ա. 22.

3. Ոչինչ է լաւ քան զերկիւղ Տեառն: Սիր. ԻԳ. 37.

4. Երկիւղ Տեառն բուսուցանէ զխաղաղութիւն եւ զառողջութիւն: Սիր. Ա. 23.

5. Երկիւղ Տեառն՝ փառք եւ պարծանք, եւ ուրախութիւն եւ պսակ ցնծութեան: Սիր. Ա. 11.

6. Երկիւղ Տեառն զուարճացուսցէ զսիրտ, եւ տացէ ուրախութիւն եւ խնդութիւն ընդ երկայն աւուրս: Սիր. Ա. 12.



7. Երկիւղ Տեառն յաւելու յաւուրս. այլ ամպարշտաց նուազեսցին: Առ. Ժ. 27.

8. Որ երկնչի ի Տեառնէ՝ երանելի է անձն նորա: Սիր. ԼԱ. 17.

9. Երկիւղիւ Տեառն խորշի ամենայն ոք ի չարէ: Առ. ԺԵ. 27.

10. Զօրութիւն է Տէր երկիւղածաց իւրոց: Սղմ. ԻԴ. 14.

11. Երկերուք դուք յայնմանէ՝ որ կարող է զոգի եւ զմարմին կորուսանել ի գեհենի: Մատթ. Ժ. 28.

12. Զկամս երկիւղածաց իւրոց առնէ Տէր, աղօթից նոցա լսէ եւ կեցուցանէ զնոսա: Սղմ. ՃԽԴ. 19.

13. Որ երկնչի ի Տեառնէ՝ բարի եղիցի առյապայ, եւ յաւուր վախճանի իւրոյ օրհնեսցի: Սիր. Ա. 13.

14. Որ երկնչի ի Տեառնէ՝ ոչ յումեքէ կասկածեսցէ եւ մի վատասրտեսցէ, զի նա է յոյս նորա: Սիր. ԼԱ. 16.

15. Լաւ է պակասամիտն երկիւղած, քան որ լի է մտօք եւ յանդգնի անցանել ընդ օրէնս: Սիր. ԺԹ. 21.

16. Խնդրեսցեն զիս չարք, եւ ոչ գտանիցեն. զի զերկիւղ Տեառն ոչ խնդրեցին: Առ. Ա. 28.

## Գ.

### Հաւատք, յոյս, սէր:

1. Մնան հաւատք, յոյս, սէր. եւ մեծ քան զսոսա սէր է: Ա. Կոր. ԺԳ. 13.

2. Զի՞նչ են հաւատք, եթէ ոչ՝ յուսացելոց իրաց հաստատութիւն, եւ յանդիմանութիւն որոց ոչն երեւին: Եբր. ԺԱ. 1.

3. Ունիցիս հաւատս՝ սրբով մտօք: Ա. Տիմ. Ա. 19.

4. Առանց հաւատոց անհնար է հաճոյ լինել: Եբր. ԺԱ. 6.

5. Հաւատալ արժան է այնմ՝ որ մերձենայ առ Աստուած, թէ է Աստուած, եւ որոց խնդրենն զնա՝ լինի պարգեւատու: Եբր. ԺԱ. 6.

6. Մի երկնչիր. բայց միայն հաւատա: Մրկ. Ե. 36.

7. Այս է յաղթութիւնն՝ որ յաղթէ աշխարհի, հաւատքն մեր: Ա. Յովհ. Ե. 4.

8. Երանի՜ որոց ոչ իցէ տեսեալ, եւ հաւատասցեն: Յովհ. Ի. 29.

9. Ո՞ հաւատաց Տեառն եւ յամօթ եղեւ: Սիր. Բ. 11.

10. Որք երկնչէք ի Տեառնէ՝ հաւատացէք նմա, եւ ոչ սխալեսցեն վարձք ձեր: Սիր. Բ. 8.

11. Վա՜յ սրտի լքելոյ, զի ոչ հաւատայ: Սիր. Բ. 15.

12. Այր երկմիտ առանց հաստատութեան է յամենայն ճանապարհս իւր: Յակ. Ա. 8.

---

13. Եղիցի յոյս քո ի Տէր: Առ. ԻԲ. 19.

14. Լեր յուսացեալ ի Տէր յամենայն սրտէ քումէ: Առ. Գ. 5.

15. Ես յողորմութիւնս քո, Տէր, յուսացայ: Սղմ. ԺԲ. 6.

16. Յոյս ոչ երբեք ամաչեցուցանէ: Հռ. Ե. 5.

17. Որ յուսացեալ է ի Տէր՝ ուրախ լիցի: Առ. ԻԹ. 25.

18. Որ յուսայ ի Տէր՝ երանելի է: Առ. ԺԶ. 20.

19. Երանեալ է այր՝ որոյ անուն Տեառն յոյս է նորա: Սղմ. ԼԹ. 5.

20. ՅԱստուած յուսացայ, եւ ոչ երկեայց. զի՞ արասցէ ինձ մարդ: Սղմ. ԾԵ. 5.

21. Աստուած ի մէջ նորա, եւ նորա մի սասանեսցին: Սղմ. ԽԵ. 6.



22. Եթէ Աստուած ի մեր կոյս է, ո՞վ իցէ մեր հակառակ: Հռ. Ը. 31:

23. Յոյս ամպարշտի կորիցէ: Առ. ԺԱ. 23.

---

24. Գլուխ պատուիրանին՝ սէր է, ի սուրբ սրտէ: Ա. Տիմ. Ա. 5.

25. Սիրեսցես զՏէր Աստուած քո յամենայն սրտէ քումէ, եւ յամենայն անձնէ քումէ, եւ յամենայն մտաց քոց: Այս է մեծ եւ առաջին պատուիրան: Մտթ. ԻԲ. 37. 38.

26. Սէր ոչ երբեք անկանի: Ա. Կորն. ԺԳ. 8.

27. Մեք սիրեսցուք զԱստուած. վասն զի նա նախ սիրեաց զմեզ: Ա. Յովհ. Դ. 19:

28. Աստուած սէր է. եւ որ կայ ի սէրն՝ բնակեալ է յԱստուած, եւ Աստուած ի նմա բնակէ: Ա. Յովհ. Դ. 16.

29. Պահէ Տէր զամենեսեան՝ որք սիրեն զնա: Սղմ. ՃԽԴ. 20.

## Դ.

### Պահել զպատուիրանս, հնազանդել Աստուծոյ:

1. Մի բանիւք եւ լեզուօք սիրեսցուք, այլ արդեամբք եւ ճշմարտութեամբ: Ա. Յովհ. Գ. 18.

2. Սիրեսցես զՏէր Աստուած քո եւ պահեսցես զպատուիրանս նորա զամենայն աւուրս կենաց քոց: Բ. Օր. ԺԱ. 1.

3. Եթէ ոք սիրէ զիս, զբանն իմ պահեսցէ: Յովհ. ԺԴ. 23.

4. Այս է սէրն Աստուծոյ եթէ զպատուիրանս նորա պահեսցուք: Ա. Յովհ. Ե. 3.

5. Այսուիկ ճանաչեմք եթէ սիրեմք զՈրդին Աստուծոյ, յորժամ զպատուիրանս նորա արասցուք: Ա. Յովհ. Ե. 2.

6. Որք սիրեն զՏէր՝ պահեսցեն զճանապարհս նորա։ Սիր. Բ. 18.

7. Լինիջիք առնելիք բանին, եւ մի լսելիք միայն։ Յակ. Ա. 22.

8. Ոչ եթէ որ լսելիք օրինացն են՝ արդարացեալ են առաջի Աստուծոյ, այլ առնելիք օրինացն արդարասցին։ Հռ. Բ. 13.

9. Եթէ ոք լսող միայն իցէ բանին եւ ոչ առնելի, նման է նա մարդոյ՝ որ պշուցեալ հայիցի ընդ երեսս իւր՝ որ ծնանիցին ի հայելւոջ. զի հայեցեալ եւեթ զինքն եւ զանց արար, եւ անդէն մոռացաւ թէ որպիսի ոք էր։ Յակ. Ա. 23. 24.

10. Հնազանդել պարտ է Աստուծոյ առաւել քան մարդկան։ Գործ. Ե. 29.

11. Որ ոք զամենայն օրէնս պահիցէ եւ միով իւիք ինչ գթիցէ, եղեւ ամենայն օրինացն պարտապան։ Յակ. Բ. 10.

12. Հնազանդ լեր Տեառն եւ ծառայեա նմա։ Սղ. ԼԶ. 7.

13. ՅԱստուծոյ երկիր եւ զպատուիրանս նորա պահեա։ Ժող. ԺԲ. 13.

14. Ոչ ինչ է քաղցրագոյն քան զդնել միտ պատուիրանաց Տեառն։ Սիր. ԻԳ. 37.

15. Լաւ է ունկնդրութիւն՝ քան զզոհ ընտիր, եւ հնազանդութիւն՝ քան զճարպ խոյոց։ Ա. Թագ. ԺԵ. 22.

16. Ցանկացար իմաստութեան, պահեա զպատուիրանս Տեառն, եւ պարգեւեսցէ զնա քեզ։ Սիր. Ա. 33.

17. Արասցես զբարին եւ զհաճոյն առաջի Տեառն Աստուծոյ քո, զի քեզ բարի լինիցի։ Բ. Օր. Զ. 18.

18. Եթէ կամիս ի կեանսն յաւիտենականս մտանել, պահեա զպատուիրանսն։ Մատթ. ԺԹ. 17.

19. Հրաման Տեառն աղբիւր կենաց, եւ առնէ խոտորել յորոգայթից մահու։ Առ. ԺԴ. 27.



## Ե.

### Գործք բարիք։

1. Մինչ դեռ ժամանակս ի ձեռս է, գործեսցուք զբարիս։ Գաղ. Զ. 10.

2. Ի գործոց արդարանայ մարդ, եւ ոչ ի հաւատոց միայն։ Յակ. Բ. 24.

3. Հաւատք առանց գործոց դատարկ են։ Յակ. Բ. 20.

4. Հաւատք՝ եթէ գործս ոչ ունիցին, մեռեալ են առանձինն։ Յակ. Բ. 17.

5. Զոր օրինակ մարմին առանց հոգւոյ մեռեալ է, այնպէս եւ հաւատք առանց գործոց մեռեալ են։ Յակ. Բ. 26.

6. Զի՞նչ օգուտ իցէ, եթէ ասիցէ ոք հաւատս ունել, եւ գործս ոչ ունիցի. միթէ կարիցէ՞ն հաւատքն ապրեցուցանել զնա։ Յակ. Բ. 14.

7. Ոչ գոյ բարի, եթէ ոչ՝ գործել բարիս ի կեանս իւրում։ Ժող. Գ. 12.

8. Զբարիս գործեսջիք, եւ չար ձեզ ոչ պատահեսցէ։ Տովբ. ԺԲ. 7.

9. Առաւել փութասջիք զի բարեացն գործովք հաստատուն զձեր կոչումն եւ զընտրութիւն պահիցէք։ Ա. Պետր. Ա. 10.

10. Զբարիս գործել մի ձանձրասցուք, զի ի ժամանակի իւրում հնձեսցուք։ Գաղ. Զ. 9.

11. Իւրաքանչիւր ոք՝ որ զինչ առնէ զբարին, զնոյն ընդունի ի Տեառնէ։ Եփ. Զ. 8.

12. Ամենայն ծառ բարի՝ պտուղ բարի առնէ, եւ ծառ չար՝ պտուղ չար առնէ։ Մատթ. Է. 17.

13. Ամենայն ծառ՝ որ ոչ առնէ պտուղ բարի, հատանի եւ ի հուր արկանի։ Մատթ. Է. 19.

14. Որ ոք գիտիցէ զբարին եւ ոչ առնիցէ, մեղք են նմա։ Յակ. Դ. 17.

# ՕՐԻՆԱԿՔ

## 1.

### Մանուկն Յիսուս ի տաճարին:

Մանուկն (Յիսուս) աճէր եւ զօրանայր լի իմաստութեամբ, եւ շնորհք Աստուծոյ էին ի վերայ նորա: Եւ երթային ծնողք նորա ամի ամի յԵրուսաղէմ ի տօն զատկին: Իբրեւ եղեն նորա ամք երկոտասան, ելանել նոցա յԵրուսաղէմ ըստ սովորութեան տօնին՝ մնաց Յիսուս մանուկն յԵրուսաղէմ, եւ ոչ գիտացին ծնողքն նորա. կարծէին զնմանէ թէ ընդ ուղեկիցսն իցէ: Եկին իբրեւ աւուր միոյ ճանապարհ, եւ խնդրէին զնա ընդ դրացիս եւ ընդ ծանօթս: Եւ իբրեւ ոչ գտին, դարձան անդրէն յԵրուսաղէմ խնդրել զնա: Եւ յետ երից աւուրց գտին զնա ի տաճարին, զի նստէր ընդ վարդապետսն, լսէր ի նոցանէ եւ հարցանէր զնոսա: Զարմանային ամենեքեան՝ որ լսէին ի նմանէ, ընդ իմաստութիւնն եւ ընդ պատասխանիս նորա: Իբրեւ տեսին զնա, սքանչացան, եւ ասէ ցնա մայրն իւր. Որդեակ, զի՞նչ գործ գործեցեր դու ընդ մեզ. ահաւասիկ հայր քո եւ ես տառապեալք խնդրեաք զքեզ: Եւ ասէ ցնոսա. Զի՞ խնդրէիք զիս. ո՞չ գիտէիք եթէ ի տան Հօր իմոյ պարտ է ինձ լինել: Եւ նոքա ոչ իմացան զբանն՝ զոր խօսեցաւ ընդ նոսա: Եւ գնաց ի Նազարէթ, եւ էր նոցա հնազանդ:

Ղուկ. Բ. 40—50.

## 2.

### Յաղթահարի Ամաղէկ աղօթիւք Մովսիսի:

Եկն Ամաղէկ, եւ տայր պատերազմ ընդ Իսրայէլի յՌափիդին: Եւ ասէ Մովսէս ցՅեսու. Ընտրեա դու քեզ արս զօրաւորս, եւ ելեալ տացես պատերազմ ընդ Ամաղեկայ առ վաղիւ. եւ ահա ես եկեալ կայցեմ ի վերայ գլխոյ բլրոյն, եւ գաւազանն Աստուծոյ ի ձեռին իմում: Եւ արար Յեսու որպէս ասաց նմա Մովսէս, եւ ճակատեցաւ յանդիման Ամաղեկայ. եւ Մովսէս եւ Ահարոն եւ Ովր ելին ի գլուխ բլրոյն: Եւ լինէր յորժամ ամբառնայր Մովսէս զձեռս իւր, զօրանայր Իսրայէլ. եւ յորժամ խոնարհեցուցանէր զձեռս իւր, զօրանայր Ամաղէկ: Եւ ծանրէին ձեռքն Մովսիսի. եւ առեալ վէմ՝ դնէին ընդ նովաւ, եւ նստէր ի վերայ նորա. եւ Ահարոն եւ Ովր հաստատէին զձեռս նորա, մի աստի եւ մի անտի. եւ լինէին ձեռքն Մովսիսի հաստատեալք մինչեւ ցմտանել արեգականն: Եւ եհար Յեսու զԱմաղէկ եւ զամենայն զօրս նորա: Եւ ասէ Տէր ցՄովսէս. Գրեա զայդ առ ի յիշատակ ի գիրս: Եւ շինեաց Մովսէս սեղան Տեառն, եւ անուանեաց զանուն նորա՝ Տէր ապաւէն իմ:

Ելք. ԺԷ. 8—16.

## 3.

### Ընթրիք Բաղտասարայ:

Բաղտասար արքայ արար ընթրիս մեծամեծաց իւրոց հազար առն: Եւ իբրեւ ընդ գինիս եմուտ, հրամայեաց բերել զսպասս արծաթոյ եւ ոսկւոյ, զոր եհան Նաբուքոդոնոսոր հայր նորա ի տաճարէն՝ որ յԵրուսաղէմ: Բերին, եւ ըմպէին նոքօք թագաւորն եւ մեծամեծք իւր. ըմպէին գինի եւ օրհնէին զաստուածս ոսկեղէնս եւ զարծաթեղէնս եւ զպղնձիս եւ զերկաթիս, եւ զԱստուածն յաւիտենից ոչ օրհնեցին: Ի նմին ժամու ելին մատունք ձեռին մարդոյ, եւ գրէին ի վերայ բռելոյ որմոյ տաճարի թագաւորին, եւ թագաւորն տեսանէր զթաթ ձեռինն՝ որ գրէր: Յայնժամ հատան գոյնք թագաւորին, եւ յօդք միջոյ նորա լուծանէին, եւ ծունկք նորա զմիմեանս բաղխէին: Աղաղակեաց

եւ ասէ. Որ ոք ընթերցցի զգիրդ զայդ եւ զմեկնութիւն դորա ցուցանէ ինձ, ծիրանիս զգեցցի եւ երրորդի թագաւորութեան իմում տիրեսցէ: Մտանէին ամենայն իմաստունք Բաբելացւոց, եւ ոչ կարէին զգիրն ընթեռնուլ եւ ոչ զմեկնութիւն նորա ցուցանել թագաւորին: Յայնժամ ածին ի ներքս զԴանիէլ. եւ ասէ թագաւորն ցԴանիէլ. Ես լուայ զքէն թէ կարող ես մեկնել մեկնութիւնս. եւ արդ եթէ կարիցես զգիրդ ընթեռնուլ եւ զմեկնութիւն դորա ցուցանել ինձ, ծիրանիս զգեցցիս եւ երրորդի թագաւորութեան իմում տիրեսցես: Ասէ Դանիէլ. Արքայ, Աստուած բարձրեալ զմեծութիւն եւ զթագաւորութիւն եւ զպատիւ եւ զփառս ետ Նաբուքոդոնոսորայ հօր քում. եւ յորժամ բարձրացաւ սիրտ նորա, անկաւ յաթոռոյ թագաւորութեան իւրոյ, մինչեւ ծանեաւ թէ տիրէ Բարձրեալն թագաւորութեան մարդկան: Եւ դու, որդի նորա Բաղտասար, ոչ խոնարհեցուցեր զսիրտ քո առաջի Աստուծոյ: Վասն այսորիկ յերեսաց նորա առաքեցաւ թաթ ձեռինն, եւ զգիրդ զայդ գրեաց: Եւ այս ինչ է գիրդ՝ որ գրեալ է. Մանէ, Թեկէլ, Փարէս: Եւ այս է մեկնութիւն բանիդ. Մանէ, չափեաց Աստուած զթագաւորութիւն քո եւ վախճանեաց զնա. Թեկէլ, կշռեցաւ ի կշիռս եւ գտաւ պակասեալ. Փարէս, բաժանեցաւ թագաւորութիւն քո եւ տուաւ Մարաց եւ Պարսից: Եւ ի նմին գիշերի սպանաւ Բաղտասար արքայ Քաղդէացւոց. եւ Դարեհ արքայ առ զթագաւորութիւնն, որ էր ամաց վաթսուն եւ երկուց:

Դան. Ե.

## 4.

### Համարձակութիւն Պետրոսի եւ Յովհաննու:

Մինչ դեռ խօսէին նոքա (Պետրոս եւ Յովհաննէս) ընդ ժողովրդեանն, հասին ի վերայ նոցա



քահանայապետք եւ իշխանք տաճարին, զայրագնեալք վասն ուսուցանելոյ նոցա զժողովուրդն եւ պատմելոյ Յիսուսիւ զյարութիւն մեռելոց: Մխեցին ի նոսա զձեռս իւրեանց, եւ եդին զնոսա ի բանտի մինչեւ ի վաղիւն, զի էր ընդ երեկս: Եւ եղեւ ի վաղիւ անդր ժողովել նոցա զիշխանսն եւ զերիցունսն եւ զդպիրս յԵրուսաղէմ. եւ կացուցեալ զնոսա ի մէջ, հարցանէին. Որո՞վ զօրութեամբ կամ որո՞վ անուամբ արարէք դուք զայս: Յայնժամ Պետրոս լցեալ Հոգւով սրբով՝ ասէ ցնոսա. Իշխանք ժողովրդեան եւ երիցունք Իսրայէլի, յայտնի լիցի ամենեցուն ձեզ, զի յանուն Յիսուսի Քրիստոսի Նազովրեցւոյ՝ զոր դուքն խաչեցէք, զոր Աստուած յարոյց ի մեռելոց, նովաւ սա կայ աւասիկ առաջի ձեր ողջացեալ: Հայեցեալ ի համարձակութիւնն Պետրոսի եւ Յովհաննու՝ զարմանային, եւ ոչինչ կարէին տալ պատասխանի: Եւ պատուիրեցին ամենեւին մի խօսել եւ մի եւս ուսուցանել յանունն Յիսուսի: Իսկ Պետրոս եւ Յովհաննէս պատասխանի ետուն եւ ասեն ցնոսա. Եթէ արժան իցէ առաջի Աստուծոյ ձեզ լսել՝ առաւել քան Աստուծոյ, ընտրեցէք: Այլ մեք ոչ կարեմք զոր տեսաքն եւ լուաք՝ չխօսել:

Գործ. Դ. 1—20.

## 5.

### Նախանձ տան Տեառն:

Յետ այսորիկ էջ Յիսուս ի Կափառնաում, ինքն եւ մայր իւր եւ եղբարք իւր. եւ անդ լինէր ոչ բազում ինչ աւուրս: Եւ էր մերձ զատիկն Հրէից, եւ ել Յիսուս յԵրուսաղէմ: Եւ եգիտ ի տաճարին՝ զի վաճառէին զարջառս եւ զոչխարս եւ զաղաւնիս, եւ զլումայափոխսն՝ որ նստէին: Եւ արար խարազան չուանեայ. եւ եհան զամենեսին ի տաճարէն, զոչխարսն եւ զարջառս, եւ զպղինձս հատավաճառացն

ցրուեաց, եւ զսեղանսն կործանեաց: Եւ որ զաղաւնիսն վաճառէին՝ ասէ ցնոսա. Առէք զայդ աստի, եւ մի առնէք զտուն Հօր իմոյ՝ տուն վաճառի:

Յովհ. Բ. 12—17.

## 6.

### Հաւատք Աբրահամու:

Փորձեաց Աստուած զԱբրահամ եւ ասէ. Առ դու զորդին քո սիրելի՝ զԻսահակ, եւ հանցես զդա յողջակէզ: Յարեաւ Աբրահամ, առ զփայտ ողջակիզին եւ եդ ի վերայ Իսահակայ. առ ի ձեռն զհուրն եւ զսուրն, եւ գնացին երկոքեան ի միասին: Եկին ի տեղին՝ զոր ասաց նմա Աստուած: Անդ շինեաց սեղան Աբրահամ, եդ ի վերայ զփայտն, կապեաց զԻսահակ զորդի իւր, եւ եդ զնա ի սեղանն ի վերայ փայտին: Եւ ձգեաց Աբրահամ զձեռն՝ առնուլ զսուրն եւ զենուլ զորդին իւր: Կոչեաց զնա հրեշտակ Տեառն յերկնից եւ ասէ. Մի մխեր զձեռն քո ի պատանեակդ, զի այժմ գիտացի թէ երկիւղած ես դու յԱստուծոյ, եւ ոչ խնայեցեր յորդին քո սիրելի: Համբարձ Աբրահամ զաչս իւր, եւ ետես խոյ մի կախեալ զծառոյն սաբեկայ զեղջերաց: Առ զխոյն եւ եհան զնա յողջակէզ: Կոչեաց հրեշտակ Տեառն զԱբրահամ յերկնից եւ ասէ. Յանձն իմ երդուայ, ասէ Տէր. փոխանակ զի ոչ խնայեցեր յորդին քո սիրելի վասն իմ, օրհնեցից զքեզ եւ բազմացուցից զզաւակ քո՝ որպէս զաստեղս երկնից եւ որպէս զաւազ առ ափն ծովու, եւ օրհնեսցին ի զաւակի քում ամենայն ազգք երկրի:

Ծննդ. ԻԲ.

## 7.

### Կինն Քանանացի:

Ելեալ անտի Յիսուս՝ գնաց ի կողմանս Տիւրոսի եւ Սիդոնի: Եւ ահա կին մի Քանանացի աղաղակէր եւ ասէր. Ողորմեաց ինձ, Տէր. դուստր իմ



չարաչար դիւահարի: Եւ նա ոչ ետ նմա պատասխանի: Եւ աշակերտքն նորա աղաչէին զնա եւ ասէին. Արձակեա զնա, զի աղաղակէ զհետ մեր: Նա պատասխանի ետ եւ ասէ. Ոչ ուրեք առաքեցայ, եթէ ոչ՝ առ ոչխարս կորուսեալս տանն Իսրայէլի: Նա մատուցեալ երկիր պագանէր նմա եւ ասէր. Տէր, օգնեա ինձ: Պատասխանի ետ նմա եւ ասէ. Ոչ է բարւոք առնուլ զհաց մանկանց եւ արկանել շանց: Եւ նա ասէ. Այո, Տէր, քանզի եւ շունք կերակրին ի փշրանաց անկելոց ի սեղանոյ տեառն իւրեանց: Յայնժամ պատասխանի ետ նմա Յիսուս. Ո՜վ կին դու, մեծ են հաւատք քո, եղիցի քեզ որպէս եւ կամիս: Եւ բժշկեցաւ դուստր նորա ի նմին ժամու:

Մատթ. ԺԵ. 21—28.

## 8.

### Եօթն եղբարք Մակաբայեցիք:

Դէպ եղեւ եղբարս եւթն՝ մարբն հանդերձ կալեալս՝ ածել յատեան Թագաւորին: Մի ի նոցանէ նահատակեցաւ յառաջագոյն, սկսաւ խօսել եւ ասէ. Մեք պատրաստ եմք ի մեռանել՝ քան անցանել ըստ օրէնս հայրենիս: Սրտմտութեամբ լի եղեւ Թագաւորն, հրամայէր կենդանւոյն ի տապակսն ջեռուցեալս իջուցանել: Իբրեւ առաջինն յաշխարհէ փոխեցաւ, զերկրորդն ի տեղի տանջանացն մատուցանէին եւ անդէն հարցանէին. Կերիցե՞ս խոզենի միս: Նա ետ պատասխանի եւ ասէ. Ոչ: Վասն այսորիկ եւ սա ի նոյն տանջանս տանջեալ՝ վախճանէր: Յետ նորա զերրորդն ածին եւ զլեզուն խնդրէին: Նա վաղվաղակի մատուցանէր, եւ զձեռսն քաջասիրտս տարածանէր, զի եւ Թագաւորն ինքնին իսկ զարմացեալ լինէր վասն պատանւոյն սրտին քաջութեան, զի առ ոչինչ զցաւսն համարեցաւ: Եւ սա իբրեւ փոխէր, չորրորդն ի

տեղի մատուցեալ, ի նոյն տանջանս չարչարէին: Մինչ դեռ ոգիքն կրտսերոյ մանկանն առ իւր կային, կոչեաց թագաւորն զմայրն, եւ աղաչէր լինել պատանւոյն կենաց նորին խորհրդական, զի փրկեսցի: Իբրեւ կարի շատ աղաչեաց, յանձն առ խօսել ընդ որդւոյն, եւ ասէ. Ողորմեաց ինձ, որդեակ իմ. յուշ լիցի քեզ զի կրեցի զքեզ ինն ամիս յարգանդի, եւ սնուցի զքեզ զերիս ամս ի դիեկս ստեամբք: Արդ՝ աղաչեմ զքեզ, որդեակ, մի զարհուրիր դու ի չարաշուք դահճէ այտի. այլ եղբարցդ արժանի եղեալ, ընտրեա զմահ՝ քան զկեանս աշխարհի: Եւ մինչ դեռ մայրն զայն մխիթարութիւնս մատուցանէր, սկսաւ խօսել պատանեակն եւ ասէ. Ո՞ւմ կայք, զի՞ յապաղէք, չեմ ինչ լսելոց հրամանի թագաւորիդ, այլ հրամանաց հնազանդեալ եմ օրինաց հարցն մերոց: Յանչափ քաջութեան սրտի մանկանցն եւթանեցունց սրտաբեկ լինէր թագաւորն: Առաւել ի վերայ կրտսերոյն դառնապէս տանջանս մատուցանէին. սակայն եւ սա անարատութեամբ եւ սրբութեամբ յուսացեալ ի Տէր՝ մեկնեցաւ յաշխարհէ: Զհետ որդւոցն եւ մայրն երանելի ի նոյն օրէնս կատարեցաւ:

Բ. Մակ. Է.

## 9.

### Անհնազանդութիւն Սաւուղայ:

Եւ ասէ Սամուէլ ցՍաւուղ. Երթ եւ հարցես զԱմաղէկ եւ զամենայն՝ որ ինչ նորա իցէ, եւ մի ապրեցուցանիցես ի նոցանէ: Եհար Սաւուղ զԱմաղէկ, եւ կալաւ զթագաւորն Ամաղեկայ զԱգագ կենդանւոյն, եւ ապրեցոյց Սաւուղ եւ ամենայն ժողովուրդն զԱգագ կենդանի. եւ զընտիրս խաշանց եւ զանդւոց ոչ կամեցաւ սատակել: Եւ եղեւ բան Տեառն առ Սամուէլ եւ ասէ. Զղջացեալ եմ զի թագաւորեցուցի զՍաւուղ, զի զբանս իմ ոչ պահեաց: Եւ եկն Սամուէլ առ Սաւուղ: Ասէ ցնա Սաւուղ. Կացուցի զոր ինչ խօսեցաւ Տէր: Եւ ասէ Սամուէլ. Եւ զի՞նչ է բարբառ հօտիցդ այդոցիկ յականջս իմ: Ասէ Սաւուղ. ՅԱմաղեկայ ածի զայդ, զոր ապրեցոյց ժողովուրդդ, զընտիրս խաշանց եւ զարջառոց, զի զոհեսցեն Տեառն Աստուծոյ քում: Եւ ասէ Սամուէլ. Եթէ հաճո՞յ իցէ Տեառն ողջակէզ եւ զոհ՝ իբրեւ լսել ձայնի Տեառն: Ահա լաւ է ունկնդրութիւն՝ քան զզոհ ընտիր, եւ հնազանդութիւն՝ քան զճարպ խոյոց: Զի արհամարհեցեր զբան Տեառն, արհամարհեսցէ զքեզ Տէր՝ չլինել թագաւոր ի վերայ Իսրայէլի:



Ա. Թագ. ԺԵ. 1—23.

## 10.

### Երկու լումայք կնոջն այրւոյ:

Կայր Յիսուս ընդդէմ գանձանակին, տեսանէր թէ զիա՞րդ ժողովուրդն արկանէր պղինձ ի գանձանակն. եւ բազում մեծատունք արկին բազում ինչ: Եկն այրի մի եւ արկ երկուս լումայս, որ է նաքարակիտ մի: Եւ կոչեցեալ առ ինքն զաշակերտսն իւր, ասէ ցնոսա. Ամէն ասեմ ձեզ, զի այրին այն տառապեալ շատ արկ քան զամենեսեան՝ որ արկին ի գանձանակն: Քանզի ամենեքին յաւելորդաց իւրեանց արկին. այլ նա ի չքաւորութենէ իւրմէ, զամենայն ինչ՝ զոր ունէր, արկ զոյն չափ զկեանս իւր:

Մարկ. ԺԲ. 41—44.

## ԳԼՈՒԽ Գ.

### Ծնողք, որդիք եւ ընտանիք:

1. Պսակ ծերոց որդիք որդւոց. պարծանք որդւոց՝ հարք իւրեանց: Առ. ԺԷ. 6.
2. Փառք մարդոյ ի պատուէ հօր իւրոյ լինին.

եւ նախատինք որդւոց՝ մօրն անարգութիւն է: Սիր. Գ. 13.

3. Ի վերայ որդւոյ իմաստնոյ ուրախ լինի սիրտ հօր: Առ. ԻԳ. 24.

4. Վախճանեցաւ հայր նորա, եւ որպէս թէ ոչ մեռաւ, զի նմանող եթող յետ իւր: Սիր. Լ. 4.

5. Ոչ ուրախ լինի հայր ի վերայ որդւոյ անխրատի. որդի իմաստուն ուրախ առնէ զմայր իւր: Առ. ԺԷ. 21.

6. Որդի իմաստուն ուրախ առնէ զհայր. որդի անմիտ տրտմութիւն է մօր: Առ. Ժ. 1.

7. Ուրախ լիցին հայր եւ մայր քո ի քեզ, եւ խնդասցէ որ ծնաւն զքեզ: Առ. ԻԳ. 25.

8. Ամօթ հօր՝ որդի անմիտ: Առ. ԺԹ. 13.

9. Մանուկ մոլորեալ յամօթ առնէ զծնողս իւր: Առ. ԻԹ. 15.

10. Մի ցանկար բազմութեան անպիտան որդւոց, եւ մի ուրախ լինիր յորդիս ամպարիշտս: Սիր. ԺԶ. 1.

11. Լաւ է մեռանել անորդի, քան թէ ունել որդիս ամպարիշտս: Սիր. ԺԶ. 4.

12. Որդիք պիղծք լինին որդիք մեղաւորաց: Սիր. ԽԱ. 8.

13. Հօր ամպարշտի մեղադիր լինին որդիք, զի վասն նորա նախատեսցին: Սիր. ԽԱ. 10.

## Ա.

Պատուել զծնողս եւ հնազանդ լինել նոցա:

1. Պատուեա զհայր քո եւ զմայր, զի բարի լինիցի քեզ, եւ երկայնակեաց լինիցիս ի վերայ երկրի: Բ. Օր. Ե. 16.

2. Արդեամբք եւ բանիւք պատուեա զհայր քո, զի եկեսցէ ի վերայ քո օրհնութիւն ի նմանէ: Սիր. Գ. 9.

3. Յամենայն զօրութենէ քումէ փառաւորեա զհայր քո, եւ զմօր երկունս մի մոռանար: Սիր. Է. 29.



4. Յիշեա զհայր եւ զմայր քո, զի ի մէջ մեծամեծաց նստիցիս դու: Սիր. ԻԳ. 18.

5. Զի Տէր փառաւորեաց զհայր ի վերայ ծննդոց, եւ զիրաւունս մօր հաստատեաց ի վերայ որդւոց: Սիր. Գ. 3.

6. Որդիք, հնազանդ լերուք ծնողաց ձերոց ի Տէր, զի այն է արժան: Եփ. Զ. 1.

7. Լուարուք, մանկունք, զխրատ հօր: Առ. Գ. 1.

8. Իւրաքանչիւր ի հօրէ եւ ի մօրէ իւրմէ երկնչիջիք: Ղեւտ. ԺԹ. 3.

9. Որդեակ, պահեա զօրէնս հօր քոյ, եւ մի մերժեր զխրատ մօր քոյ: Առ. Զ. 20.

10. Լուր, որդեակ, հօրն՝ որ ծնաւ զքեզ, եւ մի արհամարհեր զծերութիւն մօր քոյ: Առ. ԻԳ. 22.

11. Լուր, որդեակ, խրատու հօր քոյ, եւ մի մերժեր զօրէնս մօր քոյ, զի պսակ շնորհաց ընկալցի գլուխ քո: Առ. Ա. 8. 9.

12. Որդեակ, զօրավիգն լեր ծերութեան հօր քում, եւ մի տրտմեցուցաներ զնա ի կեանս նորա: Սիր. Գ. 14.

13. Որ փառաւորէ զհայր, երկայնակեաց լիցի: Սիր. Գ. 6.

14. Որ պատուէ զհայր՝ քաւէ զմեղս, եւ որպէս ոք՝ որ գանձիցէ, որ փառաւորէ զմայր իւր: Սիր. Գ. 4.

15. Որ պատուէ զհայր՝ ուրախ լիցի յորդւոց, եւ յաւուրս աղօթից իւրոց լսելի եղիցի: Սիր. Գ. 5.

16. Որ ողորմածութիւն տանի հօրն՝ ոչ մոռասցի առ Աստուած: Սիր. Գ. 16.

17. Որ ունկն դնէ Տեառն՝ հանգուսցէ զմայր իւր, որպէս տերանց ծառայեսցէ ծնողաց իւրոց: Սիր. Գ. 8.

18. Որդի խորագէտ՝ հնազանդ հօր. որդի անհնազանդ ի կորուստ եղիցի: Առ. ԺԳ. 1.

19. Օրհնութիւն հօր հաստատէ զտունս որդւոց, եւ անէծք մօր խլեն զհիմունս: Սիր. Գ. 11.

20. Որդի՛ որ անարգէ զհայր եւ մերժէ զմայր, ամօթ կրէ եւ նախատ լիցի: Առ. ԺԹ. 26.

21. Որդի իմաստուն ուրախ առնէ զհայր. որդի անմիտ արհամարհէ զմայր իւր: Առ. ԺԵ. 20.

22. Անզգամն անգոսնէ զխրատ հօր: Առ. ԺԵ. 5.

23. Անիծեալ որ անարգեսցէ զհայր իւր կամ զմայր իւր: Բ. Օր. ԻԷ. 16.

24. Իբրեւ հայհոյիչ է Աստուծոյ՝ որ ընդվայր հարկանէ զհայր իւր. եւ անիծեալ ի Տեառնէ՝ որ բարկացուցանէ զմայր իւր: Սիր. Գ. 18.

25. Որ հայհոյէ զհայր կամ զմայր՝ շիջցի լոյս նորա եւ բիբք աչաց նորա զխաւար տեսցեն: Առ. Ի. 20.

26. Ակն՝ որ արհամարհէ զհայր եւ անարգէ զծերութիւն մօր, խլեսցեն զնա ագռաւք ձորոց, եւ գէշ գէշ պատառեսցեն զնա ձագք արծուեաց: Առ. Լ. 17.

## Բ.

### Պարտք ծնողաց առ որդիս:

1. Բարւոք սնուցանէ հայր արդար: Առ. ԻԳ. 24.

2. Հարք, զորդիս ձեր սնուցանիջիք խրատու եւ ուսմամբ Տեառն: Եփ. Զ. 4.

3. Ոչ պարտին որդիք հարց գանձել, այլ հարք՝ որդւոց: Բ. Կորն. ԺԲ. 14.

4. Խրատեա զորդի քո, եւ հանգուսցէ զքեզ: Առ. ԻԸ. 17.

5. Խրատեա զորդի քո, զի այնպէս եղիցի քեզ յոյս բարի: Առ. ԺԹ. 18.

6. Խրատեա զորդի քո, եւ վարեա զնա ի գործ, զի մի ի խայտառականս անկանիցի: Սիր. Լ. 13.

7. Որ խրատէ զորդի իւր՝ գտցէ օգուտ ի նմանէ, եւ ի մէջ ծանօթից ի նա պարծեսցի: Սիր. Լ. 2.

8. Որ ուսուցանէ զորդին՝ նախանձեցուցանէ



զթշնամին, եւ առաջի բարեկամաց ի նա պարծեսցի: Սիր. Լ. 3.

9. Որ սիրէ զորդի իւր՝ յաճախեսցէ զտանջանս նորա, զի ուրախ լիցի ի վերջայն նորա: Սիր. Լ. 1.

10. Որ խնայէ ի գաւազան՝ ատեայ զորդի իւր. իսկ որ սիրէն՝ խնամով խրատէ: Առ. ԺԳ. 24.

11. Մի խնայեր խրատել զտղայ. զի եթէ հարկանես զնա գաւազանաւ, ոչ մեռանի: Առ. ԻԳ. 13.

12. Ձի անվարժ ելանէ խիստ, եւ որդի ընդվայրասուն ելանէ լկտի: Սիր. Լ. 8.

13. Գգուեա զորդի քո, եւ զարհուրեցուսցէ զքեզ. խաղա ընդ նմա, եւ տրտմեցուսցէ զքեզ: Սիր. Լ. 9.

14. Մի ծիծաղիր ընդ նմա, զի մի ցաւագնեսցիս: Սիր. Լ. 10.

15. Մի տար նմա իշխանութիւն ի մանկութեան, գուցէ երբեք խստացեալ ստունկանեսցէ զքեզ: Սիր. Լ. 11. 12.

16. Հարք, մի զայրացուցանէք զորդիս ձեր, զի մի տրտմեսցին: Կող. Գ. 21.

17. Ուսանիցին նախ իւրեանց տանց բարի առնել: Ա. Տիմ. Ե. 4.

18. Որ ոչ գայցէ զտամբ իւրով, նա զհողմն ժառանգեսցէ: Առ. ԺԱ. 29.

19. Եթէ ոք իւրոց եւ մանաւանդ ընտանեաց խնամ ոչ տանիցի, ի հաւատոյն ուրացեալ է եւ չար եւս քան զանհաւատն է: Ա. Տիմ. Ե. 8.

## Գ.

### Ամուսինք. կին բարի եւ չար:

1. Իւրաքանչիւր ոք զիւր կին այնպէս սիրեսցէ՝ իբրեւ զիւր անձն: Եփ. Ե. 33.

2. Արք, սիրեցէք զկանայս ձեր եւ մի դառնացուցանէք զնոսա: Կող. Գ. 19.

3. Արք իմաստութեամբ բնակեսցեն ընդ նոսա, իբրեւ տկար անօթոյ՝ առնիցեն պատիւ կանանց: Ա. Պետր. Գ. 7.

4. Կանայք իւրեանց արանց հնազանդ լիցին իբրեւ Տեառն: Եփ. Ե. 22.

5. Կին երկնչիցի յառնէ իւրմէ: Եփ. Ե. 33.

6. Զգաստացուսցեն զմանկամարդսն այրասէրս լինել, որդեսէրս, տնարարս, հնազանդս իւրեանց արանց: Տիտ. Բ. 4. 5.

7. Զի այր է գլուխ կնոջ, որպէս եւ Քրիստոս գլուխ է եկեղեցւոյ: Եփ. Ե. 23.

8. Տուրք Տեառն՝ կին ցածուն: Սիր. ԻԶ. 17.

9. Որ եգիտ կին բարի՝ եգիտ շնորհս: Առ. ԺԸ. 22.

10. Շնորհք ի վերայ շնորհաց՝ կին ամօթխած: Սիր. ԻԶ. 19.

11. Կնոջ բարեբարոյի՝ երանելի է այր նորա: Սիր. ԻԶ. 1.

12. Կին ժրագլուխ պսակ է առն իւրոյ: Առ. ԺԲ. 4.

13. Ոչինչ հոգայ ի տանէ կողմանէ այր նորա՝ յորժամ ուրեք յամիցէ: Առ. ԼԱ. 21.

14. Կին շնորհակալ բարձր առնէ զփառս առն իւրոյ: Առ. ԺԱ. 16.

15. Կին ժրագլուխ ուրախ առնէ զայր իւր, եւ զամս նորա լի արասցէ խաղաղութեամբ: Սիր. ԻԱ. 2.

16. Կին ժրագլուխ պատուականագոյն է քան զականս պատուականս: Առ. ԼԱ. 10.

17. Իմաստուն կանայք շինեցին տունս. իսկ անզգամքն ձեռօք իւրեանց կործանեցին: Առ. ԺԴ. 1.

18. Աթոռ անարգութեան՝ կին որ ատեայ զիրաւունս: Առ. ԺԱ. 16.

19. Վէր սրտի՝ կին չար: Սիր. ԻԵ. 31.

20. Փոքր է ամենայն չարութիւն առ չարութեամբ կնոջ: Սիր. ԻԵ. 26.

21. Լաւ իցէ բնակել յանապատի, քան ընդ



կնոջ անզգամի լեզուանւոյ եւ բարկացողի: Առ. ԻԱ. 19.

22. Լաւ է բնակել առ անկեան տամալոջ, քան ընդ կնոջ բամբասողի ի տան միում: Առ. ԻԵ. 24.

23. Բնակել ընդ առիւծ եւ ընդ վիշապի հաճեցայ, քան բնակել ընդ կնոջ չարի: Սիր. ԻԵ. 23.

24. Զառ ի վեր աւազուտ առ ոտիւք ծերոյ, այսպէս կին լեզուանի առն հեզոյ: Սիր. ԻԵ. 27.

25. Որպէս որդն փայտի վնասակար է, նոյնպէս կորուսանէ զայր կին չարագործ: Առ. ԺԲ. 4.

26. Կին չար զարանց պատուականաց զհոգիս որսայ: Ծրարիցէ՞ ոք հուր ի գոգ, եւ զհանդերձսն ոչ այրիցէ: Կամ գնայցէ՞ ոք ի վերայ կայծականց հրոյ, եւ զոտս իւր ոչ խարշիցէ: Առ. Զ. 26. 27. 28.

## ՕՐԻՆԱԿՔ

### 1.

Հռութ:

Յաւուրս դատելոյ դատաւորացն եկն սով յերկիրն: Եւ գնաց այր ի Բեթղեհեմէ Յուդայ՝ պանդխտանալ յագարակին Մովաբայ, ինքն եւ կին իւր եւ երկու որդիք իւր: Եւ անուն առնն՝ Եղիմելէք, եւ անուն կնոջ նորա՝ Նոոմին: Մեռաւ Եղիմելէք, եւ մնաց կինն եւ երկու որդիք նորա, եւ առին իւրեանց կանայս Մովաբացիս. անուն միումն՝ Որփա, եւ անուն երկրորդին՝ Հռութ: Եւ մեռան անդ երկոքին (որդիքն) եւ մնաց կինն միայն յառնէ իւրմէ եւ յորդւոց իւրոց: Եւ ել ի տեղւոջէն՝ ուր էր, եւ երկոքին նուանք նորա ընդ նմա, դառնալ յերկիրն Յուդայ: Եւ ասէ Նոոմին ցերկոսին նուանս իւր. Երթայք դարձարուք յիւրաքանչիւր տուն հօր իւրոյ. տացէ ձեզ Տէր եւ գտջիք հանգիստ իւրաքանչիւր ի տան հօր իւրոյ: Եւ ամբարձին զձայնս իւրեանց եւ լացին: Համբուրեաց

Որփա զոկեսուր իւր եւ դարձաւ ի ժողովուրդ իւր։ Բայց Հռութ ասէ. Մի պատահեսցէ ինձ թողուլ զքեզ եւ դառնալ ի քէն. զի ուր դու երթայցես՝ երթայց, եւ ուր հանգչիցիս՝ հանգեայց։ Բայց եթէ մահ մեկնեսցէ ընդ իս եւ ընդ քեզ։ Գնացին երկոքին եւ եկին ի Բեթղեհէմ ի սկիզբն հնձոց գարւոյ։

Եւ անդ էր այր ծանօթ առնն Նոոմինայ, եւ այրն հզօր զօրութեամբ։ Ասէ Հռութ Մովաբացի ցՆոոմին. Երթայց յանդ եւ քաղեցից հասկս զհետ ուրուք. Եւ ասէ ցնա. Երթ, դուստր։ Եւ գնաց, եւ դիպեցաւ վիճակի անդին Բոոսայ։ Եւ ահա Բոոս եկն ի Բեթղահեմէ եւ ասէ ցպատանին իւր՝ որ կայր ի վերայ հնձողացն. Ո՞յր է աղջիկդ այդ։ Պատասխանի ետ պատանին եւ ասէ. Մովաբացի աղջիկն է, որ դարձաւ ընդ Նոոմինայ։ Եւ ասէ Բոոս ցՀռութ. Լուա՞ր, դուստր. մի այլ ուրեք երթիցես քաղել հասկ յայլոց անդի. այլ աստէն իսկ յարեաց յաղջկունս իմ եւ երթիցես զհետ նոցա։ Ահա ժամ ճաշոյ է. մատիր այսր եւ կեր ի հացէդ, եւ թացցես զպատառ քո ի քացախիդ։ Նստաւ Հռութ ի կողմանէ հնձողացն. եկեր եւ յագեցաւ եւ յարեաւ քաղել հասկ։ Քաղեաց յանդին մինչեւ ցերեկոյ. եւ ծեծեաց զոր քաղեացն, եւ եղեւ արդու մի գարւոյ, եւ առ եւ եմուտ ի քաղաքն։ Ասէ ցնա սկեսուրն իւր. Ո՞ւր ժողովեցեր այսօր եւ կամ ո՞ւր եղեր։ Պատմեաց Հռութ սկեսրին իւրոյ թէ ո՞ւր եղեւ. եւ ասաց զանուն առնն՝ առ որում եղեւ այն օր, թէ Բոոս է։ Եւ ասէ ցնա Նոոմին. Մերձ է այրն ի մեզ. բարի է, դուստր, զի եղեր ընդ աղջկունս նորա։ Եւ յարեցաւ Հռութ յաղջկունսն Բոոսայ քաղել հասկ մինչեւ վախճանել հնձոցն գարեաց։ Եւ առ Բոոս զՀռութ եւ եղեւ նմա ի կնութեան եւ ծնաւ որդի, եւ կոչեցին զանուն նորա Ովբէթ, նա է հայր Յեսսեայ՝ հօր Դաւթի։

Հռութ։



## 2.

### Որդիք Նոյի։

Սկսաւ Նոյ զերկիր գործել, տնկեաց այգի, եւ արբ ի գինւոյն եւ արբեցաւ, եւ մերկացաւ ի տան իւրում։ Եւ ետես Քամ՝ հայր Քանանու, եւ ել պատմեաց երկուց եղբարց իւրոց արտաքոյ։ Առեալ Սեմայ եւ Յաբեթի հանդերձ, եդին ի վերայ թիկանց երկոցուն, եւ գնացին յետս յետս եւ ծածկեցին զմերկութիւն հօրն իւրեանց, եւ զերեսս իւրեանց յետս ընդդէմ ունէին։ Սթափեցաւ Նոյ ի գինւոյ անտի իւրմէ, եւ գիտաց զինչ արար ընդ նա որդին իւր կրտսեր, եւ ասէ. Անիծեալ Քանան, եւ եղիցի ծառայ եղբարց իւրոց։ Օրհնեալ Տէր Աստուած, Աստուած Սեմայ, եւ եղիցի Քանան ծառայ նորա. ընդարձակեսցէ Աստուած Յաբեթի, եւ բնակեսցէ ի տան Սեմայ, եւ եղիցի Քանան ծառայ նոցա։

Ծննդ. Թ. 20—27.

## 3.

### Դաւիթ եւ Աբեսողոմ։

Արար Աբեսողոմ կառս եւ երիվարս, եւ առաքեաց պատուիրակս յամենայն ցեղս Իսրայէլի եւ ասէ. Ի լսել ձեր զձայն եղջեր փողոյ, ասասջիք եթէ թագաւորեաց Աբեսողոմ։ Եւ եղեւ ժողովուրդ բազում երթեալ ընդ Աբեսողոմայ։ Ասէ Դաւիթ ցամենայն ծառայս իւր. Արիք եւ փախիցուք։ Ել արքայ եւ ամենայն տուն նորա հետիոտս, ելանէր ընդ զառիվերն Ձիթենեաց, ելանէր եւ լայր, եւ ինքն երթայր բոկ։ Եւ Աբեսողոմ եւ ամենայն Իսրայէլ մտին յԵրուսաղէմ։ Եւ Դաւիթ եհաս ի բանակս, եւ հանդէս արար զօրուն՝ որ ընդ նմա, եւ կացոյց ի վերայ նոցա հազարապետս եւ հարիւրապետս։ Պատուէր ետ արքայ եւ ասէ.

խնայեսջիք ի պատանեակ իմ Աբեսողոմ: Եղեւ կռիւ յանտառին Եփրեմայ, եւ պարտեցաւ անդ զօրն Իսրայելի առաջի ծառայիցն Դաւթի: Դիպեցաւ Աբեսողոմ առաջի ծառայիցն Դաւթի, եւ էր հեծեալ ի ջորւոջ իւրում. եմուտ ջորին ընդ թաւ կաղնեաւ մեծաւ, պատեցաւ գլուխ նորա ընդ կաղնեաւն, եւ կախեցաւ ընդ երկինս եւ ընդ երկիր, եւ ջորին անց ի ներքոյ նորա: Եւ ետես այր մի եւ պատմեաց Յովաբայ. առ Յովաբ երիս նետս եւ եհար զնոսա ի սրտի Աբեսողոմայ, եւ ընկէց զնա ի վիհ մեծ յանտառին: Եւ եհաս Քուսի եւ ասէ ցարքայ. Աւետիք տեառն իմոյ արքայի, զի արար քեզ Տէր իրաւունս: Ասէ արքայ. Եթէ ողջո՞ւն իցէ մանկանն իմոյ Աբեսողոմայ: Եւ ասէ Քուսի. Եղիցին իբրեւ զմանուկն թշնամիք տեառն իմոյ արքայի: Խռովեցաւ արքայ եւ ելաց. եւ այսպէս ասէր ի լալ իւրում. Որդեա՛կ իմ Սբեսողոմ, Աբեսողոմ որդեա՛կ իմ. ո՛ տայր զմահ իմ փոխանակ քո. ես փոխանակ քո, Աբեսողո՛մ որդեակ իմ, որդեա՛կ իմ Աբեսողոմ:

Բ. Թագ. ԺԵ—ԺԸ.

## 4.

### Որդին անառակ:

Առն միոջ էին երկու որդիք: Ասէ կրտսերն ի նոցանէ ցհայրն. Հա՛յր, տուր ինձ բաժին՝ որ անկանի յընչիցդ. եւ նա բաժանեաց նոցա զկեանսն: Յետ ոչ բազում աւուրց՝ ժողովեալ զամենայն կրտսերոյն, գնաց յաշխարհ հեռի, եւ անդ վատնեաց զինչս իւր, զի կեայր անառակութեամբ: Իբրեւ սպառեաց զամենայն, եղեւ սով սաստիկ յաշխարհին յայնմիկ եւ սկսաւ ինքն չքաւորել: Գնացեալ յարեցաւ ի մի ումն քաղաքացւոց աշխարհին այնորիկ. եւ յղեաց զնա յագարակ իւր՝ արածել խոզս: Եւ եկեալ ի միտս իւր՝ ասէ. Քանի՞ վարձկանք իցեն ի տան հօր իմոյ հացալիցք, եւ ես աստ



սովամահ կորնչիմ: Յարուցեալ գնացից առ հայր իմ: Եւ յարուցեալ եկն առ հայր իւր: Մինչ դեռ հեռագոյն էր, ետես զնա հայրն եւ գթացաւ, յարեաւ եւ ընթացաւ ընդառաջ, անկաւ զպարանոցաւն նորա եւ համբուրեաց զնա: Ասէ ցնա որդին. Հա՛յր, մեղայ յերկինս եւ առաջի քո, եւ ոչ եւս եմ արժանի կոչել որդի քո: Ասէ հայրն ցծառայսն իւր. Վաղվաղակի հանէք զպատմուճանն առաջին եւ ագուցէք նմա, եւ տուք զմատանին ի ձեռն նորա եւ կօշիկս յոտս նորա. եւ ածէք զեզն պարարակ, զենէք, կերիցուք եւ ուրախ լիցուք. զի այս որդի իմ մեռեալ էր եւ եկեաց, կորուսեալ էր եւ գտաւ:

Ղուկ. ԺԵ. 11—24.

## 5.

### Գութ մայրենի:

Երեւեցան երկու կանայք արքայի (Սողոմոնի). եւ ասէ մի կինն. Յի՛ս, տէր իմ. ես եւ կինս այս էաք ի միում տան, եւ ծնայ ի տանն: Յաւուրն երրորդի ծնաւ եւ կինս այս. եւ մեք առանձինն էաք, եւ ոչ ոք գոյր ընդ մեզ ի տանն՝ բաց ի մենջ յերկոցունց: Մեռաւ որդի սորա ի գիշերի, քանզի ննջեաց ի վերայ նորա. եւ յարեաւ ի հասարակ գիշերի, առ զմանուկն իմ ի գրկաց իմոց. եւ աղախին քո ի քուն էր, եւ ննջեցոյց զնա ի ծոց իւրում. եւ զորդին իւր զմեռեալ ննջեցոյց ի ծոց իմում: Յարեայ ընդ առաւօտն դիեցուցանել զորդին իմ, եւ նա էր մեռեալ. եւ հայեցայ ընդ նա այգուն, եւ ահա չէր որդին իմ՝ զոր ծնայ: Եւ ասէ միւս կինն. Ոչ. այլ որդի քո է մեռեալն, եւ որդի իմ կենդանին: Ասէ ցնոսա արքայ. Դու ասես թէ Այս որդի իմ է՝ որ կենդանիս է, եւ որդի դորա մեռեալն. եւ դու ասես. Ոչ. այլ որդին քո մեռեալն, եւ որդին իմ կենդանին: Եւ ասէ ար-

քայ. Կոտրեցէք զմանուկն զստնդեաց զկենդանի յերկուս, եւ տուք զկէսն նորա դմա, եւ զկէսն նորա նմա: Պատասխանի ետ կինն՝ որոյ որդին կենդանի էր, քանզի խռովեցան աղիք նորա ի վերայ որդւոյն իւրոյ, եւ ասէ. Ցիս, տէր. տուք նմա զմանուկն կենդանի, եւ մի սպանանէք զնա: Եւ միւսն ասէր. Մի իմ լիցի եւ մի դորա. կոտրեցէք ընդ մէջ: Պատասխանի ետ արքայ եւ ասէ. Տուք դմա զմանուկն կենդանի, որ ասաց թէ տուք զդա նմա եւ մի սպանանէք զդա. նա է մայր դորա:

Գ. Թագ. Գ. 16—27.

## 6.

### Հեղի եւ որդիք նորա:

Որդիքն Հեղեայ քահանայի՝ որդիք ժանտք: Եւ Հեղի ծերացեալ էր յոյժ, եւ լսէր զամենայն ինչ՝ զոր առնէին որդիք նորա, եւ ասէ ցնոսա. Ընդէ՞ր առնէք ըստ բանին ըստ այնմիկ՝ զոր ես լսեմ ի բերանոյ ամենայն ժողովրդեանն. մի, որդեակք. ոչ է բարւոք լուրն՝ զոր ես լսեմ: Եւ ոչ լսէին ձայնի հօրն իւրեանց: Ընդ աւուրսն ընդ այնոսիկ ժողովէին այլազգիքն ի վերայ Իսրայէլի, եւ ել Իսրայէլ ընդդէմ նոցա ի պատերազմ: Խմբեցաւ պատերազմն, եւ պարտեցաւ այր Իսրայէլի յերեսաց այլազգեացն: Առաքեաց ժողովուրդն ի Սելով եւ առին անտի զտապանակ ուխտին Տեառն. եւ երկոքեան որդիքն Հեղեայ ընդ տապանակի ուխտին գնացին: Իբրեւ եկն տապանակն ուխտին ի բանակն, աղաղակեաց ամենայն Իսրայէլ. եւ երկեան այլազգիքն եւ ասեն. Այն աստուածք նոցա եկին ի բանակն: Պատերազմեցան ընդ նոսա. եւ փախեաւ այր Իսրայէլի, եւ տապանակն Աստուծոյ առաւ, եւ երկոքին որդիքն Հեղեայ մեռան:

Ա. Թագ. Բ. Դ.



## 7.

### Ստեղծումն Եւայի:

Եւ ասաց Տէր Աստուած. Ոչ է բարւոք մարդոյդ միայն լինել, արասցուք դմա օգնական: Եւ արկ թմբրութիւն ի վերայ Ադամայ, եւ ննջեաց. եւ առ մի ի կողից նորա, եւ ելից ընդ այնր մարմին: Եւ շինեաց Տէր Աստուած զկողն՝ զոր առ յԱդամայ, ի կին, եւ ած զնա առ Ադամ: Եւ ասէ Ադամ. Այս այժմիկ ոսկր յոսկերաց իմոց, եւ մարմին ի մարմնոյ իմմէ: Վասն այնորիկ թողցէ այր զհայր իւր եւ զմայր իւր, եւ երթիցէ զհետ կնոջ իւրոյ, եւ եղիցին երկոքեան ի մարմին մի:

Ծննդ. Բ. 18—24.

## 8.

### Իսահակ եւ Ռեբեկա:

Եւ Աբրահամ ծերացեալ էր եւ անցեալ զաւուրբք: Եւ ասէ Աբրահամ ցծառայն իւր, ցերէց տան իւրոյ. Մի առցես կին որդւոյ իմում Իսահակայ ի դստերաց Քանանացւոց՝ յորոց միջի ես բնակեմ. այլ յերկիրն իմ՝ ուստի ելեալ եմ, երթիցես, եւ ի տուն իմ, եւ առցես դու անտի կին որդւոյ իմում Իսահակայ: Եւ առ ծառայն տասն ուղտ յուղտուց տեառն իւրոյ եւ գնաց ի Միջագետս, ի քաղաքն Նաքովրայ: Եւ նստոյց զուղտսն արտաքոյ քաղաքին առ ջրհորոյ ջրոցն ընդ երեկս՝ յորժամ ջրուորն ելանէր: Եւ ասէ. Տէր Աստուած տեառն իմոյ Աբրահամու, աւասիկ դստերք բնակչաց քաղաքիս ելանեն հանել ջուր. եւ եղիցի կոյս մի՝ որում ես ասացից, թէ խոնարհեցո զսափորդ քո, զի արբից. եւ ասէ ցիս՝ Արբ, եւ ուղտուցդ քոց եւս արբուցից, զայն պատրաստեցեր ծառային քում Իսահակայ: Եւ մինչ չեւ կատարեալ էր

նորա զխօսսն ի մտի իւրում, եւ ահա Ռեբեկա ելն ել, եւ ունէր սափոր յուս իւր: Էջ յաղբիւրն եւ ելից զսափորն իւր եւ ել: Ընթացաւ ծառայն ընդ առաջ նորա եւ ասէ. Արբո ինձ սակաւ մի ջուր ի սափորոյ այտի: Եւ նա ասէ. Արբ, տէր, եւ արբոյց նմա: Եւ ասէ. Եւ ուղտուց քոց հանից ջուր: Եւ այրն միտ դնէր նմա: Եւ իբրեւ դադարեցին ամենայն ուղտքն յըմպելոյ, եւ առ այրն գինդս ոսկիս եւ երկուս ապարանջանս ի ձեռս նորա եւ եհարց զնա. Ո՞յր դուստր ես դու. պատմեա ինձ թէ իցէ ի տան քում մեզ տեղի իջեվանաց: Եւ ասէ ցնա. Դուստր Բաթուելի եմ ես, եւ յարդ եւ խոտ շատ է մեր եւ տեղի իջեվանաց: Խնդաց այրն եւ երկիր եպագ Աստուծոյ: Եւ ընթացաւ աղջիկն, պատմեաց ի տան մօր իւրոյ ըստ բանիցն այնոցիկ:

Եւ Ռեբեկայ էր եղբայր՝ որում անուն էր Լաբան: Եւ ընթացաւ Լաբան առ այրն եւ ասէ ցնա. Եկ մուտ ի տուն, օրհնեալ տեառն: Եմուտ այրն ի տուն անդր, եւ ասէ. Ծառայ Աբրահամու եմ ես: Եւ երդմնեցոյց զիս տէր իմ եւ ասէ. Ի տուն հօր իմոյ երթիցես եւ ի տոհմ իմ, եւ առցես անտի կին որդւոյ իմում: Արդ եթէ առնէք դուք շնորհս եւ արդարութիւն առ տէրն իմ, պատմեցէք ինձ: Պատասխանի ետուն Լաբան եւ Բաթուէլ եւ ասեն. Ի Տեառնէ ել իրդ այդ. ահաւադիկ Ռեբեկա առաջի քո, առ եւ գնա, եւ եղիցի կին որդւոյ տեառն քո: Եւ իբրեւ լուաւ ծառայն Աբրահամու զբանս նոցա, երկիր եպագ Տեառն, եւ եհան անօթս ոսկւոյ եւ անօթս արծաթոյ եւ հանդերձս եւ ետ Ռեբեկայ. եւ ետ ընծայս եղբարց նորա եւ մօրն: Կերան եւ արբին նա եւ արքն՝ որ ընդ նմա էին, եւ ննջեցին: Եւ յարուցեալ ի վաղորդայն անդր, ասէ. Արձակեցէք զիս, զի երթայց առ տէր իմ: Կոչեցին զՌեբեկա եւ ասեն ցնա. Երթա՞ս ընդ առնս ընդ այսմիկ: Եւ նա ասէ. Երթամ: Եւ յուղարկեցին զՌեբեկա եւ զինչս նորա:



Յարուցեալ Ռեբեկա եւ նաժիշտք իւր, ելին յուղտսն եւ գնացին ընդ առն: Եւ Իսահակ յանապատի անդ առ Ջրհորովն տեսլեան բնակէր: Եւ ել զբօսնել ի դաշտին ընդ երեկս: Ամբարձ զաչս իւր եւ ետես զի գային ուղտք աստն: Ամբարձեալ զաչս իւր եւ Ռեբեկայ՝ ետես զԻսահակ, էջ վաղվաղակի յուղտուէ անտի, եւ ասէ ցծառայն. Ո՞վ է այրն՝ որ գայ ի դաշտին ընդ առաջ մեր: Եւ ասէ ծառայն. Նա է տէրն իմ: Եւ նորա առեալ ծորձ՝ արկաւ զիւրեւ: Եւ պատմեաց ծառայն Իսահակայ զամենայն զխօսսն՝ զոր արար: Եւ եմուտ Իսահակ ի տուն Սառայի մօր իւրոյ եւ առ զՌեբեկա եւ եղեւ նորա կին:

Ծննդ. ԻԴ.

## 9.

### Տուբիա եւ Սառա:

Յիշեաց (Տովբիթ) զարծաթն՝ զոր եդ առ Գաբայելայ ի Հռագիս քաղաքի: Կոչեաց (զՏուբիա զորդի իւր) եւ ասէ ցնա. Որդեակ իմ, ես ցուցանեմ քեզ զտասն քանքար արծաթոյն՝ զոր եդի ես ի պահ առ Գաբայելայ ի Հռագաւ յերկրին Մարաց: Եւ ետ նմա զգիր առնն՝ առ որում կայր գանձն յաւանդի. եւ ասէ ցնա. Խնդրեա դու քեզ այր՝ որ եկեսցէ ընդ քեզ. եւ ես տաց զվարձս նորա. եւ երթիցես առցես զարծաթն: Գնաց Տուբիա խնդրել իւր վարձուոր, եւ եգիտ նա զՀռափայէլ հրեշտակ եւ ասէ ցնա. Կարե՞ս գալ դու ընդ իս ի Հռագաւ: Ասէ ցնա հրեշտակն. Եկից ես ընդ քեզ: Եւ ասէ ցնա Տուբիա. Մնա դու վայրիկ մի աստէն, մինչեւ մտից հարցից ես զհայրն իմ: Եմուտ պատմեաց հօրն: Եւ ասէ ցնա հայրն իւր. Գնա դու, որդեակ, ընդ առնդ ընդ այդմիկ. այլ որ բնակեալն է յերկինս Աստուած՝ յաջողեսցէ զճանապարհն ձեր, եւ հրեշտակն նորա ուղեկից

լիցի քեզ: Ելին գնացին երկոքեան ի միասին. եւ շուն պատանեկին ընդ նոսա:

Եկին ի գետն Դկղաթ եւ հանգեան անդ առ ափամբն: Եւ պատանեակն էջ լուանալ յեզր գետոյն: Վաղեաց ձուկն մի ի գետոյ անտի, եւ կամէր կլանել զպատանեակն: Եւ հրեշտակն ասէ ցպատանեակն. Բուռն հար, կալ զձուկնդ: Կալաւ պատանեակն զձուկն եւ եհան զնա ի ցամաք: Ասէ ցնա հրեշտակն. Բաց դու զփոր ձկանդ, եւ հան զսիրտդ եւ զլեարդդ եւ զլեղիդ, եւ դիր զգուշութեամբ: Արար պատանեակն որպէս եւ ասաց ցնա հրեշտակն. եւ զձուկնն խորովեցին եւ կերան. եւ ապա գնացին երկոքեան ի միասին, մինչեւ մօտ եղեն յԵկբատանս: Իբրեւ մերձեցան նոքա, ասէ հրեշտակն ցպատանեակն. Եղբայր, այսօր ունիմք մեք հանգչել առ Հռագուելայ: Է նորա դուստր եւ անուն է նորա Սառա: Արդ խօսեցայց ես վասն նորա, զի տացէ զնա քեզ կին. զի քեզ անկ է ժառանգութիւն աղջկան, եւ աղջիկն արդարեւ բարւոք է, զգաստ է եւ իմաստուն: Ասէ պատանեակն ցհրեշտակն. Եղբա՛յր Ազարիա, իմ այսպէս լուեալ է վասն աղջկանն, թէ տուեալ է զնա եւթն առն, եւ ամենեքեան նոքա մեռեալ են: Երկնչիմ գուցէ մեռանիցիմ որպէս եւ առաջինքն. զի ունի զաղջիկն դեւ: Արդ եթէ առնեմ զայս, երկնչիմ գուցէ իջուցանիցեմ ես զհայրն իմ եւ զմայրն իմ ցաւօք ի վերայ իմ ի գերեզմանն իւրեանց. եւ որդի այլ ոչ գոյ՝ որ թաղէ զնոսա: Ասէ ցնա հրեշտակն. Վասն դիւին մի ինչ հոգար. առցես դու աճիւնախառն կրակ, եւ դիցես դու ի վերայ նորա ի սրտէ անտի եւ ի լերդէ ձկանն եւ ծխեսցես. եւ հոտոտիցէ դեւն եւ փախիցէ: Եւ դու եւ աղջիկն գոչեսջիք առ ողորմածն Աստուած լալով մեծաւ. եւ կեցուսցէ զձեզ եւ ողորմեսցի ձեզ: Իբրեւ լուաւ զայս Տուբիա, անկաւ նմա գութ ընդ աղջկանն, եւ ոգի նորա կցեցաւ ի սէր նորա:



Եկին նոքա յԵկբատանս, եւ մտին նոքա ի տուն Հռագուելայ: Եհարց ցնոսա Հռագուէլ եւ ասէ. Ուստի՞ էք, եղբարք: Ասեն ցնա. Յորդւոցն Նեփթաղիմայ եմք, որք գերեալն են ի Նինուէ: Ասէ ցնոսա. Ճանաչէ՞ք դուք զՏուբիթ զեղբայրն մեր: Ասէ Տուբիա. Հայր իմ է: Յարուցեալ վաղվաղակի Հռագուէլ, համբուրեաց զնա. եւ իբրեւ լուաւ թէ Տուբիթայ կացին աչքն, ելաց եւ տրտմեցաւ ինքն եւ Հեդնա կինն իւր եւ Սառա դուստր նոցա: Ընկալան եւ հանգուցին զնոսա մեծաւ ուրախութեամբ եւ յօրինեցին եդին առաջի նոցա խորտիկս բազումս: Ասէ Տուբիա ցՀռափայէլ. Եղբա՛յր Ազարիա, արդ խօսեաց դու վասն որոյ խօսէիրն ի ճանապարհի անդ, զի եղիցի այնպէս:

Եւ դարձոյց զբանն անդրէն առ Հռագուէլ: Ասէ Հռագուէլ ցՏուբիա. Կեր, արբ եւ ուրախ լեր. զի քեզ անկ է առնուլ զմանուկն իմ: Առ զնա քեզ ըստ օրինաց, եւ քեզ լիցի. այլ ողորմածն Աստուած աջողեսցէ ձեզ ի բարիս: Կոչեաց նա զՍառա զդուստրն իւր, եւ կալաւ նա զձեռանէ նորա եւ ետ զնա Տուբիայ կնութեան, եւ օրհնեաց զնոսա: Եւ ապա սկսան ուտել եւ ըմպել եւ ուրախ լինել:

Իբրեւ կատարեցին նոքա ուտել զընթրիսն, առ (Տուբիա) զաճիւնախառն զկրակն խնկոցն, եւ եդ ի վերայ նորա զսիրտ ձկանն եւ զլեարդն եւ ծխեաց. եւ ասէ. Արի, քո՛յր, եւ կացցուք յաղօթս, եւ ողորմեսցի մեզ Աստուած: Սկսաւ Տուբիա կալ յաղօթս եւ ասէ. Օրհնեալ ես դու, Տէր Աստուած հարցն մերոց. դու արարեր զԱդամ եւ ետուր նմա օգնական զԵւա, եւ ի նոցանէն եղեւ ամենայն զաւակ մարդկան: Դու ասացեր, եթէ Ոչ է բարւոք լինել մարդոյն միայն, արասցուք նմա օգնական նման նմա: Եւ արդ, Տէր, առնում ես ինձ զքո՛յրս զայս. նայեաց, Տէր, եւ ողորմեաց ինձ, զի ի միասին ծերասցուք:

Արար նոցա (Հռագուէլ) հարսանիս աւուրս չորեքտասան։ Կոչեաց Տուբի զՀռափայէլ եւ ասէ ցնա. Եղբայր Ազարիա, առ դու ընդ քեզ պատանի մի եւ երկուս ուղտս, եւ գնա դու ի Հռագիս Մարաց առ Գաբայէլ, եւ բեր դու ինձ զարծաթն անտի. վասն զի երդուաւ Հռագուէլ եթէ ոչ արձակեմ զքեզ։ Արդ հայրն իմ համարէ զաւուրս. եւ եթէ յամեմք, մեծաւ վշտօք ի տրտմութեան լինի։ Գնաց Հռափայէլ. եւ հանդեաւ առ Գաբայելայ, եւ ետ նմա զգիր մուրհակին, եւ եբեր նա զպարկսն կնքօքն հանդերձ։ Եւ ասէ Տուբիա ցՀռագուէլ. Արձակեա զիս, զի հայր իմ եւ մայր իմ ոչ եւս ակն ունին տեսանել զիս ի հողոց։ Ասէ ցնա աներն իւր. Կաց մնա դու աստ առ իս, եւ ես յղեցից մանկունս առ հայրն քո, եւ նոքա պատմեսցեն նմա վասն քո։ Եւ ասէ Տուբիա. Ոչ է այդպէս. այլ արձակեսցես զիս առ հայր իմ։ Եւ յարեաւ Հռագուէլ եւ ետ նմա զՍառա զկին նորա եւ զկէս ընչից իւրոց. օրհնեաց զնոսա, եւ ասէ. Յաջողեսցէ ձեզ, որդեակ իմ, Տէր Աստուած երկնից մինչ չեւ մեռեալ իցեմ ես։ Եւ ասէ ցդուստրն իւր. Պատուեա դու, որդեակ իմ, զսկեսուրն քո եւ զըսկեսրայրն, քանզի արդ նոքա են քո հայր եւ մայր. եւ համբուրեաց զնա։ Եւ Հեդնաս ասէ ցՏուբիա. Եղբայր սիրելի, ողջութեամբ տարցի զքեզ Տէր ի տուն քո, եւ տացէ տեսանել ինձ զաւակ ի Սառայէ դստերէս իմմէ. զի բերկրեցայց ես առաջի Տեառն. եւ արդ յանձն առնեմ զսա քեզ. մի տրտմեցուցանիցես զսա յետ այսորիկ։

Տոբ. Դ.—Ժ.

## 10.

### Տովբիթ եւ ընտանիք նորա։

Յորժամ կատարեցան աւուրք ժամանակելոյն, եւ ոչ եկին (Տուբիա եւ Հռափայէլ), ասէ



(Տուբիթ). Արդեւք մեռա՞ւ Գաբայէլ, եւ ոչ ոք ետ նմա զարծաթն. եւ նա ոչ կամի գալ յամօթոյ։ Եւ տրտում էր նա յոյժ։ Ասէ ցնա կինն իւր. Կորեաւ մանուկն, զի յամեաց այսչափ։ Եւ սկսաւ նա լալ եւ ողբալ զնա։ Եւ ասէ. Ոչ է ինձ պէտս, որդեակ իմ, եւ ոչ ինչ. այլ ընդէ՞ր բնաւ թողի զքեզ, լո՛յս աչաց իմոց։ Ասէ ցնա Տուբիթ. Լուռ լեր եւ մի հոգար. ողջ է։ Եւ նա ասէ ցնա. Դու լուռ լեր եւ մի խաբեր զիս, զի մանկիկն իմ կորեաւ։ Եւ ելանէր զօրհանապազ եւ դայր ի ճանապարհն՝ ընդ որ գնացինն. ի տուէ հաց ոչ ուտէր եւ ի գիշերի ոչ դադարէր ի ողալոյ զՏուբիա զորդին իւր։

Եւ Տուբիա երթայր եւ օրհնէր զԱստուած, զի յաջողեաց նմա զճանապարհն նորա, մինչեւ մերձեցան նոքա ի Նինուէ։ Եւ ասէ Հռափայէլ ցՏուբիա. Արդ ո՞չ գիտես դու, եղբայր, որպէս թողեր դու զհայրն քո։ Եկ յառաջ անցցուք մեք քան զկինդ քո, եւ պատրաստեսցուք մեք զտունն. եւ առ դու ի ձեռն քո զլեղի ձկանն։ Եւ գնացին նոքա. եւ եկն շունն զկնի նոցա։ Եւ Աննա նստէր եւ սպասէր ըստ սովորութեանն՝ ճանապարհին որդւոյն իւրոյ. եւ ետես նա զնա զի գայր, եւ ասէ. Ահաւասիկ որդին քո գայ, եւ այրն՝ որ ընկերն չոգաւ ընդ նմա։ Եւ ասէ Հռափայէլ. Գիտեմ ես զի բանան աչք հօրն քո։ Արդ օծ շուրջ զաչօքն զլեղիդ, եւ նա կսկծեցուսցէ եւ հանցէ զլուսնն յաչաց նորա, եւ տեսանիցէ։ Եւ ընթացաւ ընդառաջ Աննա, եւ անկաւ ի վերայ պարանոցի որդւոյն իւրոյ, եւ ասէ ցնա։ Տեսի ես զքեզ, որդեակ իմ. արդ այսուհետեւ անհոգ մեռանիմ։

Եւ Տուբիթ ելանէր արտաքոյ առ դրունսն, խարխափէր գլորէր։ Որդին ընթացաւ առ նա, եւ յարուցանէր կանգնէր զհայրն իւր։ Եւ ցանէր նա զլեղին յաչս հօրն իւրոյ, եւ ասէր. Ժուժեա, հայրիկ, եւ համբերեա։ Իբրեւ եկաց վայր մի,

վաղվաղակի կեղեւեցան եւ անկան լուսունքն յաչաց նորա. եւ ետես նա զորդին իւր, եւ անկաւ նա զպարանոցաւ նորա եւ լայր եւ ասէր. Օրհնեալ ես, Տէր Աստուած, եւ օրհնեալ է անուն քո յաւիտեանս. եւ օրհնեալ են ամենայն սուրբք քո հրեշտակք. զի խրատեցեր եւ ողորմեցար ինձ, զի տեսանեմ ես զՏուբիա զորդի իմ: Եւ եմուտ որդի նորա ի ներքս խնդութեամբ, եւ պատմեաց նա հօրն իւրում զմեծամեծսն՝ որ եղեն նմա ի Մարս: Եւ Տուբիթ ընդ առաջ նուոյն իւրոյ խնդութեամբ, եւ օրհնէր զԱստուած առ դուրսն Նինուէի. եւ զարմանային որք տեսանէին զնա, զի յընթանալն իւրում տեսանէր: Եւ Տուբիթ գոհանայր առաջի նոցա, թէ որպէս ողորմեցաւ նոցա Աստուած: Իբրեւ մօտ եղեւ Տուբիթ առ հարսնն իւր, օրհնեաց զնա եւ ասէ. Եկիր ողջութեամբ, դուստր: Օրհնեալ է Աստուած՝ որ ած զքեզ առ մեզ, եւ հայրն քո եւ մայրն քո: Եւ եղեւ ուրախութիւն ամենեցուն եղբարցն նորա՝ որ էին ի Նինուէի: Եւ արարին նմա անդ հարսանիս աւուրս եւթն:

Տուբ. Ժ.—ԺԱ.

## ԳԼՈՒԽ Գ.

### Իշխանութիւն:

1. Որ պահէ զօրէնս՝ երանելի է: Առ. ԻԹ. 18.

2. Ամենայն անձն՝ որ ընդ իշխանութեամբ է, ի հնազանդութեան կացցէ: Հռ. ԺԳ. 1.

3. Յուշ արասջիր նոցա՝ իշխանութեանց հնազանդ լինել եւ հպատակ կալ: Տիտ. Գ. 1.

4. Հարկ է հնազանդ լինել վասն խղճի մտացն: Հռ. ԺԳ. 5.

5. Որ հակառակ կայ իշխանութեանն՝ Աստուծոյ հրամանին հակառակ կայ: Հռ. ԺԳ. 2.

6. Քանզի ոչ ուստեք է իշխանութիւն՝ եթէ ոչ յԱստուծոյ: Հռ. ԺԳ. 1.



7. Կամիս չերկնչել յիշխանութենէ անտի, զբարիս գործեա: Հռ. ԺԳ. 3.

8. Հատուցէք ամենեցուն զպարտս. որում զհարկ՝ զհարկն, որում զմաքս՝ զմաքսն, որում զպատիւ՝ զպատիւն: Հռ. ԺԳ. 7.

## Ա.

### Հոգեւոր առաջնորդք եւ ժողովուրդք:

1. Երկիր ի Տեառնէ, եւ փառաւորեա զքահանայս: Սիր. Է. 33.

2. Յամենայն սրտէ քումէ երկիր ի Տեառնէ, եւ զքահանայս նորա մեծարեա: Սիր. Է. 31.

3. Յամենայն զօրութենէ քումէ սիրեա զարարիչն քո, եւ զպաշտօնեայս նորա մի անտես առնիցես: Սիր. Է. 32.

4. Ունկնդիր լերուք առաջնորդաց ձերոց եւ հպատակ կացէք նոցա: Եբր. ԺԳ. 17.

5. Զամենայն ինչ՝ զոր ասիցեն ձեզ, արարէք եւ պահեցէք: Մատ. ԻԳ. 3.

6. Որ ձեզ լսէ՝ ինձ լսէ, եւ որ զձեզ անարգէ՝ զիս անարգէ: Ղուկ. Ժ. 16.

7. Որ բարւոք վերակացու լինին երիցունք՝ կրկին պատուոյ արժանի եղիցին: Ա. Տիմ. Ե. 17.

8. Աղաչեմ զձեզ ճանաչել զվերակացուս ձեր: Համարեցարուք զնոսա արժանիս առաւել սիրոյ: Ա. Թես. Ե. 12. 13.

9. Առաջնորդ կացուցին զքեզ, մի հպարտանար. լեր ի միջի նոցա իբրեւ զմի ի նոցանէ: Սիր. ԼԵ. 1.

10. Հոգ տար նոցա, եւ ապա նիստ, եւ զամենայն պէտս նոցա արարեալ՝ բազմեաց. զի ուրախ լիցիս վասն նոցա: Սիր. ԼԵ. 2.

11. Զուարթ կաց, յամենայնի ճգնեաց, զպաշտօնդ քո կատարեալ կալ: Բ. Տիմ. Դ. 5.

12. Օրինակ լինիջիր հաւատացելոց՝ բանիւք, գնացիւք, սրբութեամբ: Ա. Տիմ. Դ. 12.

13. Զգոյշ կացէք անձանց եւ ամենայն հօտին՝ յորում եդ զձեզ Հոգին սուրբ տեսուչս: Գործ. Ի. 28.

14. Արածեցէք որ ի ձեզ հօտդ է Աստուծոյ, մի իբրեւ տիրելով վիճակացն, այլ լինել օրինակ հօտին: Ա. Պետր. Ե. 2. 3.

15. Հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց: Յովհ. Ժ. 11.

16. Ո՛ հովիւք, դուք ցրուեցէք զխաշինս իմ եւ ոչ յանձանձեցէք զնոսա. ես խնդրեցից վրէժս ի ձէնջ: Երեմ. ԻԳ. 2.

17. Ըստ առաջնորդի քաղաքին՝ ամենայն բնակիչք նորա: Սիր. Ժ. 2.

## Բ.

### Իշխանք եւ հպատակք:

1. ՅԱստուծոյ երկերուք, զթագաւորս պատուեցէք: Ա. Պետր. Բ. 17.

2. Հնազանդ լերուք թագաւորի՝ իբրեւ առաւել ումեք, դատաւորաց՝ իբրեւ ի նմանէ առաքելոց: Ա. Պետր. Բ. 13.

3. Երկիր յԱստուծոյ, որդեակ, եւ ի թագաւորէ, եւ ի միջէ ի նոցանէ մի ապստամբիցես: Առ. ԻԴ. 21.

4. Աղաչեմ առնել աղօթս վասն թագաւորաց եւ ամենայն իշխանաց: Ա. Տիմ. Բ. 2.

5. Որ բարկացուցանէ զթագաւոր՝ մեղս առնէ անձին իւրում: Առ. Ի. 2.

6. Զիշխան ժողովրդեան քո մի հայհոյեսցես: Ել. ԻԲ. 28.

7. Սակայն եւ ի մտի քում մի անիծաներ թագաւորի, եւ ի շտեմարանս սենեկաց քոց մի անիծաներ մեծի. զի թռչունք երկնից հասուցանեն զբարբառ քո, եւ որոց թեւք են՝ պատմեն զբան քո: Ժող. Ժ. 20.



8. Գարշելի է թագաւորի որ առնէ զչարիս: Առ. ԺԶ. 12.

9. Ընդունելի է թագաւորի սպասաւոր իմաստուն: Առ. ԺԴ. 35.

10. Ոչ գոյի առաջնորդ ազգի անօրինի: Առ. ԻԹ. 18.

11. Ճշմարտութիւն է զօրութիւն թագաւորաց: Ա. Եզր. Դ. 40.

12. Ողորմութիւն եւ ճշմարտութիւն՝ պահապան թագաւորի, եւ պատեսցեն արդարութեամբ զաթոռ նորա: Առ. Ի. 28.

13. Արդարութեամբ հաստատի աթոռ իշխանութեան: Առ. ԺԶ. 12.

14. Թագաւոր արդար՝ կանգնէ զաշխարհ: Առ. ԻԹ. 4.

15. Յորժամ թագաւոր արդար նստիցի յաթոռ, ոչ դառնայցէ ընդդէմ աչաց նորա ամենայն չարագործ: Առ. Ի. 8.

16. Ցերկայնմտութենէ յաջողութիւն թագաւորի: Առ. ԻԵ. 15.

17. Եթէ ցանկայք աթոռոց եւ գաւազանաց իշխանութեան, պատուեցէք զիմաստութիւն, զի յաւիտեան թագաւորիցէք: Իմ. Զ. 22.

18. Ցրուէ ամպարշտաց՝ թագաւոր իմաստուն: Առ. Ի. 26.

19. Թագաւոր հանճարեղ՝ հաստատութիւն ժողովրդոց: Իմ. Զ. 26.

20. Թագաւոր անխրատ կորուսանէ զժողովուրդ իւր: Սիր: Ժ. 3.

21. Վա՜յ քեզ, քա՛ղաք՝ որոյ թագաւոր քո մանուկ է, եւ իշխանք քո ընդ առաւօտս ուտեն: Ժող. Ժ. 16.

22. Բազում բռնաւորք նստան ի գետնի, եւ որում ոչ գոյր ակն՝ թագ եղաւ: Սիր. ԺԱ. 5.

23. Թագաւոր յանդուգն անկցի ի չարիս: Առ. ԺԳ. 17.

24. Խարդախութիւն կործանեսցէ զաթոռս բռնաւորաց: Իմ. Ե. 24.

25. Մի ինչ ստութիւն ասասցի ի լեզուէ թագաւորի. եւ ոչ ելցէ խաբէութիւն ի լեզուէ նորա: Առ. ԻԴ. 2. բ.

26. Ի բազում զօրս՝ փառք թագաւորի. ի նուազել ժողովրդոց՝ բեկումն հզօրաց: Առ. ԺԴ. 28.

27. Ի Տեառնէ տուաւ ձեզ հարստութիւնդ, եւ իշխանութիւնդ՝ ի Բարձրելոյն, որ պահանջեսցէ զգործս ձեր եւ քննեսցէ զխորհուրդս: Իմ. Զ. 4.

---

28. Սիրեցէք զարդարութիւն, որք դատիք զերկիր: Իմ. Ա. 1.

29. Դատաստան արդար դատեցարուք: Զաք. Է. 9.

30. Դատեցարուք արդարութեամբ ի մէջ առն եւ եղբօր իւրոյ: Բ. Օր. Ա. 16.

31. Մի առնուցուս ակն ի դատաստանի: Բ. Օր. Ա. 17.

32. Ակն առնուլ ի դատաստանի չէ բարւոք: Առ. ԻԴ. 23.

33. Դատաւոր իմաստուն խրատէ զժողովուրդ իւր: Սիր. Ժ. 1.

34. Մի խնդրեր լինել դատաւոր, գուցէ ոչ կարիցես բառնալ զանիրաւութիւնս. գուցէ երբեք ակն ածիցես յերեսաց հզօրի: Սիր. Է. 6.

35. Ժանտն՝ յորժամ նստիցի յատենի, զամենեսեան անարգէ: Առ. ԻԲ. 10.

## Գ.

### Տեարք եւ ծառայք:

1. Ծառայք, հնազանդ լերուք տերանց ձերոց: Եփ. Զ. 5.



2. Ծառայից՝ իւրեանց տերանց հնազանդ լինել եւ հաճոյս յամենայնի: Տիտ. Բ. 9.

3. Ծառայք, հնազանդ լինել յամենայնի երկիւղիւ տերանց, ոչ միայն բարերարացն եւ հեզոցն, այլ եւ կամակորացն: Ա. Պետր. Բ. 18.

4. Մի առ ականէ ծառայել, այլ սրտի մտօք: Եփ. Զ. 6. 7.

5. Ծառայք, զոր ինչ առնիցէք՝ սրտի մտօք գործեսջիք, իբրեւ Տեառն եւ ոչ իբրեւ մարդկան: Կող. Գ. 23.

6. Որ միանգամ ընդ լծով ծառայութեան իցեն՝ զիւրաքանչիւր տեարս պատուոյ արժանի համարեսցին: Ա. Տիմ. Զ. 1.

7. Ծառայ՝ որ գիտիցէ զկամս Տեառն իւրոյ եւ ոչ պատրաստեսցէ ըստ կամաց նորա, արբցէ գան բազում: Ղուկ. ԺԲ. 47.

8. Զգաստումն առն հանդարտեցուցանէ ծառայ իմաստուն: Առ. ԺԸ. 14.

9. Ոչ է ծառայ մեծ քան զտէր իւր: Յովհ. ԺԵ. 20.

10. Որ պահէ զտէր իւր՝ պատուեսցի: Առ. ԻԷ. 18.

11. Ազնիւ, ծառայ բարի եւ հաւատարիմ, որովհետեւ ի սակաւուդ հաւատարիմ ես, ի վերայ բազմաց կացուցից զքեզ: Մատ. ԻԵ. 21.

12. Զի՞ կոչէք զիս, Տէր, Տէր, եւ զոր ասեմն ոչ առնէք: Ղուկ. Զ. 46.

13. Ծառայ իմաստուն տիրեսցէ տերանց անմտաց, եւ ընդ եղբարս բաժանեսցի մասն: Առ. ԺԷ. 2.

14. Տեարք, զիրաւունս ծառայից ձերոց շնորհեցէք. գիտասջիք զի եւ ձեր տէր գոյ յերկինս: Կող. Դ. 1.

15. Տեարք, ներելով առնել զպատուհասն. գիտասջիք թէ եւ նոցա եւ ձեր տէր գոյ յերկինս. եւ ակնառութիւն ոչ գոյ առաջի նորա: Եփ. Զ. 9.

16. Մի չարչարեր զծառայ՝ որ գործիցէ ճշմարտութեամբ: Սիր. Է. 22.

17. Մի լինիր իբրեւ զառիւծ ի տան քում, եւ մի նեխաստատ ընդ ծառայս քո: Սիր. Դ. 35.

18. Զծառայ իմաստուն սիրեսցէ անձն քո, եւ մի զրկեր զնա յազատութենէ: Սիր. Է. 23.

19. Եթէ իցէ քո ծառայ, կալ զնա իբրեւ զեղբայր: Սիր. Լ. 31.

20. Արժանի է մշակն վարձու իւրոյ: Ա. Տիմ. Ե. 18.

21. Հողագործին աշխատելոյ՝ պարտ է նախ ի պտղոյն վայելել: Բ. Տիմ. Բ. 6.

22. Մի ագցին վարձք վարձկանին առ քեզ մինչեւ ցառաւօտ: Ղեւտ. ԺԹ. 13.

23. Մի զլասցիս զվարձս տնանկին: Բ. Օր. ԻԴ. 14.

24. Հեղու արիւն՝ որ զլանայ զվարձս վարձկանի: Սիր. ԼԱ. 27.

25. Հաց կարօտելոց՝ կեանք աղքատաց, եւ որ զրկէն զնոսա՝ այր է արեանց: Սիր. ԼԱ. 25.

26. Արդար ողորմի անասնոց իւրում: Առ. ԺԲ. 10.

27. Անասուն իցէ քո, դարման տար նոցա: Սիր. Է. 24.

## Դ.

### Ծերք եւ Երիտասարդք:

1. Պսակ պարծանաց՝ ծերութիւն, եւ ի ճանապարհս արդարութեան գտանի: Առ. ԺԶ. 31.

2. Փառք ծերոց՝ ալիք: Առ. Ի. 29.

3. Իբրեւ զի գեղեցիկ է ծերոց՝ իմաստութիւն: Սիր. ԻԵ. 7.

4. Պսակ ծերոց՝ շատահմտութիւն, եւ պարծանք նոցա երկիւղ Տեառն: Սիր. ԻԵ. 8.

5. Իբրեւ զի գեղեցիկ է ալեաց՝ առնել դատ, եւ ծերոց՝ ճանաչել զխորհուրդ: Սիր. ԻԵ. 6.

6. Խօսեաց, ծե՛ր, զի վայել է քեզ, ճշմարտութեամբ գիտութեամբ: Սիր. ԼԲ. 4.



7. Ծերութիւն պատուական՝ ոչ բազմաժամանակեայն է եւ ոչ որ թուով ամացն չափիցի: Այլ ալիք՝ իմաստութիւն մարդոյ են, եւ հասակ ծերութեան՝ կեանք անարատ: Իմ. Դ. 8. 9.

8. Առաջի ալեաց յառնիցես, եւ պատուեսցես զերեսս ծերոյն: Ղեւտ. ԺԹ. 32.

9. Զարդ երիտասարդաց՝ իմաստութիւն: Առ. Ի. 29.

10. Զերիտասարդս աղաչեսջիր ցածուն լինել: Տիտ. Բ. 6.

11. Ե՛րիտասարդք, հնազանդ լերուք ծերոց: Ա. Պետր. Ե. 5.

12. Զծերն մի պատուհասիցես, այլ մխիթարեսջիր իբրեւ զհայր: Ա. Տիմ. Ե. 1.

13. Մի շաղփաղփիր ի բազմութեան ծերոց: Սիր. Է. 15.

14. Ի բազմութեան ծերոց կացջիր, եւ որ իմաստունն է՝ ի նա յարեսջիր: Սիր. Զ. 35.

15. Ի մանկութեան ոչ հաւաքեցեր, եւ զի՞արդ գտանիցես ի ծերութեան քում: Սիր. ԻԵ. 5.

16. Եթէ երկայնակեացք եղիցին (անզգամք), յոչինչ համարեսցին. եւ անարգի ի վախճանի ծերութիւն նոցա: Իմ. Գ. 17.

17. Դատապարտէ մանկութիւն վաղվաղակի վախճանեալ՝ զբազմամեայ ծերութիւն անիրաւի: Իմ. Դ. 16.

# ՕՐԻՆԱԿՔ

## 1.

### Մանուկն Սամուէլ:

Մանուկն Սամուէլ կայր ի սպասու Տեառն առաջի Հեղեայ քահանայի, եւ ննջէր ի տաճարին Տեառն, ուր էր տապանակն Աստուծոյ: Եւ կոչեաց Տէր եւ ասէ. Սամուէլ, Սամուէլ: Եւ ասէ. Աւա-

սիկ եմ: Եւ ընթացաւ առ Հեղի եւ ասէ. Ահաւասիկ եմ ես, զի՞ կոչեցեր զիս: Եւ ասէ. Ոչ կոչեցի զքեզ. դարձիր անդրէն եւ ննջեա: Յաւել Տէր միւսանգամ կոչել. եւ յարեաւ Սամուէլ՝ չոգաւ առ Հեղի երկրորդ անգամ: Եւ ասէ. Ոչ կոչեցի զքեզ, որդեակ. դարձիր անդրէն եւ ննջեա: Եւ յաւել Տէր կոչել զՍամուէլ յերրորդում նուագին. եւ յարեաւ չոգաւ առ Հեղի, եւ ասէ. Ահաւասիկ եմ ես, զի՞ կոչեցեր զիս: Իմացաւ Հեղի թէ Տէր կոչէ զմանուկն, եւ ասէ ցՍամուէլ. Դարձիր անդրէն եւ ննջեա, որդեակ. եւ եթէ կոչեսցէ զքեզ, ասասցես. Խօսեաց, Տէր, զի լուիցէ ծառայ քո: Գնաց Սամուէլ եւ ննջեաց ի տեղւոջ իւրում. եւ Տէր կոչեաց զնա որպէս մի անգամն եւ միւսանգամ. Սամուէլ, Սամուէլ: Եւ ասէ Սամուէլ. Խօսեաց, Տէր, զի լուիցէ ծառայ քո: Ասէ Տէր ցՍամուէլ. Ահա ես առնեմ զբանս իմ ի մէջ Իսրայէլի, որպէս զի ամենայնի՝ որ լսիցէ զնոսա, հնչեսցեն երկոքին ականջք նորա: Յարուցից ի վերայ Հեղեայ զամենայն ինչ՝ զոր խօսեցայ ի վերայ տան նորա, վասն անօրէնութեան որդւոց նորա, զի հայհոյէին զԱստուած որդիք նորա եւ նա ոչ խրատէր զնոսա:

Ա. Թագ. Գ.

## 2.

### Կորխ, Դաթան եւ Աբիրոն:

Խօսեցաւ Կորխ՝ որդի Սահառայ, եւ Դաթան եւ Աբիրոն՝ որդիք Եղիաբայ, եւ կացին հակառակ Մովսիսի, եւ երկերիւր եւ յիսուն այր յորդւոցն Իսրայէլի: Կուտեցան ի վերայ Մովսիսի եւ Ահարոնի եւ ասեն. Ընդէ՞ր ճոխացեալ էք ի վերայ ժողովրդեանդ Տեառն: Եւ լուեալ Մովսիսի, անկաւ ի վերայ երեսաց իւրոց եւ ասէ. Առէք ձեզ բուրվառս ձեր, Կորխ եւ ամենայն ժողովուրդ իւր, եւ դիք ի նոսա հուր, եւ արկէք ի նոսա խունկ առաջի Տեառն ի վաղիւ. եւ եղիցի այր՝ զոր ընտրեսցէ Տէր, նա է սուրբ: Եւ առաքեաց կոչել զԴաթան եւ զԱբիրոն: Եւ ասեն. Եթէ զաչս մեր բրեսցես, ոչ եկեսցուք առ քեզ: Եւ կացին առ դրան խորանին վկայութեան Մովսէս եւ Ահարոն: Եւ կուտեաց ի վերայ նոցա Կորխ զամենայն ժողովուրդն իւր ի դուռն խորանին վկայութեան: Եւ երեւեցան փառք Տեառն ամենայն ժողովրդեանն: Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ. Խօսեաց ընդ ժողովրդեանն եւ ասասցես. Զատարուք շուրջ զժողովրդեամբք Կորխայ եւ Դաթանայ եւ Աբիրոնի: Յարեաւ Մովսէս եւ գնաց առ Դաթան եւ Աբիրոն. եւ խօսեցաւ ընդ ժողովրդեանն եւ ասէ. Մեկնեցարուք ի վրանաց արանց խստասրտացդ այդոցիկ: Այսու գիտասջիք եթէ Տէր առաքեաց զիս գործել զամենայն զգործս զայսոսիկ. եթէ ըստ մահու ամենայն մարդկան մեռանիցին դոքա, ապա զիս Տէր ոչ առաքեաց: Եւ իբրեւ դադարեաց ի խօսելոյ զբանս զայսոսիկ, պատառեցաւ երկիր ի ներքոյ նոցա եւ եկուլ զնոսա եւ զտունս նոցա: Եւ ել հուր ի Տեառնէ եւ եկեր զերկերիւր եւ զյիսուն այրն՝ որ մատուցանէին զխունկսն:

Թիւ. ԺԶ. 1—35.

## 3.

### Բժշկի Նեեման ի բորոտութենէ իւրմէ:

Նեեման իշխան զօրուն Ասորւոց էր բորոտեալ: Եւ Ասորիքն մեկնակազմք ելին եւ գերեցին յերկրէն Իսրայէլի աղջիկ մի փոքրիկ, եւ էր առ կնոջն Նեեմանայ, եւ ասէ ցտիկին իւր. Յանկարծ երթայր տէրդ իմ առաջի մարգարէին Աստուծոյ, որ ի Սամարիա, եւ անդէն աւաքէր զդա ի բորոտութենէ իւրմէ: Եւ եմուտ եւ պատմեաց տեառն իւրում եւ ասէ. Այսպէս եւ այսպէս խօսեցաւ աղջիկն՝ որ յերկրէն Իսրայէլի: Եկն Նեե-

ման երիվարօք եւ կառօք, եւ եկաց առ դուրս տանն Եղիսէի։ Առաքեաց Եղիսէէ առ նա հրեշտակ եւ ասէ. Երթ լուա եւթն անգամ ի Յորդանան, եւ սրբեսցիս։ Բարկացաւ Նեեման եւ ասէ. Ես ասէի՝ թերեւս ելցէ առ իս եւ կացցէ յաղօթս, եւ կարդասցէ զանուն Տեառն Աստուծոյ իւրոյ եւ աւաքեսցէ զբորոտութիւնս։ Ո՞չ լաւ իցեն գետք Դամասկոսի՝ քան զամենայն ջուրս Իսրայելի։ Եւ դարձաւ եւ գնաց սրտմտութեամբ։ Մատեան ծառայք նորա եւ խօսեցան ընդ նմա եւ ասեն ցնա. Հա՛յր, եթէ մեծ ինչ բան խօսեցեալ էր ընդ քեզ մարգարէին, ո՞չ ապաքէն պարտ էր առնել, թող թէ զի ասաց. Լուացիր եւ սրբեսցիս։ Էջ Նեեման եւ մկրտեցաւ ի Յորդանան եւթն անգամ ըստ բանին Եղիսէի, եւ դարձաւ մարմին նորա իբրեւ զմարմին մանկան մատաղոյ եւ սրբեցաւ։

Դ. Թագ. Ե. 1—14.

## 4.

### Տուք զկայսեր՝ կայսեր։

Առաքեն առ Յիսուս զոմանս ի փարիսեցւոց անտի եւ ի հերովդիանոսաց, զի զնա որսասցեն բանիւ։ Եւ նոքա եկեալ հարցանէին զնա նենգութեամբ եւ ասէին. Վա՛րդապետ, գիտեմք զի ճշմարիտ ես, եւ ոչ ինչ փոյթ է քեզ զումեքէ. զի ոչ հայիս յերեսս մարդկան, այլ ճշմարտութեամբ զճանապարհն Աստուծոյ ուսուցանես։ Արդ՝ ասա մեզ, արժա՞ն է հարկս տալ կայսեր, թէ ոչ. տացո՞ւք, թէ ոչ տացուք։ Եւ Յիսուս գիտաց զկեղծաւորութիւն նոցա, ասէ ցնոսա. Զի՞ փորձէք զիս, կե՛ղծաւորք. բերէք ինձ դահեկան մի, զի տեսից։ Եւ նոքա բերին. եւ ասէ ցնոսա. Ո՞յր է պատկերս այս կամ գիր։ Եւ նոքա ասեն ցնա. Կայսեր։ Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնոսա. Երթայք տուք զկայսեր՝ կայսեր, եւ զԱստուծոյ՝ Աստուծոյ։

Մարկ. ԺԲ. 13—17.



## 5.

### Մեմփիբոսթէ եւ Դաւիթ։

Մեմփիբոսթէ, որդի Յովնաթանու՝ որդւոյ Սաւուղայ, էջ ընդ առաջ արքային, եւ ոչ էր հատեալ զեղնգունս իւր, եւ ոչ էր փոքրեալ զմօրուս իւր, եւ ոչ էր արարեալ զռնչօք իւրովք, եւ ոչ էր լուացեալ զհանդերձս իւր, յօրէ՝ յորմէ հետէ գնաց արքայ, մինչեւ ցօրն՝ յորում եկն նա խաղաղութեամբ։ Եւ իբրեւ եմուտ յԵրուսաղէմ, ել ընդ առաջ արքային։ Ասէ ցնա արքայ. Զի՞ է՝ զի ոչ գնացեր ընդ իս, Մե՛մփիբոսթէ։ Եւ ասէ ցնա Մեմփիբոսթէ. Տէր իմ արքայ, ծառայ իմ արհամարհեաց զիս. զի ասաց ծառայ քո ցնա թէ կազմեա ինձ էշ, եւ հեծայց ի նա եւ գնացից ընդ արքայի, զի կաղ է ծառայ քո. եւ զայրացոյց ընդ իս ծառայ քո զքեզ, տէր իմ արքայ։ Եւ արդ՝ արա որ ինչ բարի է յաչս քո։ Ասէ ցնա արքայ. Դու եւ Սիբա բաժանեցէք զագարակն։ Եւ ասէ Մեմփիբոսթէ ցարքայ. Զամենայն իսկ առցէ, որովհետեւ եկն արքայ խաղաղութեամբ ի տուն իւր։

Բ. Թագ. ԺԹ. 24—30.

## 6.

### Երկդրամեանն։

Իբրեւ եկին նոքա (Յիսուս եւ աշակերտքն նորա) ի Կափառնաում, մատեան՝ որք զերկդրամեանն պահանջէին՝ առ Պետրոս, եւ ասեն. Վարդապետն ձեր ո՞չ տայ զերկդրամեանն։ Եւ նա ասէ. Այո՛։ Եւ իբրեւ եմուտ ի տուն, յառաջեաց քան զնա Յիսուս եւ ասէ. Զիա՞րդ թուի քեզ, Սի՛մոն. թագաւորք ազգաց յումէ՞ առնուն զհարկս կամ զհաս, յորդւո՞ց իւրեանց՝ թէ յօտարաց։ Եւ իբրեւ ասաց՝ թէ Յօտարաց. ասէ ցնա Յիսուս. Ապա

ուրեմն ազատ են որդիքն: Բայց զի մի գայթակղեցուսցուք զնոսա, երթ ի ծով եւ ընկեա կարթ, եւ զառաջին ձուկնն՝ որ ելանիցէ, առ եւ բաց զբերան նորա, եւ գտանիցես սատեր. եւ զայն առեալ՝ տացես նոցա ընդ իմ եւ ընդ քո:

Մատ. ԺԷ. 23—26.

## 7.

### Դաւիթ եւ երեքին զօրավարք նորա:

Համբար այլազգեացն էր յայնժամ ի Բեթղահէմ: Եւ ցանկացաւ Դաւիթ եւ ասէ. Ո՛ արբուցանէր ինձ ջուր ի ջրհորոյն Բեթղահեմի, որ առ դրանն է: Հատին երեք զօրավարք զբանակն այլազգեաց եւ հանին ջուր ի ջրհորոյն, առին եւ եկին առ Դաւիթ: Եւ ոչ կամեցաւ ըմպել զայն, այլ նուիրեաց զայն Տեառն, եւ ասէ. Քաւ լիցի ինձ, Տէր, առնել զայդ, եթէ զարիւն արանց երթելոց ոգւովք չափ ըմպիցեմ:

Բ. Թագ. ԻԳ. 14—17.

## 8.

### Դաւիթ եւ աշխարհագիր նորա:

Ասէ Դաւիթ ցՅովաբ եւ ցիշխանս զօրուն. Երթայք թուեցէք զԻսրայէլ, զի գիտացից զթիւ դոցա: Եւ ետ Յովաբ զթիւ համարոյ ժողովրդեանն: Եւ չար երեւեցաւ առաջի Աստուծոյ. եւ եհար զԴաւիթ սիրտն իւր եւ ասէ ցՏէր. Մեղայ, զի արարի զիրս զայդ եւ ընդունայնացայ յոյժ: Խօսեցաւ Տէր ընդ Գադայ մարգարէի եւ ասէ. Երթ խօսեաց ընդ Դաւթի: Եմուտ Գադ առ Դաւիթ եւ ասէ ցնա. Ընտրեա քեզ կամ երիս ամս սովս, կամ զերիս ամիսս փախչել քեզ յերեսաց թշնամեաց քոց, կամ զերիս աւուրս մահ յերկրի քում: Եւ ասէ Դաւիթ ցԳադ. Անկայց ի



ձեռս Տեառն, զի բազում են գթութիւնք նորա, եւ մի անկայց ի ձեռս մարդոյ: Եւ ընտրեաց իւր Դաւիթ զմահն: Եւ սկսաւ սատակումն ի ժողովրդեանն, եւ անկան յԻսրայելէ եւթանասուն հազար արանց: Անկան Դաւիթ եւ ծերքն զգեցեալ քուրձս ի վերայ երեսաց իւրեանց, եւ ասէ Դաւիթ ցԱստուած. Ո՞չ ապաքէն ես ասացի թուել զժողովուրդդ. ես եմ՝ որ մեղայն, ես հովիւս յանցեայ, եւ դոքա ոչխարքդ զի՞ արարին: Եղիցի ձեռն քո յիս եւ ի տուն հօր իմոյ, եւ մի ի ժողովուրդ քո: Եւ լուաւ Տէր, եւ արգելաւ սատակումն յԻսրայելէ:

Բ. Թագ. ԻԴ. Ա. Մնաց. ԻԱ.

## 9.

### Հարիւրապետն եւ ծառայ իւր:

Հարիւրապետի ուրումն ծառայ չարաչար հիւանդացեալ՝ մերձ էր ի վախճանել, որ էր նմա պատուական: Իբրեւ լուաւ զՅիսուսէ, առաքեաց զծերսն ի Հրէից, աղաչել զնա զի եկեսցէ ապրեցուսցէ զծառայն նորա: Եւ նոքա եկեալ առ Յիսուս՝ աղաչէին զնա սաստիկ եւ ասէին, թէ Արժանի է՝ որում զշնորհս զայս առնես, զի սիրէ զազգս մեր եւ զժողովրդանոցն նա շինեաց մեզ: Եւ Յիսուս գնաց ընդ նոսա: Իբրեւ ոչինչ կարի հեռի էր ի տանէն, յղեաց առ նա հարիւրապետն բարեկամս եւ ասէ. Տէր, մի ինչ աշխատ լինիր, զի չեմ բաւական եթէ ընդ յարկաւ իմով մտանիցես. վասն որոյ եւ ոչ զանձն համարեցայ արժանի առ քեզ գալոյ. այլ ասա բանիւ, եւ բժշկեսցի մանուկս իմ: Քանզի եւ ես այր մի եմ կարգեալ ընդ իշխանութեամբ, ունիմ ընդ ինեւ զինուորս, եւ ասեմ սմա՝ Երթ, եւ երթայ, եւ այլում՝ թէ Եկ, եւ գայ, եւ ծառայի իմում՝ թէ Արա զայս, եւ առնէ: Եւ իբրեւ լուաւ զայս Յիսուս, զարմացաւ, դարձաւ

առ ժողովուրդն՝ որ երթային զհետ նորա եւ ասէ. Ամէն ասեմ ձեզ թէ եւ ոչ յԻսրայէլի այսչափ հաւատս գտի: Եւ դարձան անդրէն պատգամաւորքն ի տուն, եւ գտին զծառայն հիւանդ բժշկեալ:

Ղուկ. Է. 2—10.

## 10.

### Յակոբ առ Լաբանայ:

Յարեաւ Յակոբ երթալ առ Սահակ հայր իւր: Ազդ եղեւ Լաբանու, եւ պնդեցաւ զկնի նորա եւ եհաս նմա ի լերինն Գաղաադու: Եւ ասէ ցՅակոբ. Ընդէ՞ր արարեր զայդ, ընդէ՞ր դաղտագնաց եղեր յինէն. այժմ ձեռնհաս էի առնել քեզ չար: Պատասխանի ետ Յակոբ եւ ասէ. Զի՞նչ յանցանք են իմ, զի պնդեցար զհետ իմ: Այս քսան ամ է, զի էի ընդ քեզ. ոչխարք քո եւ այծիք ոչ ստերջացան, եւ զխոյս մաքեաց քոց ոչ կերայ. զգազանաբեկն ոչ բերի առ քեզ, այլ ես յանձնէ տուժէի. զցերեկ այրեալ լինէի ի տօթոյ, եւ զգայգ՝ ի ցրտոյ. հատեալ էր քուն յաչաց իմոց. եւ խաբեցեր զիս ի վարձս: Եւ թէ ոչ Աստուած հօր իմոյ էր ընդ իս, այժմ թերեւս ունայն իսկ արձակէիր զիս. այլ զտառապանս իմ եւ զվաստակս ձեռաց իմոց ետես Աստուած: Յարուցեալ Լաբանայ՝ համբուրեաց զդստերս իւր եւ օրհնեաց զնոսա եւ գնաց:

Ծննդ. ԼԱ. 17—55.

## 11.

### Մշակք այգւոյն:

Այր մի էր տանուտէր, որ տնկեաց այգի, եւ ետ զնա ցմշակս. եւ գնաց ի տար աշխարհ: Իբրեւ մերձեցաւ ժամանակ պտղոյ, առաքեաց զծառայս իւր առ մշակսն՝ առնուլ զպտուղս նորա: Եւ կալեալ մշակացն զծառայս նորա, զոմն տանջեցին, զոմն



սպանին, զոմն քարկոծեցին: Դարձեալ առաքեաց այլ ծառայս բազում քան զառաջինսն, եւ արարին նոցա նոյնպէս: Յետոյ առաքեաց առ նոսա զորդի իւր եւ ասէ. Թերեւս ամաչեսցեն յորդւոյ աստի իմմէ: Իսկ մշակքն իբրեւ տեսին զորդին, ասեն ընդ միտս. Սա է ժառանգն, եկայք սպանցուք զսա, զի մեր լինիցի ժառանգութիւնն: Եւ հանին զնա արտաքս քան զայգին եւ սպանին: Արդ զի՞նչ արասցէ ընդ նոսա տէր այգւոյն. ո՞չ ապաքէն զայցէ եւ կորուսանիցէ զմշակսն զայնոսիկ, եւ տայցէ զայգին այլոց մշակաց, որք տայցեն նմա զպտուղս ի ժամու իւրեանց:

Մատ. ԻԱ. 33—41.

## 12.

### Եղիսէէ եւ մանկունքն անզգամ:

Մինչ դեռ ելանէր Եղիսէէ ընդ ճանապարհն, մանկտի մանրիկ ելին ի քաղաքէն, աղաղակէին ի նա եւ ասէին. Ել կնդակ, ել կնդակ: Դարձաւ ի թիկունս իւր եւ ետես զնոսա, եւ անէծ զնոսա յանուն Տեառն: Եւ ելին երկու արջք յանտառէն, եւ պատառեցին ի նոցանէ քառասուն եւ երկուս մանկունս:

Դ. Թագ. Բ. 23—24.

# ԳԼՈՒԽ Ե.

## *Ընկերասիրութիւն:*

---

## Ա.

### Եղբայրական սէր:

1. Լրումն օրինացն՝ սէր է: Հռ. ԺԳ. 10.
2. Գլուխ պատուիրանին՝ սէր է, ի սուրբ սրտէ եւ ի մտաց բարեաց: Ա. Տիմ. Ա. 5.

3. Որ սիրէ զընկերն՝ զօրէնսն կատարէ: Հռ. ԺԳ. 8.

4. Ամենայն օրէնք ի մի բան կատարին, ի սիրեսցես զընկեր քո իբրեւ զանձն քո: Գաղ. Ե. 14.

5. Այս է պատուէր իմ՝ զի սիրեսջիք զմիմեանս: Յովհ. ԺԵ. 12.

6. Եղբայրսիրութիւն հաստատեսցի առ ձեզ: Եբր. ԺԳ. 1.

7. Զեղբայրսիրութիւն սիրեցէք: Ա. Պետր. Բ. 17.

8. Սիրեսցես զընկեր քո իբրեւ զանձն քո: Մատ. ԻԲ. 39.

9. Սիրեսցես զեղբարս քո եւ մի դարձուցանիցես զսիրտ քո յեղբարց քոց: Տովբ: Դ. 13.

10. Ամենայն ինչ ձեր սիրով լիցի: Ա. Կորն. ԺԶ. 14.

11. Գլուխ ամենայնի, զի համամիտք իցէք, համակիրք, եղբայրասէրք, ազնուագութք: Ա. Պետր. Գ. 8.

12. Սիրեսցուք զմիմեանս, զի սէր յԱստուծոյ է: Ա. Յովհ. Դ. 7.

13. Որ սիրէ զեղբայր իւր՝ ի լոյս բնակէ: Ա. Յովհ. Բ. 10.

14. Եթէ սիրեսցուք զմիմեանս, Աստուած ի մեզ բնակէ, եւ սէր նորա ի մեզ կատարեալ է: Ա. Յովհ. Դ. 12.

15. Որ սիրէ զԱստուած՝ սիրէ նա եւ զեղբայր իւր: Ա. Յովհ. Դ. 21.

16. Եթէ ոք ասիցէ եթէ սիրեմ զԱստուած, եւ զեղբայր իւր ատիցէ, սուտ է. որ ոչ սիրէ զեղբայր իւր՝ զոր տեսանէ, զԱստուած՝ զոր ոչն եւտես, զիա՞րդ կարիցէ սիրել: Ա. Յովհ. Դ. 20.

17. Ցեղբայրսիրութեան առանց կեղծաւորութեան, ի սուրբ սրտէ սիրել սերտիւ զմիմեանս: Ա. Պետր. Ա. 22.

18. Նախ քան զամենայն՝ սէր սերտ ունել ընդ



միմեանս. զի սէր ծածկէ զբազմութիւն մեղաց: Ա. Պետր. Դ. 8.

19. Մի ոք զանձին եւեթ խնդրեսցէ, այլ եւ զընկերին: Ա. Կորն. Ժ. 24.

20. Իւրաքանչիւր ոք ի մէնջ ընկերին հաճոյ լիցի ի բարիս: Հռ. ԺԵ. 2.

21. Որպէս կամիք թէ արասցեն ձեզ մարդիկ, այնպէս արասջիք եւ դուք նոցա: Ղուկ. Զ. 31.

22. Զոր դու ատես՝ ումեք մի առնիցես: Տովբ. Դ. 16.

23. Մի տրտմեցուցանէք զմիմեանս. Յակ. Ե. 9.

24. Սիրով ծառայեցէք միմեանց: Գաղ. Ե. 13.

25. Զմիմեանց բեռն բարձէք: Գաղ. Զ. 2.

26. Ոչ ոք երբէք ատեաց զանձն իւր. այլ սնուցանէ եւ դարմանէ զնա: Եփ. Ե. 29.

27. Մի դատիք, զի մի դատիցիք: Մատ. Է. 1.

28. Որով չափով չափէք, չափեսցի ձեզ: Մատ. Է. 2.

29. Մի ըստ աչս դատիք, այլ ուղիղ դատաստան արարէք: Յովհ. Է. 24.

30. Դու զի՞ դատիս զեղբայր քո, կամ ընդէ՞ր անգոսնես զեղբայր քո: Հռ. ԺԴ. 10.

31. Ցառաջ քան զդատաստան՝ քններ զանձն քո: Սիր. ԺԸ. 20.

32. Յուշ լիցին ձեզ կապեալքն, որպէս թէ դուք ընդ նոսա կապեալք իցէք: Եբր: ԺԳ. 3.

## Բ.

### Անոխակալութիւն եւ սէր թշնամեաց:

1. Սէր ընկերի իւրում չար ոչ առնէ: Հռ. ԺԳ. 10.

2. Ամենայն չարակամ նախատ լիցի մարդկան: Առ. ԺԹ. 6.

3. Որ ատեայ զեղբայր իւր՝ ի խաւարի է եւ ընդ խաւար շրջի: Ա. Յովհ. Բ. 11.

4. Ամենայն՝ որ ատեայ զեղբայր իւր, մարդասպան է: Ա. Յովհ. Գ. 15.

5. Մի ումեք չարի չար հատուցանէք: Հռ. ԺԲ. 17.

6. Ոխս ընկերի իւրում մի ոք կալցի: Զաք. Է. 10.

7. Յիշեա զպատուիրանս, եւ մի պահեր ոխս մերձաւորին: Սիր. ԻԸ. 8.

8. Որ պահէ ոխս՝ անօրէն է: Առ. ԻԱ. 24.

9. Ներել միմեանց, շնորհել իրերաց, եթէ ուրուք զումեքէ տրտունջ ինչ իցէ: Կող. Գ. 13.

10. Սիրեցէք զթշնամիս ձեր, բարի արարէք ատելեաց ձերոց: Մատ. Ե. 44.

11. Նախ հաշտեաց ընդ եղբօր քում, եւ ապա մատուսջիր զպատարագն քո: Մատ. Ե. 24.

12. Թող զանիրաւութիւն եղբօր քում, եւ յայնժամ յաղաչել քո՝ մեղք քո լուծցին: Սիր. ԻԸ. 2.

13. Զի եթէ թողուցուք մարդկան զյանցանս նոցա, թողցէ եւ ձեզ Հայրն ձեր երկնաւոր. Մատ. Զ. 14.

14. Ապա թէ ոչ թողուցուք մարդկան զյանցանս նոցա, եւ ոչ Հայրն ձեր թողցէ ձեզ զյանցանս ձեր: Մատ. Զ. 15.

15. Մի զանձանց վրէժ խնդրէք, այլ տուք տեղի բարկութեան: Հռ. ԺԲ. 19.

16. Մի ասիցես թէ առից վրէժ ի թշնամւոյն. համբեր Տեառն, զի քեզ օգնական լիցի: Առ. Ի. 22.

17. Մի ասեր թէ որպէս նա ընդ իս գնաց, եւ ես ընդ նա գնացից, հատուցից նմա որպէս եւ զըրկեաց զիս: Առ. ԻԴ. 29.

18. Որ առնու վրէժ՝ ի Տեառնէ գտցէ վրէժխնդրութիւն: Սիր. ԻԸ. 1.

19. Եթէ կործանեսցի թշնամին քո՝ մի ոտն հարկաներ. եւ ի գայթակղելն նորա՝ մի հպարտանար: Առ. ԻԴ. 17.



20. Եթէ քաղցեալ է թշնամին քո՝ կերակրեա զնա, եւ եթէ ծարաւի՝ տուր նմա ըմպել: Առ. ԻԵ. 21.

## Դ.

### Գթութիւն եւ ողորմածութիւն:

1. Եղերուք գթածք, որպէս եւ Հայրն ձեր գթած է: Ղուկ. Զ. 36.

2. Ողորմութիւն եւ հաւատք ի քէն մի պակասեսցեն: Առ. Գ. 3.

3. Լերուք ընդ միմեանս քաղցունք, գթածք: Եփ. Դ. 32.

4. Պարտ է արդարոյն լինել մարդասէր: Իմ. ԺԲ. 19.

5. Արդարն ողորմի եւ տայ առանց խնայելոյ: Առ. ԻԱ. 26.

6. Որում խնդրէ ի քէն՝ տուր: Մատ. Ե. 42.

7. Որ կամի փոխ առնուլ ի քէն՝ մի դարձուցաներ զերեսս: Մատ. Ե. 42.

8. Ի հացէ քումէ տացես քաղցելոց, եւ ի հանդերձէ քումէ՝ մերկոց: Տոբ. Դ. 17.

9. Մի ագահիցէ ակն քո՝ յորժամ առնիցես զողորմութիւնն: Տոբ. Դ. 7.

10. Զպաղատանս նեղելոյն մի մերժեր, եւ մի դարձուցաներ զերեսս քո ի տնանկէ: Սիր. Դ. 4.

11. Ի կարօտելոյն մի դարձուցաներ զակն, եւ մի տար տեղի մարդոյ անիծանել զքեզ: Սիր. Դ. 5.

12. Խոնարհեցո տնանկին զունկն քո, եւ տուր նմա պատասխանի խաղաղական հեզութեամբ: Սիր. Դ. 8.

13. Վայելուչ է ողորմութիւն ի ժամանակի նեղութեան, որպէս ամպք անձրեւաց յերաշտ ժամանակի: Սիր. ԼԲ. 26.

14. Մի մուծաներ յամենայն տուրս բան տրտմութեան: Սիր. ԺԸ. 15.

15. Մի դանդաղեր ի տես երթալ հիւանդին, եւ համարեսցի քեզ շնորհ: Սիր. Է. 39.

16. Մի յապաղեր բարի առնել կարօտելոյ, յորժամ ձեռնհաս իցես: Մի ասիցես թէ երթ եւ եկեսջիր, եւ վաղիւ տաց. զի ոչ գիտես զինչ վաղիւն ծնանիցի քեզ: Առ. Գ. 27. 28.

---

17. Անձին իւրում բարի գործէ այր ողորմած: Առ. ԺԱ. 17.

18. Լեր դու ողորմած, զի բարի լինիցի քեզ: Տոբ. ԺԴ. 11.

19. Որ ողորմի աղքատի՝ երանելի է: Առ. ԺԴ. 21.

20. Որ գթայն՝ ողորմութիւն գտցէ: Առ. ԺԷ. 5.

21. Երանի ողորմածաց, զի նոքա ողորմութիւն գտցեն: Մատթ. Ե. 7.

22. Քաղցրահայեացն գթութիւն գտցէ: Առ. ԺԲ. 13.

23. Տուք, եւ տացի ձեզ: Ղուկ. Զ. 38.

24. Փոխ տայ Աստուծոյ՝ որ ողորմի տնանկին: Առ. ԺԹ. 17.

25. Բարի է առնել զողորմութիւնս՝ քան դնել զգանձս ոսկւոյ: Տոբ. ԺԲ. 8.

26. Բարի արա բարեպաշտին, եւ գտցես փոխարէն հատուցումն. եւ թէ ի նմանէ ոչ, այլ ի Բարձրելոյն: Սիր. ԺԲ. 2.

27. Լեր որբոց որպէս հայր. եւ եղիցես որպէս որդի Բարձրելոյն, եւ սիրեսցէ զքեզ առաւել քան զմայր քո: Սիր. Դ. 10.

28. Բրդեա քաղցելոց զհաց քո, եւ զաղքատս անյարկս տար ի տուն քո, եթէ տեսանիցես զմերկն՝ զգեցուցանիջիր. յայնժամ կարդասցես, եւ Աստուած լուիցէ քեզ: Ես. ԾԸ. 7. 9.

29. Տնանկին կարկառեա զձեռն քո, զի կատարեալ եղիցի օրհնութիւն քո: Սիր. Է. 36.



30. Որ արբուսցէ բաժակ մի ջուր ցուրտ, ոչ կորուսցէ զվարձս իւր: Մատթ. Ժ. 42.

31. Երանի որ խորհի զաղքատն եւ զտնանկ, յաւուր չարի փրկէ զնա Տէր: Սղմ. Խ. 2.

32. Մի դարձուցաներ զերեսս քո յամենայն աղքատէ, եւ ի քէն ոչ դարձուսցէ Տէր Աստուած զերեսս իւր: Տոբ. Դ. 7.

33. Բարձր ի գլուխ պարծի ողորմութիւն առ դատաստանաւն: Յակ. Բ. 13.

34. Ողորմութեամբ եւ հաւատով սրբին մեղք: Առ. ԺԵ. 27.

35. Գումարեա ողորմութիւն ի շտեմարանս քո, եւ այն փրկեսցէ զքեզ յամենայն չարչարանաց: Սիր. ԻԹ. 15.

36. Ողորմութիւն ի մահուանէ փրկէ, եւ նա ինքն սրբէ յամենայն մեղաց: Տոբ. ԺԲ. 9.

37. Զհուր բորբոքեալ շիջուցանէ ջուր, եւ ողորմածութիւն քաւէ զմեղս: Սիր. Գ. 33.

38. Զմեղս քո ողորմութեամբ քաւեսջիր, եւ զանօրէնութիւնս քո՝ գթովք տնանկաց. թերեւս երկայնամիտ լիցի ի վերայ յանցանաց քոց Աստուած: Դան. Դ. 24.

39. Որ ողորմի տնանկի՝ ինքն կերակրեսցի, զի յիւրմէ հացէ անտի ետ տնանկի: Առ. ԻԲ. 9.

40. Որ տայ աղքատաց՝ ոչ կարօտասցի. իսկ որ դարձուցանէ զակն իւր ի նոցանէ՝ ի բազում կարօտութեան եղիցի: Առ. ԻԸ. 27.

41. Տուրք մարդոյ ընդարձակեցուցանեն զնա եւ ընդ իշխանս նստուցանեն զնա: Առ. ԺԸ. 16.

## Դ.

### Խոժոռութիւն եւ անգթութիւն:

1. Զանձն քաղցեալ մի տրտմեցուցանես, եւ մի յապաղիցես զտուրս կարօտելոյն: Սիր. Դ. 2. 3.

2. Ծնունդ չար իբրեւ զուսեր ունի զատա–

մունս իւր, եւ զժանիս իւր՝ իբրեւ զկտրոցս: Առ. Լ. 14.

3. Որ ունիցի զկեանս ինչ աշխարհիս, եւ տեսանիցէ զեղբայր իւր կարօտեալ իւիք, եւ փակիցէ զգութս իւր առ ի նմանէ, զիա՞րդ սէրն Աստուծոյ ի նմա իցէ բնակեալ: Ա. Յովհ. Գ. 17.

4. Սպանանէ զմերձաւորն՝ որ հանէ զպախրէ: Սիր. ԼԱ. 26.

5. Որ անարգէ զտնանկն՝ մեղանչէ: Առ. ԺԴ. 21.

6. Խստասիրտն բարեաց ոչ պատահէ: Առ. ԺԷ. 20.

7. Որ ստն հարկանէ կորուսելոյն՝ ոչ արդարասցի: Առ. ԺԷ. 5.

8. Որ կատակէ զաղքատով՝ բարկացուցանէ զարարիչ նորա: Առ. ԺԷ. 5.

9. Կորուսանէ զմարմին իւր այր անողորմ: Առ. ԺԱ. 17.

10. Սիրտ խիստ ծանրասցի ցաւօք: Սիր. Գ. 29.

11. Մի բուռն լինիցիս տնանկի, զի Տէր դատի զդատաստանս նորա. Առ. ԻԲ. 22. 23.

12. Անողորմ դատաստան լինելոց է այնմ՝ որ ոչ առնիցէ զողորմութիւն: Յակ. Բ. 13.

13. Որ խնու զլսելիս իւր զի մի լուիցէ տկարաց, եւ նա կարդասցէ առ Տէր, եւ ոչ լուիցէ նմա: Առ. ԻԱ. 14.

14. Որ հատուցանէ չար փոխանակ բարւոյ՝ չար ի տանէ նորա մի պակասեսցէ: Առ. ԺԷ. 13.

15. Որ առնէ զչարիս՝ ի նոյն թաւալեսցի: Սիր. ԻԷ. 30.

16. Որ խնդրէ զչար՝ հասցէ նմա: Առ. ԺԱ. 27.

17. Որ փորէ խորխորատ ընկերի իւրում, ինքն լցէ զնա: Առ. ԻԶ. 27.

18. Որ փորէ խորխորատ՝ ի նոյն անկցի, եւ որ դնէ որոգայթ՝ ի նոյն ըմբռնեսցի: Սիր. ԻԷ. 29.

19. Որ քակէ զցանգ՝ հարցէ զնա օձ. եւ



որ բառնայ քարինս՝ նոքիմբք չարչարեսցի: Ժող. Ժ. 8. 9.

20. Մի առնիցես չար, եւ ոչ հասանիցէ քեզ չար. ի բաց կաց յանիրաւէն, եւ խոտորեսցի ի քէն: Սիր. Է. 1.

## Ե.

### Նախանձ եւ հակառակութիւն:

1. Զմոլորեալն մեռուցանէ նախանձ: Յոբ. Ե. 2.

2. Ուր հեռ եւ նախանձ, անդ է անկարգութիւն եւ ամենայն իրք չարք: Յակ. Գ. 16.

3. Ի բաց թօթափել զամենայն նենգութիւն եւ զնախանձ: Ա. Պետր. Բ. 1.

4. Նախանձ առցէ զժողովուրդն անխրատ: Ես. ԻԶ. 11.

5. Մի լիցուք սնապարծք ընդ միմեանս նախանձելով: Գաղ. Ե. 26.

6. Իբրեւ ի տուընջեան զգաստացեալք շրջեսցուք, մի նախանձու եւ հակառակութեամբք: Հռ. ԺԳ. 13.

7. Նախանձ եւ սրտմտութիւն նուազեցուցանեն զաւուրս: Սիր. Լ. 26.

8. Զատելութիւն գրգռէ հակառակութիւն. եւ զամենեսին՝ որ ոչ հակառակին, ծածկէ սէր: Առ. Ժ. 12.

9. Զհակառակութիւնս յարուցանէ ամենայն չարակամ: Առ. ԺԷ. 11.

10. Ապա թէ զմիմեանս խածատիցէք եւ ուտիցէք՝ զգոյշ լերուք, գուցէ ի միմեանց սատակիցիք: Գաղ. Ե. 15.

11. Որ յուզէ զչարութիւն, կորիցէ: Առ. ԺԹ. 9.

12. Կրակարանք՝ կայծականց, եւ փայտ՝ հրոյ, եւ այր բանսարկու՝ առ ի յուզել զկռիւ: Առ. ԻԶ. 21.

# ՕՐԻՆԱԿՔ

## 1.

### Սամարացին։

Այր մի իջանէր յԵրուսաղեմէ յԵրիքով, եւ անկաւ ի ձեռս աւազակաց, որք մերկացուցին զնա եւ վէրս ի վերայ եդին, թողին կիսամահ եւ գնացին։ Դէպ եղեւ քահանայի միոջ իջանել ընդ նոյն ճանապարհ, եւ տեսեալ զնա՝ զանց արար։ Նոյնպէս եւ Ղեւտացի մի եկեալ ընդ նոյն տեղի՝ ետես եւ զանց արար։ Սամարացի ոմն ճանապարհորդեալ՝ եկն ընդ նոյն առ նովաւ, եւ տեսեալ զնա՝ գթացաւ։ Եւ մատուցեալ պատեաց զվէրս նորա, արկեալ ի վերայ ձէթ եւ գինի. եւ եդեալ ի վերայ գրաստու իւրոյ՝ ած զնա ի պանդոկի մի, եւ դարմանեաց զնա։ Եւ ի վաղիւ անդր իբրեւ ելանէր անտի, հանեալ ետ ցպանդոկապետն երկուս դահեկանս եւ ասէ. Դարման տար դմա, եւ զոր ինչ ծախեսցես ի դա՝ ի միւսանգամ գալստեան իմում հատուցից քեզ։

Ղուկ. Ժ. 30—35.

## 2.

### Ողորմածութիւն Տոբիթայ։

Ես Տոբիթ ողորմութիւնս բազումս արարի եղբարց իմոց՝ որ ընդ իս էին ի Նինուէ։ Զհաց իմ տայի քաղցելոց, եւ զձորձ իմ՝ մերկոց։ Եւ զոր տեսանէի ես յազգէն իմմէ թէ մեռեալ էր, եւ ընկենուին զնա արտաքոյ պարսպին, ես թաղէի։ Եւ կամ թէ յորժամ սպանանէր զոք Սենեքերիմ արքայ, գողանայի եւ թաղէի։ Եւ ի տօնին մեծի արարին ինձ ճաշ մեծ. եւ բազմեցայ ուտել եւ ըմպել։ Ասեմ ես ցորդին իմ. Երթ ած դու յեղբարցն մերոց յաղքատաց՝ զորս եւ գտանես, եւ ես մնամ քեզ։ Եկն եւ ասէ. Հա՛յր, մի ոմն յազգէս մերմէ՝ որոյ թափեալ են ոսք նորա, կայ ի հրապարակի անդ մեռեալ։ Եւ իմ մինչ չեւ էր ճաշակեալ՝ չոգայ առի զնա եւ բերի ի տուն իմ մինչեւ եմուտ արեգակն. եւ ընդ երեկս լուացայ եւ ուտէի զհացն իմ տրտմութեամբ, եւ լացի յոյժ։ Եւ յորժամ եմուտ արեգակն, փորեցի եւ թաղեցի զնա։ Եւ մերձաւորքն իմ այպն առնէին եւ ասէին. Արդ ո՞չ եւս երկնչի մեռանել վասն իրացս այսոցիկ. զի վասն որոյ հալածեցաւն, դարձեալ եկեալ թաղէ զդիակունսն։ Ի նմին գիշերի դարձայ իբրեւ թաղեցին, եւ ննջեցի ես պղծեալ առ որմոյ գաւթին եւ զերեսս իմ ոչ ծածկեցի։ Ոչ գիտէի թէ ճնճղուկք նստէին յառաստաղս անդ. եւ աչօք բացօք ի վեր հայէի. եւ ծրտէին ձագքն ջերմաջերմ յաչս իմ։ Եւ երթեալ իմ առ բժիշկս, ոչինչ օգնէին ինձ։

Տոբ. Ա. Բ.



## 3.

### Հռափայէլ։

Կոչեաց Տուբիթ՝ զՏուբիա զորդին իւր եւ ասէ ցնա. Տես արդ, որդեակ, զվարձս առնդ՝ որ եկն ընդ քեզ, եւ յաւելուլ յայն արժան է։ Ասէ ցնա (Տուբիա). Հա՛յր, ոչ ինչ պակասէ ինձ, եթէ տամ դմա զկէս ընչից իմոց՝ զոր բերին. զի զիս ած առ քեզ ողջ, եւ զկինն իմ ողջացոյց, եւ զարծաթն իմ եբեր, եւ զքեզ նոյնպէս ողջացոյց։ Եւ ասէ ծերն. Ցիրաւի է տալ նմա։ Կոչեաց նա զհրեշտակն եւ ասէ ցնա. Առ դու զկէս այնր ամենայնի՝ զոր բերերն։ Ասէ ցնոսա (Հռափայէլ). Օրհնեցէք դուք զԱստուած եւ տուք նմա զփառս։ Արդ ոչ ծածկեցից ես ի ձէնջ բան մի։ Յորժամ կայեր դու յաղօթս եւ նուն քո Սառա, ես մատուցի զյիշատակս աղօթից ձերոց առաջի Սրբոյն։ Եւ յորժամ թաղէիր դու զմեռեալսն, ես ընդ քեզ էի։ Եւ

յորժամ ոչն դանդաղեցար ի յառնելն եւ թողուլ զճաշն քո, զի երթիցես եւ ամփոփիցես զմեռեալն, ոչ մոռացայ զքեզ, այլ ընդ քեզ էի։ Եւ առաքեաց զիս Աստուած բժշկել զքեզ եւ զնուն քո Սառա։ Ես եմ Հռափայէլ յեւթանց անտի ի սրբոցն հրեշտակաց, որք հանեն մատուցանեն զաղօթս սրբոցն։ Խռովեցան երկոքին եւ անկան ի վերայ երեսաց իւրեանց, զի զահի հարան յոյժ։ Եւ ասէ ցնոսա. Մի երկնչիք, խաղաղութիւն լիցի ձեզ, եւ զԱստուած օրհնեցէք. զի ոչ եթէ իմով ինչ շնորհօք եկի ես, այլ կամօք Աստուծոյ ձերոյ եկի։ Եւ արդ ելանեմ ես առ այն՝ որ առաքեացն զիս. եւ գրեցէք դուք զայս ամենայն որ եղեւ եւ կատարեցաւ։

Տովբ. ԺԲ.

## 4.

### Տաբիթա։

Ի Յոպպէ էր կին մի աշակերտեալ՝ անուն Տաբիթա, որ անուանեալ կոչի Այծեմնիկ։ Սա էր լի գործովք բարեօք եւ ողորմութեամբք՝ զոր առնէր։ Եւ եղեւ յաւուրսն յայնոսիկ հիւանդանալ նմա եւ մեռանել։ Եւ աշակերտացն լուեալ եթէ Պետրոս անդ (ի Լիւդիա) է, առաքեցին երկուս արս առ նա, աղաչել զի մի դանդաղեսցի գալ առ նոսա։ Յարուցեալ Պետրոս՝ եկն ընդ նոսա. զոր՝ իբրեւ եկն՝ հանին ի վերնատունն, եւ կացին շուրջ զնովաւ այրիքն ամենայն. լային եւ ցուցանէին զձորձս եւ զհանդերձս որչափ առնէր նոցա Այծեմնիկն։ Եւ հանեալ արտաքս զամենեսեան Պետրոսի, եդ ծունր, եկաց յաղօթս եւ ասէ. Տա՛բիթա, արի կաց յանուն Տեառն Յիսուսի Քրիստոսի։ Եւ նա եբաց զաչս իւր, եւ տեսեալ զՊետրոս՝ նստաւ կանգուն։ Ձեռն ետ նմա եւ յարոյց զնա. կոչեաց զսուրբսն եւ զայրիս, առաջի կացոյց զնա կենդանի։

Գործ. Թ. 36—41.



## 5.

### Տնտեսն անիրաւութեան։

Այր մի էր մեծատուն, որոյ էր տնտես. եւ եղեւ զնմանէ ամբաստանութիւն, որպէս թէ վատնիցէ զինչս նորա։ Կոչեաց եւ ասէ ցնա. Զի՞նչ է այս՝ զոր լսեմս զքէն, տուր զհամար տնտեսութեան քո, զի ոչ եւս կարես լինել տնտես։ Ասէ ընդ միտս իւր տնտեսն. Զի՞նչ գործեցից, զի տէր իմ հանէ զտնտեսութիւնս. գործել ոչ կարեմ, մուրանալ ամաչեմ. գիտեմ զի՛նչ արարից, զի յորժամ ի բաց լինիցիմ ի տնտեսութենէս, ընկալցին զիս ի տունս իւրեանց։ Եւ կոչեցեալ առ ինքն մի ըստ միոջէ ի պարտապանաց տեառն իւրոյ, ասէ ցառաջինն. Քանի՞ ինչ պարտիս տեառն իմում։ Եւ նա ասէ. Հարիւր մար ձիթոյ։ Ասէ ցնա. Կա զգիր քո, եւ նիստ գրեա վաղվաղակի յիսուն։ Դարձեալ ասէ ցմիւսն. Դու քանի՞ ինչ պարտիս։ Եւ ասէ. Հարիւր քոռ ցորենոյ։ Եւ ասէ ցնա. Կա զգիր քո, եւ նիստ գրեա ութսուն։ Եւ գովեաց տէրն զտնտեսն անիրաւութեան, զի իմաստութեամբ արար. զի որդիք աշխարհիս այսորիկ իմաստնագոյնք են քան զորդիս լուսոյ յազգս իւրեանց։ Եւ ես ձեզ ասեմ. արարէք ձեզ բարեկամս ի մամոնայէ անիրաւութեան. զի յորժամ պակասիցէ այն, ընկալցին զձեզ ի յարկսն յաւիտենականս։

Ղուկ. ԺԶ. 1—9.

## 6.

### Մեծատունն խստասիրտ։

Այր ոմն էր մեծատուն, եւ ագանէր բեհեզս եւ ծիրանիս, եւ ուրախ լինէր հանապազ առատապէս։ Եւ աղքատ ոմն անուն Ղազարոս՝ անկեալ դնէր առ դրան նորա վիրաւորեալ, եւ ցանկայր

ընուլ զորովայն իւր ի փշրանացն՝ որ անկանէին ի սեղանոյ մեծատանն: Եղեւ մեռանել աղքատին եւ տանել հրեշտակացն զնա ի գոգն Աբրահամու: Մեռաւ եւ մեծատունն եւ թաղեցաւ, եւ ի դժոխսն ամբարձ զաչս իւր մինչ ի տանջանսն էր, ետես զԱբրահամ ի հեռաստանէ եւ զՂազարոս ի գոգ նորա հանգուցեալ: Աղաղակեաց եւ ասէ. Հա՛յր Աբրահամ, ողորմեաց ինձ եւ առաքեա զՂազարոս, զի թացցէ զծագ մատին իւրոյ ի ջուր եւ զովացուսցէ զլեզու իմ, զի պապակիմ ի տապոյ աստի: Եւ ասէ ցնա Աբրահամ: Որդեակ, յիշեա զի ընկալար անդէն զբարիս քո ի կեանս քում, եւ Ղազարոս նոյնպէս զչարչարանս. արդ՝ սա աստ մխիթարի, եւ դու այդր պապակիս:

Ղուկ. ԺԶ. 19—25.

## 7.

### Ծառայն անողորմ:

Նմանեցաւ արքայութիւն երկնից առն թագաւորի, որ կամեցաւ համար առնել ի մէջ ծառայից իւրոց: Եւ իբրեւ սկսաւ առնուլ, մատուցաւ առ նա պարտապան մի բիւր քանքարոյ: Իբրեւ ոչ ունէր հատուցանել, հրամայեաց՝ զնա վաճառել տէրն նորա, եւ զկին նորա, եւ զորդիս, եւ զամենայն՝ որ զինչ եւ ունիցի, եւ հատուցանել: Եւ անկեալ ծառայն՝ երկիր պագանէր նմա եւ ասէր. Երկայնամիտ լեր առ իս, եւ զամենայն հատուցից քեզ: Գթացեալ տէր ծառային այնորիկ՝ արձակեաց զնա եւ զփոխն եթող նմա: Եւ ելեալ ծառայն՝ եգիտ զմի ի ծառայակցաց իւրոց՝ որ պարտէր նմա հարիւր դահեկան. եւ կալեալ զնա՝ խեղդէր եւ ասէր. Հատո ինձ՝ զոր պարտիդ: Արդ անկեալ ծառայակիցն առ ոտս նորա, աղաչէր զնա եւ ասէր. Երկայնամիտ լեր առ իս, եւ հատուցից քեզ: Եւ նա ոչ կամէր. այլ չոգաւ արկ զնա ի



բանտ՝ մինչեւ հատուսցէ զպարտսն: Իբրեւ տեսին ծառայակիցքն նորա որ ինչ եղեւն, տրտմեցան յոյժ, եւ եկեալ ցուցին տեառն իւրեանց զամենայն՝ որ ինչ եղեւն: Յայնժամ կոչեաց զնա տէրն իւր եւ ասէ. Ծառա՛յ չար, զամենայն զպարտսն թողի քեզ, վասն զի աղաչեցեր զիս. իսկ արդ ո՞չ էր պարտ եւ քեզ ողորմել ծառայակցին քում, որպէս եւ ես քեզ ողորմեցայ: Եւ բարկացեալ տէրն նորա՝ մատնեաց զնա դահճաց, մինչեւ հատուսցէ զամենայն զպարտսն:

Մատթ. ԺԸ. 23—34.

## 8.

### Դաւիթ եւ Սեմէի:

Եկն արքայ Դաւիթ մինչեւ ցԲաւուրիմ, եւ ահա ելանէր անտի այր յազգականութենէ տանն Սաւուղայ, եւ անուն նորա Սեմէի, ելանէր եւ անիծանէր եւ ձգէր քարինս Դաւթի, եւ ամենեցուն՝ որոց ընդ արքայի Դաւթի: Եւ այսպէս ասէր Սեմէի յանիծանելն զնա. Ել ել, այր արեանց եւ այր անօրէն, դարձցի ի քեզ Տէր զամենայն արիւնս տանն Սաւուղայ, զի թագաւորեցեր փոխանակ նորա, եւ ետ Տէր զթագաւորութիւն քո ի ձեռս Աբեսողոմայ՝ որդւոյ քոյ. եցոյց քեզ զչարիս քո, զի այր արեանց ես դու: Ասէ Աբեսսա՝ որդի Շարուհեայ ցԴաւիթ. Ընդէ՞ր անիծանէ այնպէս շուն մի մեռեալ զտէր իմ զարքայ. անցից եւ առից զգլուխ նորա: Եւ ասէ արքայ. Թոյլ տուք նմա եւ անիծցէ, թերեւս տեսցէ Տէր զտառապանս իմ, եւ հատուսցէ ինձ բարիս՝ փոխանակ անիծից նորա յաւուր յայսմիկ: Եւ երթայր Դաւիթ եւ արքն՝ որ ընդ նմա, զճանապարհն. եւ Սեմէի երթայր մօտ առ նա ընդ կողաց լերինն, երթայր եւ անիծանէր եւ քարինս ի կողմանէ նորա ընկենոյր, եւ հող ցանէր ի վերայ:

Բ. Թագ. ԺԶ. 5—13.

## 9.

### Կայէն եւ Աբէլ:

Եղեւ Աբէլ հովիւ խաշանց, եւ Կայէն գործէր զերկիր: Եբեր Կայէն ի պտղոյ երկրի պատարագ Աստուծոյ. ած եւ Աբէլ յանդրանկաց խաշանց իւրոց եւ ի պարարտաց նոցա: Հայեցաւ Աստուած յԱբէլ եւ ի պատարագս նորա, եւ ի Կայէն եւ ի զոհս նորա ոչ նայեցաւ: Եւ տրտմեցաւ Կայէն յոյժ, եւ ասէ ցԱբէլ եղբայր իւր. Եկ երթիցուք ի դաշտ: Եւ իբրեւ չոգան ի դաշտ անդր, յարեաւ Կայէն ի վերայ Աբելի եւ սպան զնա: Եւ ասէ Տէր Աստուած ցԿայէն. Ո՞ւր է Աբէլ եղբայր քո: Եւ նա ասէ. Չգիտեմ, միթէ պահապա՞ն իցեմ եղբօրն իմոյ: Եւ ասէ Աստուած. Զի՞նչ գործեցեր զայդ. գոչումն արեան եղբօր քո բողոքէ առ իս յերկրէ: Անիծեալ լիջիր դու ի վերայ երկրի, գործիցես զերկիր, եւ ոչ յաւելցէ տալ քեզ զզօրութիւն իւր. երերեալ եւ տատանեալ եղիցես ի վերայ երկրի:

Ծննդ. Դ. 2—12.

## 10.

### Յովսէփ եւ եղբարք իւր:

Իսրայէլ սիրէր զՅովսէփ առաւել քան զամենայն որդիսն իւր: Եւ նախանձեցան ընդ նմա եղբարքն իւր: Եւ գնացին արածել զխաշինս հօրն իւրեանց: Եւ ասէ Իսրայէլ ցՅովսէփ. Երթ, տես եթէ ողջ իցեն եղբարքն քո եւ խաշինք, եւ բեր ինձ զըոյց: Տեսին զնա եղբարքն յառաջագոյն ի հեռաստանէ. խորհուրդ վատ ի մէջ առին՝ սպանանել զնա: Եւ իբրեւ եկն Յովսէփ, մերկացին զպատմուճանն նորա ի նմանէ, եւ առին ընկեցին զնա ի գուբն, եւ նստան ուտել զհաց: Եւ անցա-



նէին արք Մադիանացիք վաճառականք: Ասէ Յուդա ցեղբարսն իւր. Զի՞նչ օգուտ է եթէ սպանանիցեմք զեղբայրն մեր. եկայք վաճառեսցուք զնա Իսմայելացւոց: Եւ լուան նմա եղբարքն իւր. ձգեցին հանին զՅովսէփ ի գբոյ անտի, եւ վաճառեցին Իսմայելացւոցն քսան դահեկանի: Եւ առեալ զպատմուճանն Յովսեփայ, զենին ուլ այծեաց, թաթաւեցին զպատմուճանն յարեանն, եւ առաքեցին առ հայրն իւրեանց եւ ասեն. Զայդ գտաք, ծանիր եթէ որդւո՞յ քոյ իցէ: Եւ ծանեաւ զնա եւ ասէ. Պատմուճանս որդւոյ իմոյ է. գազան չար եկեր զնա: Պատառեաց զհանդերձս իւր եւ սուգ ունէր ի վերայ որդւոյն իւրոյ: Իսկ Մադիանացիքն վաճառեցին զՅովսէփ յԵգիպտոս՝ Պետափրեայ դահճապետի փարաւոնի: Եւ էր Տէր ընդ Յովսեփայ, եւ եգիտ շնորհս առաջի տեառն իւրոյ, եւ կացոյց զնա ի վերայ տան իւրոյ եւ զամենայն ինչ ետ ի ձեռս Յովսեփայ: Եւ եղեւ օրհնութիւն Տեառն ի վերայ ամենայն ընչից նորա ի տան եւ յանդի:

Ծննդ. Լէ. Լթ.

## 11.

### Անոխակալութիւն Յովսեփայ:

Իբրեւ տեսին եղբարքն Յովսեփայ թէ մեռաւ հայրն նոցա, ասեն. Գուցէ ոխս ունիցի ընդ մեզ Յովսէփ, եւ հատուցանիցէ մեզ հատուցումն զամենայն չարեացն՝ զոր անցուցաք ընդ նա: Եւ եկեալ առ նա, անկան առաջի նորա եւ ասեն. Ահաւասիկ մեք ծառայք քո եմք: Ասէ ցնոսա Յովսէփ. Մի երկնչիք. դուք խորհեցարուք զինէն ի չարութիւն, եւ Աստուած խորհեցաւ վասն իմ ի բարութիւն, զի կերակրեսցի ժողովուրդ բազում: Մի երկնչիք. ես կերակրեցից զձեզ եւ զտունս ձեր: Եւ մխիթարեաց զնոսա եւ սփոփեաց զսիրտս նոցա:

Ծննդ. Ծ. 15—21.

## 12.

### Սաւուղ եւ Դաւիթ:

Իբրեւ դարձաւ Դաւիթ ի հարկանելոյ զայլազգին, առ զնա Աբեններ եւ ած զնա առաջի Սաւուղայ: Եւ առ զնա Սաւուղ առ իւր յաւուր յայնմիկ, եւ ոչ ետ նմա դառնալ ի տուն հօր իւրոյ, եւ կացոյց զնա ի վերայ արանց պատերազմի: Ի մտանել նոցա, իբրեւ դարձաւ Դաւիթ ի սպանանելոյ զայլազգին, ելին պարաւորք ընդ առաջ Դաւթի, եւ նուագէին կանայք խաղալիկք եւ ասէին. Եհար Սաւուղ զհազարս, եւ Դաւիթ՝ զբիւրս: Եւ զչարեցաւ Սաւուղ վասն բանին այնորիկ եւ ասէ. Դաւթի ետուն զբիւրս, եւ ինձ ետուն զհազարս. եւ արդ զի՞նչ պակաս է նմա, բայց եթէ թագաւորութիւնս: Եւ ընդ ակամբ հայէր Սաւուղ յօրէ յայնմանէ եւ առ յապա, եւ եղեւ թշնամութեամբ ընդ Դաւթի զամենայն աւուրս նորա:

Ա. Թագ. ԺԷ. — ԺԸ.

## 13.

### Անոխակալութիւն Դաւթի:

Յարեաւ Դաւիթ եւ փախեաւ յերեսաց Սաւուղայ. եւ խնդրէր զնա Սաւուղ եւ պնդեցաւ զհետ Դաւթի: Անդ էր այր մի, եւ եմուտ Սաւուղ հանգչել. եւ Դաւիթ եւ արք նորա նստէին ի ներքնում այրին: Ասեն արքն Դաւթի ցնա. Ահա այս օր է, զորմէ ասաց Տէր ցքեզ՝ մատնել զթշնամիս քո ի ձեռս քո. արասցես ընդ նա՝ որպէս եւ հաճոյ թուի յաչս քո: Յարեաւ Դաւիթ եւ եհատ զտոտն լաւդկին Սաւուղայ գաղտ. եւ ասէ ցարս իւր. Քաւ լիցի ինձ թէ արարից զբանդ զայդ: Եւ հաճեաց զարսն իւր բանիւք եւ ոչ ետ նոցա սպանանել զՍաւուղ: Եւ Սաւուղ յարեաւ յայրէ



անտի եւ էջ ի ճանապարհն: Եւ Դաւիթ զկնի նորա ել յայրէ անտի, եւ աղաղակեաց զհետ նորա, եպագ նմա երկիր եւ ասէ. Տէր իմ արքայ, ընդէ՞ր լսես բանից ժողովրդեանն՝ որ ասեն թէ Դաւիթ խնդրէ զանձն քո: Ահա մատնեաց զքեզ Տէր այսօր ի ձեռս իմ յայրի անդ. եւ ոչ կամեցայ սպանանել զքեզ: Տես, հա՛յր իմ, ես հատի զտոտն հանդերձի քոյ, եւ ոչ սպանի զքեզ: Եւ ասէ Սաւուղ. Այդ քո՞ ձայն իցէ, որդեա՛կ իմ Դաւիթ: Դու արդար ես քան զիս, զի դու հատուցեր ինձ բարիս, եւ ես հատուցի քեզ չարիս: Եւ արդ գիտեմ զի թագաւորեսցես. երդուիր ինձ ի Տէր, զի մի սատակեսցես զզաւակ իմ: Եւ երդուաւ: Եւ գնաց Սաւուղ ի տեղի իւր:

Ա. Թագ. ԻԴ.

## 14.

### Աննախանձութիւն Մովսէսի:

Ել Մովսէս եւ խօսեցաւ ընդ ժողովրդեանն զպատգամս Տեառն. եւ ժողովեաց եւթանասուն այր ի ծերոց ժողովրդեանն, եւ կացոյց զնոսա շուրջ զխորանաւն: Եւ էջ Տէր ամպով եւ առ ի Հոգւոյն՝ որ ի նմա, եւ արկ զեւթանասուն արամբքն զծերովք: Եւ իբրեւ հանգեաւ Հոգին ի վերայ նոցա, եւ մարգարէացան ի բանակին: Եւ մնացին երկու արք ի բանակին, անուն միումն Եղդադ, եւ անուն երկրորդին՝ Մովդադ, եւ հանգեաւ ի վերայ նոցա Հոգին. եւ նոքա էին ի գրելոց անտի եւ ոչ եկին ի խորանն, եւ մարգարէացան ի բանակին: Պատասխանի տուեալ Յեսուայ որդւոյ Նաւեայ՝ պաշտօնէին Մովսիսի ընտրելոյ, եւ ասէ. Տէր Մովսէս, արգել զնոսա: Եւ ասէ ցնա Մովսէս. Մի արկաներ դու ինձ նախանձուկս. եւ ո՜ տայր զամենայն ժողովուրդս Տեառն մարգարէս, յորժամ տայր Տէր զոգին իւր ի վերայ նոցա:

Թիւ. ԺԱ. 24—30.

## 15.

### Դանիէլ եւ թշնամիք նորա:

Էր վիշապ մի մեծ, եւ պաշտէին զնա Բաբելացիքն: Ասէ թագաւորն ցԴանիէլ. Միթէ եւ զդմանէ՞ ասիցես թէ պղնձի է. ահաւադիկ կենդանի է, ուտէ եւ ըմպէ. արդ եկ պագ դմա երկիր: Ասէ ցնա Դանիէլ. Ես Տեառն Աստուծոյ իմոյ երկիր պագանեմ, զի նա է Աստուած կենդանի: Բայց դու, արքայ, տուր ինձ իշխանութիւն, եւ սպանից զվիշապդ առանց սրոյ եւ գաւազանի: Եւ ասէ թագաւորն. Տուեալ քեզ: Եւ առ Դանիէլ իւղ, ձիւթ եւ ճարպ եւ մազ, եւ եփեաց ի միասին եւ արար գնդակս, եւ եհար ի բերան վիշապին. եւ իբրեւ կերաւ՝ պայթեաց վիշապն: Իբրեւ լուան Բաբելացիքն, բարկացան յոյժ, եւ կուտեցան ի վերայ թագաւորին եւ ասեն. Հրեայ եղեւ թագաւորն. զԲէլ կործանեաց, եւ զվիշապն սպան, զքուրմսն կոտորեաց: Եւ ասեն ցթագաւորն. Տուր մեզ ի ձեռս զԴանիէլ, ապա թէ ոչ՝ սպանանեմք զքեզ եւ զտուն քո: Իբրեւ ետես թագաւորն եթէ կարի տագնապեն զնա, հարկաւ ի ձեռս ետ նոցա զԴանիէլ: Եւ նոքա արկին զնա ի գուբն առիւծուց. եւ անդ էր զվեց օր: Էին ի գբին եւթն առիւծք, եւ տային նոցա հանապազ երկուս մարդս եւ երկուս պատրուճակս. բայց յայնժամ ոչինչ արկին նոցա, զի վաղվաղակի կերիցեն զԴանիէլ: Եւ թագաւորն եկն յաւուրն եւթներորդի աշխարել զԴանիէլ: Իբրեւ եկն ի բերան գբոյն, եւ հայեցաւ եւ ետես զի նստէր Դանիէլ, աղաղակեաց ի ձայն մեծ եւ ասէ. Մեծ ես, Տէր Աստուած Դանիէլի, եւ չիք այլ ոք բաց ի քէն: Եւ առ զնա ի վեր: Եւ զխաստակարս կորստեան նորա արկին ի գուբն. եւ դէշ դէշ պատառեցան նոյնժամայն առաջի նորա:

Դան. ԺԴ. 22—41.



## ԳԼՈՒԽ Զ.

### *Բարեկամութիւն:*

1. Յամենայն ժամանակի բարեկամք եղիցին քո: Առ. ԺԷ. 17.

2. Եղբարք ի վիշտս եղիցին քեզ պիտոյ: Առ. ԺԷ. 17.

3. Բարեկամ հաւատարիմ՝ դեղ կենաց, եւ երկիւղածք Տեառն գտցեն զնա: Սիր. Զ. 16.

4. Բարեկամ հաւատարիմ՝ ծածկոյթ հզօր. իսկ որ գտանէ զնա՝ եգիտ գանձ: Սիր. Զ. 14.

5. Հաւատարիմ բարեկամի ոչ գոյ փոխանակ, եւ ոչ կշիռ նորա լաւութեանն: Սիր. Զ. 15.

6. Մի փոխանակեր զբարեկամ ընդ կարասւոյ, եւ մի զեղբայր հարազատ՝ ընդ ոսկւոյն Սոփիրայ: Սիր. Է. 20.

7. Լաւ են երկու քան զմի. զի եթէ գլորիցի մին, կանգնեսցէ զնա ընկեր իւր: Ժող. Դ. 9. 10.

8. Վա՜յ միումն՝ յորժամ գլորիցի, եւ ոչ գուցէ միւս՝ որ յարուցանիցէ զնա: Ժող. Դ. 10.

9. Առասան երեքկին ոչ վաղվաղակի խզեսցի: Ժող. Դ. 12.

10. Եղբայր յեղբօրէ օգնեալ՝ իբրեւ զքաղաք ամուր, եւ զօրացեալ բարձրացեալ՝ իբրեւ զթագաւորութիւն հաստատեալ: Առ. ԺԸ. 19.

11. Եթէ բռնասցի մին՝ երկուքն կայցեն ընդդէմ նորա: Ժող. Դ. 12.

12. Լաւ է բարեկամ մերձաւոր՝ քան զեղբայր հեռաւոր: Առ. ԺԸ. 24:

## Ա.

### Ընտրութիւն բարեկամի եւ ընկերութիւն:

1. Եթէ ստանաս բարեկամս, փորձիւ ստացիր զնա, եւ մի իսկ եւ իսկ վստահ լինիր ի նա: Սիր. Զ. 7.

2. Մի զամենայն մարդ մուծաներ ի տուն քո, զի բազում են դարանք նենգաւորին: Սիր. ԺԱ. 31.

3. Եթէ տեսանիցես զիմաստունն, զեամն դրանց նորա մաշեսցէ ոտն քո: Սիր. Զ. 36.

4. Ընդ հանճարեղս եղիցի զրոյց քո: Սիր. Թ. 23.

5. Որ գնայ ընդ իմաստունս՝ իմաստուն եղիցի: Առ. ԺԳ. 20.

6. Արդարք եղիցին ճաշակիցք քո: Սիր. Թ. 22.

7. Ընդ անզգամին մի յաճախեր բանիւ, եւ առ անմիտն մի երթար: Սիր. ԻԲ. 14.

8. Ի ճանապարհս ամպարշտաց մի երթայցես, եւ ի տեղւոջ՝ ուր բնակիցեն, ընդ այն մի անցանիցես: Առ. Դ. 14. 15.

9. Մի լինիր ընկեր առն բարկացողի, եւ ընդ բարեկամի զայրացողի մի բնակեր. գուցէ ուսանիցիս զճանապարհս նորա: Առ. ԻԲ. 24.

10. Որդեակ, մի խաբեսցեն զքեզ արք ամպարիշտք. եթէ կոչեսցեն զքեզ եւ ասիցեն. Եկ ընդ մեզ, քսակ հասարակաց ստասցուք ամենեքեան, գանձարան ի միասին եղիցի մեր. մի երթար ճանապարհ ընդ նոսա: Առ. Ա. 10. 14. 15.

11. Մի նախանձիր ընդ չարս եւ մի ցանկանայցես կալ ընդ նոսա: Առ. ԻԴ. 1.

12. Պատուիրեմ ձեզ խորշել յամենայն եղբօրէ՝ որ ստահակն գնայցեն: Բ. Թես. Գ. 6.

13. Որ մերձենայ ի ձիւթ՝ շաղախեսցի, եւ որ հաղորդ լինի ամբարտաւանի՝ նմանեսցի նմա: Սիր. ԺԳ. 1.

14. Այր մեղաւոր խռովեսցէ զբարեկամս իւր: Սիր. ԻԸ. 10.

15. Բարեկամք (սուտք) ատեսցեն զբարեկամս աղքատս. բարեկամք մեծատանց՝ բազումք: Առ. ԺԴ. 20.

16. Մեծութիւն յաւելու բարեկամս բազումս, եւ աղքատն եւ ի բուն բարեկամէ անտի քակի: Առ. ԺԹ. 4.



17. Է բարեկամ՝ որ ոչ կացցէ մնասցէ յաւուր նեղութեան քոյ, եւ է բարեկամ՝ որ շրջի ի թշնամութիւն, եւ զկագ նախատանաց քոց յայտնեսցէ: Սիր. Զ. 8.

18. Է բարեկամ՝ որ զուող է սեղանոյ, եւ ոչ կացցէ առ քեզ յաւուր նեղութեան քոյ: Սիր. Զ. 10.

19. Եթէ խոնարհեսցիս, եղիցի ընդդէմ քո, եւ յերեսաց քոց թաքիցէ: Սիր. Զ. 12.

20. Ոչ երեւեսցի ի բարիս բարեկամ: Սիր. ԺԲ. 8.

## Բ.

### Խորհուրդք բարեկամութեան:

1. Զբարեկամ քո եւ զբարեկամ հայրենի մի թողուր: Առ. ԻԷ. 10.

2. Յամեա առ բարեկամի եւ հաւատարմացիր առ նմա: Սիր. ԻԷ. 18.

3. Մի թողուր զբարեկամ հին, զի նորն ոչ է հաւասար նմա: Սիր. Թ. 14.

4. Գինի նոր՝ բարեկամ նոր. եթէ հնասցի, ուրախութեամբ արբջիր: Սիր. Թ. 15.

5. Ի թշնամեաց քոց մեկուսի լեր, եւ ի բարեկամաց զգոյշ լինիջիր: Սիր. Զ. 13.

6. Մի կարի յաճախեր առ բարեկամ. գուցէ յագիցի քեւ, եւ ատիցէ զքեզ: Առ. ԻԵ. 17.

7. Մինչ չեւ իցէ քո վախճանեալ, արա բարի բարեկամին, ըստ զօրութեան քում կարկառեա եւ տուր նմա: Սիր. ԺԴ. 13.

8. Կորո զարծաթ վասն եղբօր եւ բարեկամի, եւ մի ժանկոտեսցէ ընդ քարիւ ի կորուստ: Սիր. ԻԹ. 13.

9. Մի նիւթեր բարեկամի քում չարիս, որ յեցեալ եւ յուսացեալ իցէ ի քեզ: Առ. Գ. 29.

10. Որ ձգէ քարինս թռչնոց՝ խրտուցանէ զնոսա. եւ որ նախատէ զբարեկամ՝ լուծցէ զբարեկամութիւն։ Սիր. ԻԲ. 25.

11. Յորժամ նախատիցէ զքեզ բարեկամ քո, խոյս տուր, մի արհամարհեր։ Առ. ԻԵ. 8.

12. Լաւ են հարուածք բարեկամի՝ քան զկամակոր համբոյրս թշնամւոյ։ Առ. ԻԷ. 6.

13. Է՛ որ զամօթ յանձն առնու վասն բարեկամի, եւ ի տարապարտուց ստացաւ զնա թշնամի իւր։ Սիր. Ի. 25.

14. Հաւատարմութիւն ստացիր յաղքատութեան ընդ մերձաւորին, զի ի բարիս նորա ուրախ լիցիս։ Սիր. ԻԲ. 28.

15. Ի ժամանակի նեղութեան մօտ կաց առ նմա, զի ի ժառանգութեան նորա եւ դու ժառանգեսցես։ Սիր. ԻԲ. 29.

## ՕՐԻՆԱԿՔ

### 1.

### Աբրաամ ազատէ զՂովտ։

Եկին Քոդողոգոմոր եւ թագաւորքն որ ընդ նմա եւ կոտորեցին զամենայն իշխանս Ամաղեկայ։ Եւ ել արքայ Սոդոմացւոց եւ արքայ Գոմորացւոց եւ ճակատեցան ընդ նոսա ի պատերազմ։ Փախեաւ արքայ Սոդոմացւոց եւ արքայ Գոմորացւոց։ Եւ առին (թշնամիք նոցա) զամենայն աւար եւ զամենայն համբարս նոցա եւ գնացին. առին եւ զՂովտ զեղբօրորդին Աբրամու եւ զինչս նորա եւ երթային։ Եհաս ոմն ի զերծելոց անտի եւ պատմեաց Աբրամու։ Իբրեւ լուաւ Աբրամ թէ գերի վարեցաւ Ղովտ, պնդեցաւ զինի նոցա գիշերի, ինքն եւ ծառայք իւր։ Եհար զնոսա եւ դարձոյց զամենայն աւարն Սոդոմացւոց, եւ զՂովտ եւ զամենայն ստացուածս նորա դարձոյց։

Ծննդ. ԺԴ.



### 2.

### Յովնաթան եւ Դաւիթ։

Ոգի Յովնաթանու կապեցաւ ընդ ոգւոյն Դաւթի։ Սիրեաց զնա Յովնաթան ըստ անձին իւրում, եւ ուխտեաց ընդ նմա ուխտ առ ի սիրել զնա։ Մերկացաւ զվաւդիկն՝ որ զիւրեւ, եւ ետ զայն Դաւթի։ Եւ եղեւ Սաւուղ թշնամութեամբ ընդ Դաւթի։ Պատմեաց Յովնաթան Դաւթի եւ ասէ. Հայր իմ խնդրէ սպանանել զքեզ. զգոյշ լեր եւ թաքիջիր, եւ ես խօսեցայց վասն քո ընդ հօր իմում։ Եւ խօսեցաւ վասն Դաւթի բանս բարիս ընդ Սաւուղայ եւ ասէ. Մի մեղիցէ արքայ ի ծառայ իւր Դաւիթ։ Եւ ի գիշերին յայնմիկ առաքեաց Սաւուղ հրեշտակս ի տուն Դաւթի, զի սպանցէ զնա. եւ Դաւիթ փախեաւ եւ ապրեցաւ։ Ասէ Սաւուղ ցՅովնաթան որդի իւր. Զի՞ է զի ոչ եկն որդին Յեսսեայ ի սեղանս։ Պատասխանի ետ Յովնաթան եւ ասէ. Հրաժարեաց յինէն երթալ ի Բեթղահէմ քաղաք իւր։ Եւ բարկացաւ Սաւուղ ի վերայ Յովնաթանու եւ ասէ ցնա. Ես ո՞չ գիտեմ զի դաշնաւոր ես դու որդւոյն Յեսսեայ յամօթ քո. զի որչափ կենդանի է՝ ոչ հաստատեսցի թագաւորութիւն քո։ Արդ առաքեա կալ զպատանին։ Պատասխանի ետ Յովնաթան. Ընդէ՞ր մեռանիցի, զի՞նչ գործեաց։ Եւ դիմեաց արտաքս, եւ ոչ եկեր հաց. զի բեկաւ վասն Դաւթի. չոգաւ առ Դաւիթ եւ ասէ ցնա. Մի երկնչիր, դու թագաւորեսցես ի վերայ Իսրայելի, եւ ես եղէց քո երկրորդ։ Եւ ուխտեցին ուխտ երկոքեան առաջի տեառն։ Մեռաւ Սաւուղ եւ երեքեան որդիք նորա։ Բուռն եհար Դաւիթ զհանդերձից իւրոց եւ պատառեաց զնոսա, եւ ամենայն արք՝ որ ընդ նմա, պատառեցին զհանդերձս իւրեանց։ Եւ կոծեցան եւ լացին ի վերայ Սաւուղայ եւ Յովնաթանու. եւ ողբաց

Դաւիթ եւ ասաց. Ցաւէ ինձ ի վերայ քո, եղբայր իմ Յովնաթան. զարմանալի եղեւ սէր քո ինձ։

Ա. Թագ. ԺԸ — Բ. Թագ. Ա.

## 3.

### Երեքին բարեկամք Յոբայ։

Լուեալ երից բարեկամացն (Յոբայ) զչարիսն ամենայն՝ որ հասին ի վերայ նորա, եկին յիւրաքանչիւր աշխարհէ առ նա միաբան, մխիթարել եւ սփոփել զնա։ Եւ տեսեալ զնա ի բացուստ՝ ոչ ծանեան, եւ բարբառեալ մեծաձայն լացին, եւ պատառեցին իւրաքանչիւր զպատմուճան իւր, եւ ցանեցին հող ի վերայ գլխոց իւրեանց ընդ երկինս հայելով։ Եւ նստան շուրջ զնովաւ յերկրի զեւթն օր եւ զեւթն գիշեր. եւ ոչ ոք ի նոցանէ խօսեցաւ ընդ նմա բան, քանզի տեսանէին զանհնարին հարուածն եւ զմեծամեծս յոյժ։

Յոբ. Բ. 11—13.

## 4.

### Տակառապետն փարաւոնի։

Բարկացաւ փարաւոն ի վերայ երկոցուն ներքինեացն իւրոց, ի վերայ տակառապետին եւ ի վերայ մատակարարին, եւ եդ զնոսա յայնմ բանտի՝ ուր Յովսէփն կայր։ Տեսին երազ երկոքին մինչ էին ի բանտի անդ։ Եմուտ առ նոսա Յովսէփ ընդ առաւօտն եւ ետես զնոսա, եւ էին խռովեալք։ Եհարց եւ ասէ. Ընդէ՞ր տրտում են երեսք ձեր այսօր։ Եւ նոքա ասեն ցնա. Երազ տեսաք, եւ ոչ ոք է որ մեկնիցէ զնա։ Ասէ ցնոսա Յովսէփ. Ո՞չ ապաքէն ի ձեռս Աստուծոյ իցէ մեկնութիւն նոցա. պատմեցէք ինձ։ Պատմեաց տակառապետն զերազն իւր եւ ասէ. Թուէր ինձ ի տեսլեան իմում որթ մի առաջի իմ, եւ յորթն երեք ուռք կանաչք յոյժ,



եւ ունէր երիս ողկոյզս հասեալս. եւ բաժակն փարաւոնի ի ձեռին իմում. առնուի զխաղողն եւ ճմլէի ի բաժակն եւ տայի ի ձեռս փարաւոնի։ Ասէ ցնա Յովսէփ. Երեք ուռքն երեք աւուրք են։ Այլ եւս երեք աւուրք, եւ յիշեսցէ փարաւոն զիշխանութիւնն քո, եւ անդէն ի նմին տակառապետութեան քում կացուսցէ զքեզ։ Այլ զիս յիշեսջիր յորժամ բարի լինիցի քեզ. եւ արասցես ինձ ողորմութիւն. եւ յիշեսցես զիս առաջի փարաւոնի, եւ հանցես զիս ի բանտէ աստի յայսմանէ. զի գողացան զիս յերկրէն Եբրայեցւոց, եւ աստ ոչինչ արարի, եւ արկին զիս ի տուն գբոյս այսորիկ։ Իբրեւ ետես մատակարարն՝ թէ ուղիղ մեկնեաց, ասէ ցՅովսէփ. Եւ ես տեսանէի յերազի, թուէր ինձ թէ երիս խանս նաշհւոյ ունէի ի գլուխ իմ. եւ ի վերնում խանին, յամենայնէ՝ զոր ուտէր արքայ փարաւոն, եւ թռչունք ուտէին զնա ի խանէ անտի։ Պատասխանի ետ Յովսէփ եւ ասէ ցնա. Յետ երից աւուրց բարձցէ փարաւոն զգլուխ քո ի քէն, եւ կախեսցէ զքեզ զփայտէ, եւ կերիցեն թռչունք երկնից զմարմին քո ի քէն։ Եւ յաւուրն երրորդի օր ծննդոց էր փարաւոնի, եւ առնէր ուրախութիւն ամենայն ծառայից իւրոց, եւ յիշեաց զիշխանութիւն տակառապետին եւ զիշխանութիւն մատակարարին։ Կացոյց զտակառապետն անդէն յիշխանութեան իւրում, եւ զմատակարարն կախեաց զփայտէ։ Եւ ոչ յիշեաց տակառապետն զՅովսէփ, այլ մոռացաւ զնա։

Ծննդ. Խ.

## 5.

### Յովսափատ եւ Աքաաբ։

Իջ Յովսափատ արքայ Յուդայ առ (Աքաաբ) արքայ Իսրայէլի։ Ասէ արքայ Իսրայէլի ցՅովսափատ. Ելցե՞ս ընդ մեզ յՌամաթ Գաղաադու ի

պատերազմ: Եւ ասէ Յովսափատ. Որպէս ես, նոյնպէս եւ դու. եւ որպէս զօրք իմ, զօրք քո: Եւ ել արքայ Իսրայէլի եւ արքայ Յուդայ ընդ նմա յՌամաթ: Ասէ արքայ Իսրայէլի ցՅովսափատ. Այլակերպեցայց եւ մտից ի պատերազմ, եւ դու զգեցիր զիմ հանդերձս: Այլակերպեցաւ արքայն Իսրայէլի եւ եմուտ ի ճակատն: Եւ արքայն Ասորւոց պատուէր ետ կառավարաց իւրոց եւ ասէ. Մի մարտնչիցիք ընդ մեծի կամ ընդ փոքու, այլ միայն ընդ արքային Իսրայէլի: Իբրեւ տեսին կառավարքն զՅովսափատ, ասեն. Թուի թէ սա իցէ արքայն Իսրայէլի. եւ պատեցին զնա պատերազմել: Եւ աղաղակեաց Յովսափատ: Եւ իբրեւ տեսին կառավարքն եթէ չէ նա արքայն Իսրայէլի, դարձան ի նմանէ: Ձգեաց մի ոմն կորովութեամբ զաղեղն իւր, եւ եհար զարքայն Իսրայէլի ընդ զրահն եւ ընդ թոքառաջն: Եւ հոսէր արիւնն ի վիրէ անտի եւ լնոյր զծոց կառացն: Իբրեւ ընդ երեկս եղեւ, ել ոգին: Եկին ի Սամարիա եւ թաղեցին զարքայ եւ լուացին զկառսն յաւազանին Սամարիայ, եւ լիզէին խոզք եւ շունք զարիւն նորա, ըստ բանին Տեառն զոր խօսեցաւ: Եւ դարձաւ Յովսափատ յԵրուսաղէմ: Ել ընդ առաջ նորա Յէու մարգարէ եւ ասէ. Եթէ մեղաւորին դու օգնես, կամ ատելեացն ի Տեառնէ բարեկամ լինիս. վասն այդորիկ եղեւ ի վերայ քո բարկութիւն ի Տեառնէ: Այլ զի գտան ի քեզ բանք բարիք եւ ուղղեցեր զսիրտ քո խնդրել զՏէր, ապրեցոյց զքեզ:

Գ. Թագ. ԻԲ. Բ. Մնաց. ԺԹ.

## ԳԼՈՒԽ Է.

### *Արդարութիւն:*

1. Սկիզբն ճանապարհի բարւոյ գործելն զարդարութիւն: Առ. ԺԶ. 5.

2. Ի պտղոյ արդարութեան բուսանի ծառ կենաց: Առ. ԺԱ. 30.



3. Ի ճանապարհս արդարութեան՝ կեանք: Առ. ԺԲ. 28.

4. Երկայնութիւն կենաց՝ ճանապարհք արդարութեան: Առ. ԺԶ. 17.

5. Որ ատեայ զանիրաւութիւն՝ երկայնակեաց լիցի: Առ. ԻԸ. 16.

6. Ես իմաստութիւն ի ճանապարհս արդարութեան գնամ, եւ ի մէջ շաւղաց արդարութեան շրջիմ: Առ. Ը. 12. 20.

7. Որ գնայ արդարութեամբ՝ գտցէ օգնականութիւն: Առ. ԻԸ. 18.

8. Ի յաճախել արդարութեան՝ զօրութիւն բազում: Առ. ԺԵ. 5.

9. Արդարութիւն փրկէ ի մահուանէ: Առ. Ժ. 2.

10. Արդարութիւն արանց ուղղոց փրկէ զնոսա: Առ. ԺԱ. 7.

11. Մանուկ էի ես եւ ծերացայ, եւ ոչ տեսի զարդար արհամարհեալ, եւ ոչ զզաւակ նորա թէ մուրանայ հաց: Սղմ. ԼԶ. 25.

12. Որ շրջի անարատ յարդարութեան՝ երանելի որդիս թողու զկնի իւր: Առ. Ի. 7.

13. Որ սերմանէ զարդարութիւն՝ կալցի վարձս հաւատարիմ: Առ. ԺԱ. 21.

14. Սերմանեցէք ձեզ յարդարութիւն, եւ հնձեցէք պտուղ կենաց: Ովս. Ժ. 12.

15. Որ ժողովէ զմեծութիւն առանց իրաւանց՝ ի կէս աւուրց իւրոց թողցէ զնա: Երեմ. ԺԷ. 11.

16. Ի բարութեան արդարոց յօրինեցաւ քաղաք: Առ. ԺԱ. 10.

17. Տունք ամպարշտաց կործանեսցին. յարկք արդարոց հաստատեսցին: Առ. ԺԴ. 11.

18. Արդարութիւն զազգ բարձրացուցանէ. նուազեցուցանեն զազգս մեղք: Առ. ԺԴ. 34.

19. Ազգի անիրաւի չարաչար կատարած: Իմ. Գ. 19.

20. Թագաւորութիւն ազգէ յազգ փոխի յաղագս անիրաւութեան: Սիր. Ժ. 8.

21. Լաւ է աղքատ արդար՝ քան զմեծատուն սուտ: Առ. ԺԹ. 22.

22. Լաւ է սակաւ ինչ առնուլ արդարութեամբ, քան զբազում արդիւնս աներկիւղութեամբ: Առ. ԺԵ. 29.

23. Բարի է սակաւիկ մի արդարութեամբ, քան զբազում ինչս անիրաւութեամբ: Տոբ. ԺԲ. 8.

24. Ինչք անիրաւաց իբրեւ գետ ցամաքեսցին: Սիր. Խ. 13.

25. Ոչ յաջողեսցի մարդոյ յանիրաւութենէ. արմատք արդարոց ոչ հատցին: Առ. ԺԲ. 3.

26. Են՝ որ զիւրեանց սերմանեն, եւ բազմապատիկ առնեն. եւ են՝ որ յանիրաւութենէ ժողովեն, եւ կարօտանան: Առ. ԺԱ. 24.

27. Մեծութիւն անիրաւութեամբ ժողովեալ՝ փախեսցի: Յոբ. Ի. 15.

28. Մեծութիւն խռովեալ անիրաւութեամբ՝ պակասեսցի. իսկ որ աստուածպաշտութեամբ ժողովէ, բազմասցի: Առ. ԺԳ. 11.

29. Արդարք վայելեսցեն ի մեծութեան ամս բազումս, եւ անիրաւք կորնչին վաղվաղակի: Առ. ԺԳ. 23.

30. Լաւ է բնակել առ անկեան ի ներքոյ օդոյ, քան ի բռեալս անիրաւութեամբ: Առ. ԻԱ. 9.

31. Որ շինէ զտուն իւր յայլոց ընչից՝ որպէս ժողովէ քարինս ի ձմերայնի: Սիր: ԻԱ. 9.

32. Լոյս արդարոց յամենայն ժամ. լոյս ամպարշտաց շիջցի: Առ. ԺԳ. 9.

33. Զմեղաւորս հալածեն չարիք. արդարոց հասցեն բարութիւնք: Առ. ԺԲ. 25. 26.

34. Ցամպարշտութիւնս արկանէ անիրաւութիւն: Առ. ԺԱ. 5.

35. Ամպարիշտ գործէ զգործս անիրաւութեան: Առ. ԺԱ. 18.



36. Ուրախութիւն արդարոց՝ առնել զիրաւունս: Առ. ԻԱ. 15.

37. Ոչ է հաճոյ արդարոյ եւ ոչ մի ինչ անիրաւ: Առ. ԺԲ. 21.

38. Սատակումն ամպարշտաց հասցէ, զի ոչ կամին առնել զիրաւունս: Առ. ԻԱ. 7.

39. Պիղծ է առաջի Տեառն խորհուրդ անիրաւ: Առ. ԺԵ. 26.

40. Պիղծ է Տեառն Աստուծոյ քում ամենայն՝ որ առնէ զանիրաւութիւն: Բ. Օր. ԻԵ. 16.

41. Պիղծ է առաջի Տեառն չափ կրկին, եւ կշիռ նենգութեան ոչ է բարւոք առաջի նորա: Առ: Ի. 23.

42. Կշիռք նենգութեան պիղծ են առաջի Տեառն. կշիռ արդար ընդունելի է նմա: Առ. ԺԱ. 1.

43. Գործել զարդարութիւն եւ խօսել զճշմարտութիւն՝ հաճոյ է առաջի Տեառն քան զարիւն զոհից: Առ. ԻԱ. 3.

44. Յորժամ առնիցես դու զճշմարտութիւն, յաջողեսցին ամենայն գործք քո: Տոբ: Դ. 6.

45. Մինչեւ ի մահ մարտիր յաղագս ճշմարտութեան, եւ Տէր Աստուած մարտիցէ ընդ քո: Սիր. Դ. 33.

46. Թռչունք առ իւրեանց նմանիսն դադարեն, եւ ճշմարտութիւն առ գործելիսն նորա դարձցի: Սիր. ԻԷ. 10.

## ՕՐԻՆԱԿՔ

### 1.

Զաքէոս:

Մատեալ (Յիսուս) շրջէր ընդ Երիքով. եւ ահա այր մի անուն կոչեցեալ Զակքէոս, եւ նա էր մաքսապետ, եւ ինքն մեծատուն. եւ խնդրէր տեսանել թէ ո՛վ իցէ Յիսուս. եւ ոչ կարէր ի բազ-

մութենէն, զի կարճ էր հասակաւ։ Եւ ընթացեալ յառաջս, ել ի ժանտաթզենին, զի տեսանիցէ զնա, քանզի ընդ այն իսկ անցանելոց էր։ Իբրեւ եկն ի տեղին, հայեցաւ ի վեր Յիսուս եւ ասէ ցնա. Զակքէ, փութա էջ այտի, զի այսօր ի տան քում արժան է ինձ ագանել։ Փութացաւ եւ էջ, եւ ընկալաւ զնա ուրախութեամբ։ Իբրեւ տեսին ամենեքին, տրտնջէին եւ ասէին, թէ Առ առն մեղաւորի եմուտ լուծանել։ Եկն եկաց Զակքէոս եւ ասէ ցՏէր. Տէր, ահա զկէս ընչից իմոց տաց աղքատաց. եւ եթէ զոք զրկեցի, հատուցից չորեքկին։ Եւ ասէ ցնա Յիսուս. Այսօր եղեւ փրկութիւն տանս այսմիկ։

Ղուկ. ԺԹ. 1—9.

## 2.

### Աքաաբ եւ Նաբովթ։

Այգի մի էր Նաբովթայ Յեզրայելացւոյ, մերձ առ կալ Աքաաբու արքայի Սամարիայ։ Եւ խօսեցաւ արքայ ընդ Նաբովթայ եւ ասէ. Տուր ինձ զայգին քո, եւ եղիցի ինձ ի պարտէզ բանջարոյ, եւ տաց քեզ արծաթ՝ գինս այգւոյ քոյ։ Ասէ Նաբովթ ցարքայ. Քաւ լիցի ինձ տալ քեզ զժառանգութիւն հարց իմոց։ Եւ եկն Աքաաբ ի տուն իւր տխրեալ, եւ ոչ եկեր հաց։ Եմուտ առ նա Յեզաբէլ կին իւր, խօսեցաւ ընդ նմա եւ ասէ. Զի՞ խռովեալ է ոգի քո. արի կեր հաց, եւ ես տաց քեզ զայգին։ Եւ գրեաց հրովարտակ յանուն Աքաաբու եւ կնքեաց մատանեաւ նորա, եւ առաքեաց առ ծերս քաղաքին Նաբովթայ։ Գրեալ էր ի հրովարտակին այսպէս. Նստուցէք զՆաբովթ, եւ երկուս արս՝ որդիս անօրինաց հանդէպ նորա, եւ վկայեսցեն զնմանէ եւ ասասցեն, թէ Օրհնեցեր զԱստուած եւ զարքայ. եւ հանցեն զնա եւ քարկոծեսցեն։ Եւ արարին արք քաղաքին նորա զոր օրինակ գրեալ էր ի հրովարտակին։ Իբրեւ



լուաւ Յեզաբէլ թէ քարկոծեցաւ Նաբովթ եւ մեռաւ, ասէ ցԱքաաբ. Արի ժառանգեա զայգին Նաբովթայ, զոր ոչ ետ քեզ ընդ արծաթոյ. զի մեռաւ։ Յարեաւ Աքաաբ եւ էջ յայգին Նաբովթայ ժառանգել։ Եւ խօսեցաւ Տէր ընդ Եղիայի եւ ասէ. Էջ ընդ առաջ Աքաաբու եւ ասասցես. Այսպէս ասէ Տէր. Ի տեղւոջ՝ ուր լակեցին շունք եւ խոզք զարիւն Նաբովթայ, անդ լակեսցեն զարիւն քո։ Եւ առ Յեզաբէլ խօսեցաւ Տէր եւ ասէ. Շունք կերիցեն զնա առ պարսպին Յեզրայելի. զմեռեալ Աքաաբու ի քաղաքի՝ կերիցեն շունք, եւ զմեռեալ նորա ի դաշտի՝ կերիցեն թռչունք։

Գ. Թագ. ԻԱ.

## 3.

### Դատաւորն եւ այրին։

Դատաւոր մի էր ի քաղաքի ուրեմն, յԱստուծոյ ոչ երկնչէր եւ ի մարդկանէ ոչ ամաչէր։ Եւ այրի մի էր ի նմին քաղաքի, գայր առ նա եւ ասէր. Դատ արա ինձ յոսոխէ իմմէ։ Եւ ոչ կամէր ի բազում ժամանակս։ Յետ այնորիկ ասէ ի միտ իւրում. Թէ եւ յԱստուծոյ ոչ երկնչիմ, եւ ի մարդկանէ ոչ ամաչեմ. գոնէ վասն աշխատ առնելոյ զիս այրւոյն՝ արարից նմա դատ, զի մի ի սպառ եկեալ թախանձիցէ զիս։ Եւ ասէ Տէր. Լուարո՞ք զինչ դատաւորն անիրաւութեան ասէր. իսկ Աստուած ո՞չ առնիցէ վրէժխնդրութիւն ծառայից իւրոց, որ աղաղակեն առ նա ի տուէ եւ ի գիշերի, եւ երկայնամի՞տ միայն լինիցի առ նոսա։ Այո՛, ասեմ ձեզ. զի արասցէ վրէժխնդրութիւն նոցա վաղվաղակի։

Ղուկ. ԺԸ. 2—8.

### 4.

Աքար :

Առաքեաց Յեսու արս յԵրիքովէ ի Գայի: Ելին արքն եւ լրտեսեցին. եւ դարձան առ Յեսու եւ ասեն. Մի ելցէ ամենայն ժողովուրդս, այլ իբրեւ երկու հազարք կամ երեք հազարք արանց ելցեն եւ պաշարեսցեն զքաղաքն: Ելին անդր ի ժողովրդենէն իբրեւ երեք հազարք. եւ կոտորեցին ի նոցանէ արք Գայեայ արս երեսուն եւ վեց եւ հալածեցին զնոսա ի դրանէն մինչեւ խորտակեցին զնոսա: Պատառեաց Յեսու զհանդերձս իւր, ինքն եւ ծերքն Իսրայելի, եւ արկին հող զգլխովք իւրեանց: Եւ ասէ Տէր ցՅեսու. Մեղաւ ժողովուրդն եւ անց զուխտիւ իմով. գողացան եւ առին ի նզովից: Կանխեաց Յեսու ընդ առաւօտն եւ մատոյց զժողովուրդն ըստ ցեղիցն իւրեանց, եւ յանդիմանեցաւ ցեղն Յուդայի: Մատուցաւ ցեղն Յուդայի ըստ տոհմից, եւ յանդիմանեցաւ տունն Զարայի: Մատուցաւ տունն նորա ըստ արանց, եւ յանդիմանեցաւ Աքար: Ասէ Յեսու ցԱքար. Որդեակ իմ, պատմեա ինձ զինչ գործեցեր: Պատասխանի ետ Աքար եւ ասէ. Արդարեւ ես մեղայ առաջի Տեառն. տեսի յաւարին ամղան մի նկարէն գեղեցիկ եւ լեզու մի ոսկի, եւ ցանկացեալ նոցա առի, եւ ահաւանիկ թաքուցեալ կայ ընդ հողով ի վրանի իմում: Եւ առ Յեսու զԱքար եւ եհան զնա ի ձորն Աքովրայ, եւ ասէ. Ընդէ՞ր սատակեցեր զմեզ, սատակեսցէ զքեզ Տէր: Եւ քարկոծեցին զնա ամենայն Իսրայէլ քարամբք:

Յեսու. Է.

### 5.

Տովբիթ եւ կին նորա :

Կինն իմ մանէր եւ գործէր ձեռօք իւրովք, եւ տայր տերանցն. եւ նոքա տային զվարձս նորա, եւ յաւելին եւ ետուն նմա ուլ միւս եւս: Եւ յորժամ եկն նա առ իս, ասեմ ես ցնա. Ուստի՞ բերեր դու զուլդ զայդ, միթէ գողունի՞ է. տուր անդր ցտեարս իւր: Ասէ կինն իմ. Պատիւ ետուն ինձ վասն վարձուց իմոց: Եւ ես անհաւատացի նմա, այլ ստիպէի տալ ցտեարս իւր: Եւ ես իբրեւ զամօթի հարկանէի ի նմանէ: Եւ նա ասէ ցիս. Ո՞ւր են արդ ողորմութիւնքն քո եւ արդարութիւնքն:

Տովբ. Բ. 19—22.



## ԳԼՈՒԽ Ը.

*Բարոյական առաքինութիւնք :*

---

### Ա.

Ամբարտաւանութիւն եւ խոնարհութիւն :

1. Սկիզբն մեղաց ամբարտաւանութիւն. եւ որ բուռն հարկանիցէ զնմանէ, բղխեսցէ զպղծութիւն: Սիր. Ժ. 15.
2. Յամբարտաւանութենէ կորուստ եւ խռովութիւն յոյժ: Տովբ. Դ. 14.
3. Պիղծ է առաջի Տեառն ամենայն մեծամիտ: Առ. ԺԶ. 5.
4. Ատելի է առաջի Տեառն եւ մարդկան ամբարտաւանութիւն: Սիր. Ժ. 7.
5. Տէր ամբարտաւանից հակառակ կայ, եւ տայ շնորհս խոնարհաց: Առ. Գ. 34.
6. Ամբարտաւանութիւն զայր նկուն առնէ. իսկ զխոնարհս փառաւոր առնէ Տէր: Առ. ԻԹ. 23.
7. Որ բարձրացուցանէ զանձն՝ խոնարհեսցի, եւ որ խոնարհեցուցանէ զանձն՝ բարձրասցի: Մատ. ԻԳ. 12.
8. Յառաջ քան զբեկումն՝ հպարտանայ սիրտ առն: Առ. ԺԸ. 12.

9. Զի՞ հպարտանայ հող եւ մոխիր։ Սիր. Ժ. 10.

10. Զի՞նչ ունիս՝ զոր ոչ իցէ առեալ. եւ եթէ առեր՝ զի՞ պարծիս իբրեւ զչառեալ։ Ա. Կոր. Դ. 7.

11. Որ բարձր առնէ զտուն իւր՝ խնդրէ զբեկումն։ Առ. ԺԷ. 16.

12. Արհամարհողն՝ այր ամբարտաւան է, եւ ոչ ինչ վճարեսցէ։ Ամբ. Բ. 5.

13. Արհամարհէ զընկերս այր պակասամիտ։ Առ. ԺԱ. 12.

14. Ճանապարհ արհամարհողաց ի կորուստ։ Առ. ԺԳ. 15.

15. Են՝ որ մեծացուցանեն զանձինս, եւ ոչինչ ունին. եւ են՝ որ խոնարհեցուցանեն զանձինս, եւ լի են մեծութեամբ բազմաւ։ Առ. ԺԳ. 7.

16. Մի բարձրացուցաներ զքեզ ի խորհուրդս անձին քո։ Սիր. Զ. 2.

17. Յիմաստութիւն քո մի հպարտանար։ Առ. Գ. 5.

18. Մի լինիր իմաստուն յաչս անձին քոյ։ Առ. Գ. 7.

19. Վա՜յ այնոցիկ՝ որ զանձինս առ իմաստունս ունիցին։ Ես. Ե. 21.

20. Մի լիցուք սնապարծք՝ միմեանց ձայն տալով եւ ընդ միմեանս նախանձելով։ Գաղ. Ե. 26.

21. Եթէ համարիցի ոք լինել ինչ եւ չիցէ, զանձն իւր խաբէ։ Գաղ. Զ. 3.

22. Մի առ արդարս ունիր զանձն քո առաջի Տեառն։ Սիր. Է. 5.

23. Մի հպարտանար ի գանձս քո։ Սիր. Ե. 2.

24. Պատմուճանօք հանդերձից մի պարծիր, եւ յաւուր փառաց մի հպարտանար։ Սիր. ԺԱ. 4.

25. Մի պարծեսցի իմաստունն յիմաստութիւն իւր, եւ մի պարծեսցի հզօրն ի զօրութիւն իւր, եւ մի պարծեսցի մեծատունն ի մեծութիւն իւր։ Ա. Թագ. Բ. 9.

26. Մի պարծիք եւ մի խօսիք զամբարտաւանս,



եւ մի ելցէ մեծաբանութիւն ի բերանոյ ձերմէ։ Ա. Թագ. Բ. 3.

27. Գովեսցէ զքեզ ընկերն, եւ մի քո բերան. օտարն, եւ մի քո շրթունք։ Առ. ԻԷ. 2.

28. Մի բարձրացուցաներ զքեզ, զի մի անկանիցիս, եւ ածիցես ի վերայ քո անարգանս։ Սիր. Ա. 38.

29. Որչափ մեծ իցես, այնչափ խոնարհեցո զանձն քո, եւ առաջի Տեառն գտցես շնորհս։ Սիր. Գ. 20.

30. Որչափ ի մեծութիւն հասանիցես, ի խոնարհութեան կալ զանձն քո, եւ առաջի Տեառն գտցես շնորհս։ Առ. ԺԶ. 3.

31. Մեծն ի ձէնջ եղիցի ձեր սպասաւոր։ Մատթ. ԻԳ. 11.

32. Որ կամիցի ի ձէնջ առաջին լինել՝ եղիցի ձեր ծառայ։ Մատթ. Ի. 27.

33. Խոնարհութեամբ զմիմեանս լաւ համարել առաւել քան զանձինս։ Փիլ. Բ. 3.

34. Իմաստութիւն խոնարհի բարձրացուցանէ զգլուխ նորա, եւ ի մէջ մեծամեծաց նստուցանէ զնա։ Սիր. ԺԱ. 1.

35. Խոնարհեցարուք առաջի Տեառն, եւ բարձրացուսցէ զձեզ։ Յակ. Դ. 10.

36. Ամենեքին ընդ միմեանս զխոնարհութիւն ունիցիք։ Ա. Պետր. Ե. 5.

37. Խոնարհեցարուք ընդ հզօր ձեռամբն Աստուծոյ, զի զձեզ բարձրացուսցէ ի ժամանակի։ Ա. Պետր. Ե. 6.

## Բ.

### Հեզութիւն եւ քաղցրութիւն։

1. Հեզութիւն ձեր յայտնի լիցի ամենայն մարդկան։ Փիլ. Դ. 5.

2. Այր հեզ բժիշկ է սրտի։ Առ. ԺԴ. 30.

3. Երանի հեզոց, զի նոքա ժառանգեսցեն զերկիր: Մատթ. Ե. 5.

4. Ուսարուք յինէն, զի հեզ եմ եւ խոնարհ սրտիւ, եւ գտջիք հանգիստ անձանց ձերոց: Մատթ. ԺԱ. 29.

5. Որդեակ, զգործս քո հեզութեամբ վարեսջիր, եւ յարանց ընտրելոց սիրեսցիս: Սիր. Գ. 19.

6. Հեզութեամբ եւ երկիւղիւ ունիցիք բարս քաղցունս: Ա. Պետ. Գ. 16.

7. Այր բարկացող տգեղ է կերպարանօք: Առ. ԺԱ. 25.

8. Բարկասիրտ գործէ առանց խորհրդոյ: Առ. ԺԴ. 17.

9. Բարկութիւն կորուսանէ զիմաստունս: Առ. ԺԴ. 35.

10. Անձն ցասկոտ՝ իբրեւ զհուր բորբոքեալ, եւ ոչ շիջանի մինչեւ ընկլզի: Սիր. ԻԳ. 22.

11. Ի բաց թօթափեսջիք զբարկութիւն, զսրտմտութիւն. . . : Կող. Գ. 8.

12. Այր բարկացող նիւթէ զկռիւս. իսկ երկայնամիտն եւ զհանդերձեալն ցածուցանէ: Առ. ԺԵ. 18.

13. Զանզգամ սպանանէ բարկութիւն: Յոբ. Ե. 2.

14. Հոգիք՝ որ ի վրէժխնդրութիւն հաստատեցան, սրտմտութեամբ իւրեանց սաստկացուցին զտանջանս իւրեանց: Սիր. ԼԹ. 33.

15. Այր անզգամ ի բարկանալ իւրում ծաղր լինի եւ ոչ ակն ածէ: Առ. ԻԹ. 9.

16. Մի փութար յոգի քո բարկանալ, զի բարկութիւն ի ծոց անզգամաց հանգիցէ. Ժող. Է. 10.

17. Ոչ կարիցէ սրտմտութիւն անիրաւ արդարանալ: Սիր. Ա. 28.

18. Ի բաց արա զսրտմտութիւն ի սրտէ քումմէ: Ժող. ԺԱ. 10.

19. Արեգակն ի վերայ բարկութեան ձերոյ մի մտցէ: Եփ. Դ. 26.



20. Ամենայն դառնութիւն եւ բարկութիւն եւ սրտմտութիւն բարձցի ի ձէնջ: Եփ. Դ. 31.

21. Լաւ է այր՝ որ յաղթէ բարկութեան, քան որ առնուցու զքաղաք հզօր: Առ. ԺԶ. 32.

22. Քար ծանր է եւ աւազ դժուարին առ ի բառնալ. բայց բարկութիւն անզգամի ծանրագոյն է քան զերկոսեան: Առ. ԻԷ. 3.

## Գ.

### Խաղաղասիրութիւն եւ կռիւ:

1. Խնդրեա զխաղաղութիւն եւ երթ զհետ նորա: Սղմ. ԼԳ. 15.

2. Զխաղաղութեան զհետ երթայք ընդ մի-մեանս: Եբր. ԺԲ. 14.

3. Եթէ հնար ինչ իցէ ձեզ, ընդ ամենայն մարդկան զխաղաղութիւն կալջիք: Հռ. ԺԲ. 18.

4. Փութալ պահել զմիաբանութիւն հոգւոյն յօդիւ խաղաղութեան: Եփ. Դ. 3.

5. Ծառայի Տեառն ոչ է պարտ կռուել, այլ հեզ լինել առ ամենեսեան: Բ. Տիմ. Բ. 24.

6. Որ կամին զխաղաղութիւն՝ ուրախ լիցին: Առ. ԺԲ. 20.

7. Երանի խաղաղարարաց, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին: Մատթ. Ե. 9.

8. Պտուղ արդարութեան խաղաղութեամբ սերմանի այնոցիկ՝ որ առնեն զխաղաղութիւն: Յակ. Գ. 18.

9. Ուր ոչ գոյ երկմիտ՝ դադարէ կռիւ: Առ. ԻԶ. 20.

10. Վնասասէրն խնդայ ընդ կռիւ: Առ. ԺԷ. 19.

11. Մարդ ցասուցեալ բորբոքեսցէ զկռիւ: Սիր. ԻԸ. 10.

12. Հակառակութիւն փութացեալ՝ բորբոքէ հուր. եւ կռիւ փութացեալ՝ հեղու արիւն: Սիր. ԻԸ. 13.

13. Առաջնորդ լինի կարօտութեան հակառակութիւն եւ կռիւ։ Առ. ԺԷ. 14.

14. Ի բաց լեր ի կագոյ, եւ նուաղեսցուսցես զմեղս։ Սիր. ԻԸ. 10.

15. Յորժամ երթայցես ընդ ոսոխի քում առ իշխան, ի ճանապարհի տուր զհաշիւն՝ զերծանել ի նմանէ։ Ղուկ. ԺԲ. 58.

## Դ.

### Երկայնմտութիւն եւ կարճմտութիւն։

1. Այր իմաստուն յոյժ համբերէ։ Առ. ԺԴ. 17.

2. Այր երկայնամիտ հանճարեղ է։ Առ. ԺԷ. 27.

3. Այր երկայնամիտ բազմապատիկ է խորհրդովք. իսկ կարճամիտն յոյժ անմիտ է։ Առ. ԺԴ. 29.

4. Այր երկայնամիտ շիջուցանէ զդատաստանս. իսկ ամպարիշտն առաւել եւս գրգռէ։ Առ. ԺԵ. 18.

5. Լաւ է այր երկայնամիտ՝ քան զհզօր։ Առ. ԺԶ. 32.

6. Երանեալ է այր՝ որ համբերիցէ փորձանաց։ Յակ. Ա. 12.

7. Որ համբերեսցէ ի սպառ՝ նա կեցցէ։ Մատ. Ժ. 22.

8. Համբերութեամբ ձերով ստասջիք զոգիս ձեր։ Ղուկ. ԻԱ. 19.

9. Վա՜յ ձեզ՝ որ կորուսէք զհամբերութիւն։ Սիր. Բ. 16.

10. Ուղղեա զսիրտ քո եւ համբեր. մի շփոթիր ի ժամանակի հարուածոց։ Սիր. Բ. 2.

11. Զամենայն զինչ եւ գայցէ ի վերայ քո՝ ընկալջիր, եւ ի փոփոխմունս տառապանաց քոց երկայնամիտ լեր։ Սիր. Բ. 4.

12. Զի ի հուր փորձի ոսկին, եւ մարդ ի բովս տառապանաց։ Սիր. Բ. 5.



13. Առն նեղասրտի ո՛չ ունիցի ժոյժ։ Առ. ԺԸ. 14.

14. Բարիք եւ չարիք, կեանք եւ մահ, աղքատութիւն եւ մեծութիւն ի Տեառնէ են։ Սիր. ԺԱ. 14.

# ՕՐԻՆԱԿՔ

## 1.

### Մկրտութիւն Տեառն։

Յայնժամ գայ Յիսուս ի Գալիլեէ ի Յորդանան առ Յովհաննէս՝ մկրտել ի նմանէ։ Եւ Յովհաննէս արգելու զնա եւ ասէ. Ինձ պիտոյ է ի քէն մկրտել, եւ դու առ իս գաս։ Պատասխանի ետ Յիսուս եւ ասէ ցնա. Թոյլ տուր այժմ, զի այսպէս վայել է մեզ լնուլ զամենայն արդարութիւն. եւ ապա թոյլ ետ նմա։ Եւ իբրեւ մկրտեցաւ Յիսուս, ել վաղվաղակի ի ջրոյ անտի. եւ ահա բացան նմա երկինք. եւ ետես զհոգին Աստուծոյ՝ զի իջանէր իբրեւ զաղաւնի եւ գայր ի վերայ նորա։ Եւ ահա ձայն յերկնից՝ որ ասէր. Դա է որդի իմ սիրելի, ընդ որ հաճեցայ։

Մատ. Գ. 13—17.

## 2.

### Խոնարհութիւն Ս. Կուսին։

Յամսեանն վեցերորդի առաքեցաւ Գաբրիէլ հրեշտակ յԱստուծոյ ի քաղաք մի Գալիլեացւոց, որում անուն էր Նազարէթ, առ կոյս խօսեցեալ առն՝ որում անուն էր Յովսէփ ի տանէ Դաւթի, եւ անուն կուսին՝ Մարիամ։ Եւ եկեալ առ նա՝ ասէ. Ուրախ լեր, բերկրեալդ, Տէր ընդ քեզ։ Եւ նա ընդ բանն խռովեցաւ, եւ խորհէր ընդ միտս թէ որպիսի ինչ իցէ ողջոյնս այս։ Ասէ ցնա հրեշ-

տակն. Մի երկնչիր, Մարիամ, զի գտեր շնորհս յԱստուծոյ. եւ ահա յղասջիր եւ ծնցես որդի, եւ կոչեսցեն զանուն նորա Յիսուս։ Նա եղիցի մեծ եւ որդի Բարձրելոյ կոչեսցի, եւ տացէ նմա Տէր Աստուած զաթոռն Դաւթի հօրն նորա, եւ թագաւորեսցէ ի վերայ տանն Յակոբայ յաւիտեանս, եւ թագաւորութեան նորա վախճան մի լիցի։ Եւ ասէ Մարիամ ցհրեշտակն. Զիա՞րդ լինիցի ինձ այդ, քանզի զայր ոչ գիտեմ։ Պատասխանի ետ հրեշտակն եւ ասէ ցնա. Հոգի սուրբ եկեսցէ ի քեզ եւ զօրութիւն Բարձրելոյ հովանի լիցի ի վերայ քո. քանզի եւ որ ծնանելոցն է ի քէն՝ սուրբ է եւ որդի Աստուծոյ կոչեսցի։ Եւ ասէ Մարիամ. Ահաւասիկ կամ աղախին Տեառն. եղիցի ինձ ըստ բանի քում։ Եւ գնաց ի նմանէ հրեշտակն։

Ղուկ. Ա. 26—38.

## 3.

### Գողիաթ եւ Դաւիթ։

Ժողովեցին այլազգիքն զբանակս իւրեանց ի պատերազմ. եւ Սաւուղ եւ արք Իսրայելի ճակատեցան ի պատերազմ ընդդէմ այլազգեացն։ Եւ ել այր զօրաւոր ի ճակատէ այլազգեացն՝ Գողիադ անուն նորա. եկն եկաց, ձայն ետ ի ճակատն Իսրայելի եւ ասէ ցնոսա. Ընդէ՞ր ելանէք ճակատել ի պատերազմ ընդդէմ մեր։ Ընտրեցէք դուք ձեզ այր մի, եւ ես եւ նա մենամարտեսցուք երկոքեան. եթէ կարասցէ հարկանել զիս, եղիցուք մեք ձեզ ի ծառայս. ապա թէ ես յաղթեցից, եղիջիք դուք մեզ ի ծառայս։ Իբրեւ լուաւ Սաւուղ եւ ամենայն Իսրայէլ զբանս այլազգւոյն, զահի հարան եւ երկեան յոյժ։ Եւ ասէ Դաւիթ ցՍաւուղ. Ծառայ քո երթիցէ եւ մարտիցէ ընդ այլազգւոյն ընդ այնմիկ։ Տէր Աստուած՝ որ ապրեցոյց զիս ի ձեռաց առիւծուն եւ ի ձեռաց արջոյն, ապրեցուսցէ զիս ի



ձեռաց այլազգւոյն այնորիկ։ Ասէ Սաւուղ. Երթ, եւ Տէր եղիցի ընդ քեզ։ Եւ առ զցուպն իւր ի ձեռին իւրում, եւ ընտրեաց իւր հինգ քարինս ողորկս ի հեղեղատէն եւ եդ զնոսա ի հովուական մախաղին, եւ զպարսն ի ձեռին իւրում, եւ մերձեցաւ առ այրն այլազգի։ Եւ գնայր գայր այլազգին եւ մերձենայր առ Դաւիթ, եւ այր վահանակիր առաջի նորա։ Իբրեւ հայեցաւ եւ ետես զԴաւիթ՝ արհամարհեաց զնա, զի էր պատանեակ խարտեաշ եւ աչօք գեղեցիկ, եւ ասէ. Զիա՞րդ, շո՞ւն եմ ես, զի ցպով եւ քարամբք գաս ի վերայ իմ։ Եկ առ իս, եւ տաց զմարմին քո թռչնոց երկնից եւ գազանաց երկրի։ Եւ ասէ Դաւիթ ցայլազգին. Դու գաս ի վերայ իմ սրով եւ գեղարդեամբ եւ ասպարաւ. եւ ես գամ ի վերայ քո անուամբ Տեառն զօրութեանց։ Եւ աճապարեաց, ձգեաց զձեռն իւր ի մախաղն եւ առ անտի քար մի, եւ պարսաքարեաց եւ եհար զճակատ այլազգւոյն. եւ եմուտ քարն ընդ սաղաւարտն ի ճակատն, եւ անկաւ ի վերայ երեսաց իւրոց յերկիր։ Ընթացաւ Դաւիթ, առ զնորին սուսեր, եւ սպան զնա եւ եհատ զգլուխ նորա։ Իբրեւ տեսին այլազգիքն թէ մեռաւ զօրաւորն նոցա, փախեան. եւ արք Իսրայելի յարձակեցան զհետ նոցա եւ կոտորեցին զբանակս նոցա։

Ա. Թագ. ԺԷ.

## 4.

### Փարիսեցին եւ մաքսաւորը։

Արք երկու ելին ի տաճարն կալ յաղօթս, մին փարիսեցի եւ միւսն մաքսաւոր։ Փարիսեցին կայր մեկուսի, եւ զայս առանձինն աղօթս մատուցանէր. Աստուած իմ, գոհանամ զքէն, զի ոչ եմ իբրեւ զայլս ի մարդկանէ, զյափշտակողս եւ զանիրաւս եւ զշունս, կամ իբրեւ զայս մաքսաւոր։ Այլ պահեմ երկիցս ի շաբաթու, եւ տամ տասա-

նորդս յամենայն ստացուածոց իմոց: Եւ մաքսաւորն կայր մեկուսի, եւ ոչ կամէր եւ ոչ զաչսն ընդ երկինս ամբառնալ. այլ կոծէր զկուրծս իւր եւ ասէր. Աստուած, քաւեա զիս զմեղաւորս: Ասեմ ձեզ. էջ սա արդարացեալ ի տուն իւր քան զնա. զի ամենայն՝ որ բարձրացուցանէ զանձն իւր, խոնարհեսցի. եւ որ խոնարհեցուցանէ զանձն՝ բարձրասցի:

Ղուկ. ԺԸ. 10—14.

## 5.

### Աշտարակագործութիւն եւ խառնակութիւն լեզուաց:

Եւ էր ամենայն երկիր՝ լեզու մի, եւ բարբառ մի ամենեցուն: Եւ եղեւ ի խաղալն նոցա յարեւելից, գտին դաշտ մի յերկրին Սենաար, եւ բնակեցան անդ: Եւ ասեն այր ցընկեր իւր. Եկայք արկցուք աղիւս եւ թրծեսցուք զայն հրով: Եւ եղեւ նոցա աղիւսն ի տեղի քարի, եւ կուպր՝ ի տեղի շաղախոյ: Եւ ասեն. Եկայք շինեսցուք մեզ քաղաք եւ աշտարակ, որոյ լինիցի գլուխն մինչեւ յերկինս. եւ արասցուք մեզ անուն յառաջ քան զփռել ի վերայ երեսաց ամենայն երկրի: Եւ էջ Տէր տեսանել զքաղաքն եւ զաշտարակն՝ զոր շինէին որդիք մարդկան. եւ ասէ Տէր. Ահա ազգ մի եւ լեզու մի ամենեցուն, եւ զայդ սկսան գործել. ոչինչ պակասի ի նոցանէ, զամենայն՝ զոր ինչ յօժարեսցին գործել. եկայք իջցուք եւ խառնակեսցուք անդ զլեզուս նոցա, զի մի լուիցեն իւրաքանչիւր բարբառոյ ընկերի իւրոյ: Եւ սփռեաց զնոսա Տէր Աստուած անտի ընդ երեսս ամենայն երկրի, եւ դադարեցին ի շինելոյ զքաղաքն եւ զաշտարակն: Վասն այնորիկ կոչեցաւ անուն նորա Խառնակութիւն. զի անդ խառնակեաց Տէր Աստուած զլեզուս ամենայն երկրի. եւ անտի ցրուեաց զնոսա Տէր Աստուած ընդ երեսս ամենայն երկրի:

Ծննդ. ԺԱ. 1—9.



## 6.

### Նաբուքոդոնոսոր:

Մինչ դեռ ի վերայ տաճարի թագաւորութեան իւրոյ ճեմէր ի Բաբելոն, խօսել սկսաւ թագաւորն (Նաբուքոդոնոսոր) եւ ասէ. Ո՞չ այս՝ այն մեծ Բաբելոն է, զոր ես շինեցի ի պատիւ փառաց իմոց: Եւ մինչ դեռ բանքն ի բերան էին թագաւորին, ձայն եղեւ յերկնից եւ ասէ. Քեզ ասեմ, Նաբուքոդոնոսոր արքայ, թագաւորութիւն քո անցեալ է ի քէն, եւ ի մարդկանէ հալածեսցեն զքեզ, եւ ընդ գազանս անապատի բնակութիւն քո, եւ խոտ իբրեւ արջառոյ ջամբեսցեն քեզ, մինչեւ ծանիցես թէ տիրէ Բարձրեալն թագաւորութեան մարդկան, եւ ում կամի՝ տացէ զնա: Ի նմին ժամու բանն կատարեցաւ ի վերայ Նաբուքոդոնոսորայ, ի մարդկանէ հալածեցաւ եւ խոտ իբրեւ արջառ ուտէր, մինչեւ վարսք նորա իբրեւ զառիւծուց մեծացան եւ եղնգունք նորա իբրեւ զթռչնոց:

Եւ յետ կատարածի աւուրցն ես Նաբուքոդոնոսոր զաչս իմ յերկինս համբարձի եւ միտք իմ առ իս դարձան, եւ զԲարձրեալն օրհնեցի, զի իշխանութիւն նորա իշխանութիւն յաւիտենական. ըստ կամաց իւրոց առնէ, եւ չիք որ ընդդէմ դառնայցէ ձեռին նորա. եւ զամենեսին՝ որք գնան ամբարտաւանութեամբ, կարող է խոնարհեցուցանել:

Դան. Դ. 26—34.

## 7.

### Համան:

Փառաւորեաց արքայ Արտաշէս զՀաման, եւ բարձրացոյց զնա յառաջին աթոռ քան զամենայն սիրելիս իւր. եւ ամենեքին՝ որ միանգամ էին ի

տան Թագաւորին, երկիր պագանէին նմա, զի այսպէս հրամայեաց Թագաւորն առնել: Այլ Մուրդքէ ոչ պագանէր նմա երկիր: Եւ յորժամ գիտաց Համան եթէ ոչ պագանէ նմա երկիր, բարկացաւ յոյժ, եւ խորհուրդ արար զի կորուսցէ զՀրեայսն՝ որ ընդ Թագաւորութեամբն Արտաշիսի արքայի իցեն: Եմուտ ի տուն իւր, եւ կոչեաց զսիրելիս իւր եւ զկին իւր եւ եցոյց նոցա զմեծութիւն եւ զփառս իւր, եւ ասէ. Արդ այս ոչ թուի ինձ հաճոյ, յորժամ տեսանեմ զՄուրդքէ ի տան Թագաւորին: Ասէ ցնա Զովսարրա կինն իւր. Հրաման տուր հատանել քեզ փայտ մի յիսուն կանգուն, եւ ասասցես արքայի եւ կախեսցի Մուրդքէ զփայտէն: Հաճոյ թուեցաւ Համանայ բանն, եւ պատրաստեցին զփայտն: Եւ Տէր Աստուած մերժեաց զքուն յարքայէ զգիշերն զայն. եւ ասէ ցդպրապետն իւր բերել առաջի իւր զգիր հրովարտակին եւ կարդալ: Եւ եգիտ նա զհրովարտակն՝ զոր գրեալ էր վասն Մուրդքէի, եթէ որպէս պատմեաց վասն երկոցունց ներքինեացն նորա, յորժամ պահէին զապարանս Թագաւորին եւ կամէին սպանանել զարքայ Արտաշէս: Ասէ Թագաւորն. Եւ զի՞նչ շնորհս եւ կամ փառս տուաք Մուրդքէի: Եւ ասեն սպասաւորքն արքայի. Չարարեր եւ ոչինչ նմա:

Եւ ընդ առաւօտն Համան եկն եմուտ՝ հրաման առնուլ ի Թագաւորէն, զի կախեսցէ զՄուրդքէ զփայտէն՝ զոր պատրաստեաց: Ասեն սպասաւորքն արքայի. Ահաւասիկ Համան արտաքոյ է: Ասէ արքայ. Կոչեսցի ի ներքս: Ասէ Թագաւորն ցՀաման. Զի՞նչ արարից ես առնն՝ զոր ես կամիմ փառաւորել: Խորհեցաւ Համան եւ ասէ ի միտս իւր. Զո՞վ կամի արքայ փառաւորել, եթէ ոչ զիս: Եւ ասէ ցարքայ. Բերցեն զպատմուճանն զարքունի եւ զերիվարն՝ յորում արքայ հեծանէր. եւ զգեցուսցեն զպատմուճանն առնն այնմիկ՝ զոր արքայն սիրէ, եւ հեծուսցեն զնա յերիվարն արքունի. եւ քարոզ



կարդասցի ընդ հրապարակս քաղաքիս եւ ասասցէ. Այսպէս եղիցի ամենայն առնն՝ զոր արքայ փառաւորէ: Եւ ասէ արքայ ցՀաման. Բարւոք խորհեցար, զայդ արասցես Մուրդքէի: Եւ առ Համան զպատմուճանն եւ զերիվարն արքունի, եւ զգեցոյց զՄուրդքէ, եւ հեծոյց զնա յերիվարն, եւ անց նա ընդ փողոցս քաղաքին. եւ քարոզն աղաղակէր եւ ասէր. Այսպէս լիցի ամենայն մարդոյ՝ զոր արքայ կամի փառաւորել: Եւ դարձաւ Մուրդքէ յապարանս արքունի, եւ Համան գնաց ի տուն իւր գլխարկեալ լի տրտմութեամբ: Եւ ասէ մի ի ներքինեաց անտի ցարքայ. Ահա Համան եւ փայտ մի կազմեաց Մուրդքէի սիրելւոյ արքայի. Եւ ասէ Թագաւորն. Խաչեսցի ի վերայ նորա: Եւ կախեցին զՀաման զփայտէն՝ զոր պատրաստեաց Մուրդքէի:

Եսթեր. Գ. — Է.

## 8.

### Մահ Հերովդէի:

Ընդ ժամանակսն ընդ այնոսիկ արկ Հերովդէս արքայ ձեռն չարչարել զոմանս յեկեղեցւոյն. եւ սպան զՅակոբոս զեղբայր Յովհաննու սրով: Եւ էր Հերովդէս ցասմամբ ընդ Տիւրացիս եւ ընդ Սիդովնացիս: Նոքա առ հասարակ եկին առ նա, եւ ի բանի արարեալ զԲղաստոս սենեկապետ արքայի, խնդրէին զխաղաղութիւն՝ վասն կերակրելոյ երկրին նոցա յարքունուստ: Յաւուր միում յերեւելւոջ Հերովդէս զգեցեալ էր զհանդերձ Թագաւորութեան, եւ նստէր յատենի, եւ խօսէր ընդ նոսա հրապարակաւ: Եւ ամբոխն աղաղակէր թէ Աստուծոյ բարբառ է, եւ ոչ մարդոյ: Եւ անդէն եհար զնա հրեշտակ Տեառն, փոխանակ զի ոչ ետ փառս Աստուծոյ. եւ եղեալ որդնալից սատակեցաւ:

Գործ. ԺԲ. 1—23.

## 9.

### Յակոբ հաշտեցուցանէ զԵսաւ:

Յարեաւ Յակոբ եւ խաղացոյց զամենայն ինչս իւր երթալ յերկիրն Քանանացւոց: Եւ առաքեաց հրեշտակս յառաջ քան զինքն առ Եսաւ եղբայր իւր, պատուէր ետ նոցա եւ ասէ. Այսպէս ասասջիք տեառն իմում Եսաւայ, թէ այսպէս ասէ ծառայ քո Յակոբ. ընդ Լաբանայ կեցի մինչեւ ցայժմ, եւ եղեն իմ արջառ եւ ոչխար եւ էշք, ծառայք եւ աղախնայք. եւ առաքեցի պատմել տեառն իմում Եսաւայ, զի գտցէ ծառայ քո շնորհ առաջի քո: Եւ դարձեալ հրեշտակացն առ Յակոբ, ասեն. Եղբայր քո գայ ընդ առաջ քո, եւ չորեքհարիւր այր ընդ նմա: Զահի հարաւ Յակոբ եւ տարակուսեալ էր, եւ ասէ. Աստուած հօր իմոյ Աբրահամու, ապրեցո զիս ի ձեռաց եղբօր իմոյ: Եւ առ յորոց ածէրն՝ պատարագս, եւ առաքեաց Եսաւայ եղբօր իւրում: Ետ ի ձեռս ծառայից իւրոց, հօտս հօտս առանձինն, եւ ասէ. Երթայք դուք յառաջ քան զիս, եւ ըստ բանիս ըստ այսմիկ խօսեսջիք ընդ Եսաւայ, յորժամ գտանիցէք զնա, թէ Ծառայի քոյ Յակոբայ պատարագք են, զոր առաքեաց տեառն իւրում Եսաւայ, եւ ինքն զկնի մեր գայ: Եւ ինքն ննջեաց զայն գիշեր անդէն. եւ յարուցեալ անց ընդ հունն: Զաչս իւր ի վեր եբարձ եւ ետես, եւ ահա Եսաւ գայր եւ ընդ նմա արք չորեքհարիւր. եւ բաշխեաց զմանկունսն ի Լիա եւ յՌաքէլ եւ յերկուս աղախնայս: Եւ ինքն անց յառաջ քան զնոսա, եւ երկիր եպագ եւթն անգամ ի վերայ երկրի՝ մինչեւ մերձենալ առ եղբայրն իւր: Ընթացաւ Եսաւ ընդ առաջ նորա, գիրկս արկ նմա եւ համբուրեաց, եւ լացին երկոքեան:

Ծննդ. ԼԲ. ԼԳ.



## 10.

### Աբրամ եւ Ղովտ:

Աբրամ էր մեծատուն յոյժ անասնով եւ արծաթով եւ ոսկւով: Եւ Ղովտայ՝ որ երթեալն էր ընդ Աբրամու, էր արջառ եւ ոչխար: Եւ ոչ բաւէր նոցա երկիրն բնակելոյ ի միասին. զի էին նոցա ստացուածք բազումք. եւ եղեւ մարտ ի մէջ հովուաց խաշանցն: Ասէ Աբրամ ցՂովտ. Մի լիցի կռիւ ընդ իս եւ ընդ քեզ, եւ ընդ հովիւս իմ եւ ընդ հովիւս քո, զի արք եղբարք եմք մեք: Ո՞չ ահաւադիկ երկիրդ ամենայն առաջի քո է. մեկնեաց յինէն: Եթէ դու յահեակ՝ ես յաջ, եթէ դու յաջ՝ ես յահեակ: Եւ ընտրեաց իւր Ղովտ զամենայն կողմանս Յորդանանու, եւ չուեաց յարեւելից: Եւ մեկնեցան իւրաքանչիւր յեղբօրէ իւրմէ:

Ծննդ. ԺԳ. 2—11.

## 11.

### Յոբ:

Այր ոմն էր յԱւսիդ աշխարհի, որում անուն էր Յոբ, եւ էր այրն այն աստուածապաշտ. Եղեն նորա ուստերք եւթն եւ դստերք երեք: Եւ էին խաշինք նորա եւթն հազար, ուղտք երեք հազարք լուծք եզանց հինգ հարիւր, էշք մատակք արօտականք հինգ հարիւր, եւ սպասք բազում յոյժ: — Հարկք եզանցն վարէին եւ էշքն մատակք արածէին առ նոքօք. եւ եկին գերեվարք եւ գերեցին զնոսա եւ զմանկտին կոտորեցին սրով: Հուր անկաւ յերկնից եւ այրեաց զհօտսն, եւ զհովիւսն ըստ նմին օրինակի եկեր: Ասպատակաւորք ասպատակեցին եւ պատեցան զուղտուքն եւ գերեցին զնոսա եւ զմանկտին կոտորեցին սրով: Մինչ դեռ ուստերքն եւ դստերք ուտէին եւ ըմպէին առ երի-

ցու եղբարն իւրեանց, յանկարծակի հողմն մեծ եկն յանապատէ եւ եհար զչորեսին անկիւնս տանն, եւ անկաւ տունն ի վերայ որդւոցն, եւ վախճանեցան։ Յարուցեալ Յոբ՝ պատառեաց զհանդերձս իւր, եւ կտրեաց զվարսս գլխոյ իւրոյ, եւ անկեալ ի գետին՝ երկիր եպագ Տեառն եւ ասէ. Տէր ետ եւ Տէր առ. եղիցի անուն Տեառն օրհնեալ։ Եւ սատանայ եհար զՅոբ չարաչար կեղով յոտից մինչեւ ցգլուխ. եւ նստէր յաղբեւս արտաքոյ քաղաքին։ Իբրեւ բազում ժամանակ անցանէր ի վերայ, ասէ ցնա կինն իւր. Մինչեւ յե՞րբ ժուժկալեալ ասիցես թէ ահա համբերից տակաւին։ Դու ինքնին ի զազրութիւն որդանց նստիս օթագայեալ բացական. եւ ես մոլորեալ եւ հարկահար, տուն ի տանէ եւ տեղի ի տեղւոջէ, սպասեմ թէ երբ մտանիցէ արեգակն, զի հանգեայց ի տառապանաց իմոց՝ որ այժմ պատեալ են զինեւ։ Այլ, ասա բան ինչ ի Տէր, եւ վախճանեաց։ Եւ նորա հայեցեալ ընդ նա՝ ասէ. Եթէ զբարիսն ընկալաք ի ձեռանէ Տեառն, չարեացս ո՞չ համբերիցեմք։ Եւ յայսմ ամենայնի՝ որ ինչ անցք անցին ընդ նա, ոչ մեղաւ Յոբ առաջի Տեառն։ Եւ Տէր աճեցոյց զՅոբ, եւ ետ կրկին քան որչափ ինչ էին յառաջագոյն Յոբայ ի յաճախութիւն. ծնան նմա ուստերք եւթն եւ դստերք երեք. ետես զորդիս իւր եւ զորդիս որդւոց իւրոց, եւ վախճանեցաւ ծերացեալ եւ լցեալ աւուրբք։

Յոբ. Ա. Բ. ԽԲ.

## ԳԼՈՒԽ Թ.

### *Չարիք եւ մեղք:*

1. Փախիր ի մեղաց իբրեւ յերեսաց օձի. Սիր. ԻԱ. 2.

2. Երկիր ի Տեառնէ, եւ խոտորեա յամենայն չարութենէ։ Առ. Գ. 7.



3. Յամենայն իրաց չարաց ի բաց կացէք։ Ա. Թես. Ե. 21.

4. Խոտորեա ի չարէ եւ արա զբարի։ Սղմ. ԼԳ. 15.

5. Մի յաղթիր ի չարէ. այլ յաղթեա բարեաւն չարին։ Հռ. ԺԲ. 21.

6. Դարձիր առ Տէր եւ ի բաց թող զմեղս։ Սիր. ԺԷ. 21.

7. Որք սիրէք զՏէր՝ ատեցէք զչարութիւն։ Սղմ. ՂԶ. 10.

8. Որ սիրէ զտագնապ՝ ի նմին կորիցէ։ Սիր. Գ. 26.

9. Որ անարգէ զսակաւս՝ առ փոքր փոքր կործանեսցի։ Սիր. ԺԹ. 1.

10. Որ ի փոքուն հաւատարիմ է, եւ ի բազմին հաւատարիմ է. եւ որ ի փոքուն անիրաւ է, եւ ի բազմին անիրաւ է։ Ղուկ. ԺԶ. 10.

11. Եթէ փոխիցէ Հնդիկ զմորթ իւր եւ ինծ զխայտուցս իւր, եւ դուք կարող լինիցիք գործել զբարիս, ուսեա՛լք զչարիս։ Երեմ. ԺԳ. 23.

12. Վէրք եւ հարուածք պատահեն չարաց։ Առ. Ի. 30.

13. Որովք մեղանչէ ոք, նոքումբք եւ տանջի։ Իմ. ԺԱ. 17.

14. Զայր մեղաւոր չարիք իւր որսասցեն ի կորուստ։ Սղմ. ՃԼԹ. 12.

15. Չարագործն ի պատուհասէ մի ապրեսցի։ Առ. ԻԸ. 20.

16. Ապիրատն ընկալցի ըստ իւրում ապիրատութեանն։ Կող. Գ. 25.

17. Որ սիրէ զմեղս՝ ատեայ զանձն իւր։ Սղմ. Ժ. 6.

18. Անօրէնք իբրեւ զծով ծփեսցին, եւ հանգիստ մի գտցեն։ Ես. ԾԷ. 20.

19. Ոչ գոյ խաղաղութիւն ամպարշտաց։ Ես. ԾԷ. 21.

20. Զգոյշ լեր ի չարէ, եւ յաղագս անձին քո մի ամօթ կրեսցես: Սիր. Դ. 23.

21. Իբրեւ զսուր երկսայրի՝ ամենայն անօրէնութիւն. վիրաց նորա ոչ գոյ բժշկութիւն: Սիր. ԻԱ. 4.

22. Սուր հանին մեղաւորք. սուրք նոցա մտցեն ի սիրտս նոցա: Սղմ. ԼԶ. 14. 15:

23. Որ սերմանէ զանզգամութիւն՝ հնձեսցէ զչարիս: Առ. ԻԲ. 8.

24. Մի սերմաներ յակօս անիրաւութեան, եւ ոչ հնձեսցես զայն եւթնպատիկ: Սիր. Է. 3.

25. Անօրէնութիւնք որսան զայր, եւ ի պարանս մեղաց իւրոց շաղի իւրաքանչիւր ոք: Առ. Ե. 22.

26. Առիւծ որսոյ լինի դարանակալ, որպէս մեղք՝ գործելեացն անիրաւութեան: Սիր. ԻԷ. 11.

27. Ժանիք առիւծու են ժանիք նորա, որ սպանանեն զոգիս մարդկան: Սիր. ԻԱ. 3.

28. Որպէս աղոխ ատամանց վնասակար է, եւ ծուխ աչաց, նոյնպէս եւ անօրէնութիւնք՝ որոց վարին նովաւ: Առ. Ժ. 26.

29. Վուշ դիզեալ՝ ժողով անօրինաց, եւ վախճան նոցա ի բոց հրոյ: Սիր. ԻԱ. 10.

## Ա.

### Ագահութիւն:

1. Ի բաց ընկեցէք զագահութիւն, որ է կռապաշտութիւն: Կող. Գ. 5.

2. Արմատ ամենայն չարեաց արծաթսիրութիւն է: Ա. Տիմ. Զ. 10.

3. Այր ագահ գրգռէ զհակառակութիւն: Առ. ԻԸ. 25.

4. Յաղագս կարասւոյ բազումք մեղան: Սիր. ԻԷ. 1.

5. Որ սիրէ զոսկի՝ ոչ արդարասցի: Սիր. ԼԴ. 5.

6. Որ սիրէ զարծաթ՝ ոչ յագեսցի արծաթով: Ժող. Ե. 9.



7. Ակն ագահի ոչ յագի մասամբ: Սիր. ԺԴ. 9.

8. Ոչ ոք կարէ երկուց տերանց ծառայել: Ոչ կարէք Աստուծոյ ծառայել եւ մամոնայի: Մատ. Զ. 24.

9. Մի լինիր յանձնապաստան եւ ասեր թէ բաւում են ինչք իմ: Սիր. Ե. 2.

10. Ոչ օգնեսցեն գանձք՝ անօրինաց: Առ. Ժ. 2.

11. Զգոյշ լերուք յամենայն ագահութենէ, զի ոչ եթէ ի մթերից ընչից ուրուք իցեն կեանք նորա: Ղուկ. ԺԲ. 15.

12. Անմիտ, յայսմ գիշերի զոգիդ ի քէն ի բաց պահանջիցեն. իսկ զոր պատրաստեցերն՝ ո՞ւմ լինիցի: Ղուկ. ԺԲ. 20.

13. Որ յուսայ ի մեծութիւն՝ կործանեսցի: Առ. ԺԱ. 28.

14. Երանեալ է մեծատուն՝ որ գտաւ անարատ, եւ զհետ ոսկւոյ ոչ չոգաւ: Սիր. ԼԴ. 8.

15. Բարք անարծաթասէրք լինիցին, բաւական համարել որչափ ինչ ի ձեռս իցէ: Եբր. ԺԳ. 5.

16. Երանելի է մանաւանդ տալն քան առնուլն: Գործ. Ի. 35.

17. Մի լիցիս յօժար յառնուլն ձեռօք, եւ ի տալն կարկամ: Սիր. Դ. 36.

18. Որ սերմանէ ճշդելով, ճշդելով եւ հնձեսցէ. եւ որ սերմանէ առատութեամբ, առատութեամբ եւ հնձեսցէ: Բ. Կորն. Թ. 6.

19. Որ խնայէ զցորեան, լքցէ զնա օտարաց: Առ. ԺԱ. 26.

20. Որ ճշդէ զցորեան՝ հրապարականէծ լիցի. այլ օրհնութիւն ի գլուխ սփռողաց: Առ. ԺԱ. 26.

21. Լաւ է փոքր բաժին երկիւղիւ Տեառն, քան զգանձս մեծամեծս աներկիւղութեամբ: Առ. ԺԵ. 16.

22. Լաւ է սակաւիկ ինչ առնուլ երկիւղիւ Տեառն, քան զգանձս մեծամեծս ամպարշտութեամբ: Առ. ԺԶ. 8.

23. Ընկալարուք զխրատ եւ մի զարծաթ, եւ զգիտութիւն քան զոսկի ընտիր: Առ. Ը. 10.

24. Լաւ է այր՝ որ ունի զիմաստութիւն, քան զանդս մեծամեծս: Առ. ԺԶ. 32.

25. Լաւ է հանճարեղ՝ քան զայն որ ունիցի դաստակերտս մեծամեծս: Առ. ԻԴ. 5.

26. Ունիմք կերակուր եւ հանդերձս, եւ այնու շատասցուք: Ա. Տիմ. Զ. 8.

27. Դժոխք եւ կորուստ անյագ են, նոյնպէս եւ աչք ագահ մարդկան: Առ. ԻԷ. 20.

28. Ակն նորա ոչ յագի մեծութեամբ: Ժող. Դ. 8.

## Բ.

### Գործունէութիւն եւ ծուլութիւն:

1. Բազում չարիս ուսոյց դատարկութիւն: Սիր. Լ. 29.

2. Ի կարօտութեան է ամենայն վատ: Առ. ԻԳ. 4.

3. Զվատ կործանէ երկիւղ. անձինք կանացեաց քաղցիցեն: Առ. ԺԸ. 8.

4. Վատութիւն ունի զկանացին. անձն գործատեաց քաղցիցէ: Առ. ԺԹ. 15.

5. Ցանկութիւնք սպանանեն զվատ, զի ոչ յօժարեն ձեռք նորա գործել ինչ: Առ. ԻԱ. 25.

6. Աղբոյ եւ կուոյ հաւասար է վատն, եւ ամենայն՝ որ վերացուսցէ զնա, թօթափեսցէ զձեռն իւր: Սիր. ԻԲ. 2.

7. Մինչեւ յե՞րբ յորսայսեալ կաս, ո՛վ վատ. հասանիցէ ի վերայ քո կարօտութիւն իբրեւ զժիր սուրհանդակ: Առ. Զ. 9. 10.

8. Որպէս դուռք շրջին ի ծղխնոջ, նոյնպէս վատ ի մահիճս իւր: Առ. ԻԶ. 14.

9. Թաքուցանէ վատ զձեռս իւր ի ծոց իւրում, եւ ի բերան իւր դանդաղի տանել: Առ. ԻԶ. 15.

10. Զվատ՝ յորժամ յուղի առաքես, ասէ.



Առիւծ ունի զճանապարհս, եւ զհրապարակս՝ սպանողք: Առ. ԻԶ. 13.

11. Ի վատութեան խոնարհեսցին հեծանաձգութիւնք, եւ ի դատարկութեան ձեռաց կաթեսցէ տուն: Ժող. Ժ. 18.

12. Զգեցցի պատառատունս ամենայն քնէած: Առ. ԻԳ. 21.

13. Անձնդիւրն եւ անհոգն ի կարօտութեան եղիցի: Առ. ԺԴ. 23.

14. Եթէ զանձն քո դիւրութեան տացես եւ ձեռն ի բերան կռուով ձգիցես, անարգեսցիս: Առ. Լ. 32.

15. Որ փափկասուն լինի ի մանկութենէ՝ ի ծառայութիւն մատնեսցի, եւ յետոյ մորմոքեսցի յանձն իւր: Առ. ԻԹ. 21.

16. Ընդ փափկութիւն մի ուրախ լինիր եւ մի կապիր ընդ նմա: Սիր. ԺԸ. 32.

17. Քրտամբք երեսաց քոց կերիցես զհաց քո: Ծննդ. Գ. 19.

18. Մի ատիցես զգործ վաստակոյ: Սիր. Է. 16.

19. Մի լինիր խօթասիրտ եւ լքեալ ի գործս քո: Սիր. Դ. 34.

20. Ցամեա ի վաստակս քո: Սիր. ԺԱ. 22.

21. Վաստակեա յաւիտեան, եւ կեցցես մինչ ի սպառ: Սղմ. ԽԸ. 9.

22. Երթ առ մեղուն, եւ ուսիր զիա՛րդ գործօն է: Առ. Զ. 8.

23. Երթ առ մրջիւն, ո՛վ վատ, եւ լեր իմաստնագոյն եւս քան զնա, զի պատրաստէ ամարանի զկերակուր: Առ. Զ. 7. 8.

24. Որ ոչն կամիցի գործել, եւ կերիցէ մի: Բ. Թես. Գ. 10.

25. Հանդարտութեամբ գործեսցեն եւ զիւրեանց հաց կերիցեն: Բ. Թես. Գ. 12.

26. Աղաչեմ զձեզ գործել ձեռօք ձերովք, զի մի իւիք կարօտեալք իցէք: Ա. Թես. Դ. 11.

27. Որ խառէ զհողմ՝ ոչ սերմանէ, եւ որ հայի ընդ ամպս՝ ոչ հնձեսցէ: Ժող. ԺԱ. 4.

28. Ի ժամու զարթիր եւ մի յետնեսցիս, ընթա ի տուն քո եւ մի ծուլանար: Սիր. ԼԵ. 15.

29. Մի զքնով անկանիցիմք, այլ արթունք եւ զուարթունք եղիցուք: Ա. Թես. Ե. 6.

30. Ընդ առաւօտս սերմանեսցես դու զսերմն քո, եւ ընդ երեկոյս մի լքցին ձեռք քո: Ժող. ԺԱ. 6.

31. Ժողովեա զխոտ դալար, զի եղիցին քեզ ոչխարք ձորձաբերք: Պարմանեա զդաշտս, զի եղիցին քեզ գառինք: Առ. ԻԷ. 25. 26.

32. Մի յածիր ընդ փողոցս քաղաքի, եւ յաւերակս նորա մի թափառիր: Սիր. Թ. 7.

33. Ձեռք ժրաց մեծացուցանեն: Առ. Ժ. 4.

34. Որ գործէ զերկիր՝ բարձրացուցանէ զշեղջ իւր: Սիր. Ի. 30.

35. Մշակ երկայնամտեալ՝ սպասէ պատուական պտղոյն երկրի, մինչեւ առցէ զկանուխ եւ զանագան: Յակ. Ե. 7.

36. Զոր ինչ սերմանէ մարդ՝ զնոյն եւ հնձեսցէ: Գաղ. Զ. 8.

37. Որ գործէ զերկիր իւր՝ լցցի հացիւ. եւ որ զհետ երթայ դատարկութեան՝ լցցի տնանկութեամբ: Առ. ԻԸ. 19.

38. Ճանապարհք վատաց կցեալ են փշովք. իսկ ժրացն վարունք են: Առ. ԺԵ. 19.

39. Ի մեծութենէ վարք կարօտեալ լինին. իսկ որ ժիրքն են՝ հաստատին մեծութեամբ: Առ. ԺԱ. 16.

40. Լաւ է որ գործիցէ յամենայն փողոցի, քան որ սիգայցէ եւ հացի կարօտիցէ: Սիր. Ժ. 30.

41. Այր՝ որ հայի յայլոց սեղան, չեն կեանք նորա ի համար կենաց: Սիր. Խ. 30.

42. Լաւ է մարդոյ խոնարհութեամբ ծառայել անձին, քան անձին շուք եդեալ՝ եւ հաց մուրանայցէ: Առ. ԺԲ. 9.



43. Ի բերան անամօթին քաղցրասցի մուր: Սիր. Խ. 32.

44. Որդեակ, զկեանս մուրողութեան մի կեար. լաւ է մեռանել քան զմուրանալ: Սիր. Խ. 29.

45. Է՝ որ ջանայ եւ վաստակէ, եւ է՝ որ ծոյլ է, եւ կարօտ եւ աղքատութեամբ առաւելեալ: Սիր. ԺԱ. 11.

46. Զամենայն ինչ՝ որ ինչ գտցէ ձեռն քո գործել, որչափ ի կարի քում իցէ՝ գործեսջիր: Ժող. Թ. 10.

47. Որք վարէին արտասուօք՝ ցնծութեամբ հնձեսցեն: Սղմ. ՃԻԵ. 5.

48. Երթալով երթային եւ լային, որք բարձեալ տանէին զսերմանիս իւրեանց. գալով եկեսցեն եւ ցնծասցեն, որք առեալ բերիցեն զորայս իւրեանց: Սղմ. ՃԻԵ. 6.

## Գ.

### Արբեցութիւն եւ որկրամոլութիւն:

1. Խորհրդով արբ գինի: Առ. ԼԱ. 3.

2. Մի արբենայք գինեաւ: Առ. ԻԳ. 31.

3. Գինի արբեցութեան մի ըմպիցես, եւ մի երթայցես դու արբեալ ի ճանապարհ: Տոբ. Դ. 16.

4. Դառնութիւն անձին գինի՝ որ ըմպիցի շատ: Սիր. ԼԴ. 38.

5. Անառակ է գինի, եւ թշնամանող՝ արբեցութիւն: Առ. Ի. 1.

6. Փշալից լինին ձեռք արբեցողի: Առ. ԻԶ. 9.

7. Ի գինւոջ մի քաջանար, զի զբազումս կորոյս գինի: Սիր. ԼԴ. 30.

8. Կանայք եւ գինի կործանեն զիմաստութիւն: Սիր. ԺԹ. 2.

9. Մի լինիր արբեցող, զի ամենայն արբշիռն աղքատասցի: Առ. ԻԳ. 20. 21.

10. Մշակ արբշիռ ոչ հասցէ ի մեծութիւն: Սիր. ԺԸ. 33.

11. Եթէ ի բաժակս արձակիցես զաչս քո, յետոյ շրջիցիս մերկագոյն եւս քան զանդիտոռն: Առ. ԻԳ. 31.

12. Ցաճախէ արբեցութիւն զցասումն անզգամի, կասեցուցանէ զոյժ եւ դնէ վէրս: Սիր. ԼԴ. 40.

13. Որ ախորժէ զգինեաց դեդերմանս, թողցէ ի բնակութիւն իւր զանարգանս: Առ. ԺԲ. 11.

14. Ո՞ւմ է վայ, ո՞չ ապաքէն այնոցիկ՝ որ յամենն ի գինւոջ եւ դիտեն ուր գինարբուք լինիցին: Առ. ԻԳ. 29. 30.

15. Բարի է երթալ ի տուն սգոյ, քան երթալ ի տուն արբեցութեան: Ժող. Է. 3.

16. Լացէք եւ ողբացարուք ամենեքեան՝ որ ըմպէք գինի ցարբենալ, զի բարձաւ ի բերանոյ ձերմէ ուրախութիւն եւ խնդութիւն: Յովէլ. Ա. 5.

---

17. Որ արածէ զօրկորստութիւն՝ անարգէ զհայր իւր: Առ. ԻԸ. 7.

18. Մեղր յորժամ գտանիցես, ո՛րդեակ, չափով կերիջիր: Առ. ԻԵ. 16.

19. Եթէ բռնադատեցար ի կերակուրս, արի կիսով եւ հանգիցես: Սիր. ԼԴ. 25.

20. Ի սեղան ի մեծ նստար, մի բանար ի նմա զկոկորդ քո: Սիր. ԼԴ. 12.

21. Եթէ ի մէջ բազմաց նստար, յառաջ քան զնոսա մի ձգտեր զձեռն քո: Ցիր. ԼԴ. 21.

22. Որպէս զի բաւական է մարդոյ խրատելոյ՝ սակաւն, եւ յանկողնի իւրում ոչ հեծէ: Սիր. ԼԴ. 22.

23. Քաղցր քուն է ծառայի՝ եթէ սակաւ եւ եթէ շատ կերիցէ. եւ որում յագին մեծանալով՝ չէ նմա համարձակ ի քուն մտանել: Ժող. Ե. 11.

24. Լաւ է կոչունք բանջարեղէնք սիրով եւ



շնորհիւ, քան զուարակ ի մսրոյ թշնամութեամբ: Առ. ԺԵ. 17.

25. Լաւ է պատառ մի համով խաղաղութեամբ, քան զտունս լի գինեօք եւ բարեօք՝ թշնամութեամբ: Առ. ԺԷ. 1.

26. Որ երկնչի ի պատուիրանէն՝ առողջ լիցի: Առ. ԺԳ. 13.

27. Ոչ գոյ մեծութիւն լաւ քան զառողջութիւն մարմնոյ: Սիր. Լ. 16.

28. Առողջութիւն եւ առոգութիւն լաւ է քան զամենայն ոսկի: Սիր. Լ. 15.

29. Լաւ է աղքատ առողջ եւ զօրաւոր պայմանաւ, քան մեծատուն՝ որ հարւածեալ է ի մարմին իւր: Սիր. Լ. 14.

30. Քուն առողջութեան ի վերայ չափաւոր աղւոյ. Սիր. ԼԴ. 24.

31. Ցաւք տքնութեան եւ մաղձայուզի ընդ առն ժլատի: Սիր. ԼԴ. 23.

## Դ.

### Պղծութիւն եւ սրբութիւն:

1. Ընցո զչարութիւն ի մարմնոյ քումէ: Ժող. ԺԱ. 10.

2. Դարձիր յանիրաւութենէ եւ յոյժ ատեա զգարշութիւն: Սիր. ԺԷ. 23.

3. Ամենայն պղծութիւն եւ անուանեսցի մի ի միջի ձերում: Եփ. Ե. 3.

4. Ի բաց մերկանալ ի ձէնջ զմարդն հին՝ զապականեալն ցանկութեամբք: Եփ. Դ. 22.

5. Ի բաց մերժել ի մարմնաւոր ցանկութեանցն՝ որ զինուորին ընդդէմ ոգւոց: Ա. Պետր. Բ. 11.

6. Մի թագաւորեսցեն մեղք ի մարմինս ձեր, հնազանդել ցանկութեանց նորա: Հռ. Զ. 12.

7. Զի ծանեան (հեթանոսք) զԱստուած, եւ

ոչ իբրեւ զԱստուած փառաւորեցին, վասն որոյ մատնեաց զնոսա ի պղծութիւն: Հռ. Ա. 21. 24.

8. Եւ զի ոչ ընտրեցին զԱստուած ունել, մատնեաց զնոսա գործել զանարժանս: Հռ. Ա. 28.

9. Ի բաց ընկեցէք զպղծութիւն, զչիծ, զցանկութիւն չարեաց, վասն որոյ գայ բարկութիւն Աստուծոյ: Կող. Գ. 5. 6.

10. Ցանձն չարարուեստ իմաստութիւն ոչ մտցէ, եւ ոչ բնակէ ի մարմնի վարեցելոյ մեղօք: Իմ. Ա. 4.

11. Պղծութիւն զայր չարագործ աղտեղի առնէ մինչեւ սատակեսցի: Առ. ԻԴ. 9. 10.

12. Գիտէ Տէր զանօրէնս պահել ի տանջանս, մանաւանդ որ զհետ մարմնոյ պղծալիցն ցանկութեանց իցեն երթեալ: Բ. Պետ. Բ. 9. 10.

13. Ամենայն պիղծ ոչ ունի ժառանգութիւն յարքայութեանն Աստուծոյ: Եփ. Ե. 5.

14. Պղծութիւն է մայր սովոյ: Տով. Դ. 14.

15. Ի պղծութենէ՝ պակասութիւն եւ կարօտութիւն մեծ: Տով. Դ. 14.

16. Զհայր եւ զմայր յամօթ առնէ յայրատն, յերկոցունց անարգեսցի: Սիր. ԻԲ. 5.

17. Ուստի՞ պատերազմունք եւ ուստի՞ կռիւք. ո՞չ յայդպիսի ցանկութեանց ձերոց: Յակ. Դ. 1.

---

18. Սուրբ եղերուք, զի ես սուրբ եմ Տէր Աստուած ձեր: Ղեւտ. ԺԹ. 2.

19. Այս են կամք Աստուծոյ՝ սրբութիւն ձեր: Ա. Թես. Դ. 3.

20. Այլ ըստ սրբոյն՝ որ կոչեաց զձեզ, եւ դուք սուրբք յամենայն գնացս ձեր լինիջիք: Ա. Պետ. Ա. 15.

21. Զվարս ձեր ի մէջ հեթանոսաց պարկեշտս ցուցանել: Ա. Պետ. Բ. 12.

22. Յերիտասարդական ցանկութեանցն փախիր,



եւ երթ զհետ արդարութեան, զսրբութեան: Բ. Տիմ. Բ. 22.

23. Երիտասարդ՝ որ ի սրբութեան է, ուղիղ են ճանապարհք նորա: Առ. Ի. 11.

24. Երանի այնոցիկ՝ որ սուրբ են սրտիւք, զի նոքա զԱստուած տեսցեն: Մտթ. Ե. 8.

25. Երանեալ են անբիծք եւ ոյք գնան յօրէնս Տեառն: Սղ. ՃԺԸ. 1.

26. Զհետ երթայք զսրբութեան, առանց որոյ ոչ ոք տեսանիցէ զՏէր: Եբր. ԺԲ. 14.

27. Սիրէ Տէր զսիրտ սուրբ եւ ընդունելի են նմա ամենայն անարատք: Առ. ԻԲ. 11.

28. Տէր ոչ պակաս առնէ զողորմութիւն իւր յայնցանէ՝ որ գնան յանբծութեան: Սղ. ՁԳ. 13.

29. Անեղծութիւն մերձաւոր լինել առնէ Աստուծոյ: Իմ. Զ. 20.

30. Ե՛րիտասարդ, գնա դու ի ճանապարհս սրտի քո անբիծ եւ ի տեսիլ աչաց քոց. եւ գիտասցես թէ վասն այսր ամենայնի ածցէ զքեզ Աստուած ի դատաստան: Ժող. ԺԱ. 9.

31. Ի՞ւ ուղղեսցէ երիտասարդ զճանապարհս իւր, այլ ի պահել զբանս քո: Սղ. ՃԺԸ. 9.

32. Գիտացի՝ թէ ոչ այլազգ լինիցիմ ժուժկալ, բայց եթէ Աստուած տայցէ: Իմ. Ը. 21.

## ՕՐԻՆԱԿՔ

### 1.

Աբիմելէք եւ Սիկիմացիք:

Իբրեւ մեռաւ Գեդէոն, գնաց Աբիմելէք որդի (նորա) ի Սիկիմ առ եղբարս մօր իւրոյ, եւ միտեցաւ սիրտ նոցա զկնի Աբիմելէքայ, զի ասացին թէ Եղբայր մեր է, եւ ետուն նմա եւթանասուն արծաթոյ: Վարձեցաւ նոքօք արս սրիկայս եւ կոտորեաց զեղբարս իւր զորդիսն Յերոբաաղայ (Գեդէոնի): Եւ մնաց Յովաթամ՝ որդի Յերոբաաղայ կրտ-

սեր, քանզի Թաքեաւ։ Ժողովեցան ամենայն արք Սիկիմացւոց, եւ չոգան թագաւորեցուցին զԱբիմելէք։

Ազդ եղեւ Յովաթամայ, եւ գնաց եւ եկաց ի վերայ գլխոյ լերինն ի Գարիզին, ամբարձ զձայն իւր եւ ասէ. Լուարուք ինձ, արք Սիկիմացւոց։ Գնալով գնացին ծառք՝ օծանել իւրեանց թագաւոր, եւ ասեն ցձիթենին. Թագաւորեա ի վերայ մեր։ Ասէ ցնոսա ձիթենին. Թողից զպարարտութիւն իմ, եւ երթայցեմ իշխել ծառո՞ց։ Եւ ասեն ծառքն ցթզենին. Եկ թագաւորեա ի վերայ մեր։ Ասէ ցնոսա թզենին. Թողեալ զքաղցրութիւն իմ, եւ երթայցեմ իշխան լինել փայտի՞ց։ Եւ ասեն ծառքն ցորթ. Եկ թագաւորեա ի վերայ մեր։ Ասէ ցնոսա որթ. Թողեալ զգինի իմ եւ զուրախութիւն, եւ երթայցեմ իշխան լինել փայտի՞ց։ Եւ ասեն ծառքն ցդժնիկ. Եկ թագաւորեա ի վերայ մեր։ Եւ ասէ դժնիկ ցծառս. Եկայք ծածկեցարուք ընդ հովանեաւ իմով։ Եթէ ո՞չ ելանիցէ հուր ի դժնկէ աստի, եւ կերիցէ զեղեւնափայտս Լիբանանու։ Արդ եթէ ճշմարտութեամբ արարէք ընդ Յերոբաաղ եւ ընդ տուն նորա, եւ կոտորեցէք զորդիս նորա, օրհնեսջիք դուք եւ ուրախ լիջիք յԱբիմելէք, եւ ուրախ լիցի եւ նա ի ձեզ։ Ապա թէ ոչ՝ ելցէ հուր յԱբիմելէքայ եւ կերիցէ զարս Սիկիմացւոց, եւ ելցէ հուր յարանց Սիկիմացւոց եւ կերիցէ զԱբիմելէք։ Եւ փախեաւ Յովաթամ եւ զերծաւ։

Իշխեաց Աբիմելէք ի վերայ Իսրայելի ամս երիս։ Արհամարհեցին արք Սիկիմացւոց զտունն Աբիմելէքայ, եւ գործեցին նմա դարան։ Ազդ եղեւ Աբիմելէքայ, եւ պատերազմէր ընդ քաղաքին։ Առին զքաղաքն Աբիմելէք եւ զունդքն՝ որ ընդ նմա, զժողովուրդն կոտորեցին եւ զքաղաքն կործանեցին։ Եւ չոգաւ Աբիմելէք ի Թեբէս եւ առ զնա։ Եւ աշտարակ մի էր հզօր ի մէջ քաղաքին եւ փախեան անդր ամենայն գլխաւորք քաղաքին։ Եկն



Աբիմելէք մինչեւ ցաշտարակն եւ մերձեցաւ ի դուրս. եւ ընկէց կին մի բեկոր երկանի ի վերայ գլխոյ նորա, եւ մանրեաց զգագաթնն Աբիմելէքայ։ Եւ դարձոյց Աստուած զչարիսն Աբիմելէքայ ի գլուխ իւր, եւ զամենայն չարիսն արանց Սիկիմացւոց դարձոյց ի գլուխս նոցա։

Դատաւ. Թ.

## 2.

### Գեեզի հարկանի բորոտութեամբ։

Ասէ Գեեզի պատանեակն Եղիսէի. Ահա խնայեաց տէր իմ ի Նեեման ասորի, չառնուլ ի ձեռանէ նորա յորոց մատոյցն։ Ընթացայց զհետ նորա եւ առից ինչ անտի։ Եւ տես զնա Նեեման ընթացեալ զհետ նորա, դարձաւ ի կառացն ընդ առաջ նորա եւ ասէ. Ողջո՞յն է։ Եւ ասէ Գեեզի. Ողջոյն է։ Տէր իմ առաքեաց զիս առ քեզ եւ ասէ. Ահա եկին առ իս երկու պատանեակք. տուր նոցա տաղանտ մի արծաթոյ։ Ասէ Նեեման. Թէ այդպէս իցէ, առ երկս տաղանտս արծաթոյ։ Եւ բռնադատեաց զնա, եւ ծրարեաց երկս տաղանտս արծաթոյ յերկուս պարկս, եւ ետ ցերկուս ծառայս իւր, եւ բարձին առաջի նորա։ Եկին ի մթինն, եւ առ ի ձեռաց նոցա եւ եդ ի տան. եւ արձակեաց զարսն եւ գնացին։ Եւ ինքն եմուտ եւ կայր առաջի տեառն իւրոյ։ Ասէ ցնա Եղիսէէ. Ուստի՞ գաս, Գեեզի։ Եւ ասէ Գեեզի. Չիք երթեալ ծառայի քո ո՛չ յայսկոյս եւ ո՛չ յայնկոյս։ Եւ ասէ ցնա Եղիսէէ. Ո՞չ սիրտ իմ գնաց, յորժամ դարձաւ այրն ի կառաց անտի ընդ առաջ քո։ Եւ արդ՝ առեր զարծաթն ի ձիթենիս եւ յայգիս. եւ բորոտութիւնն Նեեմանայ յարեսցի ի քեզ եւ ի զաւակ քո յաւիտեան։ Եւ ել յերեսաց նորա բորոտեալ իբրեւ զձիւն։

Դ. Թագ. Ե. 20—27.

### 3.

### Յուդա:

Մինչ էր (Յիսուս) ի Բեթանիա ի տան Սիմոնի բորոտի բազմեալ, եկն կին մի՝ որ ունէր շիշ իւղոյ նարդեան՝ ազնուի մեծագնոյ, եւ բեկեալ զշիշն՝ եհեղ ի վերայ գլխոյ նորա: Եւ աշակերտքն զչարէին եւ ասէին. Ընդէ՞ր է կորուստ իւղոյդ այդորիկ: Եւ զայրանային նմա յոյժ: Ասէ Յուդա Իսկարիովտացի. Ընդէ՞ր ոչ իւղդ այդ վաճառեցաւ երեք հարիւր դենարի, եւ տուաւ աղքատաց: Զայս ասաց, ոչ զի զաղքատաց ինչ փոյթ էր նմա. այլ զի գող էր եւ զարկղն ինքն ունէր, եւ որ ինչ անկանէրն՝ նա կրէր: Ասէ Յիսուս. Թոյլ տուք դմա. զաղքատս յամենայն ժամ ընդ ձեզ ունիք, զիս ոչ հանապազ ընդ ձեզ ունիք: Եւ Յուդա Իսկարիովտացի գնաց առ քահանայապետսն, զի մատնեսցէ զնա նոցա. եւ ասէ. Զի՞նչ կամիք տալ ինձ, եւ ես մատնեցից զնա ձեզ: Նոքա իբրեւ լուան, խնդացին եւ կշռեցին նմա երեսուն արծաթի: Եւ յայնմ հետէ խնդրէր պարապ, զի մատնեսցէ զնա նոցա:

Մատթ. ԻԶ. 6—16. Մարկ. ԺԴ. 3—11.
Յովհ. ԺԲ. 1—8.

### 4.

### Մեծատունն վասն շինելոյն:

Առն ուրումն մեծատան եւտուն անդք տոհմականս, եւ խորհէր ի միտս իւր եւ ասէր. Զի՞ գործեցից, զի ոչ գոյ տեղի՝ ուր ժողովեցից զարդիւնս իմ: Գիտեմ զի՞նչ արարից. քակեցից զշտեմարանս իմ, եւ եւս մեծամեծս շինեցից. եւ անդր ժողովեցից զցորեան եւ զամենայն բարութիւնս իմ: Եւ ասացից ցանձն իմ. Ա՛նձն, ունիս բազում բարութիւնս համբարեալ ամաց բազմաց. հանգիր, կեր, արբ եւ ուրախ լեր: Ասէ ցնա Աստուած. Ա՛նմիտ, յայսմ գիշերի զոգիդ ի քէն ի բաց պահանջիցեն. իսկ զոր պատրաստեցերն ո՞ւմ լինիցի: Նոյնպէս եւ որ գանձէ անձին, եւ ոչ յԱստուած մեծանայցէ:



Ղուկ. ԺԲ. 16—21.

### 5.

### Տասն Մնասք:

Այր ոմն ազնուական գնաց յաշխարհ հեռի՝ առնուլ իւր թագաւորութիւն եւ դառնալ: Եւ կոչեցեալ զծառայս իւր, ետ նոցա տասն մնաս եւ ասէ ցնոսա. Յարդեցէք զայդ՝ մինչեւ եկից: Եւ եղեւ դառնալ նմա՝ առեալ զթագաւորութիւնն. եւ կոչեալ զծառայսն՝ որոց տուեալ էր զարծաթն, զի գիտասցէ թէ ո՛ զի՞նչ շահեցաւ: Եկն առաջինն եւ ասէ. Տէր, մնասն քո՝ տասն մնաս արար: Եւ ասէ ցնա. Ագնի՛ւ ծառայ եւ բարի, զի ի փոքուդ հաւատարիմ եղեր, լիջիր իշխանութիւն ունել ի վերայ տասն քաղաքի: Եկն երկրորդն եւ ասէ. Մնասն քո՝ արար հինգ մնաս: Ասէ ցնա. Եւ դու լիջիր ի վերայ հինգ քաղաքաց: Եկն միւսն եւ ասէ. Տէր, ահա մնասն քո՝ զոր ունէի ծրարեալ ի վարշամակի. երկնչէի ի քէն, զի այր ստամբակ ես. բառնաս՝ զոր ոչ եդիր, եւ հնձես՝ զոր ոչ սերմանեցեր: Եւ ասէ ցնա (տէրն). Ի բերանոյ քումմէ դատեցայց զքեզ, ծառա՛յ անհաւատ: Գիտէիր թէ ես այր մի ստամբակ եմ, բառնամ՝ զոր ոչ եդի, եւ հնձեմ՝ ուր ոչ սերմանեցի. եւ ընդէ՞ր ոչ ետուր զարծաթն իմ ի սեղանաւորս, եւ եկեալ ես տոկոսեօք պահանջէի: Եւ ասէ ցպաստաւորսն. Առէք ի դմանէ զմնասն, եւ տարայք տուք այնմ՝ որ ունիցի զտասն մնասն: Եւ ասեն ցնա. Տէր, ունի տասն մնաս: Ասեմ ձեզ, եթէ ամենայնի՝ որ ունիցի, տացի. եւ յայնմանէ՝ որ ոչն ունիցի, եւ զոր ունիցին՝ բարձցի ի նմանէ:

Ղուկ. ԺԹ. 12—26.

## 6.

### Թզենին անպտուղ:

Թզենի մի էր ուրումն տնկեալ յայգւոջ իւրում. եւ եկն խնդրել պտուղ ի նմանէ, եւ ոչ եգիտ: Ասէ ցայգեգործն. Ահա երեք ամք են՝ յորմէ հետէ գամ խնդրել պտուղ ի թզենւոջդ, եւ ոչ գտանեմ. արդ՝ կոտեա զդա, ընդէ՞ր եւ զերկիրդ խափանէ: Նա պատասխանի ետ եւ ասէ. Տէր, թող զդա այս ամ եւս, մինչեւ շուրջ զդովաւ բրեցից եւ արկից աղբ. թերեւս արասցէ պտուղ. ապա թէ ոչ՝ յամէ եւս հատցես զդա:

Ղուկ. ԺԳ. 6—9.

## 7.

### Վաճառէ Եսաւ զանդրանկութիւն իւր:

Էր Եսաւ այր հմուտ որսոյ վայրագ, եւ Յակոբ՝ այր առանց պաճուճանաց ընտանուն: Եւ էր եփեալ Յակոբայ թան: Եկն Եսաւ ի դաշտէ նքթեալ, եւ ասէ ցՅակոբ. Տուր ինձ ճաշակել ի շիկաթանէդ յայդմանէ: Ասէ Յակոբ ցԵսաւ. Վաճառեա ինձ այսօր զանդրանկութիւնս քո: Եւ ասէ Եսաւ. Ահաւասիկ ես երթամ ի վախճանել, եւ առ ի՞մ իցեն ինձ այն անդրանկութիւնք: Եւ ասէ ցնա Յակոբ. Երդուիր ինձ: Եւ երդուաւ նմա: Եւ վաճառեաց Եսաւ զանդրանկութիւնս իւր Յակոբայ, եւ Յակոբ ետ Եսաւայ հաց եւ թան ոսպնեայ: Կերաւ եւ արբ եւ յարեաւ գնաց, եւ անարգեաց Եսաւ զանդրանկութիւնն:

Ծննդ. ԻԵ. 27—34.

## 8.

### Գերեզմանք ցանկութեան:

Ժողովուրդն տրտնջէր չարաչար առաջի Տեառն, եւ խառնաղանճն՝ որ էր ի միջի նոցա, ցանկացան ցանկութիւն եւ ասէին. Ո՛ տացէ մեզ



միս ուտելոյ, զի յիշեցաք զձուկնն՝ զոր ուտէաք յԵգիպտոս ձրի, եւ զսեխն եւ զմեղրապոպ եւ զպրասն եւ զսոխն եւ զխստոր: Բարկացաւ Տէր յոյժ, եւ առաջի Մովսիսի չար թուեցաւ: Եւ ասէ Մովսէս ցՏէր. Ուստի՞ է ինձ միս՝ տալ ամենայն ժողովրդեանս այսմիկ. զի լան զինեւ եւ ասեն. Տուր մեզ միս, զի կերիցուք: Ասէ Տէր ցՄովսէս. Ցժողովուրդն ասասցես. Սրբեցարուք առ վաղիւ, եւ կերիջիք միս, ոչ զմի օր եւ ոչ զերկուս, այլ զամսօրեայ աւուրս ուտիցէք, մինչեւ ելանիցէ ընդ ունգունս ձեր: Եւ ել հողմ ի Տեառնէ եւ խաղացոյց յայս կոյս զլորամարգին ի ծովէն եւ անկաւ զբանակաւն, աւուր գնաց աստի եւ աւուր գնաց անտի, իբրեւ ցերկուս կանգունս յերկրէ: Եւ յարուցեալ ժողովուրդն՝ ժողովեցին զլորամարգին եւ սպանին, եւ ապխտեցին իւրեանց ապուխտս ապուխտս շուրջ զբանակաւն: Մինչ դեռ միսն յատամունս նոցա էր, եհար Տէր զժողովուրդն հարուածս մեծամեծս յոյժ: Եւ կոչեցաւ անուն տեղւոյն այնորիկ Գերեզմանք ցանկութեան, զի անդ թաղեցին զժողովուրդն ցանկացող:

Թուոց. ԺԱ.

## 9.

### Դանիէլ եւ երեքին ընկերք նորա:

Ասէ թագաւորն (Նաբուքոդոնոսոր) ցԱսփանէս ներքինապետ իւր՝ ածել յորդւոց գերութեանն Իսրայելի եւ ի Պարթեւաց, մանկունս անարատս, գեղեցիկս երեսօք եւ հմուտս գիտութեան, եւ ուսուցանել նոցա դպրութիւն եւ զլեզու Քաղդէացւոց. սնուցանել զնոսա ամս երիս, եւ ապա կացուցանել առաջի թագաւորին: Եւ էին ի նոսա յորդւոցն Յուդայ՝ Դանիէլ եւ Անանիա եւ Միսայէլ եւ Ազարիա: Եւ եդ Դանիէլ ի մտի իւրում չճաշակել ի սեղանոյ թագաւորին եւ ոչ ի գինւոյ ըմպելւոյ նորա. եւ աղաչեաց զներքինապետն զի

մի ճաշակեսցէ։ Ասէ ներքինապետն ցԴանիէլ. Երկնչիմ ես ի տեառնէ իմմէ արքայէ՝ որ կարգեաց ձեզ զկերակուրս ձեր եւ զըմպելի. գուցէ տեսանիցէ զերեսս ձեր տրտմագոյնս քան զայլոց մանկանց հասակակցաց ձերոց, եւ առնիցէք զիս գլխապարտ թագաւորին։ Եւ ասէ Դանիէլ. Աղէ փորձեա զծառայս քո աւուրս տասն. եւ տացեն մեզ ունդս եւ կերիցուք, եւ ջուր արբցուք։ Անսաց նոցա եւ փորձեաց զնոսա աւուրս տասն։ Եւ յետ կատարելոյ աւուրցն տասանց, երեւեցան երեսք նոցա նմա բարիք եւ հզօրք քան զամենայն մանկունսն՝ որ ուտէին զսեղան թագաւորին։ Եւ յետ կատարածի աւուրցն՝ հրաման ետ թագաւորն ածել զնոսա։ Ած զնոսա ներքինապետն առաջի Նաբուքոդոնոսորայ, եւ խօսեցաւ ընդ նոսա արքայն։ Եւ ոչ գտան յամենայնի նման Դանիելի եւ Անանիայ եւ Միսայելի եւ Ազարիայ. եւ կային առաջի թագաւորին։ Եւ յամենայն բանս իմաստութեան եւ գիտութեան՝ զոր խնդրէր ի նոցանէ թագաւորն, գտանէր զնոսա տասնպատիկ առաւել քան զամենայն գէտս եւ զմոգս՝ որ էին ի թագաւորութեան նորա։

Դան. Ա.

## 10.

### Ջրհեղեղ։

Իբրեւ ետես Տէր Աստուած եթէ բազմացան չարիք մարդկան ի վերայ երկրի, ստրջացաւ զի արար զմարդն եւ ասէ. Ջնջեցից զամենայն մարմին՝ զոր արարի. մի՛ մնասցէ ոգի իմ ի մարդկանդ յայդմիկ, վասն լինելոյ դոցա մարմին։ Բայց Նոյ՝ այր արդար կատարեալ, հաճոյ եղեւ Աստուծոյ։ Ասէ Տէր Աստուած ցՆոյ. Ժամանակ ամենայն մարդոյ հասեալ է, զի լցաւ երկիր ապականութեամբք ի նոցանէ. եւ ահա ես ապականեցից զնոսա եւ զերկիր։ Արդ արա դու քեզ տապան ի չորեքկուսի



փայտից, խորշս խորշս գործեսցես զտապանն, եւ նաւթիւ ծեփեսցես զնա ներքոյ եւ արտաքոյ։ Եւ մտցես ի տապանն, դու եւ որդիք քո եւ կին քո եւ կանայք որդւոց քոց ընդ քեզ։ Եւ ածից ես անձրեւ ի վերայ երկրի զքառասուն տիւ եւ զքառասուն գիշեր, եւ ջնջեցից զամենայն հասակ՝ զոր արարի։ Արար Նոյ զամենայն՝ զոր միանգամ պատուիրեաց նմա Տէր Աստուած. եւ եմուտ ի տապանն վասն ջուրցն հեղեղի։ Եւ յետ եւթն աւուր սահանք երկնից բացան, եւ եղեւ անձրեւ ի վերայ երկրի զքառասուն տիւ եւ զքառասուն գիշեր եւ բազմացաւ ջուրն եւ վերացոյց զտապանն. եւ շրջէր տապանն ի վերայ ջրոց, եւ սաստկանայր ջուրն յոյժ յոյժ ի վերայ երկրի եւ ծածկէր զամենայն լերինս բարձունս։ Եւ մեռաւ ամենայն մարմին շարժուն ի վերայ երկրի, ամենայն մարդ եւ ամենայն՝ որ ունէր շունչ կենդանի յանդունս իւր։ Եւ մնաց միայն Նոյ եւ որ ընդ նմա էին ի տապանի անդ։

Ծննդ. Զ. Է.

## 11.

### Կործանումն Սոդոմայ։

Մարդիկն Սոդոմայեցւոց չարք եւ մեղաւորք էին առաջի Աստուծոյ յոյժ։ Եկին երկու հրեշտակքն ի Սոդոմ ընդ երեկս, եւ ասեն ցՂովտ. Կործանելոց եմք զքաղաքս զայս, զի բարձրացաւ աղաղակ սոցա առաջի Տեառն, եւ առաքեաց զմեզ Տէր սատակել զսա։ Իբրեւ եղեւ առաւօտ, փութացուցանէին հրեշտակքն զՂովտ եւ ասէին. Արի առ զկին քո եւ զերկուս դստերս քո, եւ ել աստի, զի մի եւ դու կորնչիցիս ընդ անօրէնութիւնս քաղաքիդ։ Եւ կալան հրեշտակքն զձեռանէ նորա եւ զձեռանէ կնոջ նորա եւ զձեռանէ երկուց դստերաց նորա, եւ հանին զնա եւ եդին արտաքոյ քաղաքին։ Արեգակն ծագեաց յերկիր, եւ Տէր տեղաց ի Սոդոմ եւ ի Գոմոր ծծումբ եւ հուր, եւ

կործանեաց զքաղաքն զայնոսիկ եւ զամենայն բնակիչս քաղաքացն:

Ծննդ. ԺԳ. ԺԹ.

## 12.

### Յանդիմանի Դաւիթ վասն մեղացն:

Առաքեաց Տէր զՆաթան մարգարէ առ Դաւիթ: Եմուտ առ նա եւ ասէ ցնա. Արք երկու էին ի քաղաքի միում, մին՝ մեծատուն եւ միւսն՝ աղքատ: Եւ մեծատանն էին հօտք եւ անդեայք բազում յոյժ, եւ աղքատին՝ եւ ոչինչ, բայց որոջ մի փոքր՝ զոր ստացեալ եւ ապրեցուցեալ եւ սնուցեալ էր զնա, եւ հաստատեալ էր ընդ նմա եւ ընդ որդիս նորա ի միասին, ի հացէ նորա ուտէր եւ ի բաժակէ նորա ըմպէր եւ ի ծոց նորա ննջէր, եւ էր նորա իբրեւ զդուստր: Եւ եկն անցաւոր առ այրն մեծատուն, եւ խնայեաց առնուլ ի հօտից իւրոց եւ յանդէոց իւրոց՝ առնել հիւրոյն անցաւորի եկելոյ առ նա. եւ էառ զորոջ աղքատին եւ արար առնն եկելոյ կերակուր:

Բարկացաւ սրտմտութեամբ Դաւիթ յոյժ առնն. եւ ասէ ցՆաթան. կենդանի է Տէր, զի որդի մահու է այրն՝ որ արար զայն, եւ զորոջն տուժեսցի եւթնպատիկ: Եւ ասէ Նաթան ցԴաւիթ. Դու ես այրն՝ որ արարեր զայն: Այսպէս ասէ Տէր Աստուած Իսրայելի. Ես եմ՝ որ օծի զքեզ թագաւոր ի վերայ ամենայն Իսրայելի, եւ ես փրկեցի զքեզ ի ձեռաց Սաւուղայ, եւ ետու քեզ զտուն տեառն քո: Եւ ընդէ՞ր անարգեցեր զբանն Տեառն՝ առնել չար առաջի աչաց նորա: ԶՈւրիա Քետացի հարեր դու սրով, եւ զկին նորա առեր դու քեզ կնութեան: Եւ արդ մի հեռասցի սուր ի տանէ քումմէ մինչեւ ցյաւիտեան, փոխանակ զի անարգեցեր զիս: Եւ ասէ Դաւիթ ցՆաթան. Մեղայ Տեառն: Եւ ասէ Նաթան ցԴաւիթ. Եւ Տէր ան-



ցոյց զքեւ զմեղս քո, եւ մի մեռցիս. բայց որդին քո՝ զոր ծնանելոց է քեզ, մահու մեռցի:

Բ. Թագ. ԺԲ. 1—14.

## 13.

### Խոտորի Սողոմոն ի Տեառնէ:

Արքայ Սողոմոն առ իւր կանայս օտարոտիս, եւ խոտորեցուցին կանայք նորա զսիրտ նորա զհետ աստուածոց օտարաց. եւ ոչ էր սիրտ նորա կատարեալ ընդ Տեառն Աստուծոյ իւրոյ, իբրեւ զսիրտն Դաւթի հօր իւրոյ: Յայնժամ շինեաց Սողոմոն զբարձաւանդակն Քամովսայ կռոցն Մովաբու եւ Աստարտայ գարշելւոյ Սիդոնացւոց: Եւ այնպէս արար ամենայն կանանց իւրոց օտարոտեաց. արկանէին խունկս եւ զոհէին կռոց իւրեանց: Եւ բարկացաւ Տէր Սողոմոնի եւ ասէ. Փոխանակ զի եղեւ այդ ընդ քեզ եւ ոչ պահեցեր զհրամանս իմ, պատառեցից զթագաւորութիւնդ ի ձեռանէ քումմէ, եւ տաց զդա ծառայի քում: Բայց ի քո աւուրս ոչ արարից զայն, վասն Դաւթի հօր քոյ. այլ ի ձեռանէ որդւոյ քոյ առից զդա: Սակայն զամենայն թագաւորութիւնդ ոչ առից. գաւազան մի տաց որդւոյ քում, վասն Դաւթի ծառայի իմոյ:

Գ. Թագ. ԺԱ. 1—13.

## 14.

### Գլխատումն Յովհաննու Մկրտչի:

Լուաւ արքայ Հերովդէս, քանզի յայտնի եղեւ անուն նորա (Յիսուսի). եւ ասէր թէ Յովհաննէս Մկրտիչ յարեաւ ի մեռելոց, եւ վասն այնորիկ զօրութիւնք լինին նովաւ: Այլք ասէին թէ Եղիա է, իսկ այլքն՝ Մարգարէ է, կամ թէ իբրեւ զմի ի մարգարէից: Իբրեւ լուաւ Հերովդէս, ասէ. Զորոյ ես զգլուխն հատի՝ զՅովհաննու, սա է, նա յարեաւ ի մեռելոց: Զի ինքն Հերովդէս առաքեաց կալաւ զՅովհաննէս, եւ կապեաց զնա, եւ եդ ի

բանտի վասն Հերովդիայ կնոջ Փիլիպպոսի եղբօր նորա, քանզի նա կին արար զնա: Քանզի ասէր Յովհաննէս ցՀերովդէս, թէ Ոչ է օրէն քեզ ունել զկին եղբօր քո: Եւ Հերովդիա ոխացեալ էր ընդ նմա, եւ կամէր սպանանել զնա եւ ոչ կարէր: Զի Հերովդէս երկնչէր ի Յովհաննէ. քանզի գիտէր զնա այր արդար եւ սուրբ, եւ սպասէր նմա, եւ լուեալ ի նմանէ բազում ինչ՝ առնէր, եւ քաղցրութեամբ լսէր նմա: Իբրեւ օր մի լինէր պարապոյ, յորժամ ընթրիս տայր Հերովդէս յաւուր ծննդոց իւրոց՝ նախարարաց իւրոց եւ հազարապետաց եւ մեծամեծաց Գալիլեացւոց, եւ ի մտանել դստերն Հերովդիայ եւ ի կաքաւել, հաճոյ եղեւ Հերովդի եւ բազմականացն: Ասէ թագաւորն ցաղջիկն. Խնդրեա յինէն՝ զոր ինչ կամիս, եւ տաց քեզ: Եւ երդուաւ նմա բազում անգամ, թէ Զոր ինչ եւ խնդրեսցես դու յինէն, տաց քեզ՝ մինչեւ ցկէս թագաւորութեան իմոյ: Նա ելեալ ասէ ցմայր իւր. Զի՞նչ խնդրեցից: Եւ նա ասէ. Զգլուխն Յովհաննու Մկրտչի: Եւ մտեալ անդրէն փութանակի առ թագաւորն՝ ասէ. Կամիմ զի այժմ տացես ինձ վաղվաղակի ի վերայ սկտեղ զգլուխն Յովհաննու Մկրտչի: Եւ տրտմեցաւ յոյժ թագաւորն, այլ վասն երդմանցն եւ կոչնականացն՝ ոչ կամեցաւ անարգել զնա: Եւ առաքեաց վաղվաղակի թագաւորն դահիճ, եւ հրամայեաց բերել զգլուխն նորա: Չոգաւ գլխատեաց զնա ի բանտին. եւ եբեր զգլուխն նորա սկտեղբ եւ ետ ցաղջիկն. եւ աղջիկն տարաւ ետ մօր իւրում: Իբրեւ լուան աշակերտքն նորա, եկին բարձին զմարմինն եւ եդին ի գերեզմանի:

Մարկ. Զ. 14—29.



## 15.

### Յոբ եւ որդիք նորա:

Միաբանեալ գային որդիք նորա (Յոբայ) առ միմեանս, առնէին խրախութիւն զօրհանապազ, առեալ ընդ իւրեանս եւ զերեսին քորսն իւրեանց՝ ուտել եւ ըմպել ընդ նոսա: Եւ իբրեւ յանգ ելանէին աւուրք խրախութեանն, առաքէր Յոբ եւ սրբէր զնոսա. յարուցեալ ընդ առաւօտս մատուցանէր վասն նոցա զոհս ըստ թուոյ նոցա, եւ զուարակ մի վասն մեղաց ոգւոց նոցա. քանզի ասէր Յոբ թէ Գուցէ որդիքն իմ ի միտս իւրեանց իմացան չարութիւն: Այսպէս առնէր Յոբ զամենայն աւուրս նոցա:

Յոբ. Ա. 4—5.

## ԳԼՈՒԽ Ժ.

*Լեզու եւ խօսք:*

1. Փառք եւ անարգութիւն ի խօսս, եւ լեզու մարդոյ՝ գլորումն նմին: Սիր. Ե. 15.

2. Մահ եւ կեանք ի ձեռս լեզուի. եւ որ յաղթէ նմա՝ կերիցէ զպտուղ նորա: Առ. ԺԸ. 21.

3. Որոգայթ բուռն են առն շրթունք իւր, եւ ըմբռնի բանիւ բերանոյ իւրոյ: Առ. Զ. 2.

4. Զմշակութիւն ծառոյ ցուցանէ պտուղ նորա, որպէս եւ բան՝ խորհրդոց սրտի մարդոյ: Սիր. ԻԷ. 7.

5. Ի յաւելուածոյ սրտի խօսի բերան: Մատ. ԺԲ. 34.

6. Ի բերան յիմարաց՝ սիրտ նոցա. իսկ ի սիրտ իմաստնոց՝ բերան նոցա: Սիր. ԻԱ. 29.

7. Արծաթ ընտիր է լեզու արդարոյ: Առ. Ժ. 20.

8. Եթէ ոք բանիւ ոչ յանցանիցէ, նա է մարդ կատարեալ: Յակ. Գ. 2.

9. Երանեալ է այր՝ որ ոչ գայթեաց բերանով իւրով: Սիր. ԺԴ. 1.

10. Բան ձեր յամենայն ժամ լի շնորհօք Տեառն, իբրեւ աղիւ համեմեալ լիցի: Կող. Դ. 6.

11. Ո՞չ ապաքէն զտօթ զովացուցանէ ցօղ. սոյնպէս լաւ բան՝ քան զտուրս: Սիր. ԺԸ. 16.

12. Խորիսխ մեղու՝ բանք բարիք, եւ քաղցրութիւն նոցա՝ բժշկութիւն հոգւոյ: Առ. ԺԶ. 24.

13. Լաւ է յոտից գայթակղել՝ քան ի լեզուէ: Սիր. Ի. 20.

14. Կոկորդ քաղցրենի բազում առնէ զբարեկամս իւր, եւ լեզու լաւախօս յաճախէ զբարեկամութիւնս: Սիր. Զ. 8.

15. Պատասխանի ողոք դարձուցանէ զբրտմութիւն: Բան խիստ յարուցանէ զբարկութիւն: Առ. ԺԵ. 1.

16. Եթէ փչեսցի կայծ, բորբոքեսցի. եւ եթէ թքեսցի ի նա, շիջցի. երկոքին ի բերանոյ քոյ ելանեն: Սիր. ԻԸ. 14.

17. Այր հլու զգուշութեամբ խօսեսցի: Առ. ԻԱ. 28.

18. Գուբ խոր է բերան անօրինի, եւ ատեցեալն ի Տեառնէ անկցի ի նա: Առ. ԻԲ. 14.

19. Որ իմաստուն է բանիւք՝ զանձն սիրելի առնէ: Սիր. Ի. 13.

## Ա.

Զգուշութիւն ի բանս եւ լռախօսութիւն:

1. Զոսկի քո եւ զարծաթ պինդ կապեա, եւ բանից քոց արա չափ եւ կշիռ, եւ բերանոյ քոյ արա դուռն եւ նիգ: Սիր. ԻԸ. 29.

2. Այր իմաստուն լռեսցէ մինչեւ ի ժամանակ խօսից: Սիր. Ի. 7.

3. Է լռութիւն՝ որ է իմաստութիւն: Սիր. ԺԹ. 28.



4. Այր իմաստուն զլռութիւն սիրէ: Առ. ԺԱ. 12.

5. Վասն այնորիկ եղիցին բանք քո սակաւք: Ժող. Ե. 1.

6. Գլխաւորեա զբան սակաւուք բազումս: Սիր. ԼԵ. 11.

7. Ուր ունկնդրութիւն է, մի լայներ զխօսս: Սիր. ԼԵ. 6.

8. Եղիցի ամենայն մարդ արագ առ ի լսել, եւ ծանր առ ի խօսել: Յակ. Ա. 19.

9. Լեր արագ ի լուր քո, եւ երկայնմտութեամբ ի բարբառ պատասխանւոյ: Սիր. Ե. 13.

10. Լեր իբրեւ զայն՝ որ գիտէ եւ ընդ նմին լուռ լինի: Սիր. ԼԵ. 12.

11. Խօսեա, երիտասարդ, եթէ իցէ քո պէտք, հազիւ՝ թէ երկիցս հարցանիցիս: Սիր. ԼԵ. 10.

12. Մինչ չեւ լուեալ իցէ՝ մի տար պատասխանի. եւ ընդ մէջ բանից մի անկանիր: Սիր. ԺԱ. 8.

13. Մինչ չեւ խօսեալ իցէ՝ ուսիր: Սիր: ԺԸ. 19.

14. Եթէ գոյ ի քեզ իմաստութիւն՝ տուր պատասխանի մերձաւորի. ապա թէ ոչ՝ ափ քո լիցի ի վերայ բերանոյ քոյ: Սիր. Ե. 14.

15. Որ տայ պատասխանի բան՝ մինչ չեւ լուեալ իցէ ինչ, անզգամութիւն է նմա եւ նախատինք: Առ. ԺԸ. 13.

16. Յամենայն ի զուր բանէ զգոյշ լինիցիս: Ել. ԻԳ. 7.

17. Մի տար պատասխանի անզգամի ըստ նորա անզգամութեանն, զի մի լինիցիս նմանող նմա: Առ. ԻԳ. 4.

18. Յականջս անզգամի ամենեւին մի խօսիր, զի մի անգոսնեսցէ զիմաստուն բանս քո: Առ. ԻԳ. 9.

19. Որ անմիտն է՝ յաճախէ զբանս: Ժող. Ժ. 14.

20. Որ յաճախէ զբան իւր՝ արհամարհեսցի: Սիր. Ի. 8.

21. Որ սիրէ զկեանս՝ խնայեսցէ ի բերան իւր: Առ. ԺԶ. 17.

22. Եթէ խնայես ի շրթունս քո՝ իմաստուն լինիս: Առ. Ժ. 19.

23. Որ զգուշանայ բանից՝ եղիցի արտաքոյ կորստեան: Առ. ԻԳ. 1. Բ.

24. Որ խնայէ ի բերան իւր՝ պահէ զանձն: Առ. ԺԳ. 3.

25. Որ պահէ զբերան իւր եւ զլեզու, պահէ ի նեղութենէ զանձն իւր: Առ. ԻԱ. 23.

26. Ի շատխօսութենէ ոչ ապրեսցիս ի մեղաց: Առ. Ժ. 19.

27. Է՝ որ ի շատխօսութենէ ատելի լիցի ամենեցուն. եւ են՝ որ ոչ գոյ բանք ի բերան: Սիր. Ի. 5.

28. Զհակառակութիւնս ցածուցանէ լուռ լուռն: Առ. ԺԸ. 18.

29. Են՝ որ լուռ են. զի ոչ գիտեն զժամանակ բանից: Սիր. Ի. 6.

30. Ամենայնի ժամանակ է. ժամանակ լռելոյ եւ ժամանակ խօսելոյ: Ժող. Գ. 1. 7.

31. Ի բերանոյ առն անմտի անարգեն առակք, զի ոչ ասէ ի ժամու: Սիր. Ի. 22.

32. Մարդոյ լեզուանւոյ մի յաջողեսցի ի վերայ երկրի: Սղմ. ՃԼԹ. 13.

33. Բերան անզգամ՝ գործէ խռովութիւնս: Առ. ԻԶ. 28.

34. Եթէ ձգեսցես զբանս, ելցեն դատաստանք եւ կռիւք: Առ. Լ. 33.

35. Ահեղ ի քաղաքի իւրում այր լեզուանի: Սիր. Թ. 25.

## Բ.

### Սուտ եւ խաբէութիւն:

1. Մի ստէք միմեանց: Կող. Գ. 9.

2. Ստել զամենայն ստութիւն մի ախորժեր: Սիր. Է. 14.



3. Ի բաց ընկեցէք զստութիւն. խօսեցարուք զճշմարտութիւն իւրաքանչիւր ընդ ընկերի իւրում: Եփ. Դ. 25.

4. Ոչ վայելեն արդարոյ շրթունք սուտք: Առ. ԺԷ. 7.

5. Չար բիծ ի մարդ ստութիւն: Սիր. Ի. 26.

6. Այլ է գողութիւն եւ այլ է ստութիւն. եւ երկոքին զկորուստ ժառանգեն: Սիր. Ի. 27.

7. Բերան ստախօս սպանանէ զանձն: Իմ. Ա. 11.

8. Պիղծ են առաջի Տեառն շրթունք սուտք: Առ. ԺԲ. 22.

9. Կորուսանես զամենեսեան, ոյք խօսին սուտ: Սղմ. Ե. 7.

10. Քաղցրացաւ առն հաց ստութեան, եւ լցցի բերան նորա կոպճով: Առ. Ի. 17.

11. Որ կուտէ գանձս ստութեամբ լեզուի, հասանէ յորոգայթս մահու: Առ. ԻԱ. 6.

12. Մի սերմաներ ստութիւն ի վերայ եղբօր քոյ: Սիր. Է. 13.

13. Մի լինիր վկայ սուտ ընկերի քում: Առ. ԻԴ. 28.

14. Մի սուտ վկայութիւն վկայեր զընկերէ քումէ: Ել. Ի. 14.

15. Վկայ սուտ առանց պատժի ոչ լինի: Առ. ԺԹ. 5.

---

16. Զբան անիրաւ ատեայ արդար: Առ. ԺԳ. 5.

17. Լեր հաստատեալ յիմաստութեան քում, եւ մի բան եղիցի քո: Սիր. Ե. 12.

18. Մի կոչեսցիս բանսարկու, եւ լեզուաւ քով մի վարաներ: Սիր. Ե. 16.

19. Շրթունք քո մի խօսեսցին զնենգութիւն: Սղմ. ԼԴ. 14.

20. Ընդ պատրողին շրթամբք իւրովք մի խառնակեսցիս: Առ. Ի. 19.

21. Ի բարեկամն եւ ի թշնամին մի յօժարեր երկրորդել զբանն: Սիր. ԺԹ. 7.

22. Այր երկխօս յայտնէ զխորհուրդս. իսկ հաւատարիմն ոգւով՝ ծածկէ զիրս: Առ. ԺԱ. 13.

23. Որ յայտնէ զխորհուրդս՝ գնայ նենգութեամբ: Առ. Ի. 19.

24. Ամաչեցէք ի կրկնելոյ բանից եւ լրոյ եւ յայտնելոյ բանից գաղտնեաց: Սիր. ԽԱ. 28.

25. Զվէր մարթի պատել, իսկ որ յայտնէ զխորհուրդս՝ յուսահատ եղեւ: Սիր. ԻԷ. 23. 24.

26. Որ յայտնէ զխորհուրդս՝ կորոյս զհաւատարմութիւն, եւ ոչ գտցէ բարեկամ առ անձն իւր: Սիր. ԻԷ. 17.

27. Որ գրգռէ զբանս՝ ոչ ապրեսցի մանաւանդ որ վարէ զբանս՝ որ ոչ իւր իցեն: Առ. ԺԹ. 7.

28. Սատակէ Տէր զամենայն շրթունս նենգաւորս: Սղ. ԺԱ. 4.

29. Այր յեղյեղուկ լեզուաւ անկցի ի չարիս: Առ. ԺԷ. 20.

30. Ի վերայ գողոյն կայ ամօթ, եւ պարսաւանք չար՝ ի վերայ երկխօսին: Սիր. Ե. 17.

31. Զքսուն եւ զերկխօսն առհասարակ անիծանիջիր, զի բազում խաղաղականացս կորոյս: Սիր. ԻԸ. 15.

32. Լեզու երեքկին գքաղաքս ամուրս կործանեաց, եւ զտունս մեծամեծս աւերեաց: Սիր. ԻԸ. 16—18.

33. Լեզու երեքկին զկանայս ժրագլուխս եհան եւ զրկեաց զնոսա ի վաստակոց իւրեանց: Սիր. ԻԸ. 19.

34. Պղծէ զանձն իւր փսքսուն, եւ ուր եւ բնակեսցէ մօտ՝ ատելի լիցի: Սիր. ԻԱ. 31.



## Դ.

### Բամբասանք եւ Թշնամանք:

1. Մի՛ բամբասէք զմիմեանս: Յակ. Դ. 11.

2. Ի բամբասանաց խնայեցէք զլեզու: Իմ. Ա. 11.

3. Է բան հաւասար մահու: Սիր. ԻԳ. 15.

4. Ի բաց թօթափել զամենայն չարութիւն եւ զամենայն չարախօսութիւն: Ա. Պետր. Բ. 1.

5. Մի զրպարտիցէք իւրաքանչիւր զընկեր իւր: Ղեւտ. ԺԹ. 11.

6. Մի չար փոխանակ չարի հատուցանել, կամ բամբասանս՝ ընդ բամբասանաց: Ա. Պետր. Գ. 9.

7. Լուար ինչ բան, մեռցի անդրէն ի սրտի քում. պինդ կաց, որ ոչ հերձու եւ ելանէ արտաքս: Սիր. ԺԹ. 10.

8. Իբրեւ նետ հարեալ ի մարմին մարդոյ, այսպէս է բան ի սիրտ անմտի: Սիր. ԺԹ. 12.

9. Են որ բանիւք իւրեանց խոցեն որպէս սրով: Առ. ԺԲ. 18.

10. Բազումք անկան ի սայր սուսերի, եւ ոչ որպէս որք անկան վասն լեզուի: Սիր. ԻԸ. 22.

11. Հարուածք մտրակի առնէ երաշխեպ. իսկ հարուածք լեզուի փշրեսցէ զոսկերս: Սիր. ԻԸ. 21.

12. Մի թշնամանասէր լինիր մարդոյ ի տարապարտուց, զի մի չար ինչ գործեսցէ քեզ: Առ. Գ. 30.

13. Որ մեղ դնէ տարապարտուց՝ ոչ ապրեսցի: Առ. ԺԹ. 5.

14. Անողորմ է որ ոչ պահէ զբանս, եւ ոչ խնայեսցէ ի տանջանաց եւ ի կապանաց: Սիր. ԺԳ. 15.

15. Յառաջ քան զհուր՝ ծուխ, այսպէս եւ յառաջ քան զարիւնս՝ բամբասանք: Սիր. ԻԲ. 30.

16. Որ ի վեր հանեն զբամբասանս՝ անզգամք են: Առ. Ժ. 18.

17. Որ ծածկէ զյանցանս՝ խնդրէ զբարեկամութիւն. իսկ որ ատեայ զծածկելն՝ քակէ զբարեկամս եւ զընտանիս: Առ. ԺԷ. 9.

18. Որ խօսէր գաղտ զընկերէ իւրմէ՝ զնա բացէ ի բաց հալածէի: Սղմ. Ճ. 5.

19. Ցոր վայր մտանեն Թշնամանք, անդ են եւ անարգանք: Առ. ԺԱ. 2.

20. Զտունս Թշնամանողաց կործանէ Տէր: Առ. ԺԵ. 25.

21. Մի սիրեր զչար խօսել, զի մի սատակեսցիս: Առ. Ի. 13.

## Դ.

### Այլ եւս վնասակար բանք:

1. Դիր, Տէր, պահապան բերանոյ իմոյ, եւ զդուռն ամուր՝ շրթանց իմոց, զի մի խոտորեսցի սիրտ իմ բանիւք չարութեան: Սղմ. ՃԽ. 3. 4.

2. Ապականեն զբարս քաղցունս բանք չարք: Ա. Կորն. ԺԵ. 32.

3. Ամենայն բան տգեղ ի բերանոյ ձերմէ մի ելցէ: Եփ. Դ. 29.

4. Որ կամի զաւուրս իւր տեսանել ի բարութեան, լռեցուսցէ զլեզու իւր ի չարութենէ, եւ զշրթունս իւր ի խօսելոյ զնենգութիւն: Ա. Պետր. Գ. 10.

5. Ի պիղծ բանից եւ յառասպելաց պառաւանց հրաժարեսջիր: Ա. Տիմ. Դ. 7.

6. Ի բաց թօթափեցէք զչարութիւն, զհայհոյութիւն, զխեղկատակութիւն ի բերանոց ձերոց: Կող. Գ. 8.

7. Զաղտութիւն կամ խօսք յիմարութեան կամ խեղկատակութիւն, որ ոչ վայել է: Եփ. Ե. 4.

8. Ի բաց արա ի քէն զբերան կամակոր: Առ. Դ. 24.

9. Պիղծ է առաջի Տեառն ցոփ լեզուաւ: Առ. ԻԷ. 20.



10. Զգոյշ լերուք յանօգուտ քրթմնջմանէ: Իմ. Ա. 11.

11. Շշնջիւն քրթմնջմանց ոչ ծածկեսցի: Իմ. Ա. 10.

12. Շշունջ գաղտնի դատարկ ոչ անցցէ: Իմ. Ա. 11.

13. Զամենայն ինչ գործեցէք առանց տրտնջելոյ եւ քրթմնջելոյ: Փիլ. Բ. 14.

14. Լեզու արձակ փշրէ զոսկերս: Առ. ԻԵ. 15.

15. Որ խնայէ բան խիստ հանել՝ իմաստուն է: Առ. ԺԷ. 27.

16. Որ յանդուգն է շրթամբք՝ խռովէ զանձն իւր: Առ. ԺԳ. 3.

17. Որ յանդուգն է բանիւ իւրով՝ ատելի եղիցի: Սիր. Թ. 25

18. Շրթունք փնգգամի հասուցանեն զնա ի չարիս, եւ բերան նորա յանդուգն մահ կոչէ ի վերայ: Առ. ԺԸ. 6.

19. Ցորժամ տեսանիցես զայր յանդուգն բանիւք, գիտասջիր զի յոյս գոյ յանզգամին քան ի նմա: Առ. ԻԹ. 20.

# ՕՐԻՆԱԿՔ

## 1.

### Իշխանք Ամոնացւոց:

Յետ այնորիկ մեռաւ արքայ որդւոցն Ամոնայ, եւ թագաւորեաց Անոն որդի նորա ընդ նորա: Ասէ Դաւիթ. Արասցուք ողորմութիւն ընդ Անոնայ՝ որդւոյ Նաասայ, զոր օրինակ արար հայր նորա ընդ իս ողորմութիւն: Եւ առաքեաց Դաւիթ մխիթարել զնա ի ձեռն ծառայից իւրոց՝ վասն հօր իւրոյ: Չոգան ծառայքն Դաւթի յերկիր որդւոցն Ամոնայ: Եւ ասեն իշխանք որդւոցն Ամոնայ ցԱնոն տէրն իւրեանց. Միթէ փառաւորե՞լ ինչ զհայր քո առաքեաց առ քեզ Դաւիթ մխիթարիչս. ոչ, այլ

զի որոնեսցեն զքաղաքս եւ դիտեսցեն զսա. եւ լրտեսել զսա առաքեաց Դաւիթ զծառայս իւր առ քեզ։ Եւ կալաւ զծառայսն Դաւթի, եւ եգերծ զմօրուս նոցա, եւ արձակեաց զնոսա։ Պատմեցին Դաւթի վասն արանցն. եւ առաքեաց Դաւիթ ընդ առաջ նոցա, զի էին արքն անարգեալք յոյժ։ Եւ ասէ արքայ. Նստարուք յԵրիքով՝ մինչեւ աճեսցեն մօրուք ձեր, եւ ապա դարձջիք։ Եւ տեսին որդիքն Ամոնայ եթէ ամօթ արարին ժողովրդեանն Դաւթի, ի վարձու կալան զԱսորիս՝ քսան հազար հետեւակաց։ Արքայ Դաւիթ առաքեաց զՅովաբ եւ զամենայն զօրն զօրաւոր։ Եւ ելին որդիքն Ամոնայ եւ ճակատեցան ի պատերազմ։ Մատեաւ Յովաբ եւ զօրն՝ որ ընդ նմա, ի պատերազմ ընդ Ասորին. եւ փախեան Ասորիքն յերեսաց նորա։ Եւ որդիքն Ամոնայ, իբրեւ տեսին եթէ փախեան Ասորիքն, փախեան եւ նոքա եւ մտին ի քաղաքն։

Բ. Թագ. Ժ. 1—14.

2.

Քսութիւն Դովեկայ։

Եկն Դաւիթ ի Նոմբա առ Աքիմելէք քահանայ եւ ասէ. Եթէ իցէ ի ձեռին քում հինգ նկանակ հացի, տուր ի պէտս իմ։ Եւ ետ նմա Աքիմելէք քահանայ ի զառաջաւոր հացէն. զի չգոյր անդ հաց, բայց ի հացէն երեսաց։ Անդ էր մի ի ծառայիցն Սաւուղայ, Դովէկ Ասորի, արածէր զջորիս Սաւուղայ։ Եւ յարեաւ Դաւիթ եւ փախեաւ։ Եւ խօսեցաւ Սաւուղ ընդ ծառայսն իւր, որ կային շուրջ զնովաւ եւ ասէ ցնոսա. Արդարեւ ամենեցուն ձեզ տացէ՞ որդին Յեսսեայ անդս եւ այգեստանս. զի միաբանեալ կայք ի վերայ իմ, եւ չիք ոք ի ձէնջ որում ցուէր վասն իմ։ Պատասխանի ետ Դովէկ Ասորի եւ ասէ. Տեսի զորդին Յեսսեայ եկեալ ի Նոմբա առ Աքիմելէք. եւ ետ նմա պաշար։ Առաքեաց արքայ կոչեաց զԱքիմելէք եւ



զքահանայս՝ որ էին ի Նոմբա։ Եկին ամենեքին առ արքայ, եւ կոտորեաց զքահանայսն Տեառն, եւ զՆոմբա քաղաք քահանայիցն եհար սրով սուսերի։

Ա. Թագ. ԻԱ. ԻԲ.

3.

Անանիա եւ Սափիրա։

Այր ոմն Անանիա անուն հանդերձ կնաւ իւրով Սափիրաւ, վաճառեաց ագարակ, եւ խորեաց ի գնոց անտի, գիտելով եւ կնոջն, եւ եբեր մասն ինչ, եդ առ ոտս առաքելոցն։ Ասէ Պետրոս. Անանիա, ընդէ՞ր ելից սատանայ զսիրտ քո՝ ստել քեզ Հոգւոյն սրբոյ եւ խորել ի գնոց գեղջն. ո՞չ ապաքէն մինչ կայրն՝ քո էր, եւ ի վաճառելն՝ ընդ քո իշխանութեամբ էր, զի՞է զի եդիր ի սրտի քում զիրս զայս. ոչ ստեցեր մարդկան այլ Աստուծոյ։ Եւ լուեալ Անանիա զբանս զայսոսիկ, անկաւ եւ եհան զոգի. եւ եղեւ ահ մեծ ի վերայ ամենեցուն՝ որ լուան զայն։ Յոտն կացին երիտասարդքն եւ ամփոփեցին զնա եւ տարան թաղեցին։ Իբրեւ ժամք երեք անցին, եւ կին նորա ոչ գիտէր զինչ եղեալն էր, եմուտ ի ներքս։ Պատասխանի ետ նմա Պետրոս եւ ասէ ցնա. Ասա դու ինձ թէ այնչափ գնոց զգեօղն վաճառեցէք։ Եւ նա ասէ. Այո, այնչափ։ Ասէ ցնա Պետրոս. Զի՞ է զի միաբանեցէք դուք փորձել զՀոգին Տեառն. ահա ոտքն՝ որ թաղեցին զայրն քո, հանցեն եւ զքեզ։ Եւ անկաւ անդէն առ ոտս նորա եւ եհան զոգի։ Մտին երիտասարդքն, գտին զնա մեռեալ, եւ հանին թաղեցին առ առն իւրում։

Գործ. Ե. 1—10.

4.

Հրայրեաց։

Ժողովուրդն տրտնջէր չարաչար առաջի Տեառն. եւ լուաւ Տէր եւ բարկացաւ սրտմտու-

թեամբ: Եւ բորբոքեցաւ ի նոսա հուր ի Տեառնէ. եւ եկեր զմասն ինչ բանակին: Եւ աղաղակեաց ժողովուրդն առ Մովսէս, եւ յաղօթս եկաց Մովսէս առ Տէր, եւ դադարեաց հուրն: Եւ կոչեցաւ անուն տեղւոյն այնորիկ Հրայրեաց. զի բորբոքեցաւ ի նոսա հուրն ի Տեառնէ:

Թիւք. ԺԱ. 1—3.

## 5.

### Բորոտութիւն Մարեմայ:

Բամբասեցին Մարիամ եւ Ահարոն զՄովսէս, զի կին Եթեովպացի առ: Ասէ Տէր նոյնժամայն ցՄովսէս եւ ցԱհարոն եւ ցՄարիամ. Ելէք դուք երեքին ի խորանն վկայութեան: Ելին երեքին ի խորանն վկայութեան. եւ էջ Տէր սեամբ ամպոյ եւ եկաց առ դրան խորանին վկայութեան: Կոչեցան Ահարոն եւ Մարիամ, եւ ելին երկոքեան: Եւ ասէ ցնոսա Տէր. Ընդէ՞ր ոչ երկերուք բամբասել զծառայն իմ Մովսէս: Եւ եղեւ բարկութիւն սրտմտութեան Տեառն ի վերայ նոցա, եւ գնացին. եւ ամպն վերացաւ ի խորանէ անտի, եւ Մարիամ բորոտեալ էր իբրեւ զձիւն: Ասէ Ահարոն ցՄովսէս. Խնդրեմ ի քէն, տէր, մի ածեր ի վերայ մեր մեղս, զի անգիտացաք: Աղաղակեաց Մովսէս առ Տէր եւ ասէ. Խնդրեմ ի քէն, Ա՛ստուած, բժշկեա զնա: Եւ ասէ Տէր ցՄովսէս. Եթէ հօր իւրոյ թքեալ էր ընդ երեսս նորա, չամաչէ՞ր զեւթն օր. մեկնեսցի զեւթն օր արտաքոյ բանակին, եւ ապա մտցէ: Եւ զատուցաւ Մարիամ արտաքոյ բանակին զեւթն օր, մինչեւ սրբեցաւ:

Թիւք. ԺԲ.

## 6.

### Դանիէլ եւ չարախօսք նորա:

Կացոյց (Դարեհ արքայ) ի վերայ թագաւորութեանն նախարարս հարիւր եւ քսան, եւ ի



վերայ նոցա՝ երիս հրամանատարս, եւ մի ի նոցանէ էր Դանիէլ: Եւ Դանիէլ առաւել էր քան զնոսա, զի հոգի առաւել գոյր ի նմա: Եւ հրամանատարքն եւ նախարարքն նախանձէին եւ խնդրէին պատճառս զԴանիէլէ. եւ ամենեւին պատճառս եւ յանցանս եւ բաղբաղայս ոչ գտանէին զնմանէ, քանզի հաւատարիմ էր: Յայնժամ կացին առաջի թագաւորին եւ ասեն ցնա. Դարե՛հ արքայ, յաւիտեան կեաց: Խորհուրդ արարին ամենեքեան՝ որ են ի թագաւորութեան քում, հաստատել՝ զի եթէ խնդրեսցէ ոք խնդրուածս յամենայն աստուծոյ կամ ի մարդոյ մինչեւ յաւուրս երեսուն, բաց ի քէն, ա՛րքայ, անկցի ի գուբ առիւծուց: Դարեհ արքայ պատուէր ետ գրել զհրամանն: Դանիէլ եմուտ ի տուն իւր, եւ պատուհանք բաց էին նմա ընդդէմ Երուսաղեմի, եւ երիս ժամս յաւուր դնէր ծունր եւ կայր յաղօթս, որպէս առնէր յառաջագոյն: Յայնժամ արքն այնոքիկ դիտեցին եւ գտին զԴանիէլ, զի կայր յաղօթս եւ աղաչէր զԱստուած իւր, մատեան եւ ասեն ցթագաւորն. Դանիէլ ոչ հնազանդեցաւ հրամանի քում, ա՛րքայ: Թագաւորն՝ իբրեւ լուաւ զբանն, տրտմեցաւ յոյժ, եւ մինչեւ ցընդերեկս ջանացաւ փրկել զնա: Յայնժամ հրաման ետ եւ ածին զԴանիէլ եւ արկին զնա ի գուբն առիւծուց: Ասէ արքայն ցԴանիէլ. Աստուածն՝ զոր դուն պաշտես յաճախ, նա փրկեսցէ զքեզ: Եւ գնաց ի տուն իւր. խորտիկ ոչ մուծին առաջի նորա, եւ քուն հատաւ ի նմանէ: Ցարեւ ընդ առաւօտս լուսով, եւ փութով եկն ի գուբն առիւծուց: Իբրեւ մերձեցաւ, աղաղակեաց ի ձայն մեծ եւ ասէ. Դանիէլ, ծառայ Աստուծոյ կենդանւոյ, Աստուածն քո կարա՞ց փրկել զքեզ ի բերանոյ առիւծուցդ: Եւ ասէ Դանիէլ. Ա՛րքայ, յաւիտեան կեաց. Աստուած իմ առաքեաց զհրեշտակ իւր եւ եխից զբերանս առիւծուցս, եւ ոչ ապականեցին զիս. զի առաջի նորա ուղղութիւն գտաւ

իմ, եւ առաջի քո, արքայ, զնաս ինչ ոչ արարի: Թագաւորն զուարճացաւ յանձն իւր, եւ հրաման ետ հանել զԴանիէլ ի գբոյ անտի: Հրաման ետ եւ ածին զարսն չարախօսս զԴանիէլէ. եւ ընկեցան ի գուբն առիւծուց: Չեւ էին յատակս գբոյն հասեալ, տիրեցին նոցա առիւծքն եւ զամենայն ոսկերս նոցա մանրեցին:

Դան. Զ.

## Է.

### Լրտեսք երկրին աւետեաց:

Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ. Առաքեա արս եւ լրտեսեսցեն զերկիրն Քանանացւոց, զոր ես տաց որդւոցն Իսրայէլի ի կալուածս, այր մի ըստ ցեղի: Առաքեաց զնոսա Մովսէս եւ ասէ. Տեսջիք զերկիրն զինչ իցէ, եւ զժողովուրդն՝ որ նստի ի նմա, եթէ զօրաւորագո՞յն իցէ՝ թէ անաւագ, եթէ սակա՞ւք իցեն՝ եթէ բազումք: Եւ ելեալ լրտեսեցին զերկիրն եւ դարձան անդրէն յետ աւուրց քառասնից. ցուցին զպտուղ երկրին, պատմեցին եւ ասեն ցնա (ցՄովսէս). Չոգաք յերկիր՝ յոր առաքեցեր զմեզ, յերկիր որ բղխէ զկաթն եւ զմեղր: Բայց ազգն սաստիկ էր՝ որ բնակեալ էին ի նմա. եւ քաղաքք ամուրք եւ պարսպաւորք եւ մեծամեծք յոյժ: Լռեցոյց Քաղէբ զժողովուրդն եւ ասէ. Ելցուք եւ ժառանգեսցուք զնա, զի կարող եմք յաղթել նոցա: Եւ արքն՝ որ ընդ նմա երթեալ էին, ասէին. Ոչ ելցուք, քանզի ոչ կարեմք երթալ ի վերայ ազգին, զի զօրագոյն քան զմեզ է յոյժ: Եւ զարհուրեցուցին երկրաւն՝ զոր լրտեսեցին, եւ ասեն. Երկիրն՝ ընդ որ մեք անցաք, երկիր մարդածախ է բնակչաց իւրոց. տեսաք անդ եւ սկայս, եւ էաք յաչս նոցա իբրեւ մարախ: Եւ ձայն բարձին ամենայն ժողովուրդն, եւ ելաց ազգն զգիշերն զայն ողջոյն: Եւ ասէ այր ցընկեր. Արասցուք զօրավար, եւ դարձցուք յԵգիպտոս: Բայց Յեսու



եւ Քաղէբ՝ ի լրտեսաց երկրին՝ խօսեցան ընդ ամենայն ժողովրդեան եւ ասեն. Երկիր՝ զոր մեք լրտեսեցաք, երկիր բարի է յոյժ. եթէ հաճեսցի միայն ընդ մեզ Աստուած եւ տարցի յերկիրն յայն եւ տացէ զնա մեզ. բայց ի Տեառնէ միայն ապստամբք մի լինիցիք եւ ի ժողովրդենէ երկրին մի երկնչիջիք. քանզի կերակուր մեր են: Եւ ասաց ամենայն ժողովուրդն քարկոծել զնոսա քարամբք: Եւ ասէ Տէր ցՄովսէս. Մինչեւ յե՞րբ բարկացուցանէ զիս ժողովուրդդ: Զտրտունջ որդւոցն Իսրայէլի լուայ. արդ ասասցես ցնոսա. Յանապատիս յայսմիկ անկցին ոսկերք ձեր. ըստ թուոյ աւուրցն քառասնից, որ ընդ տարւոյ՝ ընդունիցիք զմեղս ձեր, զքառասուն ամ, եւ ծանիջիք զսրտմտութիւն բարկութեան իմոյ: Եւ արքն զորս առաքեաց Մովսէս լրտեսել զերկիրն եւ եկեալ բամբասեցին զնմանէ առ ժողովրդեանն, հանել համբաւ չար զերկրէն, մեռան չարաչար հարուածովք առաջի Տեառն:

Թւոց. ԺԳ. ԺԴ.

## Ը.

### Անգէտ նախանձայուզութիւն:

Առաքեաց (Յիսուս) հրեշտակս առաջի երեսաց իւրոց. եւ իբրեւ չոգան, մտին ի գիւղ մի Սամարացւոց՝ պատրաստել ինչ նմա, եւ ոչ ընկալան զնա, զի դէմ եդեալ էր նորա երթալ յԵրուսաղէմ: Իբրեւ տեսին աշակերտքն՝ Յակովբոս եւ Յովհաննէս՝ ասեն. Տէր, կամի՞ս զի ասասցուք, եւ իջցէ հուր յերկնից եւ սատակեսցէ զնոսա: Դարձաւ սաստեաց ի նոսա եւ ասէ. Ոչ գիտէք որո՞յ հոգւոյ էք դուք. զի որդի մարդոյ ոչ եկն զոգիս մարդկան կորուսանել, այլ կեցուցանել:

Ղուկ. Թ. 52—56.

## ԳԼՈՒԽ ԺԱ.

*Խորհուրդք զգօնութեան:*

---

### Ա.

Իմաստութիւն եւ խրատ:

1. Որդեակ, եթէ իմաստուն լինիցի սիրտ քո, ուրախ արասցես եւ զիմ սիրտ: Առ. ԻԳ. 15.

2. Զարդ երիտասարդաց իմաստութիւն: Առ. Ի. 29.

3. Լաւ է իմաստուն քան զհզօր, եւ հանճարեղ՝ քան զայն որ ունիցի դաստակերտս մեծամեծս: Առ. ԻԴ. 5.

4. Բարի է իմաստութիւն՝ քան զզօրութիւն: Ժող. Թ. 16.

5. Լաւ է իմաստութիւն քան զականս պատուականս, եւ ամենայն ինչ պատուական չարժէ զնա: Առ. Ը. 11.

6. Դադարք իմաստութեան ցանկալի են քան զոսկի. դադարք հանճարոյ ցանկալի են քան զարծաթ: Առ. ԺԶ. 16.

7. Լաւ է մանուկ աղքատ եւ իմաստուն, քան զԹագաւոր ծեր եւ անմիտ: Ժող. Դ. 13.

8. Իմաստութիւն առն լուսաւոր առնէ զերեսս իւր. եւ որ ժպիրհն է երեսօք իւրովք՝ ատելի լիցի: Ժող. Ը. 1.

9. Իմաստնոյն աչք իւր ի գլուխ իւրում. եւ որ անմիտն է՝ ընդ խաւար գնայ: Ժող. Բ. 14.

10. Այր իմաստուն յամենայնի պատկառեսցէ: Սիր. ԺԸ. 27.

11. Ունկնդիր լինի խրատու իմաստունն: Առ. ԺԲ. 15.

12. Բան իմաստուն եթէ լուիցէ հանճարեղն, գովեսցէ զնա եւ ի նոյն յաւելցէ: Սիր. ԻԱ. 18.

13. Ճանապարհ կենաց՝ յանդիմանութիւն եւ խրատ: Առ. Զ. 23.



14. Որդեակ, ի մանկութենէ քումմէ խնդրեա զխրատ. եւ մինչեւ ցծերոյթ գտցես զիմաստութիւն: Սիր. Զ. 18.

15. Որ ընդունի զխրատ՝ ի բարիս եղիցի. եւ որ պահէ զյանդիմանութիւն՝ իմաստնասցի: Առ. ԺԶ. 17.

16. Զաղքատութիւն եւ զանարգանս ի բաց բառնայ խրատ: Առ. ԺԳ. 18.

17. Ոչ սիրէ անխրատն զյանդիմանիչս իւր, եւ ընդ իմաստունս ոչ խօսեսցի: Առ. ԺԵ. 12.

18. Ոչ խրատեսցի որ ոչ է խորագէտ: Սիր. ԻԱ. 14.

19. Որ սիրէ զխրատ՝ սիրէ զիմաստութիւն. իսկ որ ատեայ զյանդիմանութիւն՝ անմիտ է: Առ. ԺԲ. 1.

20. Որ ատեանն զյանդիմանութիւն՝ վախճանեսցին անարգանօք: Առ. ԺԵ. 10.

21. Որ զիմաստութիւն եւ զխրատ անարգէ՝ թշուառական է: Իմ. Գ. 11.

22. Որ մերժէ զխրատ՝ ատեայ զանձն. որ պահէ զյանդիմանութիւն՝ ստանայ զհանճար: Առ. ԺԵ. 32.

23. Անխրատից պատահէ մահ, եւ մեռանի անզգամ ի մեղս: Առ. ԻԴ. 9.

24. Զխեցի կարկատէ՝ որ ուսուցանէ զյիմարն: Սիր. ԻԲ. 7.

25. Փոր մորոսի իբրեւ զաման ծակոտ, եւ զամենայն գիտութիւն ոչ կալցի: Սիր. ԻԱ. 17.

26. Լաւ է լսել զպատուհաս իմաստնոյ, քան լսել մարդոյ զերգս անմտաց: Ժող. Է. 6.

27. Զի որպէս ձայն փշոց ի ներքոյ կաթսայի, այնպէս ծաղր անմտաց: Ժող. Է. 7.

28. Սուգ մեռելոյ՝ աւուրք եւթն. իսկ անմտին եւ ամպարշտին՝ ամենայն աւուրք կենաց իւրոց: Սիր. ԻԲ. 13.

29. Լաց ի վերայ մեռելոյ, զի պակասեաց լոյս.

եւ ի վերայ մորոսին լաց, զի պակասեաց իմաստու-
թիւն։ Սիր. ԻԲ. 10.

30. Ցիմարին՝ քան զմահ՝ կեալն չար է։ Սիր. ԻԲ. 12.

31. Քան զկապար զի՞նչ ծանր լինիցի, եւ զի՞նչ անուն նորա՝ թէ ոչ յիմար։ Սիր. ԻԲ. 17.

32. Փշրեն զսիրտս իմաստնոց սպառնալիք. իսկ անմիտն՝ թէպէտ եւ բազում գան ըմպէ, չառնու ի միտ։ Առ. ԺԷ. 10.

## Բ.

### Անուն բարի եւ պատիւ։

1. Բարի անուն մնայ յաւիտեան։ Սիր. ԽԱ. 16.

2. Լաւ է անուն բարի՝ քան զմեծութիւն բազում։ Առ. ԻԲ. 1.

3. Բարի է անուն բարի՝ քան զեւղ բարի։ Ժող. Է. 2.

4. Հոգ տար վասն անուան, զի այս մնայ քեզ քան զհազար մեծամեծս գանձս ոսկւոյ։ Սիր. ԽԱ. 15.

5. Հեզութեամբ դիր շուք անձին քո, եւ տուր նմա պատիւ ըստ արժանեաց իւրոց։ Սիր. Ժ. 31.

6. Դարձո ի քէն զբանս նախատանաց։ Առ. ԻԷ. 11.

7. Մի տար պարսաւանս ի փառս քո։ Սիր. Լ. 24. Բ.

8. Ո՞ փառաւորեսցէ զայն՝ որ անարգէ զկեանս իւր։ Սիր. Ժ. 32.

9. Թաքուցանէ զանարգանս իւր այր խորագէտ։ Առ. ԺԲ. 16.

10. Լաւ է մարդ՝ որ թաքուցանէ զյիմարութիւն իւր, քան զմարդ՝ որ թաքուցանէ զիմաստութիւն իւր։ Սիր. Ի. 33.

11. Ցիշատակ արդարոյ գովութեամբ. անուն ամպարշտաց շիջցի։ Առ. Ժ. 7.



12. Ցիշատակ յաւիտենից եղիցի արդար. ի համբաւէ չարէ նա մի երկիցէ։ Սղմ. ՃԺԱ. 7.

13։ Զփառս իմաստունք ժառանգեսցեն. իսկ անմիտք բարձրացուցին զանարգանս։ Առ. Գ. 35.

14. Փոյթ կալ ժամանակի եւ յիշեա զժամադիր, եւ պատմեսցեն զմեծութիւնս քո։ Սիր. ԼԳ. 10.

15. Է ամօթ՝ որ զմեղս ածէ, եւ է ամօթ՝ որ փառք է եւ շնորհք։ Սիր. Դ. 25.

16. Այր՝ որ սովորի ընդ բանս նախատանաց, յամենայն աւուրս իւր նա ոչ խրատեսցի։ Սիր. ԻԳ. 20.

17. Ի վախճանել առն արդարոյ՝ ոչ կորնչի յոյս. բայց պարծանք ամպարշտաց կորիցեն։ Առ. ԺԱ. 7.

18. Որդի հարազատ եւ ժառանգ մեծազգի, որ զնախնեացն մեծանձնութիւն ոչ նորոգէ եւ յառաջ բերէ, յամօթ մեծ եւ ի նախատինս է նա հաւուց իւրոց։ Սիր. Ի. 28.

19. Թէպէտ եւ նախատի վատ, ոչ ամաչէ։ Առ. Ի. 4.

20. Յորժամ հասանէ ամպարիշտ ի խորս չարեաց՝ արհամարհէ. բայց գան ի վերայ նորա նախատինք եւ անարգանք։ Առ. ԺԸ. 3.

21. Անխրատութիւն է մարդոյ ունկն դնել առ-
դուրս. իսկ իմաստունն տաղտկասցի յանարգանաց։ Սիր. ԻԱ. 29.

22. Որ դնէ քար ի պարսատիկս՝ նման է առն որ դնէ պատիւ անմտի։ Առ. ԻՁ. 8.

## Գ.

### Ուրախութիւն եւ զուարճութիւն։

1. Ուրախ լերուք ի Տէր յամենայն ժամ, դարձեալ ասեմ՝ ուրախ լերուք։ Փիլ. Դ. 4.

2. Օրհնեցէք զնա ցնծութեամբ, գովեցէք զնա ուրախութեամբ։ Սղմ. ՃԾ. 4.

3. Ուրախ լեր, երիտասարդ, ի մանկութեան

*քում, եւ զուարճացուսցէ զքեզ սիրտ քո յաւուրս մանկութեան քոյ։ Ժող. ԺԱ. 9.*

4. *Ամենայնի ժամանակ է. ժամանակ լալոյ եւ ժամանակ ծիծաղելոյ։* Ժող. Գ. 1. 3.

5. *Յամենայն ժամանակի դէմք զուարթք,* Սիր. ԻԶ. 4.

6. *Սիրտ ուրախ բարեմոյն առնէ։* Առ. ԺԷ. 22.

7. *Սրտի բերկրելոյ երեսք ծաղկին։* Առ. ԺԵ. 13.

8. *Խաղաղիր եւ արաջիր զկամս քո, եւ մի ճեղջք։* Սիր. ԼԵ. 16.

9. *Ուրախութիւն սրտի՝ կեանք մարդոյ, եւ ցնծութիւն մարդոյ՝ երկայնութիւն աւուրց։* Սիր. Լ. 23.

10. *Իմաստուն լեր, որդեակ, զի ուրախ լիցի սիրտ քո։* Առ. ԻԷ. 11.

11. *Զայր զուարթ սիրէ Աստուած։* Առ. ԻԲ. 9.

12. *Ուրախ լիցի սիրտ՝ որ խնդրէ զհաճոյս Տեառն։* Ա. Մնաց. ԺԶ. 10.

13. *Ուրախ եղիցին սիրտք այնոցիկ՝ ոյք խնդրեն զՏէր։* Սղմ. ՃԴ. 3.

14. *Զի մարդոյ բարւոյ ետ զիմաստութիւն եւ զգիտութիւն եւ զուրախութիւն։* Ժող. Բ. 26.

15. *Արդարութիւն Տեառն ուրախ առնէ զսիրտս։* Սղմ. ԺԸ. 9.

16. *Արդարն յուրախութեան եւ ի խնդութեան եղիցի։* Առ. ԻԹ. 6.

17. *Ցնծասցեն եւ ուրախ լիցին ի քեզ ամենեքեան՝ որ խնդրեն զքեզ, Տէր։* Սղմ. ԼԹ. 17.

18. *Որ ծառայենն ինձ՝ ցնծասցեն ուրախութեամբ սրտից։* Ես. ԿԵ. 14.

19. *Կեր ուրախութեամբ զհաց քո, եւ արբ սրտիւ զուարճացելով զգինի քո. զի հաճեցաւ Աստուած ընդ գործս քո։* Ժող. Թ. 7.

20. *Յամենայն ի գործս քո լեր կայտառ. եւ ամենայն հիւանդութիւն ոչ պատահեսցէ քեզ։* Սիր. ԼԴ. 27.



21. *Մի տար ի տրտմութիւն զանձն քո։* Սիր. Լ. 22.

22. *Սփոփեա զանձն քո եւ մխիթարեա զսիրտ քո, եւ զտրտմութիւն հեռի արա ի քէն։* Սիր. Լ. 24.

23. *Տրտմութիւն սրտի կորացուցանէ զոյժ։* Սիր. ԼԸ. 19.

24. *Ի տրտմութենէ ելանէ մահ։* Սիր. ԼԸ. 19.

25. *Իբրեւ ցեց՝ հանդերձի, եւ որդն՝ փայտի, նոյնպէս տրտմութիւն վնասակար է սրտի առն։* Առ. ԻԵ. 20.

26. *Ցեց ոսկերաց՝ սիրտ հոգած։* Առ. ԺԴ. 30.

27. *Առն հոգածի ցամաքեն ոսկերք։* Առ. ԺԷ. 22.

28. *Զբազումս եսպան տրտմութիւն, եւ ոչ գոյ օգուտ ի նմանէ։* Սիր. Լ. 25.

29. *Յառաջ քան զժամանակն ածեն ալիս հոգք։* Սիր. Լ. 26.

30. *Սիրտ առն ընդմտատարի տրտմութիւն է անձին իւրոյ։* Առ. ԺԴ. 10.

31. *Չարիք միոյ ժամու մոռացումն առնէ բարեկեցութեան։* Սիր. ԺԱ. 29.

## Դ.

### Զանյն է լաւոր առնել։

1. *Մի զլագմաւ անկցին գործք քո։* Սիր. ԺԱ. 10.

2. *Աւելորդ գործոյ մի լինիր քննող։* Սիր. Գ. 24.

3. *Յաղագս գործոյ՝ որ ոչ քո իցէն, մի գուպարիր։* Սիր. ԺԱ. 9.

4. *Որ ինչ ծանր է քան զքեզ՝ մի բառնար։* Սիր. ԺԳ. 2.

5. *Զդժուարագոյնս քան զքեզ մի խնդրեր։* Սիր. Գ. 22.

6. *Որ ինչ բան քան զքեզ զօրագոյն իցէ՝ մի քններ զնա։* Սիր. Գ. 22.

7. Ուր եւ հայիցիս՝ մի ձգեր ձեռս: Սիր. ԼԴ. 16.

8. Որ ձեռներէց լինի տարապարտուց՝ առանց պատժի ոչ լիցի: Առ. ԺԱ. 21.

9. Որ ձեռնամուխ լինի տարապարտուց՝ ոչ արդարասցի: Առ. ԺԶ. 5.

10. Անձն յանդուգն սատակեսցի: Սիր. ԺԹ. 2.

11. Այր ամպարիշտ յանդգնութեամբ հարկանի ի դիմի: Առ. ԻԱ. 29.

12. Մի յանդուգն անկանիցիս ի մարտ, զի մի յետոյ զղջանայցես: Առ. ԻԵ. 8.

13. Մի անկանիր ի մէջ, գուցէ ի բաց մղիցիս. եւ մի կար ի հեռուստ, զի մի մոռացեալ լինիցիս: Սիր. ԺԳ. 13.

14. Մեծին խոնարհեցո զգլուխ քո: Սիր. Դ. 7.

15. Ի մէջ մեծամեծաց մի զոյգ լինիջիր: Սիր. ԼԵ. 13.

16. Մի ձգտիր, եթէ տնանկ իցես, ընդ մեծատան: Առ. ԻԳ. 4.

17. Որ հարստագոյն քան զքեզ իցէ եւ զօրագոյն՝ մի լինիր նոցա կցորդ: Սիր. ԺԳ. 2.

18. Զի՞նչ հաղորդ իցէ գայլ ընդ գառին, եւ զի՞նչ խաղաղութիւն մեծատան ընդ աղքատի: Սիր. ԺԳ. 21.

19. Զի՞նչ հաղորդ իցէ պոյտն՝ ընդ կաթսայի. սա ընդհարկանի եւ նա փշրի: Սիր. ԺԳ. 3.

20. Ի կոչել զքեզ հզօրին՝ խոյս տաջիր, եւ եւս առաւել կոչեսցէ զքեզ առ ինքն: Սիր. ԺԳ. 12.

21. Մի ի տեղիս մեծամեծաց մտանջիր. զի լաւ իցէ քեզ թէ ասիցէ ոք՝ Ի վեր առ իս մատիր, քան թէ կորանայցես առաջի հզօրի: Առ. ԻԵ. 6. 7.

22. Յորժամ կոչիցէ ոք զքեզ ի հարսանիս կամ ի կոչունս, մի բազմիցիս յառաջին բարձին. գուցէ պատուականագոյն եւս քան զքեզ իցէ կոչեցեալ ի նմանէ. եւ եկեալ որ զքեզն եւ զնա կոչեաց, ասիցէ ցքեզ՝ Տուր սմա տեղի, եւ ապա



սկսանիցիս ամօթով զյետին տեղին ունել: Ղուկ. ԺԴ. 8. 9.

23. Այլ յորժամ կոչիցիս, երթիջիր բազմիջիր ի յետին տեղւոջ. զի յորժամ գայցէ որ կոչեացն զքեզ, ասիցէ ցքեզ՝ Բարեկամ, ի վեր մատիր. յայնժամ եղիցին քեզ փառք առաջի բարձակցացն քոց: Ղուկ. ԺԴ. 10.

## Ե.

### Խորագիտութիւն:

1. Զգոյշ լինիջիր դու, որդեակ, յամենայն գործս քո: Տոբ. Դ. 15.

2. Խորհրդով գործեա զամենայն: Առ. ԼԱ. 3.

3. Առանց խորհրդեան մի ինչ առնիցես, եւ մի յառնելն զղջանար: Սիր. ԼԵ. 24.

4. Ոսկի եւ արծաթ կացուցանեն յոտից վերայ, եւ քան զերկոսին՝ խորհուրդ ընտիր գտանի: Սիր. Խ. 25.

5. Որոց ոչ գոյ առաջնորդութիւն՝ թօթափին իբրեւ զտերեւ. փրկութիւն գոյ ի խորհուրդս բազումս: Առ. ԺԱ. 14.

6. Որպէս քաղաք կործանեալ ի պարսպաց, նոյնպէս եւ այր՝ որ ոչ խորհրդով ինչ գործիցէ: Առ. ԻԵ. 28.

7. Ոյք ունին ընդ քեզ խաղաղութիւն՝ բազումք եղիցին. իսկ խորհրդակից քո՝ մի ի հազարաց: Սիր. Զ. 6.

8. Խորհուրդ յամենայն մարդոյ խնդրեսցես. եւ մի արհամարհեսցես զամենայն խորհուրդս պիտանեաց: Տոբ. Դ. 19.

9. Բազում են բանսարկութիւնք. եւ դու ամենայն բանից մի հաւատար: Սիր. ԺԹ. 15.

10. Որ վաղվաղկոտ է ի հաւատալ, թեթեւ է սրտիւ: Սիր. ԺԹ. 4.

11. Մի հաւատար թշնամւոյ քոյ յաւիտեան.

զի որպէս պղինձ ժանգոտ է, այսպէս եւ չարութիւն նորա: Սիր. ԺԲ. 10.

12. Շրթամբք իւրովք քաղցր լինի թշնամին, եւ ի սրտի իւրում խորհեսցի կործանել զքեզ ի խորխորատ: Սիր. ԺԲ. 15.

13. Լեր դու խրատեալ յամենայն կեանս քո: Տովբ. Դ. 15.

14. Եղերուք խորագէտք իբրեւ զօձս, եւ միամիտք իբրեւ զաղաւնիս: Մատ. ԺԹ. 16.

15. Խորագիտի տեսեալ զչարագործ պատժեալ, հաստատութեամբ խրատէ զանձն: Առ. ԻԲ. 3.

16. Որ ոչ առ զփորձ, սակաւ ինչ գիտէ: Սիր. ԼԱ. 10.

17. Ոչինչ է ի ծածուկ՝ որ ոչ յայտնեսցի, եւ գաղտնի որ ոչ ծանիցի: Ղուկ. ԺԲ. 2.

18. Զոր ինչ աւանդիցես՝ թուով եւ կշռով, եւ տուր եւ առ գրով: Սիր. ԽԲ. 7.

19. Հանդերձ մարդոյ եւ ծաղր երեսաց եւ քայլ ոտից պատմէ զնմանէ: Սիր. ԺԹ. 27.

20. Մորոս ի ծիծաղել բարձրացուցանէ զբարբառ իւր. իսկ այր խորագէտ հազիւ հանդարտ ժպտի: Սիր. ԻԱ. 23.

21. Հաստատեա զբան եւ լեր հաւատարիմ ընդ նմա. եւ յամենայն ժամանակի գտցես զպէտս քո: Սիր. ԻԹ. 3.

22. Որոգայթ է առն վաղվաղել եւ յիւրոց ընչից խոստանալ. թերեւս յետ ուխտելոյն զղջումն լինիցի: Առ. Ի. 25.

23. Եթէ լինիցիս երաշխաւոր բարեկամի քում, մատնեցեր զանձն քո թշնամւոյ: Առ. Զ. 1.

24. Որդւոյ եւ կնոջ, եղբօր եւ բարեկամի մի տացես իշխանութիւն ի վերայ քո ի կեանս քո. եւ մի տար այլում զինչս քո, զի մի զղջացեալ՝ կարօտասցիս նոքօք: Սիր. Լ. 20.

25. Զի լաւ է թէ որդիքն քեւ կարօտասցին, քան թէ դու հայեսցիս ի ձեռս նոցա: Սիր. Լ. 22.



26. Յիշեսջիր զժամանակ սովոյ ի ժամանակ լիութեան, զաղքատութիւն եւ զնեղութիւն՝ յաւուրս մեծութեան: Սիր. ԺԸ. 25.

27. Եթէ բարի առնիցես՝ գիտեա ում առնիցես, եւ եղիցին շնորհք բարեացն քոց: Սիր. ԺԲ. 1.

28. Որ հատուցանէ շնորհս՝ յիշեալ լիցի առ յապայ, եւ ի ժամանակի գայթակղելոյ իւրոյ՝ գտցէ ձեռնկալութիւնս: Սիր. Գ. 34.

29. Յոյս անշնորհակալին իբրեւ զսառն ձմերայնոյ հալեսցի, եւ ծորեսցէ իբրեւ զջուր անպիտան: Իմ. ԺԶ. 29.

## ՕՐԻՆԱԿՔ

### 1.

**Սողոմոն խնդրէ յԱստուծոյ զիմաստութիւն:**

Երեւեցաւ Տէր Սողոմոնի ի քուն գիշերոյ, եւ ասէ. Խնդրեա դու քեզ խնդիր ինչ: Եւ ասէ Սողոմոն. Տէր Աստուած իմ, դու ետուր զծառայ քո փոխանակ Դաւթի հօր իմոյ. եւ ես եմ մանուկ փոքր: Տացես ծառայի քում սիրտ լսելոյ եւ դատելոյ զժողովուրդ քո արդարութեամբ, խելամուտ լինել ի մէջ բարւոյ եւ չարի: Եւ հաճոյ թուեցաւ բանն առաջի Տեառն, զի խնդրեաց Սողոմոն զայն բան: Եւ ասէ ցնա Տէր. Փոխանակ զի խնդրեցեր յինէն զբանդ զայդ, եւ ոչ խնդրեցեր քեզ աւուրս բազումս, եւ ոչ խնդրեցեր քեզ մեծութիւն, եւ ոչ խնդրեցեր զանձինս թշնամեաց քոց. ահա ետու քեզ սիրտ իմաստուն եւ հանճարեղ, իբրեւ զքեզ ոչ ոք եղեւ յառաջ քան զքեզ, եւ յետ քո ոչ ոք յարիցէ նմանող քեզ: Եւ զոր ոչն եւս խնդրեցեր՝ ետու քեզ, զմեծութիւն եւ զփառս:

Գ. Թագ. Գ. 5—13.

### 2.

**Ռոբովամ:**

Խօսեցաւ ամենայն ժողովուրդն ընդ արքային Ռոբովամայ եւ ասեն. Հայր քո ծանրացոյց զանուր

մեր. դու թեթեւացո ի խիստ ծառայութենէ հօր քոյ, եւ ծառայեսցուք քեզ: Եւ ասէ ցնոսա. Երթայք մինչեւ ցերիս աւուրս եւ դարձջիք առ իս: Խորհեցաւ ընդ ծերսն՝ որ կային առաջի Սողոմոնի հօր նորա, մինչ դեռ կենդանի էր, եւ ասէ. Զի՞րդ խորհիք եւ տացուք պատասխանի ընդ ժողովրդեանն: Եւ ասեն. Եթէ յաւուր յայսմիկ անսասցես նոցա եւ խօսեսցիս ընդ նոսա բանս բարիս, եղիցին քեզ ծառայք զամենայն աւուրս: Եթող զխորհուրդ ծերոցն, եւ խորհեցաւ ընդ մանկտին սննդակիցս իւր եւ ասէ ցնոսա. Զի՞նչ տայք խրատ: Եւ ասեն. Այսպէս խօսեսցիս յականջս ժողովրդեանն. Ճկոյթ իմ ստուար է քան զմէջ հօր իմոյ. Հայր իմ եդ ի վերայ ձեր անուր ծանր, եւ ես յաւելից յանուրն ձեր. հայր իմ խրատեաց զձեզ գանիւք, եւ ես խրատեցից զձեզ քքովք: Եկն ամենայն Իսրայէլ առ արքայ Ռոբովամ յաւուրն երրորդի, եւ պատասխանի ետ արքայ խստութեամբ. եթող զխորհուրդս ծերոցն եւ խօսեցաւ ըստ խորհրդեան մանկտւոյն: Պատասխանի ետ ժողովուրդն արքայի եւ ասէ. Դու արածեա զտունն Դաւթի: Եւ գնաց Իսրայէլ ի բնակութիւնս իւր եւ արհամարհեաց զտունն Դաւթի մինչեւ ցայսօր:

Գ. Թագ. ԺԲ. 1—19.

## Գ.

### Եղիազարոս:

Եղիազարոս այր մեծ, ծերացեալ հասակաւ, գեղեցիկ երեսօք, ածեալ գայր ի բերան՝ ստիպէին ուտել խոզենի: Նորա ի մտի եդեալ՝ յանձն առ ընդունել զմահ քաջ անուամբ, քան զկեանս խրդճիւ եւ ընկերաց ստգտանելով: Իսկ այն՝ որ պատրաստեալ եկեալ էին, ինքեանք առ տկարութեան մտացն, առեալ մեկուսի՝ զհաստատեալ միտսն ի հրապոյրս ցոփութեան դարձուցանել ջանային: Յանձն առ, ասեն, զհրաման թագաւորին, եւ քեզ



այլ միս մատուսցուք, զի լուծցես զկարծիսն եւ ի մահուանէդ ապրեսցիս: Նա՝ ըստ գեղեցիկ ի մանկութենէ մինչեւ յաւագոյթ սնդեանն, մանաւանդ առաւել ըստ աստուածագործ սրբութեան օրինադիր կրօնից, արագ արագ առնէր զպատասխանին. Ոչ արժան, ոչ պատշաճ, ասէ, մերոյ չափոյ հասակի՝ կեղծաւորութիւն մտանել ընդ սրբութեան խոստովանութիւն. իցեն բազումք ի մանկտւոյ այտի՝ որ ընդ ակամբ հայիցին, կարծիս ի մտի դնիցեն եւ ասիցեն, եթէ Եղիազարոս իննըսնամեան, հասեալ ի դուռն վախճանի, յայլազգութիւն դարձաւ, եւ նոքա վասն իմ գայթակղեսցին, եւ զայս խիղճ մտաց եւ կեղտ անուն ծերութեանս յաշխարհի թողից: Վասն այսօրիկ քաջութեամբ փոխեցայց յաշխարհէ աստի, զի արժանի իմոյ ծերութեանս երեւեցայց, եւ օրինակ բարեաց եւ առաքինութեան մանկտւոյ թողից: Զայս ամենայն իբրեւ ասէր, ինքնակամ դիմադրաւ կամակար ի վիշտս մահուն եւ տանջանացն դիմէր: Եւ զայս օրինակ յաշխարհէ փոխեցաւ:

Բ. Մակ. Զ. 18—31.

## Դ.

### Հանդերձ հարսանեաց:

Նմանեցաւ արքայութիւն երկնից առն թագաւորի, որ արար հարսանիս որդւոյ իւրում: Առաքեաց զծառայս իւր՝ կոչել զհրաւիրեալսն ի հարսանիս, եւ ոչ կամէին գալ: Դարձեալ առաքեաց այլ ծառայս եւ ասէ. Ասացէք հրաւիրելոցն, ահաւասիկ զճաշ իմ պատրաստեցի, զուարակք իմ եւ պարարակք զենեալ են, եւ ամենայն ինչ պատրաստ է, եկայք ի հարսանիսս: Եւ նոքա յուլացեալ՝ գնացին ոմն յագարակ իւր եւ ոմն ի վաճառ իւր. եւ այլք կալան զծառայս նորա, թշնամանեցին եւ սպանին: Իսկ թագաւորն իբրեւ լուաւ, բարկացաւ եւ առաքեաց զզօրս իւր եւ սա-

տակեաց զապանողսն զայնոսիկ, եւ զքաղաքն նոցա այրեաց։ Յայնժամ ասէ ցծառայս իւր. Հարսանիքս պատրաստ են եւ հրաւիրեալքն չէին արժանի։ Արդ՝ երթայք յանցս ճանապարհաց, եւ զորս միանգամ գտանիցէք, կոչեցէք ի հարսանիսս։ Եւ ելեալ ծառայքն ի ճանապարհս, ժողովեցին զամենեսեան՝ զոր եւ գտին՝ զչարս եւ զբարիս, եւ լցան հարսանիքն բազմականօք։ Եւ մտեալ թագաւորն հայել զբազմականօքն, ետես անդ այր մի՝ որ ոչ էր զգեցեալ հանդերձ հարսանեաց, եւ ասէ ցնա. Ընկեր, զիա՞րդ մտեր այսր, զի ոչ ունէիր հանդերձ հարսանեաց։ Եւ նա պապանձեցաւ։ Յայնժամ ասէ թագաւորն ցսպասաւորսն. Կապեցէք զդորա զոտս եւ զձեռս եւ հանէք զդա ի խաւարն արտաքին, անդ եղիցի լալ եւ կրճել ատամանց։

Մատ. ԻԲ. 2—13.

## 5.

### Դաւիթ եւ մանուկ նորա։

Եհար Տէր զմանուկն եւ հիւանդացաւ։ Խնդրեաց Դաւիթ յԱստուծոյ վասն մանկանն, պահեաց պահս եւ անկաւ ի վերայ գետնոյ։ Եւ յարեան ի վերայ նորա ծառայք տանն՝ յարուցանել զնա. եւ ոչ կամէր յառնել ի գետնոյն, եւ ոչ եկեր ընդ նոսա հաց։ Եւ եղեւ յաւուրն եւթներորդի մեռանել մանկանն. եւ երկեան ծառայքն Դաւթի պատմել նմա։ Ետես Դաւիթ եթէ շշնջեն ծառայք նորա եւ իմացաւ եթէ մեռաւ մանուկն. յարեաւ ի գետնոյն, լուացաւ եւ օծաւ, փոխեաց զհանդերձս իւր, եւ եմուտ ի տունն Աստուծոյ եւ երկիր եպագ նմա. եմուտ ի տուն իւր եւ խնդրեաց հաց ուտել, եւ եդին առաջի նորա հաց եւ եկեր։ Ասեն ցնա ծառայքն իւր. Զի՞նչ է բանդ այդ՝ զոր արարեր վասն մանկանն. մինչ դեռ կենդանին էր, պահէիր եւ լայիր եւ տքնէիր. եւ իբրեւ մեռաւ մանուկն, յարեար կերար եւ արբեր։ Եւ ասէ



Դաւիթ. Մինչ դեռ կենդանի էր մանուկն, պահէի եւ լայի, քանզի ասէի՝ Ո՞ գիտէ, ողորմեսցի Տէր եւ կեցցէ մանուկն։ Արդ որովհետեւ մեռաւ մանուկն, ես ընդէ՞ր պահիցեմ. մի՞թէ կարօ՞ղ իցեմ դարձուցանել զնա այսրէն. ես առ նա երթալոց եմ, եւ նա առ իս ոչ դարձցի։

Բ. Թագ. ԺԲ. 15—23.

## 6.

### Կուսանք իմաստունք եւ յիմարք։

Նմանեսցի արքայութիւն երկնից տասն կուսանաց, որոց առեալ զլապտերս իւրեանց՝ ելին ընդ առաջ փեսային եւ հարսին։ Հինգն ի նոցանէ յիմարք էին, եւ հինգն՝ իմաստունք։ Յիմարքն առին զլապտերսն, եւ ձէթ ընդ իւրեանս ոչ բարձին. իսկ իմաստունքն առին եւ ձէթ ամանօք ընդ լապտերս իւրեանց։ Եւ ի յամել փեսային, նիրհեցին ամենեքեան եւ ի քուն մտին։ Եւ ի մէջ գիշերի եղեւ բարբառ. Ահա փեսայ գայ, արիք ընդ առաջ նորա։ Յայնժամ յարեան ամենայն կուսանքն եւ կազմեցին զլապտերս իւրեանց։ Ասեն յիմարքն ցիմաստունսն. Տուք մեզ յիւղոյդ ձերմէ, զի ահա շիջանին լապտերքս մեր։ Պատասխանի ետուն իմաստունքն եւ ասեն. Գուցէ ոչ իցէ մեզ եւ ձեզ բաւական. այլ երթայք ի վաճառականս եւ գնեսջիք ձեզ։ Իբրեւ նոքա գնացին գնել, եկն փեսայն, եւ պատրաստքն մտին ընդ նմա ի հարսանիսն, եւ փակեցաւ դուռնն։ Յետոյ գան եւ այլ կուսանքն եւ ասեն. Տէր Տէր, բաց մեզ։ Նա պատասխանի ետ եւ ասէ. Ամէն ասեմ ձեզ՝ թէ ոչ գիտեմ զձեզ։

Մատ. ԻԵ. 1—12.

## 7.

### Մովսէս եւ Յոթոր։

Ի վաղիւ անդր նստաւ Մովսէս դատել զժողովուրդն. եւ կայր ամենայն ժողովուրդն շուրջ

զՄովսիսի, յայգուէ մինչեւ ցերեկոյ: Եւ տեսեալ Յոթորայ զամենայն ինչ՝ զոր առնէր ժողովրդեանն, եւ ասէ. Զի՞նչ է բանդ այդ՝ զոր առնես ժողովրդեանդ. ընդէ՞ր դու նստիս միայն, եւ ամենայն ժողովուրդդ կայ շուրջ զքեւ յառաւօտէ մինչեւ ցերեկոյ: Եւ ասէ Մովսէս ցաներն իւր. Քանզի գայ ժողովուրդդ առ իս, խնդրել իրաւունս յԱստուծոյ. յորժամ լինիցի ինչ դոցա հակառակութիւն՝ գան առ իս. եւ ես ընտրեմ ի մէջ իւրաքանչիւր ուրուք, եւ իմացուցանեմ դոցա զհրամանս Աստուծոյ եւ զօրէնս նորա: Եւ ասէ ցնա աներն Մովսիսի. Ոչ է ուղիղ բանդ՝ զոր առնես. անհնարին տանջանօք տանջիս դու եւ ամենայն ժողովուրդդ՝ որ է ընդ քեզ. ծանր է քեզ բանդ այդ. ոչ կարես միայն առնել: Բայց արդ՝ լուր ինձ, եւ տաց քեզ խրատ, եւ եղիցի Աստուած ընդ քեզ. լեր դու ժողովրդեանդ առ ի յԱստուծոյ, եւ տարցիս դու զբանս դոցա առ Աստուած, եւ դիցես դոցա վկայութիւն զհրամանացն Աստուծոյ եւ զօրինաց նորա, եւ ցուցցես դոցա ճանապարհս՝ յորս գնայցեն, եւ զգործս՝ զոր գործիցեն: Եւ դու տես քեզ յամենայն ժողովրդենէդ արս զօրաւորս, աստուածապաշտս, արս արդարակորովս, որ ատիցեն զհպարտութիւն. եւ կացուսցես զնոսա ի վերայ դոցա հազարապետս եւ հարիւրապետս եւ յիսնապետս եւ տասնապետս, եւ դատեսցին զժողովուրդդ յամենայն ժամ, եւ զբան ինչ մեծ առ քեզ հասուսցանիցեն, եւ զփոքր ինչ դատաստան՝ ինքեանք դատեսցին. եւ թեթեւացուսցեն ի քէն, եւ եղիցին քեզ օգնականք: Եթէ զայս բան արասցես, զօրացուսցէ զքեզ Աստուած. եւ կարասցես տոկալ. եւ ամենայն ժողովուրդդ երթիցէ ի տեղի իւր խաղաղութեամբ: Եւ լուաւ Մովսէս ձայնի աներոյն իւրոյ. եւ արար զամենայն՝ որ միանգամ ասաց նմա: Եւ ընտրեաց Մովսէս յամենայն Իսրայելէ արս զօրաւորս, եւ արար զնոսա ի վերայ



նոցա հազարապետս եւ հարիւրապետս եւ յիսնապետս եւ տասնապետս. եւ դատէին զժողովուրդն յամենայն ժամ: Բայց զբան ինչ մեծ հասուցանէին առ Մովսէս. եւ զամենայն բան թեթեւ՝ ինքեանք դատէին:

Ելք. ԺԸ. 13—26.

## 8.

### ԴԱՒԻԹ ԵՒ ԱԲԻԳԵԱ:

Եւ էր այր մի ի Մաօն եւ հօտք իւր ի Կարմեղոս, եւ այրն մեծատուն էր յոյժ. եւ անուն նորա Նաբաղ, եւ անուն կնոջ նորա Աբիգեա: Կին նորա առատ իմաստութեամբ, եւ այրն՝ խիստ եւ չար խորհրդովք: Լուաւ Դաւիթ եթէ կտրէ Նաբաղ զհօտս իւր, առաքեաց մանկունս տասն եւ ասէ. Ելէք ի Կարմեղոս եւ երթայք առ Նաբաղ, հարցէք յանուն իմ զողջոյնէ նորա, եւ ասասջիք. Այսպէս ի սոյն աւուրս ողջ իցես: Լուայ եթէ կտուրք են հօտից քոց. արդ տացես որչափ ինչ եւ գտցէ ձեռն քո ծառայից քոց եւ որդւոյ քում Դաւթի: Եկին մանկունքն եւ խօսեցան ընդ Նաբաղայ: Ընդոստացաւ եւ ետ պատասխանի. Ո՞ Դաւիթ. բազմացեալ են այսօր ծառայք գնացականք իւրաքանչիւր յերեսաց տեառն իւրոյ: Արդ առնուցո՞ւմ զհաց իմ եւ զգինի իմ եւ զզենլիս իմ՝ զոր զենի կտրողաց իմոց պատրուճակս, եւ տայցեմ արանց՝ զորս ոչ գիտիցեմ ուստի իցեն: Դարձան մանկունքն եւ պատմեցին Դաւթի ըստ բանիցն այնոցիկ. եւ ասէ Դաւիթ ցարսն իւր. Ածէք ընդ մէջ իւրաքանչիւր զսուր իւր: Ածին ընդ մէջ այր իւրաքանչիւր զսուսեր իւր, ած ընդ մէջ եւ Դաւիթ զսուր իւր. եւ ելին զհետ Դաւթի իբրեւ արք չորեքարիւր: Եւ Աբիգեայ կնոջ Նաբաղայ պատմեաց մի ոմն ի մանկտւոյ անտի եւ ասէ. Առաքեաց Դաւիթ հրեշտակս յանապատէն օրհնել զտէր մեր, եւ նա խուսեաց ի նոցանէն: Եւ արքն

երախտաւոր էին մեզ յոյժ. իբրեւ զպարիսպ էին մեզ զցայգ եւ զցերեկ՝ զամենայն աւուրս որչափ էաք ընդ նոսա եւ արածէաք զխաշինս։

Աճապարեաց Աբիգեա, առ երկերիւր նկանակ, եւ երկուս ամանս գինւոյ, եւ հինգ ոչխար հասուցեալ, եւ հինգ արդու փոխնդոյ, եւ եդ ի վերայ իշոց, եւ ասէ ցմանկտին իւր. Երթայք յառաջագոյն քան զիս, եւ ես գամ զկնի ձեր։ Եւ ընդ ելանել նորա յէշն եւ ընդ իջանել ընդ զանխուլ լերինն, եւ ահա Դաւիթ եւ արք նորա իջանէին ընդ առաջ նորա, եւ դիպեցաւ նոցա։ Իբրեւ ետես Աբիգեա զԴաւիթ, փութացաւ եւ վազեաց յիշոյն, անկաւ առաջի Դաւթի եւ երկիր եպագ նմա։ Եւ ասէ. Խօսեսցի աղախին քո յականջս քո։ Մի դիցէ տէր իմ զսիրտ իւր ի վերայ Նաբաղայ։ Ես աղախին քո ոչ տեսի զմանկունս քո՝ զոր առաքեցեր։ Եւ արդ առ զօրհնութիւնս զայս՝ զոր եբեր աղախին քո տեառն իմում, եւ տացես մանկտւոյդ՝ որ կան առաջի տեառն իմում։ Եւ ասէ Դաւիթ ցԱբիգեա. Օրհնեալ Տէր Աստուած Իսրայելի՝ որ առաքեաց զքեզ ընդ առաջ իմ, եւ օրհնեալ լիցիս դու՝ որ արգելեր զիս չերթալ յարիւն։ Եւ գնաց Աբիգեա առ Նաբաղ. եւ էր խրախութիւն ի տան նորա, եւ ինքն արբեալ էր յոյժ։ Իբրեւ սթափեցաւ ի գինւոյ անտի, պատմեաց նմա կինն իւր զբանս զայսոսիկ. եւ սիրտ նորա եղեւ իբրեւ զքար եւ մեռաւ։

Ա. Թագ. ԻԵ.

ՀԱՄԱՌՕՏ

# ԲԱՌԱԳԻՐՔ

ՀԱՅԵՐԷՆ

## Ա.

Աբեններ,
Աբեսողոմ,
Աբեսսա,
Աբէլ, } յտ. ան. մարդու։

Աբիգեա, յտ. ան. կնոջ։

Աբիմելէք,
Աբիրոն,
Աբրաամ.
Ագապ, } յտ. ան. մարդու։

Ագահ, ած. տ. արծաթասէր. չափէն աւելի տրկի սէր ունեցող. Թամահքեար։

Ագահեմ, եցի. չ. ագահութիւն ընել. չափէն աւելի խնայելով գործածել։

Ագահութիւն, գ. արծաթսիրութիւն. տրկի չափազանց սէր։

Ագանիմ, գայ, գիր, գուցեալ. ն. հագնիլ. 2. չ. իրիկունը տեղ մը իջնալ, անցընել. ճնալ։

Ագար, յտ. ան. կնոջ։

Ագարակ, աց. գ. արտեր. անդաստան. գեղ. Չիֆթլիք։

Ագուցանեմ, ուցի, գո. ն. հագցընել։

Ագռաւ, ու. գ. ագռաւ. Գարղա։

Ադամ, յտ. ան. մարդու։

Ազատ, աց. տ. ազնուական. 2. ինքնիշխան. կայլի, պարտաւորութեան տակ չեղող։

Ազատութիւն, գ. ազատ ըլլալը. անկախութիւն. անձնիշխանութիւն. գերի, ծառայ չըլլալը. գերութենէ ելլելը, հանելը։

Ազարիա, յտ. ան. մարդու։

Ազգ, աց. գ. ժողովուրդ. ցեղ. տեսակ։

Ազգականութիւն, գ. մէկ ցեղէ կամ տնէ ըլլալը. Խըսըմլըք։

Ազդ լինել, իմացուիլ. յայտնուիլ։

Ազնիւ, նուաց. տ. աղէկ. ընտիր. ազնուական։

—ԴՋ. ապրիս. շատ աղէկ։

Ազնուազգութ, տ. ողորմածութ ունեցող։

Ազնուական, աց. տ. ընտիր ազգէ, ցեղէ. սօյլուտէ։

Ազոխ, ի. գ. ազոխ. չհասած խաղող. Գօրուգ։

Աթոռ, ոյ. գ. նստարան. գահ։

Ալիք, լեաց. գ. ալիք. Դալղա. 2. ճերմակ մազ, մօրուք. ծերութիւն։

Ախորժեմ, եցի. ն. հաճիլ. հաւնիլ. բաղձալ։

Ածեմ, ծի,ած. ն. բերել. տանիլ. վրան բերել. վրան ձգել. գրգռել. պատճառ ըլլալ։

Ականջք, աց. գ. ականջ. լսելիք. լսելու զգայարանք. Գուլագ։

Ակն, կան, կամբ. գ. աչք. 2. յոյս. ակնկալութիւն։

Ակն ածել, ամչնալ. քաշուիլ. վախնալ։

Ակն առնուլ, երեսպաշ-

տութիւն, նկատում ընել. կողմը բռնել:

Ակն ունել, յուսալ. սպասել. ակնկալութիւն, յոյս ունենալ:

Առ ականէ, դրանց. երեսէն. երեսպաշտութեան համար:

Ընդ ակամբ հայել, գէշ աչքով տեսնել. ծուռ նայիլ:

Ակն, կան, կունք. գ. գոհար. (պատուական) քար:

Ակնառութիւն, գ. նկատում. երեսպաշտութիւն. կողմը բռնելը:

Ակօս, ի. գ. ակօս. հողին երեսը հերկելով բացուած հետք, պատառուած:

Ահ, իւ. գ. վախ. երկիւղ:

Զահի հարկանիմ, վախնալ:

Ահա, մ. ահաւասիկ. նայէ:

Ահարկու, ա. ահաւոր. վախցընող. վախնալու:

Ահարոն, յո. ան. մարդու:

Ահաւասիկ, մ. ահա. նայէ:

Ահեակ, եկաց. գ. ա. ձախ. ձախ կողմ, ձեռք. Սօլ:

Ահեղ, եց. ա. ահարկու. վախնալու. վախցընող:

Աղ, իւ. գ. աղ. Թուզ:

Աղախին, խնոյ, խնայք, խնաց. գ. աղախին. ծառայութիւն ընող կին:

Աղաղակ, աւ. գ. գոչում. կանչուըռտելը. բարձր ձայն:

Աղաղակեմ, եցի. չ. պոռալ. կանչել. կանչուըռտել:

Աղաչեմ, եցի. ն. աղաչանք ընել. խնդրել. աղօթք ընել: [Գումրու:

Աղաւնի, նեաց. գ. աղաւնի.

Աղբ, ոյ. գ. կոյ. քակոր. թրիք. Կիւպրէ:

Աղբեւք, եւաց. գ. աղբիւս. աղբի կոյտ. աղտոտ կամ թափուելու բաներուն դրուած տեղը:

Աղբիւր, բեր, բերաց. գ. աղբիւր. ջուր բխող կամ վազող տեղ:

Աղեղն, ղան, ղունք. գ. աղեղ. նետ նետելու գործիք. Եայ:

Աղէ, գչ. հապա, բեր:

Աղի, Աղեք, աղույ, աղեաց. գ. աղիք. փորոտիք. Պաղըրսագ:

Աղիւս, ոց. գ. աղիւս. շէնք շինելու գործածուած հողէ պինդ զանգուած. Թուղլա: [շինել:

Աղիւս արկանել, աղիւս

Աղջիկ, ջկան, ջկունք, ջկանց. գ. աղջիկ. Գըզ. 2. աղախին: [թիւն. կեղտ:

Աղտ, ով. գ. աղտոտու-

Աղտեղի, ղեաւ. ա. աղտոտ. 2. ամչնալու. անվայել:

Աղփանէս. յո. ան. մարդու:

Աղքատ, ի, աց, ից, ով. ա. աղքատ. չքաւոր. տնանկ. կարօտ. Ֆուգարէ:

Աղքատանամ, ացայ. չ. աղքատնալ. ստակը կորսընցընել. պակսութիւն կրել:

Աղքատութիւն, գ. աղքատըլլալը. չքաւորութիւն. տնանկութիւն. կարօտութիւն:

Աղօթք, թից, գ. աղօթք. Աստուծոյ հետ խօսք. աղաչանք. Տուա:

Աղօթս առնել, մատուցանել, Յաղօթս կալ, } աղօթք ընել. աղօթել:

Աճապարեմ, եցի. չ. արտորալ. շուտ ընել:

Աճեմ, եցի. չ. աճիլ. շատնալ. մեծնալ:

Աճեցուցանեմ, ուցի. ն. աճեցընել. շատցընել. մեծցընել:

Աճիւն, իւ. գ. մոխիր. փոշի:

Աճիւնախառն, ա. մոխրով խառն, կէս մրանցած (կրակ):

Ամ, աց. գ. տարի:

Ամի ամի, մ. տարուէ տարի. ամէն տարի:

Ամաղէկ, յո. ան. մարդու եւ ազգի:

Աման, ով. գ. աման. Գապ:



Ամաչեմ, եցի. չ. ամչնալ. խպնիլ:

Ամաչեցուցանեմ, ուցի. ն. ամչցընել. խպնեցընել:

Ամառն, ռան. ռունք. գ. ամառ. Եազ:

Ամարայնի, } նւոյ. գ. ամառուան ատեն, եղանակ:
Ամարանի, }

— մ. ամառը. ամառ ատեն. ամառուան ժամանակ:

Ամբառնամ, բարձի. ն. վեր վերցընել. բարձրացընել:

— բարձայ. չ. վեր ելլել. բարձրանալ:

Ամբաստանութիւն, գ. չարախօսութիւն. գանգատ. տրտունջ:

Ամբարտաւան, ից, աց. ա. հպարտ. փառասէր:

Զամբարտաւանս խօսել, հպարտական խօսքեր խօսիլ:

Ամբարտաւանութիւն, գ. հպարտութիւն. փառասիրութիւն:

Ամբիծ, բծից, բծաց. ա. անարատ. մաքուր. պակասութիւն չունեցող:

Ամբծութիւն, գ. անարատութիւն. անմեղութիւն. մաքրութիւն:

Ամբոխ, իւ. գ. բազմութիւն. շփոթութիւն. աղմուկ:

Ամենակալ, աւ. ա. ամենակարող. ամէն բան ձեռքն ունեցող:

Ամենայն, իւ. ա. ամէն. բոլոր:

Ամենեւին, մ. բոլոր. բոլորովին. ամէն կողմանէ. ամէն կերպով. ամբողջ:

Ամենեքեան, } նեցուն,
Ամենեքին, } ցունց, նեքումբք. գ. ամէնքը. բոլորքը:

Ամէն, մ. ամէն. այնպէս ըլլայ. 2. ստուգիւ. իրաւցընէ:

Ամիս, ամսեան, ամսոց. գ. ամիս. Այ:

Ամղան, գ. զգեստ. վերարկու:

Ամոն, յո. ան. մարդու:

Ամոնացիք. յո. ան. ազգի:

Ամուսին, սնի, սնոյ, սնաց. գ. կարգուած մարդ, կին. էրիկ. կնիկ:

Ամուր, ա. հաստատուն. պինդ. ապահով:

Ամուրք, մրաց. գ. ամուր, ապահով տեղ. բերդ. պարիսպ:

Ամպ, ոց. գ. ամպ. Պուլութ:

Ամպարիշտ, րշտաց. ա. անօրէն. անկրօն. չարագործ:

Ամպարշտութիւն, գ. անօրէնութիւն. անկրօնութիւն:

Ամսօրեայ, րէից. ա. ամսուան մը:

Ամփոփեմ, եցի. ն. ժողովել. հաւաքել. քովն առնուլ. թաղել:

Ամօթ, ով. գ. ամօթ. խիպ. ամչնալու բան. խայտառակութիւն:

Ամօթ առնել, Յամօթ առնել, } ամըչցընել. խայտառակել. խաղք ընել:

Յամօթ լինել, Ամօթ կրել, } ամչնալ. խայտառակիլ:

Զամօթի հարկանիմ. ամըչնալ. խպնիլ:

Ամօթխած, ի. ա. ամչկոտ. պարկեշտ:

Այգ, ուց. գ. առաջին լոյս. առտուան սկիզբը:

Այգեգործ, աց. գ. այգեպան. այգի գործող կամ պահպանող:

Այգեստան, աց. գ. այգիներ:

Այգի, գեաց. գ. այգի. որթի, խաղողի պարտեզ. Պաղ:

Այգուն, մ. առաւօտը ծագելուն պէս. առաւօտանց. շատ կանուխ:

Այդ, այդր. դր. ա. ադ:

Այդպէս, մ. ադ կերպով. ատանկ:

Այդր, մ. ադ տեղը. հոն.

2. դ դիմորոշ յօդին տեղ կը գործածուի։

Այժմ, } մ. հիմայ։
Այժմիկ, }

Այլ, ոց. ա. ուրիշ. մէկալ. տարբեր։

Այլ, շ. հապա։

Այլ ազգ. մ. ուրիշ կերպ. տարբեր։

Այլազգի, գեաց. ա. գ. օտար ազգ. տարբեր ազգէ։

Այլազգութիւն, գ. անհաւատութիւն. հեթանոսութիւն։

Այլակերպիմ, պեցայ. չ. ուրիշ կերպարանք առնուլ. փոխուիլ. ծպտիլ. օտար զգեստ հագնիլ։

Այծ, ից. գ. այծ. քէչէ։

Այծեմնիկ, յու. ան. կնոջ։

Այծիք, ծեաց. գ. այծեր։

Այն, այնր. դր. ա. ան. անիկայ։

Այնչափ, մ. անչափ։

Այնպէս, մ. անանկ. ան կերպով։ [պէս. անանկ։

Այնպիսի, սեաց. ա. այն-

Այո, մ. հա. հրամմերես։

Այպանեմ, եցի. ն. ծաղրել. վրան ծիծաղիլ. արհամարհել։

Այպն առնել, ծաղր ընել։

Այս, այսր. դր. ա. աս. ասիկայ։ [դեւ. սատանայ։

Այս. ոց. գ. ոգի չար.

Այսահարիմ, րեցայ. չ. դիւահարիլ։ [կ'ուզեմ ըսել։

Այս ինքն, շ. այսինքն.

Այսուհետեւ, մ. ասկից ետքը. 2. շ. արդ. ուրեմն. ուստի։

Այսչափ, մ. ասչափ։

Այսպէս, մ. ասանկ. աս կերպով։ [սանկ։

Այսպիսի, մ. այսպէս. ա-

Այսր, մ. հոս. դէպ ի հոս. 2. ս դիմորոշ յօդին տեղ կը գործածուի։

Այսրէն, մ. նորէն. դարձեալ. ետ. հոս. դէպ ի հոս։

Այսօր, մ. այսօր։

Այտի, մ. ասկէ. աս տեղէն. 2. դ դիմորոշ յօդին տեղ կը գործածուի։

Այր, առն. գ. մարդ. էրիկ մարդ. 2. էրիկ. ամուսին։

Այր, ի. գ. անձաւ. քարայր. մաղարա։ [ունեցող։

Այրասէր, ա. էրկանը սէր

Այրեմ, եցի. ն. այրել. կրակ տալ. վառել։

Այրի, րեաց. գ. որբեւայրի. տուլ։

Անագան, մ. ա. ուշ. ուշ հասնող, մնացող։

Անամօթ, ից. ա. ամօթ չունեցող. չամչցող։

Անանիա, յու. ան. մարդու։

Անապակ, աւ. ա. ջուր չխառնուած, անխառն (գինի)։

Անապատ, ից, աց. գ. անշէն. անբնակ. պարապ թողտրուած տեղ։

Անառակ, աց. ա. անամօթ. անկարգ. շռայլ. անկարգութիւն պատճառող։

Անառակութիւն, գ. անամօթութիւն. անկարգութիւն. մսխողութիւն։

Անասուն, սնոց. գ. անասուն. անբան կենդանի. հայվան։

Անարատ, ից. ա. արատ, բիծ, պակասութիւն չունեցող. մաքուր։

— մ. անարատութեամբ. մաքրութեամբ։

Անարատութիւն, գ. սրբութիւն. մաքրութիւն։

Անարգանք, նաց. գ. ամօթ. անպատուութիւն. արհամարհանք. նախատինք։

Անարգեմ, եցի. ն. արհամարհել. բանի տեղ չդնել. նախատել։

Անարգութիւն, գ. անպատուութիւն. նուաստութիւն. խայտառակութիւն։

Անարժան, ից, աց. ա. արժանի չեղող. անվայել. անպատշաճ. անիրաւ։

Անարծաթասէր, ա. ստակ չսիրող. ագահ չեղող։

Անաւագ, աց. ա. տկար. ստորին. խեղճ։



Անգամ, մ. անգամ. հեղ. 2. շ. ալ. իսկ։

Անգիտանամ, ացայ. չ. չգիտնալ. անտեղեակ ըլլալ. չգիտնալով ընել։

Անգոսնեմ, եցի. ն. արհամարհել. բանի տեղ չդնել։ անարգել։ [արտ։

Անդ, ոց. գ. անդաստան.

Անդ, մ. հոն. հոն տեղը. 2. ն դիմորոշ յօդին տեղ կը գործածուի։

Անդադար, ա. դադար, հանգիստ չունեցող. չկեցող։

— մ. առանց դադրելու. միշտ։

Անդեայ, անդեայք, անդեոց. գ. եզեր. կովեր եւ այլն։

Անդէն, մ. հոն. ան տեղը. 2. անմիջապէս. շուտ մը. նոյն ատեն։ [անտեղի։

Անդէպ, ա. անյարմար.

Անդր, մ. հոն. դէպ ի ան տեղը. 2. անդին. մէկալ կողմը. 3. ն դիմորոշ յօդին տեղ կը գործածուի։

Անդրանիկ, անկի, անկան. գ. ա. առջինեկ. առաջին. մեծ։

Անդրանկութիւն, գ. առջինեկութիւն. առջինեկ զաւկին պատիւն ու իրաւունքը։

Անդրէն, մ. նորէն. դարձեալ. 2. նոյն տեղը. դէպ ի հոն տեղը։

Անեղծութիւն, գ. անապականութիւն. անեղծ ու անապական ըլլալը։

Աներ, ոյ. գ. աներ. մէկու մը կնկան հայրը. զոքանչին էրիկը։

Աներեւոյթ, ից. ա. աչքի տակ չինկող. չերեւցող. ծածուկ. անյայտ։

Աներկիւղութիւն. գ. վախ չունենալը. ապահովութիւն. քաջասրտութիւն։

Անզգամ, ա. անմիտ. խօսքի չեկող. չարագործ։

Անզգամութիւն, գ. անմտութիւն. չարութիւն։

Անէծք, նիծից. գ. անէծք. նզովք. լանէթ։

Անիծանեմ, ծի, անէծ. ն. անիծել. նզովել։

Անիծեալ, ա. անիծուած. նզովուած։

Անիրաւ, աց. ա. իրաւանց դէմ. իրաւունք չճանչցող. արդարութեան դէմ գործող։

Անիրաւութիւն, գ. արդարութեան եւ իրաւանց դէմ ըլլալը. արդարութեան եւ իրաւանց դէմ գործք. չարիք. անօրէնութիւն։

Անխրատ, ից. ա. խօսքի չեկող. անկիրթ. ստահակ. խեռ. անմիտ։

Անխրատութիւն, գ. խօսքի չգալը. անկրթութիւն. խեռութիւն. ստահակութիւն։

Անկ է, դէմ. կը վայելէ. կը պատշաճի։

Անկանիմ, կայ, կիր. չ. իյնալ. 2. զրկուիլ. կորսնցնել։

Անկաւ նմա գութ ընդ..., սէր կապեց։

Անկարգութիւն, գ. կարգաւորեալ չըլլալը. անկարգ, անպատշաճ գործ. խառնակութիւն։

Անկիւն, կեանց. գ. անկիւն. կողմ. խորշ. քէօշէ։

Անկողին, ղնաց. գ. անկողին. պառկելու տեղ. թէօշէկ։

Անկումն, կման. գ. իյնալը։

Անհաւատ, ից. ա. գ. հաւատք չունեցող. անկրօն. չհաւատացող. 2. չհաւատացուելու. 3. անհնազանդ. անհաւատարիմ։

Անհաւատամ, տացի. չ. չհաւատալ։

Անհնազանդ, ից. ա. խօսք մտիկ չընող. չհնազանդող։

Անհնազանդութիւն, գ. չհնազանդիլը. խօսք մտիկ չընելը։

Անհնար, ից. ա. անկարելի։

Անհնարին, ա. անկարելի.

չըլլալու. 2. սաստիկ. ծանր. անչափ. չափէ դուրս։

Անհոգ, աց. ա. մ. ապահով. անկասկած. 2. հոգ չընող. անփոյթ. 3. առանց հոգ ընելու։

Անձն, ձին, ձինք. գ. անձ. ինք։

Յանձն առնուլ, վրան առնուլ. հաւանիլ։

Անձնդիւր, ա. անձին դիւրութեան նայող. հանգիստը սիրող։

Անձրեւ, աց. գ. անձրեւ. եաղմուր։ [ոգէտ։

Անմիտ, մտաց. ա. անխելք.

Անյագ, աց. ա. չկշտացող։

Անյայտ, բց. ա. յայտնի չեղող. ծածուկ։

Անյարկ, ա. յարկ չունեցող. տուն տեղ չունեցող։

Աննա, յա. ան. կնոջ։

Աննախանձաւոր, ա. նախանձէ ազատ։

Անշնորհակալ, աց. ա. շնորհակալ չեղող. ապերախտ։

Անոխակալութիւն. գ. ոխ չպահելը. ներողամտութիւն։

Անողորմ, բց. ա. անգութ. առանց ողորմութեան. սաստիկ։

Անոն, յա. ան. մարդու։

Անորդի, դեաց. ա. որդի չունեցող. անզաւակ։

Անուանեմ, եցի. ն. անուն դնել. անունը տալ, կանչել։

Անուն, նուան, նուանք, նուանց. գ. անուն. թ. իսմ։

Անուր, նրոց. գ. օղակ. նուաճելու համար վիզն անցընելու օղ. խալգա։

Անպիտան, բց. ա. անօգուտ. անարգ. ստորին։

Անպտուղ, տղոց. ա. պտուղ չունեցող։

Անսամ, ացի. չ. մտիկ ընել. հնազանդիլ. հաւանիլ. զիջանիլ. համբերել։

Անվարժ, բց. ա. չվարժած. անկիրթ։

Անտառ, աց. գ. անտառ. խիտ խիտ ծառ եղած տեղ. օրման։

Անտես առնել, երեսը չնայիլ. փոյթ չտանիլ. չխնամել։

Անտի, մ. անկէ. հոնկից. 2. Ն դիմորոշ յօդին տեղ կը գործածուի։

Անց, Անցք, բց. գ. անցնելու, անցուդարձի տեղ. 2. դէպք. (գլխէն անցած) պատահարք։

Անցանեմ, անցի, անց. չ. անցնիլ. երթալ. 2. դուրս ելլել. անդին, մէկալ կողմն անցնիլ. 3. դէմ ընել. չըլռնել. 4. գերազանցել։

Անցանել զաւուրբք, ծերանալ. պառաւնալ։

Անցաւոր, աց. ա. անցաւոր. անցնող դարձող. ճամբորդ։

Անցուցանեմ, ուցի. ն. անցընել. 2. (գլխուն չարիք մը) բերել, հանդիպցընել. 3. գերազանցել. 4. վերցընել. հեռացընել. ազատել։

Անօգուտ, ա. օգուտ չունեցող. անպիտան. պարապ. փուճ։

Անօթ, ոց, բց. գ. աման. գործիք. կարասի. զարդ։

Անօրէն, րինաց. ա. օրէնք չունեցող, չպահող. օրինաց դէմ. անիրաւ. ամպարիշտ. անկարգ։

Անօրէնութիւն, գ. օրէնքն արհամարհելը. օրինաց դէմ ընելը. անկարգութիւն. ամպարշտութիւն։

Աշակերտ, աց. գ. աշակերտ. սորվող. ուսանող. հետեւող։

Աշակերտեմ, եցի. ն. աշակերտ ընել. կրթել. սորվեցընել։

Աշխատ առնել, աշխատցընել. յոգնեցընել. նեղութիւն տալ։

Աշխատ լինել, } աշխատիլ. յոգնիլ։
Աշխատիմ, տեցայ. չ. }



Աշխարեմ, եցի. ն. ողբալ. ցաւիլ. զղջալ։

Աշխարհ, աց. գ. աշխարհք. երկինք եւ երկիր. տիւնեա. 2. գաւառ. երկիր. կողմ։

Աշխարհագիր, գ. երկրի մը բնակիչները գրի առնուլը։

Աշտարակ, աց. գ. աշտարակ. բարձր ու նեղ ամուր շէնք մը. գուլէ։

Աշտարակագործութիւն, գ. (Բաբելոնի) աշտարակին շինուիլը։

Աչք, աց. գ. աչք. տեսութեան զգայարանք. կէօզ։

Աչս արձակել, աչք տընկել. սաստիկ բաղձալ։

Ըստ աչս, աչքին երեւցածին համեմատ։

Ապա, մ. ետքը. վերջը։

Ապա թէ, շ. բայց թէ որ. իսկ եթէ։

Ապա թէ ոչ, շ. իսկ եթէ չէ. չէ նէ։

Ապա ուրեմն, շ. ուրեմն. ուստի. անանկ է նէ։

Ապականեմ, եցի. ն. աւրել. գէշցընել. պղծել. կործանել։

Ապականութիւն, գ. աւրելը կամ աւրուիլը. գէշութիւն. պղծութիւն։

Ապաշխարութիւն, գ. զղջում. ցաւ։

Ապաստան լինել, ապաւինիլ. վստահիլ. ըլթիճա։

Ապարանջան, աց. գ. ապարանջան. թեւի զարդ. պիլէզիկ։

Ապարանք, բց. աց. գ. ընդարձակ տուն. պալատ։

Ապաւէն, աւինաց. գ. ապաստան. ապաստանելու տեղ. պահապան. օգնական։

Ապաքէն, շ. ստուգիւ. արդարեւ. արդեօք։

Ո՞չ ապաքէն, չէ՞ մի. մի թէ ո՞չ։

Ապիրատ, բց. ա. անիրաւ. անօրէն. չար. անզգամ. անպատշաճ։

Ապիրատութիւն, գ. անիրաւութիւն. անօրէնութիւն. չարութիւն. անպատշաճութիւն։

Ապխտեմ, եցի. ն. ապուխտ ընել. միսը չորցընել։

Ապուխտ, գ. չորցուցած միս։

Ապստամբ, աց. գ. ոտք ելլող. գլուխ քաշող։

Ապստամբեմ, եցի. չ. ոտք ելլել. գլուխ քաշել։

Ապրեցուցանեմ, ուցի. ն. ազատել. պահել։

Ապրիմ, րեցայ. չ. ազատիլ. պահուիլ. մնալ։

Աջ, ոյ, ու. ա. գ. աջ ձեռքը, կողմը. սաղ։

Աջողեմ, Աջողիմ, տ. Յաջողեմ. Յաջողիմ։

Առ, իւ. գ. առնուլը. 2. թշնամիէն առնուած բան. աւար. կողոպուտ։

Առ, նխ. դէպ ի. 2. քովը. 3. համար. 4. ժամանակը. կողմը։

Առակ, աց. գ. վէպ. շինծու պատմութիւն. հանելուկ. 2. նմանութիւն. օրինակ։ [զատ. ինք իրմէ։

Առանձին, ա. մ. մինակ.

Առանց, նխ. առանց. ան...։

Առաջք, գ. առջեւի կողմը, մասը։

Առաջի, նխ. առջեւը. դիմացը. առջեւէն։

Առաջին, ջնում, ջնմէ, ջնոց. ա. առաջին. մէկերորդ. սկզբնական. յառաջուան։

Առաջնորդ, ա. գ. առաջին. 2. ճամբայ ցուցընող. տանող. գլխաւոր. սորվեցընող. պատճառ եղող։

Առաջնորդութիւն, գ. առաջնորդ ըլլալը կամ առաջնորդուիլը. ճամբայ ցուցընելը. գլխաւորութիւն. մեծութիւն։

Առասան, աց, բց. գ. չուան։

Առասպելք, աց. գ. սուտ խօսք. շինծու պատմութիւն. առակ. վճռական խօսք. հանելուկ։

Առաստաղ, աց. գ. շէնքի մը ծածկը. յարկ. առիք։
Առատ, աց. ա. շատ. լե-ցուն. յորդ. 2. առատա-ձեռն։ [Թեամբ. շատ շատ։
Առատապէս. մ. առատու-
Առատութիւն, գ. շատու-թիւն. 2. առատաձեռնու-թիւն։ [լի. շատ։
Առաւել, ա. նխ. մ. շ. աւե-
Առաւելում, ելայ. չ. աւել-նալ. աճիլ. շատնալ. մեծնալ։
Առաւօտ, ուց. գ. առտու. օրուան սկիզբը կամ առաջին մասը։
Ընդ առաւօտն, } առտուան
Ընդ առաւօտս, } դէմ. առ-տուանց։
Առաքեմ, եցի. ն. խաւրել։
Առաքինութիւն, գ. քա-ջութիւն. բարեգործութիւն. աղէկութիւն. դժուար, գո-վելի գործք. 2. ընթացք. վար-մունք։
Առ ի մէ՞, մ. ինչո՞ւ։
Առիւծ, ուց. գ. առիւծ. [illegible]։
Առ հասարակ, մ. ընդհան-րապէս. ամէնը մէկտեղ։
Առ յապա, ետքինը. ետեւ-էն գալիքը. ետքը։ [գործող։
Առնելի, ելեաց. ա. ընող.
Առնեմ, արարի. ն. ընել. շինել. ստեղծել. պատճառել. յառաջ բերել. դնել. սահմա-նել. 2. ստանալ. ձեռք բերել. 3. դարձընել. փոխել. 4. ընել տալ. (խաւրել) տալ։
Առնել պտուղ, պտուղ բե-րել, տալ։
Առնում, առի. ն. առնուլ. բռնել. ձեռք բերել. 2. սկը-սիլ. ձեռք զարնել. 3. բերել։
— ռայ. կ. առնուիլ։
Առոգութիւն, գ. կորճու-թիւն. ոյժ։
Առողջ, աց,ից, ոց. ա. հիւանդ չեղող. անցաւ. աղէկ։
Առողջութիւն, գ. առող-ջութիւն. առողջ ըլլալը. հիւանդ չըլլալը. աղէկու-թիւն։

Ասեմ, սացի. ն. ըսել. զրուցել։ [զրցուիլ։
Ասիմ, սացայ. կ. չ. ըսուիլ.
Ասորի, յտ. ան. ազգի։
Ասորիք, յտ. ան. ազգի եւ գաւառի։
Ասպատակ, աց. ա. արշաւ-անք. յարձակում. յափշտա-կութիւն ընելու համար վրան երթալը։
Ասպատակաւոր, աց. գ. ասպատակ ընող։
Ասպատակեմ, եցի. չ. աս-պատակ ընել. յարձակիլ։
Ասպատակութիւն, գ. աս-պատակ ընելը. յարձակում։
Ասպար, աց. գ. վահան։
Աստ, } մ. հոս. հոս
Աստէն, } տեղը։
Աստարտէ, յտ. ան. չաս-տուածուհւոյ։ [ղէն։
Աստի, մ. հոսկից. աս տե-
Աստի եւ անտի, մ. մէկ դին, մէկալ դին. երկու կողմէն։
Աստղ, տեղ, եղաց, եղօք, եղեք. գ. աստղ. [illegible]։
Աստուած, տուծոյ. գ. Աս-տուած։
Աստուած, ուածոց. գ. սուտ աստուած. չաստուած. դէք. կուռք։
Աստուածագործ, ա. Աս-տուծմէ շինուած, գրուած։
Աստուածապաշտ,ից. ա. զԱստուած պաշտող. բարե-պաշտ։
Աստուածեղէն, ղինաց. ա. աստուածային. Աստուծոյ վերաբերեալ։
Աստուածութիւն, գ. Աս-տուծոյ էութիւնը, բնու-թիւնը. Աստուած։
Աստուածպաշտութիւն, գ. զԱստուած պաշտելը. բարե-պաշտութիւն։
Ար, սու. գ. բուրդ։
Ատամն, տաման, մունք. գ. ակռայ։
Ատեամ, եցի. ն. ատել. չսիրել. գարշիլ։
Ատեան, տենից. գ. դա-տաստանի տեղ. բեմ. հրա-



պարակ. դատաստան. դա-տաւորաց ժողովք։
Ատելի, ելեաց. ա. ատելի. ատուած. ատելու արժանի. չսիրուելու. 2. ատող. թըշ-նամի։
Ատելութիւն, գ. ատելը. չսիրելը. թշնամութիւն. հա-կառակութիւն։
Ատեմ, տ. Ատեամ։
Արագ, ունք. ա. մ. շուտ։
Արագ արագ, շուտ շուտ. շուտ մը. շուտով. անմիջապէս։
Արածեմ, եցի. ն. արածել. անասունները ճարակել տալ. հովուել. առաջնորդել. 2. ե-տեւէն երթալ. բանի մը ե-տեւէ ըլլալ։
Արարած, ոց. ա. ստեղ-ծուած. արարչագործուած։
Արարիչ, րչաց. ա. ստեղ-ծող. ստեղծագործող. շինող։
Արարչագործ, ա. ստեղծող։
Արբեալ, ա. խմած. գինով։
Արբենամ, եցայ. չ. գի-նովնալ։
Արբեցող, աց. ա. շատ խմող. գինեմոլ. գինով։
Արբեցութիւն, գ. գինո-վութիւն։
Արբի, տ. Ըմպեմ։
Արբշիռ, շռաց. ա. գ. խմող. գինեւէր. գինով։
Արբուցանեմ, ուցի. ն. խմցընել. ծարաւն անցընել. ջրել։ [(մօր)։
Արգանդ, ի գ. փոր, ծոց
Արգելում, ելի. ն. թող չտալ. արգելք ըլլալ. խա-փանել։ [փանուիլ։
— այ. կ. արգելուիլ. խա-
Արդ, մ. շ. հիմայ. 2. արդ. իսկ արդ. որովհետեւ. ուստի։
Արդար, ոց. ա. շիտակ. ի-րաւունք սիրող. ստոյգ. ան-մեղ. իրաւացի։
Արդարակորով, ա. արդա-րութեամբ վարուող, մտա-ծող։
Արդարանամ, ացայ. չ. ար-դար ըլլալ. մեղքէն ազատիլ. անմեղ գտնուիլ։

Արդարեւ, մ. ստուգիւ. ի-րաւցընէ։
Արդարութիւն, գ. արդար ըլլալը. մեղք կամ յանցանք չունենալը. իրաւունք. 2. ար-դարութիւն. առաքինու-թեան, իրաւանց դէմ բան չընելը։
Արդեւք, մ. արդեօք. միթէ. 2. ճտուգիւ. իրաւցընէ։
Արդիւնք, դեանց. գ. երկրի բերք, պտուղ. 2. գործք։
Արդեամբք, գործքով. իրօք։
Արդու, աց. գ (ցորենի, ալիւրի) չափ մը։
Արեգակն, ական, կունք, կանց. գ. արեւ։
Արեւ, ու. գ. արեւ. արե-գական լոյսը։
Արեւելք, լից. գ. արեւուն ելած կողմը, տեղը. արեւ-ելք։
Արեւմուտք, մտից. գ. ա-րեւմուտք. արեւին մարը մտած տեղը, կողմը. 2. ա-րեւին մարը մտնելը. իրիկուն։
Արթուն, թնոց. ա. ար-թուն. քնոյ մէջ չեղող. հըր-կող. խելքը գլուխը։
Արժան,ից. ա. գ. իրաւա-ցի. պատշաճ. 2. արժանաւ-որութիւն։
Արժան է, պատշաճ է. կը վայելէ։
Արժանի, անւոյ, անեաց. ա. արժանաւոր. արժանաւ-որութիւն ունեցող. [illegible]։
Ըստ արժանեաց, արժա-նաւորութեան համեմատ. արժանի եղածին չափ։
Արժեմ, եցի, չ. արժել. (այսչափ կամ այնչափ) ըլլալ. գին ունենալ. [illegible]։
Արի, տ. Յառնել։
Արիւն, րեան. գ. արիւն. [illegible]. 2. սպանութիւն. կո-տորած։
Այր արեանց, արիւնկզակ. արիւն թափող։
Արծաթ, ոյ. գ. արծաթ. [illegible]. 2. ստակ. 3. ար-ծաթի։

Արծաթեղէն, ղինաց. ա. գ. արծաթէ. արծաթի։

Արծաթի, ա. գ. արծաթէ. արծաթեղէն. արծաթ (ստակ)։

Արծաթսիրութիւն, գ. ստակ սիրելը. ագահութիւն։

Արծուի, ծուեաց. գ. արծիւ. գարթալ։

Արկանեմ, արկի. ն. ձգել. նետել. բռնել. դնել. խոթել. 2. վրան առնուլ. հագուիլ. 3. լեցնել. թափել։

Արկանիմ, կ. հագուիլ. վրան առնուլ։

Արկղ, կեղաց. գ. սնտուկ. [գանձանակ։

Արհամարհեմ, եցի. ն. բանի տեղ չդնել. անարգել. չսեպել. վար զարնել։

Արհամարհող, աց. ա. անարգող. բանի տեղ չդնող. արհամարհոտ. քամահող։

Արձակ, աց. ա. ազատ. չկապուած. թող տրուած. 2. համարձակ. յանդուգն. 3. ընդարձակ. մեծ։

Արձակեմ, եցի. ն. ազատել. ազատ թողուլ. կապը քակել. թող տալ. 2. խաւրել. ճամբայ հանել. մէկդի ընել. 3. նետել. երկնցնել։

Արձան, աց. գ. կոթող. յիշատակի համար կանգնուած մեծ քար. 2. դիք. կուռք։

Արմատ, ոց. գ. արմատ. ծառի կամ տնկի մը հողի տակի մասերը. քէօք. 2. սկիզբ. պատճառ. առիթ։

Արջ, ուց. գ. արջ. այը։

Արջառ, ոց. գ. արջառ. եզ. կով. ցուլ եւ այլն։

Արտ, ոց. գ. անդ. անդաստան. ագարակ։

Արտաշէս, յտ. ան. մարդու։

Արտասուք, սուաց. գ. արցունք. լացք։

Արտաքին, քնոց. ա. դրսի. օտար. հեռաւոր։

Արտաքոյ, նխ. մ. դուրս. դուրսը. դրսէն։ [դուրսը։

Արտաքս, մ. նխ. դուրս.

Արքայ, ից. գ. թագաւոր։

Արքայութիւն, գ. թագաւորութիւն. տէրութիւն. իշխանութիւն. 2. արքայութիւն։

Արքունի, ունեաց. ա. գ. թագաւորական։

Արքունուստ, } մ. թագաւորին
Ցարքունուստ, } կողմանէ. թագաւորական գանձէն։

Արօտ, ից. գ. արածելու, ճարակելու տեղ. դաշտ. խոտ։

Արօտական, աց. ա. ճարակող. արածուող։

Արօր, ով, իւ. գ. արօր. երկիրը հերկելու, մշակելու գործիք. սաբան։

Աւագ, աց. ա. մեծ. գլխաւոր. երեւելի. իշխան։

Աւագոյթ, գ. աւագութիւն. ծերութիւն։

Աւազ, ոց. գ. աւազ. խիստ մանր խիճ. փոշի. գում։

Աւազակ, աց. գ. յայտնի գողութիւն ընող. ելուզակ. եօլ քեսիճի։

Աւազան, աց. գ. աւազան. ջուր դնելու, լուացուելու մեծ աման կամ տեղ. հավուզ։

Աւազուտ, ա. աւազոտ. աւազ ունեցող. աւազով խառն։

Աւանդ, ից. գ. աւանդ. ետ առնելու պայմանաւ մէկու մը քով դրուած բան. էմանէթ։

Աւանդեմ, եցի. ն. աւանդ տալ. յանձնել. 2. սորվեցնել։

Աւասիկ, մ. ահաւասիկ։

Աւասիկ եմ, հոս եմ. պատրաստ եմ. ինչ կը հրամայէք։

Աւար, աց. գ. թշնամիէն առնուած, յափշտակուած բաները. աւ. կողոպուտ։

Աւարեմ, եցի. ն. առողջացընել. ցաւը, հիւանդութիւնն անցընել։

Աւելի, մ. առաւել. եւել։

Աւելորդ, աց. ա. գ. աւելորդ, հարկաւոր չեղող. անօգուտ. փուճ։



Աւետիք, ետեաց. գ. աւետիս. ուրախական լուր։

Երկիր աւետեաց, գ. աւետեաց երկիր. Իսրայելացւոց խոստացուած երկիրը։

Աւերակ, աց. գ. քանդուած, կործանուած տեղ. կործանուած տեղւոյ մը մնացորդները. վէրանէ։

Աւերեմ, եցի. ն. կործանել. քանդել. ապականել. աւրել։

Աւսիդ, յտ. ան. գաւառի։

Ափ, ով. գ. ափ. բուռ. ձեռքին ներսի կողմը։

Ափն, փին, փանց. գ. ջրին քովը. ծովի, գետի եզր։

Աքաար, }
Աքար, } յտ. ան. մարդու։
Աքիմելէք, }

Աքովը, յտ. ան. տեղւոյ։

## Բ.

Բարախեմ, եցի. ն. չ. իրարու զարնել։

Բաբելացիք, յտ. ան. ազգի։

Բաբելոն, յտ. ան. քաղաքի։

Բազմագութ, ա. շատ գթած. մեծ գութ ունեցող։

Բազմաժամանակեայ, ա. շատ տեւնուան. երկայն ապրող, դիմացող. հին։

Բազմական, աց. գ. սեղան նստող. հրաւիրուած. մէկտեղ նստող. 2. սեղան. կոչունք. 3. նստարան. աթոռ։

Բազմամեայ, ա. շատ տարուան. հին։

Բազմանամ, ացայ. չ. շատնալ. աւելնալ. լեցուիլ։

Բազմապատիկ, ա. շատ կերպ. տեսակ տեսակ. 2. ընտիր. պատուական։

Բազմացուցանեմ, ուցի. ն. շատցընել. աւելցընել։

Բազմիմ, մեցայ. չ. նստիլ. հանգչիլ։

Բազմութիւն, գ. շատութիւն. շատուորութիւն. առատութիւն. 2. ամբոխ շատ մարդիկ։

Բազուկ, զկաց. գ. թեւ։

Բազում, զմի, զմաց. ա. մ. շատ։

Բազումողորմ, ա. խիստ ողորմած. մեծ ողորմութիւն ունեցող։

Բաղթուէլ, յտ. ան. մարդու։

Բաժակ, աց. գ. գաւաթ։

Բաժանեմ, եցի. ն. բաժնել. բաշխել. 2. զատել. որոշել. զանազանել։

Բաժանիմ, կ. իրենց մէջ բաժնել. բաժանորդ ըլլալ։

Բաժին, ժնից. գ. մասն։

Բախեմ, եցի. ն. զարնել. ծեծել։

Բահաղ, յտ. ան. կուռքի։

Բաղբաղայք, ից. գ. պատճառանք. շինծու պատճառ. ամբաստանութիւն։

Բաղտասար, յտ. ան. մարդու։

Բամբասանք, սանաց. գ. չարախօսութիւն. մեղադրանք. նախատական խօսք։

Բամբասեմ, եցի. ն. մէկու մը վրայ դէշ խօսիլ. վար զարնել. անուն աւրել. մեղադրել։

Բամբասող. աց. ա. բամբասանք ընող. դէշ խօսող։

Բայց, չ. սակայն. այլ։

Բան, ից. գ. խօսք. 2. բան. ինչ. իր։

Ի բանի առնել, համոզել. հաւանեցընել։

Բանակ, աց. գ. զօրաց բազմութիւնը կամ կենալու տեղը. օրդու։

Բանամ, բացի. ն. բանալ. աչմագ։

— ցայ. կ. բացուիլ։

Բանջար, ոց, աց. գ. կանաչեղէն. խոտեղէն։

Բանջարեղէն, ա. կանաչեղէնէ շինած։

Բանսարկու, աց. ա. խօսք խառնող. քսութիւն ընող. 2. սատանայ։

Բանսարկութիւն, գ. խօսք խառնելը. քսութիւն. չարախօսութիւն։

Բանտ, ից. գ. բանտ. յանցաւորները պահելու տեղ. [illegible]։

Բաշխեմ, եցի. Ն. բաժնել։

Բառնամ, բարձի, բարձ. Ն. վերցնել. տանիլ. շալկել. 2. մէջտեղէն վերցնել. պակսեցնել. ջնջել. 3. բարձրացնել։

Բարբառ, ոյ. գ. խօսք. ձայն. 2. լեզու։

Բարեբարոյ, ից. ա. ազնիւ բարք, աղէկ բնութիւն ունեցող. քաղցրաբարոյ։

Բարեկամ, աց. գ. ա. բարեկամ. մտերիմ. սիրելի. [illegible]։

Բարեկամութիւն, գ. բարեկամութիւն. իրարու սէր ու ընտանութիւն ունենալը։

Բարեկեցութիւն, գ. զբօսանքով ապրիլը. կերուխում։

Բարեմոյն, ա. առողջ. կայտառ։

Բարեպաշտ, ից. ա. աստուածապաշտ. Աստուծոյ աղէկ ծառայութիւն ընող. արդար. առաքինի։

Բարերար, աց. ա. բարիք ընող. մարդասէր։

Բարի, րւոյ, րեաց. ա. գ. լաւ. աղէկ. ընտիր. ազնիւ. 2. աղէկութիւն. աղէկ բան. բարի գործք։

Բարկանամ, ացայ. Չ. սրդողիլ. նեղանալ։

Բարկասիրտ, սրտաց. ա. բարկացող. ցասկոտ։

Բարկացող, աց. ա. ցասկոտ. ով որ շատ կամ շուտ կը բարկանայ։

Բարկացուցանեմ, ուցի. Ն. բարկացնել. սրդողցնել. նեղացնել։

Բարկութիւն, գ. սրդողիլը. նեղանալը. ցասումն։

Բարձ, ից. գ. գլխու բարձ. [illegible]. 2. նստարան. գահ. 3. պատիւ. աստիճան։

Բարձք, ձից. գ. սրունք. զիստ. մարմնոյն կէս մէջքէն վարի կողմը։

Բարձակից, կցաց. գ. սեղանակից. մէկտեղ սեղան նստող. մի եւ նոյն պաշտօնը կամ աստիճանն ունեցող։

Բարձաւանդակ, ա. գ. բարձր դիրք ունեցող. բարձր տեղ։

Բարձր, ձու, ձունք, ձանց. ա. բարձր. մեծ. երեւելի. [illegible]։

Բարձր ի գլուխ, բարձր [գլխով։

Բարձր առնել, բարձրացնել. վեր վերցնել. 2. օրհնել. փառաբանել։

Բարձունք, գ. բարձր տեղ. լերանց գլուխները. երկինք։

Բարձրանամ, ացայ. Չ. բարձրանալ. վեր ելլել. 2. շատնալ. մեծնալ. յառաջ երթալ. զօրանալ. 3. հպարտանալ։

Բարձրացուցանեմ, ուցի. Ն. բարձրացնել. վեր վերցնել. վեր հանել. 2. պատուել. մեծցնել. փառաւորել. 3. օրհնել. փառաբանել։

Բարձրեալ, ելոյ. ա. գ. բարձր. ամենաբարձր. Աստուած։

Բարութիւն, գ. աղէկութիւն. լաւութիւն. 2. բարիք. բարի բաներ. ինչք. ստացուածք։

Բարւոք, ոց. մ. ա. աղէկ. լաւ. չիտակ։

Բարք, րուց. գ. բնութիւն. բնաւորութիւն. վարք. ընթացք. սովորութիւն։

Բաց, ա. բաց. գոց չեղող. [illegible]։

— Նխ. զատ. ուրիշ։

Ի բաց, տ. ի գրին կարգը։

Բացէ ի բաց, մ. հեռուէն. հեռու։

Ի Բացեայ, մ. հեռու։

Բացական, ա. հեռու. հեռաւոր. մօտ չեղող։

Ի բացուստ, մ. հեռուէն։

Բաւ, գ. վախճան. վերջ. սահման. ծայր։



Բաւական, աց. ա. հերիք. չափաւոր. 2. կրցող. 3. արժանաւոր. պատշաճ. յարմար։

Բաւեմ, եցի. Չ. բաւական ըլլալ. 2. կարենալ. կարող ըլլալ. 3. համբերել. սպասել. 4. տեւել. հասնիլ։

Բաւուրիմ, Բեթանիա, Բեթղեհեմ, } յտ. ան. քաղաքի։

Բեկանեմ, բեկի. Ն. կոտրել. կտոր կտոր ընել. կտրել. մաս մաս ընել. 2. սիրտը կոտրել. վախցնել։

Բեկանիմ, Չ. կոտրիլ. սիրտը կոտրիլ։

Բեկոր, ի. գ. կոտրած բանի մը կտորը։

Բեկումն, կման. գ. կոտրելը. կոտրիլը. խորտակում. 2. կոտրած. ջարդ. 3. կսկիծ. ցաւ։

Բեհեզ, ոց. գ. շատ բարակ ու ազնիւ կտաւ։

Բեռն, րին, ռանց. գ. բեռ. ծանրութիւն. [illegible]։

Բերան, ոց. գ. բերան. [illegible]։

Բերեմ, րի. Ն. բերել. վերցնել. կրել։

Բերկրիմ, րեցայ. Չ. ուրախանալ։

Բէլ, յտ. ան. մարդու։

Բժիշկ, ժշկաց. գ. բժիշկ. [illegible]։

Բժշկեմ, եցի. Ն. դեղ ընել. բժշկել. առողջացնել։

Բժշկութիւն, գ. բժշկելը. բժշկուիլը. առողջացնելը. առողջանալը։

Բիբ, բբաց. գ. բիբ. աչաց բիբը. աչքին մէջտեղի պզտիկ ծակը. [illegible]։

Բիծ, բծոյ, բծից. գ. արատ. աղտ. պակասութիւն։

Բիւր, ուց, ոց. ա. գ. տասը հազար. 2. բազմաթիւ. անթիւ. անհամար. շատ։

Բիւրապատիկ, ա. մ. բիւր անգամ. շատ կերպ. շատ աւելի։

Բլուր, լրոց. գ. լեռնակ. [պզտիկ լեռ։

Բղաստոս, յտ. ան. մարդու։

Բղխեմ, եցի. Ն. բխել. վազցնել. 2. բուսցնել. յառաջ բերել. դուրս տալ։

— Չ. վազել. 2. բուսնիլ. ելլել. յառաջ գալ։

Բնակեմ, եցի, Բնակիմ, եցայ, } Չ. բնակիլ. մնալ. կենալ։

Բնակիչ, կչաց. գ. տեղ մը բնակող, կեցող. հաստատուն բնակութիւն ունեցող։

Բնակութիւն, գ. բնակարան. բնակելու տեղ. տուն տեղ. տուն. դադար։

Բնաւ, ից. ա. բոլոր. ամէն։

— մ. Չ. ապաքէն. բոլորովին. գլխովին. իսկ. ալ։

Բնութիւն, գ. էութիւն. իսկութիւն. բուն ինչ ըլլալը. յատկութիւն։

Բոկ, ա. մ. բոպիկ. ոտքը բաց. մերկ ոտքով։

Բողոքեմ, եցի. Ն. գանգատել. տրտնջել. ամբաստանել. իրաւունք խնդրել։

Բոոս, յտ. ան. մարդու։

Բով, ոյ, աց, ուց. գ. հալոց. քուրայ. մետաղ հալեցնելու բուռ։

Բորբոքիմ, քեցայ. Չ. բռընկիլ. վառիլ. այրիլ։

Բորոտ, ա. բորոտած. քոսոտ. [illegible]։

Բորոտիմ, տեցայ. Չ. բորոտնալ. բորոտութեան մէջ իյնալ. քոսոտնալ։

Բորոտութիւն, գ. քոսոտութիւն. բորոտ ըլլալը. [illegible]։

Բոց, ով. գ. բոց. ճրագին կամ կրակին վրայէն վեր բարձրացող լուսաւոր օդը. [illegible]։

Բուն, բնոյ, բնից. գ. տընկին կամ ծառին կոճղը. կոթուն. կոթ. 2. սկիզբը. արմատ. հիմ. պատճառ։

— ա. բուն. բնական. ի բնէ կամ բնութենէ եղած. էական. իրական։

Բուռն, բռան, բռամբ. գ

տ. բուռ. ափ. ձեռք. 2. իշխանութիւն. բռնութիւն. անիրաւութիւն. 3. զօրաւոր. սաստիկ. խիստ. իշխան. տիրող. բռնաւոր:

— լինել, բռնանալ. բռնութիւն, անիրաւութիւն ընել. զրկանք ընել:

— հարկանել, բռնել. ձեռք զարնել. սկսիլ:

Բուսանիմ, սայ. չ. բուսնիլ. ծլիլ. աճիլ. ծագիլ. յառաջ գալ. սկսիլ:

Բուսուցանեմ, ուցի. ն. բուսցնել. յառաջ բերել. պատճառել:

Բուրուառ, աց. գ. բուրվառ. եկեղեցւոյ մէջ խունկ տալու գործիք:

Բռեմ, եցի. ն. կիրով ճերմկցնել. ծեփել. պատանա, [illegible]:

Բռնադատեմ, եցի. ն. ստիպել. հարկադրել. բռնութեամբ գործել տալ:

Բռնանամ, ացայ. չ. չափազանց զօրանալ. բռնաւորութիւն ընել. հարստահարել:

Բռնաւոր, աց. տ. բռնութեամբ, խստութեամբ տիրող. բռնակալութիւն ընող. սաստիկ. զօրաւոր:

Բրդեմ, եցի. ն. բրդել. ջարդել. փշրել:

Ի բարկութիւն բրդիմ, բարկանալ:

Բրեմ, եցի. ն. փորել. ծակել:

## Գ.

Գաբայէլ, } յա. ան. մարդու:
Գաբրիէլ, }

Գագաթն, աթան, աթանց. գ. գլուխ:

Գադ, յա. ան. մարդու:

Գազան, աց. գ. վայրենի, պատառող անասուն:

Գազանաբեկ, տ. գազանէն կերուած կամ սպանուած:

Գալիլեա, յա. ան. գաւառի:

Գալիլեացիք, Գալիլեայի բնակիչները:

Գալուստ, լստեան գ. գալը:

Գաղաադ, յա. ան. գաւառի ու լեռան:

Գաղտ, մ. նխ. գաղտնի. ծածուկ:

Գաղտագնաց լինել, գաղտուկ ձգել երթալ. փախչիլ:

Գաղտնի, տնւոյ, նեաց. տ. մ. գաղտուկ. ծածուկ:

Գաղտնիք, նեաց. գ. գաղտնի բաներ. խորհուրդ:

Գամ, եկի, եկ. չ. գալ. 2. փոխուիլ. ըլլալ. դառնալ. 3. զբաղիլ. պատահիլ. բանի մը ետեւէ ըլլալ. գործել. սիրել. սէր ունենալ. սիրով վառուիլ:

Գայթակղիմ, եցայ. չ. սահիլ. գլորիլ. 2. գէշ օրինակ առնուլ:

Գայթակղութիւն, գ. իյնալը. արգելք. չար օրինակ. մեղքի պատճառ:

Գայթեմ, եցի. չ. սահիլ. սխալիլ. իյնալ:

Գայի, յա. ան. քաղաքի:

Գայլ, իւ. գ. բերանը դնելու սանձանքի գործիք:

Գայլ, ոց. գ. գայլ. գուրթ:

Գան, ից. գ. ծեծ. զարնելը:

— ըմպել, ծեծ ուտել:

Գանձ, ուց. ից. գ. գանձ. շատ ստակ. հարստութիւն. խազինէ. 2. գանձարան:

Գանձս գնել, գանձել. գանձ, ինչք ժողվել:

Գանձանակ, աց. գ. ստակ դնելու, ձգելու արկղ, պահարան:

Գանձարան, աց. գ. գանձատուն. գանձ պահելու տեղ:

Գանձեմ, եցի. ն. գանձ ժողվել. շատ հարստութիւն դիզել. հաւաքել:

Գառն, ռին, ռինք, ռանց. գ. գառնուկ. ոչխարի ձագ. գուզու:



Գարի, գարւոյ. գ. գարի. արփա:

Գարիզին, յա. ան. լեռան:

Գարշելի, ելեաց. տ. գ. զզուելու. պիղծ. զազիր. 2. կուռք. չաստուած:

Գարշիմ, շեցայ. չ. զզուիլ. գանիլ. զզուշանալ:

Գարշութիւն, գ. պղծութիւն. զազրութիւն. աղտոտութիւն. գանելու բան:

Գաւազան, աց. գ. ցուպ. բարակ փայտ. ձող. չըպուգ:

Գաւիթ, աւթի. գ. բակ:

Գգուեմ, եցի. ն. փայփայել. շոյել. խնամել:

Գեդէոն, } յա. ան. մարդու:
Գեեզի, }

Գեհեն, ենի. գ. դժոխք:

Գեղարդն, դանց. գ. նիզակ. տէգ:

Գեղեցիկ, ցկի. ցկաց. տ. աղուոր. վայելուչ. սիրուն. աղէկ. ընտիր. ազնիւ:

Գեղեցկութիւն, գ. աղուորութիւն. վայելչութիւն. լաւութիւն. պատուականութիւն:

Գետ, ոց. գ. գետ. ծով թափուող վազուն ջուր. չայ:

Գետին, գետնի. գ. գետին. երկրին երեսը. հող:

Գերեզման, աց. գ. գերեզման. մարդ թաղելու կամ թաղուած տեղ. մէզար:

Գերեմ, եցի. ն. գերի ընել, բռնել, տանիլ:

Գերեվար, աց. տ. գերի բռնող, տանող:

Գերի, րեաց. գ. գերի. թշնամւոյ ձեռքը կամ ստրկութեան մէջ ինկած մարդ. էսիր:

— վարել, գերի բռնել, տանիլ:

Գերծում, ծի. ն. մազն ածիլել կամ կտրել:

Գերութիւն, գ. գերի ըլլալը. ստրկութիւն. գերիներ. գերեաց բազմութիւն:

Գէշ, գիշոյ. գ. մեռած մարմին. դի. սատակ:

Գէջ գէջ, մ. կտոր կտոր. պատառ պատառ. բզիկ բզիկ:

Գէտ, գիտաց, տից. տ. մոգ. կախարդ. սուտ մարգարէ:

Գթած, ի. տ. գութ ունեցող. ողորմած. բարեգութ. ներողամիտ:

Գթամ, ացի. չ. գութ ունենալ. ողորմիլ. խղճալ. խնայել:

Գթեմ, եցի. չ. սահիլ. սկրթիլ. իյնալ. մոլորիլ. յանցանք գործել:

Գթութիւն, գ. գութ. գթածութիւն. ողորմածութիւն. մարդասիրութիւն:

Գին, գնոց. գ. արժէք. արժողութիւն. 2. գնելը:

Գինդ, գնդաց. գ. գինդ. ականջի զարդ. քիւփէ:

Գիներբուք, ուաց. գ. գինի խմելը. կերուխում. խնճոյք. կոչունք:

Գինի, նեաց. գ. գինի. շէրապ:

Ընդ գինիս մտանել, շատ խմել. գինւով զուարթանալ:

Գիշեր, աց. գ. գիշեր. օրուան մութ մասը. կէճէ:

Գիշերի, մ. գիշերանց. գիշեր ատեն. գիշերը:

Գիտեմ, տացի. ն. գիտնալ. ճանչնալ. տեղեկութիւն ունենալ. 2. կարող ըլլալ. 3. ամուսնական հաղորդակցութիւն ունենալ:

Գիտութիւն, գ. գիտնալը. տեղեկութիւն. հմտութիւն. ուսում:

Գիր, գրոց. գ. գիր. նշանագիր. գրուածք. նամակ. թուղթ. հրովարտակ. 2. գիրք. մատեան:

Գիրկք, գրկաց. գ. գիրկ. ծոց. գոգ:

Գիրկս արկանել, գրկել. փաթթուիլ. ողջագուրել:

Գիւղ, ից. գ. գեղ. քէօյ:

Գլխապարտ, տ. մահապարտ. մահու արժանի:

Գլխատեմ, եցի. ն. գլուխը կտրել:

Գլխարկեալ, ա. մ. գլուխը վար կախած։

Գլխաւոր, ած. ա. գլուխ եղող. գլուխ կեցող. մեծ. երեւելի. նշանաւոր։

Գլխաւորեմ, եցի. ն. գլուխ հանել. լմընցընել։

Գլորեմ, եցի. ն. գլտորել. վար ձգել. կործանել։

Գլորիմ, րեցայ. չ. գլտորիլ. վար իյնալ. կործանիլ։

Գլորումն, րման. գ. գլտորիլը. իյնալը. կործանում։

Գլուխ, գլխոյ. գ. գլուխ. գագաթ. պաշ. 2. սկիզբ. ծայր. ծագ. 3. իշխան. գըլխաւոր։

Գնամ, ացի. չ. երթալ. քալել. պտըտիլ. անցնիլ. 2. վարուիլ. կենցաղավարիլ։

Գնաց, տ. Գնացք։

Գնացական, աց. ա. գացող. ճամբորդ. փախստական։

Գնացք, ացից. գ. երթալը. ընթացք. չու. անցք. ճամբայ. 2. վարք. վարմունք. կենցաղավարութիւն։

Գնդակ, աց. գ. պզտիկ գունդ. կլոր զանգուած մը։

Գնեմ, եցի. ն. գնել. ստըկով, ծախու առնուլ։

Գոգ, ոց. գ. ծոց. գիրկ։

Գոհանամ, ացայ. ն. գոհութիւն տալ. շնորհակալ ըլլալ։

Գող, ոց. գ. գող. ուրիշին ինչքն անոր կամքին դէմ գաղտ առնող. խըրսըզ։

Գողանամ, ացայ. ն. գողնալ. գողութիւն ընել։

Գողիադ, յտ. ան. մարդու։

Գողութիւն, գ. գողնալը. գող ըլլալը. գողօնք. գողցուած բան։

Գողունի, ունեաց. ա. գողցուած. գաղտնի առնուած։

Գոմոր, յտ. ան. քաղաքի.

Գոմորացիք, Գոմորայ բնակիչները։ [կայ. կը գտնուի. է։

Գոյ, գոն, գուցէ. պկս. բ.

Գոյ, ից. գ. եղողը. որն որ կայ. էակ. գոյակ։

Գոյին չափ, բոլոր ունեցածը չունեցածը։

Գոյն, գունոց. գ. գոյն. երանգ. ներկ. րէնկ։

Գոնէ, շղ. գէթ։

Գոչեմ, եցի. չ. պոռալ. կանչել. աղաղակել. կանչըռտել։

Գոչումն, չման, գ. աղաղակ. պոռալը. ձայն։

Գովեմ, եցի. ն. գովութիւն տալ. ներբողել. խօսքով փառաւորել։

Գովութիւն, գ. գովեստ. պատուելու, փառաւորելու խօսք. յարգանք. մէթհ։

Գործ, ոց. գ. գործք. ըրածը. գործողութիւն. աշխատանք. պաշտօն։

Գործատեաց, ա. գործել չսիրող. ծոյլ։

Գործելի, ելեաց. ա. գործող. ընող. շինող։

Գործեմ, եցի. ն. գործել. ընել. բանիլ. աշխատիլ. մշակել։

Գործօն, ից. ա. գործող. ընող. բանող. գործաւէր։

Գուբ, գբոց. գ. խորունկ տեղ. փոս. վիհ։

Գութ, գթոյ. գ. գթութիւն. ողորմածութիւն. սէր։

Գումարեմ, եցի. ն. ժողվել. դիզել. կուտել։

Գումարիմ, րեցայ. չ. կռուիլ. պատերազմի պատրաստուիլ։

Գունդ, գնդաց. գ. բազմութիւն. զօրք։

Գուպարիմ, րեցայ. չ. կռուիլ։

Գուցէ, մ. գուցէ. չըլլայ որ։

Գտանեմ, տի. ն. գտնել. պուլմագ։

Գտանել շնորհս, աչքը մտնել. հաճելի, սիրելի ըլլալ։

Գտանիմ, տայ. ի. չ. գըտնուիլ. ըլլալ. երեւնալ։

Գրաստ, ուց. գ. բեռ կրող անասուն. էշ. ձի։

Գրգռեմ, եցի. ն. գրգիռ տալ. տաքցընել. գրգռել։



Գրեմ, եցի. ն. գրել. գրի տակ ձգել. 2. համարիլ. տալ. ընծայել. ենթադրել։

## Դ.

Դա, դորա. դր. ած. ատիկա։ [դադրիլ. հանգչիլ։

Դադարեմ, եցի. չ. կենալ.

Դադարք, րաց. գ. կենալու, հանգչելու տեղ. բնակարան։

Դաթան, յտ. ան. մարդու։

Դալար, ի, ոց. ա. կանաչ. թարմ. կակուղ. նոր. տաք։

Դահեկան, աց. գ. ստակ մը. ստակ. դրամ։

Դահիճ, հճաց, գ. դահիճ. մահապարտները մեռցընող. ճէլլատ. 2. չարչարող. տանջող։

Դահճապետ, աց. գ. դահիճներուն գլուխը։ [ղաքի։

Դամասկոս, յտ. ան. քա-

Դանդաղեմ, եցի. } չ.
Դանդաղիմ, ղեցայ. } ծանր շարժիլ. անտընալ. ետ մնալ. ուշանալ. գործել չուզել։

Դանիէլ, յտ. ան. մարդու։

Դաշնաւոր, աց. ա. դաշնակից. մէկտեղ դաշինք դրած, միաբանած։

Դաշտ, աց. գ. դաշտ. շիտակ եւ ընդարձակ տեղ. խոտ բուսած գետին։

Դառնամ, դարձայ. չ. ետ կամ նորէն գալ, երթալ. 2. ետ կենալ. հեռանալ. 3. փոխուիլ. ուրիշ բան ըլլալ։ [պով. սաստիկ ցաւով։

Դառնապէս, մ. դառն կըր-

Դառնացուցանեմ, ուցի. ն. լեղիցընել. 2. վշտացընել. սրդողցընել։

Դառնութիւն, գ. լեղիութիւն. 2. նեղութիւն. վիշտ։

Դաստակերտ, աց. գ. կալուածք. ագարակ. սեպհական շինուած։

Դատ, ից. գ. դատաստան. դատաստանի տակ ինկած խնդիր. իրաւունք։

— առնել, դատաստան կտրել. իրաւունք ընել։

Դատապարտեմ, եցի. ն. վճիռ տալ որ յանցաւոր է. յանցաւոր համարիլ։

Դատաստան, աց. գ. դատաստան. իրաւանց վրայ քննութիւն կամ որոշում. իրաւունք։

Դատարկ, աց. ա. պարապ. փուճ. անգործ. անօգուտ։

Դատարկութիւն, գ. պարապութիւն. անգործութիւն. ծուլութիւն։

Դատաւոր, աց. գ. դատաւոր. դատաստան ընելու պաշտօն ունեցող. իրաւունք կտրող։

Դատիմ, տեցայ. ն. դատաստան ընել. վճիռ տալ. համարիլ։

Դարան, աց. գ. բան պահելու տեղ. արկղ. 2. որոգայթ։

— գործել, } որոգայթ
Դարանակալ } դնել. նենգ-
լինել, } գութիւն
ընել։

Դարեհ, յտ. ան. մարդու։

Դարձեալ, մ. նորէն. կըրկին, երկրորդ անգամ. մէյ մ'ալ։

Դարձուցանեմ, ուցի. ն. դարձընել. ետ բերել կամ խրկել. 2. ուրիշ բանի փոխել։

Դարման, ոց. ից. գ. ճար. հնարք. միջոց. հոգ. դեղ. 2. ուտելիք. պէտք։

— տանել, } հոգալ.
Դարմանեմ, } խնամել.
եցի. ն. } դարմանել։

Դաւիթ, յտ. ան. մարդու։

Դդմենի, ենւոյ, ենեաց. գ. դդումի տունկ. քապաք ֆիտանը։

Դեգերանք, անաց. գ. կենալը. զբաղիլը։

Դեղ, ոց. գ. դեղ. առողջութեան համար գործածուած միջոց. իլաճ։ [դրամ։

Դենար, ի. գ. տասնոց.

Դեւ, դիւաց. գ. ոգի չար. սատանայ։

Դէմ դնել, դիմել. դէպ ի մէկ կողմն երթալու սկսիլ։

Ի դիմի հարկանիմ, դիմացն ելլել. դէմ դնել. զարնուիլ։

Դէմք, դիմաց. գ. երես. կերպարանք. 2. կողմ. դի։

Դէպ լինել, դիպիլ. պատահիլ. հանդիպիլ։

Դժնիկ, նկաց. գ. դժնիկ. բարակ փշերով տերեւներ ունեցող տունկ մը։

Դժոխք, խոց. գ. դժոխք. ճէհէննէմ։

Դժուարագոյն, գունաց. ա. շատ, աւելի դժուար։

Դժուարին, ա. դժուար. աշխատալի. ծանր. խիստ։

Դիակն, կանց. գ. դի. մեռելի մարմին։

Դիեցուցանեմ, ուցի. ն. կաթ տալ։

Դիզանեմ, դիզի. ն. դիզել. վրայէ վրայ դնել. կուտել։

Դիմագրաւ, մ. քաջութեամբ. ախոյանի պէս. արիաբար։

Դիմեմ, եցի. չ. դէպ ի մէկ կողմն երթալու սկսիլ. յառաջանալ. յարձակիլ։

Դիպիմ, պեցայ. չ. հանդիպիլ. պատահիլ։

Դիտեմ, եցի. ն. միտ դնել. մտադրութեամբ նայիլ. զննել. աչքէ անցընել. լրտեսել։

Դիւրութիւն, գ. հանգստութիւն. անգործութիւն. զուարճութիւն։

Դկղաթ, Տիգրիս գետը։

Դնեմ, եդի, դիր. ն. դնել. հաստատել. ընել. 2. ենթադրել։

Դնել ի մտի, միտքը դնել. մտքին մէջ հաստատել. որոշել։

Դնել վկայութիւն, վկայել. վկայութեամբ հաստատել։

Դնիմ, եդայ. չ. ըլլալ. կենալ. 2. ինք իրեն դնել. առնուլ։

Դովէկ, յտ. ան. մարդու։

Դու, քո. դր. դուն։

Դուռն, դրանց, դրաց. գ. դուռ. գափը։

Դուստր, դստեր, աց. գ. աղջիկ։

Դպիր, դպրաց. գ. դրագիր. կարդացող. գրագէտ։

Դպրապետ, աց. գ. դպիրներու գլուխ. ատենադպիր։

Դպրութիւն, գ. գրագիտութիւն. ուսում. գիտութիւն։

Դրախտ, ից, աց. գ. պարտէզ. ծառնոց. 2. երկրաւոր դրախտ. արքայութիւն։

Դրացի, ացեաց. գ. դրացի. քովի տունը կամ մօտ բնակող. սահմանակից. մերձաւոր։

## Ե.

Եբրայեցի, յտ. ան. ազգի։

Եգիպտացիք, յտ. ան. ազգի։

Եգիպտոս, յտ. ան. գաւառի։

Եզն, զին, զանց. գ. եզ. առջարին արուն. էօքիւզ։

Եզր, զերք, զերաց. գ. ծայր. ճոթ. վերջ. ափն։

Եթէ, չ. եթէ. թէ որ. 2. թէ, թէ. 3. որ։

Եթէ ոչ, թէ որ չ (տաս). 2. բայց եթէ. բայց միայն։

Եթէովպացի, յտ. ան. ազգի։

Ելանեմ, ելի. չ. ելլել. 2. ծագիլ. ծնանիլ. բխիլ. 3. տարածուիլ. հռչակուիլ. դուրս գալ կամ երթալ. 4. ըլլալ. դառնալ. 5. վրան ելլել. հեծնալ. նստիլ։

Ելդադ. յտ. ան. մարդու։

Եկբատանք, յտ. ան. քաղաքի։

Եկեղեցի, եցեաց. գ. եկեղեցի. հաւատացելոց ժողով. քրիստոնէից տաճար. աստուածային պաշտաման տեղ. (ժամ)։



Եկի, տ. Գամ։

Եղբայր, բօր, բարց. գ. եղբայր. գարտաշ։

Եղբայրասէր, սիրաց. ա. եղբայրը կամ ընկերը սիրող։

Եղբայրսիրութիւն, գ. եղբայրը կամ ընկերը սիրելը. ընկերսիրութիւն։

Եղբօրորդի, դւոց. գ. եղբօրն որդին։

Եղեւին, եւնոյ. } գ. մայր
Եղեւնափայտ, ի. } ծառ. տէրվէ։

Եղիա,
Եղիաբ,
Եղիազարոս, } յտ. ան. մարդու։
Եղիմեղէք,
Եղիսէէ,

Եղունգն, ղնգանց. գ. եղունգ. Տըրնագ։

Եղջիւր, ջեր, ջերաց. գ. եղջիւր. պօյնուզ։

Եղջեր, եղջիւրէ շինուած, եղջերեայ (փող)։

Եմ, եղէ. էօլ. բ. ըլլալ։

Ես, իմ, ինձ. դր. ես։

Յիս, ինծի (նայէ, գթա). շնորհք ըրէ։

Եսաւ, յտ. ան. մարդու։

Երազ, ոց. գ. երազ. քնոյ մէջ մարդուն միտքն եկած ցնորքները, խորհուրդները. տիւշ։

Երախտաւոր, աց. ա. բարերար. աղէկութիւն ընող։

Երանեալ, ելոց. ա. երանելի. երջանիկ։

Երանելի, լեաց. երանի տալու արժանի։

Երանի, ձյ. երանելի է ան որ. երնէկ։

Երաշխաւոր, աց. ա. ուրիշին տեղ ինք զինքը պարտաւորող. քէֆիլ։

Երաշխէպք, գ. վիշտ. տառապանք. վէրք. ապէք։

Երաշտ, ի. գ. ա. ջրոյ պակսութիւն. չորութիւն. 2. չոր. ցամաք։ [նակ։

Երբ, մ. երբ. որ ժամա-

Երբեք, մ. երբեմն. ատեն մը. ատենով։

Ոչ —, երբեք չ... ամենեւին ոչ. բնաւ։

Երգ, ոց. գ. երգ. եղանակաւոր խօսք. կանչելու, կանչուած բան. խաղ։

Երդմնեցուցանեմ, ուցի. ն. երդուընցընել. երդում ընել տալ։

Երդնում, երդուայ, չ. երդում ընել. երդուըննալ։

Երդումն, դման. գ. երդում. եէմին։

Երեկ, } գ. իրիկուն։
Երեկոյ, ի. }

Ընդերեկս, } մ. իրիկուան դէմ։
Ընդերեկոյս, }

Երեսուն, երեսնից. ա. երեսուն. երեք անգամ տասը։

Երեսք, սաց. գ. երես. կերպարանք. վրայի, առջեւի կողմը. առջեւը։

Երերիմ, րեցայ. չ. դողդողալ. շարժիլ. երթալ գալ. թափառիլ։

Երեւելի, ելեաց. ա. երեւցող. աչքի տակ ինկող. 2. անուանի. նշանաւոր. փառաւոր. մեծ։

Երեւիմ, եւեցայ. չ. երեւնալ. տեսնուիլ։ [րեք։

Երեք, երից, երիւք. ա. ե-

Երեքեան, երեցունց. գ. երեքն ալ։

Երեքկին, ա. երեքպատիկ. երեք կարգ. երեք անգամ։

Երեքկնեմ, եցի. ն. երեք անգամ կրկնել. երեք հեղ ըսել, ընել։

Երէց, րիցու, րիցունք, րիցանց. ա. մեծագոյն. ծերագոյն. հնագոյն. գլխաւոր։

Երթամ, չոգայ, երթ, չոգ. չ. երթալ. ճամբայ ընել. շարժիլ. կիտմէք։

Երիկամունք, մանց. գ. երիկամ. սիրտ. սրտին մէջի գաղտնիքը. պէօպրէք։

Երիվար, աց. գ. ձի։

Երիտասարդ, աց. գ. պատանի. կորիճ։

Երիտասարդական, ա. երիտասարդի վերաբերեալ։

Երէքօվ, յտ. ան. քաղաքի։

Երկաթի, թեաց. ա. երկաթէ. երկաթեղէն։

Երկայն, ից. ա. երկայն. կարճին հակառակը. տեւական։

Երկայնակեաց, կեցաց. ա. երկայն ապրող։

— լինել, երկայն ապրիլ։

Երկայնամիտ, մտաց. ա. համբերող. լայն սիրտ ունեցող. ներող. հեզ։

— լինել,
Երկայնամտեմ, եցի. չ. } համբերել։

Երկայնմտութիւն, գ. համբերութիւն. ներողամտութիւն։

Երկայնութիւն, գ. երկայնքը. դէպ ի երկայնքն եղած տարածութիւնը. հեռաւորութիւն. երկայն ըլլալը, տեւելը։

Երկան, աց. գ. աղօրիք. ջաղացք. երկանի կամ աղալու քար. տէյիրմէն։

Երկդրամեան, մենի. գ. երկու դրամ արժող ստակ։

Երկերիւր, ոց. ա. երկու հարիւր։

Երկին, կնի, երկնից. գ. երկինք. կէօք։

Երկիր, կրի. գ. երկիր. հող. գետին. աշխարհք. գաւառ. հայրենիք. եէր։

Երկիր պագանեմ, պագի. ն. երկրպագութիւն ընել. գետինն իյնալով կամ ծունկով պաշտել, պատիւ ընել։

Երկիցս, մ. երկու, երկրորդ անգամ։

Երկիւղ, իւ. գ. վախ. ակնածութիւն. երկչոտութիւն։

Երկիւղած, աց. ա. Աստուծմէ վախցող. բարեպաշտ. բարի։

Երկխօս, ից. ա. երկու կերպ լեզու բանեցնող. նենգաւոր. խաբեբայ։

Երկմիտ, մտաց. ա. տարակուսող. թերահաւատ. խարդախ։

Երկնաւոր, աց. ա. երկնային. երկինքն եղող կամ երկինքի վերաբերող։

Երկնչիմ, կեայ. կեր. չ. վախնալ։

Երկոտասան, ից. ա. տասուերկու։

Երկու, կուց, կոքումբք, երկուք. ա. երկու։

Երկունք, կանց. գ. տղաբերքի ցաւ. 2. վախ. վիշտ. ցաւ։

Երկոքեան, } կոցունց. ա.
Երկոքին, } գ. երկուքն ալ։

Երկսայրի, ա. երկու բերնով, երկու կողմն ալ կտրող (սուր)։

Երկրորդ, աց. ա. մ. երկրորդ։

Երկրորդեմ, եցի. ն. կրկնել. երկրորդ անգամ ըսել, ընել։

Երուսաղէմ, յտ. ան. քաղաքի։

Երրորդ, աց. ա. մ. երրորդ. 2. երրորդ մասը. երեքին մէկը։

Եւ, շ. եւ. ու. 2. ալ։

Ե՛ւ... եւ, թէ... թէ։

Եւա, յտ. ան. կնոջ։

Եւեթ. մ. միայն. լոկ։

Եւթանեքեան, } նեցունց.
Եւթանեքին, } ա. գ. եօթն ալ։

Եւթն, թանց, ա. եօթը։

Եւթներորդ, աց. ա. եօթներորդ։

Եւթնպատիկ, ա. մ. եօթն անգամ աւելի. եօթը հեղ կրկնուած։

Եւս, շ. մ. ալ. ալ աւելի։

Եփեմ, եցի. ն. եփել. պիշիրմէք։

Եփրեմ, յտ. ան. մարդու։

Եօթն, տ. Եւթն։

## Զ.

Զազրութիւն, գ. աղտոտութիւն. պղծութիւն. անվայել գործք կամ խօսք։



Զակքէոս, յտ. ան. մարդու։

Զայրագնիմ, նեցայ.
Զայրանամ, ացայ. } չ. բարկանալ. սրդողիլ. նեղանալ. կատղիլ։

Զայրացող, ա. բարկացող. ցասկոտ։

Զայրացուցանեմ, ուցի. ն. բարկացընել. սրդողցընել. նեղացընել։

Զանխուլ, ա. գ. մ. ծածուկ. գաղտնի. 2. ծածուկ, անյայտ տեղ։

Զանց առնել, անցնիլ երթալ. հոգ չընել. փոյթ չտանիլ. թողուլ։

Զառաջաւոր, աց. ա. առջեւը դրուած։

Զառ ի վեր, ի. ա. գ. դար վեր. դար վեր տեղ. դէպ ի վեր։

Զատանեմ, տի. ն. զատել. բաժնել. ընտրել. որոշել։

Զատանիմ, տայ. չ. զատուիլ. բաժնուիլ։

Զատիկ, տկաց. գ. զատիկ։

Զատուցանեմ, տ. Զատանեմ։

Զարա, յտ. ան. մարդու։

Զարդ, ուց. գ. զարդ. զարդարանք. պաճուճանք։

Զարդարեմ, եցի. ն. զարդարել. զարդերով շտկել. աղուորցընել. պաճուճել։

Զարթնում, թեայ. չ. արթննալ. քնէն ելլել. խելքը գլուխը գալ։

Զարհուրեցուցանեմ, ուցի. ն. վախցընել. ահու դողու մէջ ձգել։

Զարհուրիմ, րեցայ. չ. վախնալ. սարսափիլ. ահու դողու մէջ իյնալ։

Զարմանալի, ւոյ, լեաց. ա. զարմանք պատճառող. սքանչելի. խելքէ դուրս։

Զարմանալիք, լեաց. գ. զարմանալու բան. սքանչելիք. հրաշք։

Զարմանամ, ացայ. չ. զարմանալ. սքանչանալ. ապշիլ. զարմանքէն ինք իրմէ ելլել։

Զաւակ, աց. գ. զաւակ. որդի. տղաք. սերունդ. մէկէ մը յառաջ եկած մարդիկ։

Զբօսանիմ, սայ. չ. զբօսնուլ. զբօսանք ընել. զուարճանալ. պտըտելու ելլել. 2. զբաղիլ. միտքը ցրուիլ։

Զբօսանք, անաց. գ. զուարճութիւն. հանգիստ. 2. հոգ. զբաղում. 3. ալեք. ալէկոծութիւն։

Զգաստ, ից. ա. խելքը գլուխը. արթուն. մտադիր. զգուշաւոր. չափաւոր. պարկեշտ։

Զգաստանամ, ացայ. չ. խելքը գլուխը գալ. ինք իրեն գալ. ինք զինքը ժողվել. արթննալ. զգուշանալ։

Զգաստացուցանեմ, ուցի. ն. խելքը գլուխը բերել. կարգի բերել։

Զգենում, գեցայ. ն. հագնիլ. վրան առնուլ։

Զգեցուցանեմ, ուցի. ն. հագցընել։

Զգնամ, ացի. չ. պտըտիլ. երթալ գալ. ժուռ գալ։

Զգոյշ լինել, կալ,
Զգուշանամ, ացայ. չ. } զգուշանալ. զգոյշ կենալ. զգուշութիւն ընել. միտ դնել։

Զգուշութիւն, գ. զգոյշ կենալը. մտադրութիւն. պահելու, չկորսընցընելու . . . փոյթ. ապահովութիւն. ճըշդութիւն։

Զգօնութիւն, գ. իմաստութիւն. խոհեմութիւն. խելք. հանճար։

Զենլիք, լեաց. գ. ուտելու կամ զոհ ընելու համար զենած, մորթուած անասուն։

Զենում, նի. ն. մորթել. զոհել։

Զերծանիմ, ծայ. չ. ազատիլ. փախչիլ. պրծիլ. ձեռքէ ելլել։

Զի, շ. մ. վասն զի. ինչու

որ. որովհետեւ. 2. որպէս զի. 3. որ. թէ. եթէ:

Զի՞, ա. գ. ի՞նչ. ի՞նչ բան:

Զի՞, մ. } ինչո՞ւ. ինչո՞ւ
Զի՞ է զի, } համար:

Զիա՞րդ, մ. ի՞նչպէս. ի՞նչ կերպով:

Զինուոր, աց. գ. զէնք կրող. զօրական. պատերազմող:

Զինուորիմ, րեցայ. չ. զինուոր ըլլալ. զէնք առնուլ:

Զի՞նչ, դէր. ա. ի՞նչ. ի՞նչ բան. ո՞ր. ո՞ր բան:

Զլանամ, ացայ. ն. չտալ. զրկել. յափշտակել. կողոպտել. անիրաւութիւն ընել:

Զկնի, } նխ. մ. ետեւէն.
Զհետ, } ետքը. ետեւի կողմանէ:

Զհետ երթալ, ելանել, լինել, ետեւէն երթալ. հետեւիլ. ետեւէն իյնալ. հալածել:

Զղջանամ, ացայ. չ. զղջալ. յանցանքին կամ մեղքին վրայ ցաւիլ. միտքը փոխել. ցաւիլ:

Զղջումն, ջման. գ. զղջում. ցաւ. միտքը փոխելը:

Զոհ, ից. գ. պատարագ. ողջակէզ. Աստուծոյ պատուոյն համար սպաննուած անասուն. գուրպան:

Զոհեմ, եցի. ն. զոհ ընել, մատուցանել:

Զոյգ, ա. մ. հաւասար. համեմատ. նման:

Զոյգ, զուգից. ա. գ. երկու հատ. ջուխտ:

Զովացուցանեմ, ուցի. ն. պաղշտըկել. հովահրել. տաքութիւնը նուազցընել. շուք ընել:

Զովարրա, յո. ան. կնոջ:

Զուարակ, աց. գ. հորթ. պզտիկ եզ:

Զուարթ, ա. ուրախ. ծիծաղերես. արթուն:

Զուարթութիւն, գ. ուրախութիւն. ծիծաղերես ըլլալը. արթնութիւն. զգուշութիւն:

Զուարթուն, թնոց. ա. արթուն. խելքը գլուխը. հսկող. աչքը բաց:

Զուարճանամ, ացայ. չ. հաճութիւն իմանալ. ուրախանալ. սիրտը բացուիլ:

Զուարճացուցանեմ, ուցի. ն. ուրախացընել. հաճութիւն պատճառել:

Զուգ, աց. ա. ընկեր. բաժանորդ. հաղորդ. գործակից. հետեւող:

Զուր, ա. մ. փուճ. պարապ. անօգուտ:

Զչարիմ, րեցայ. չ. դժուարը գալ. չկրնալ քաշել. նեղանալ. նախանձիլ:

Զրահք, գ. զրահ. երկաթէ կամ ուրիշ մետաղէ շինուած զինուորաց հագուստ. ղըրխ:

Զրկեմ, եցի. ն. զրկել. իրաւունք չընել. անիրաւութիւն ընել. չարիք, վնաս հասցընել:

Զրոյց, րուցաց. գ. խօսք. լուր. համբաւ:

Զրպարտեմ, եցի. ն. զրպարտել. մէկու մը վրայ ստութեամբ դէշ խօսիլ. վար զարնել:

Զօր, ու, աց. գ. զօրք. զինուորաց գունդ. բանակ:

Զօրագոյն, ա. շատ կամ աւելի զօրաւոր, ուժով:

Զօրանամ, ացայ. չ. ուժովնալ. զօրութիւն ստանալ. սիրտ առնուլ. 2. ստուարանալ. մեծնալ. աւելնալ:

Զօրավար, աց. գ. զօրագլուխ. զօրապետ. զինուորներու առաջնորդ:

Զօրավիգն, ա. օգնական. պաշտպան. ոյժ տուող:

— լինել, օգնել. ձեռք տալ:

Զօրացուցանեմ, ուցի. ն. ուժովցընել. զօրութիւն տալ. ամրացընել. 2. քաջալերել. սիրտ տալ:

Զօրաւոր, աց. ա. ուժով. ուժեղ. ամուր. քաջ. սրտոտ:



Զօրաւորագոյն, տ. Զօրագոյն:

Զօրհանապազ, մ. միշտ. ամէն ատեն:

Զօրութիւն, գ. զօրութիւն. ոյժ. արիութիւն. ամրութիւն. սրտոտութիւն. 2. հրաշք. սքանչելիք. 3. զօրք:

## Է.

Էջ, իջոց. գ. էշ:

Է՞ր, մ. ի՞նչ. 2. ինչո՞ւ:

## Ը.

Ըմբոստանամ, ացայ. չ. դէմ դառնալ. գլուխ քաշել. սրդողիլ:

Ըմբռնեմ, եցի. ն. բռնել. ձեռք բերել, անցընել. 2. ըմբռնել. հասկընալ:

Ըմպելի, ելւոյ, ելեաց. ա. գ. խմելու (բան). 2. խմելիք. 3. խմող. 4. գաւաթ:

Ըմպեմ, արբի, արբ. ն. խմել:

Ընդ, նխ. հետ. մէկտեղ. 2. դէպ ի. 3. մէջէն. 4. տեղը. փոխանակ. 5. տակը:

Ընդ... ընդ..., մէջը:

Ընդ առաջ, նխ. մ. դիմացը. առջեւը:

— ելանել, երթալ, առջեւը, դիմացն ելլել. դիմաւորել:

Ընդարձակ, աց. ա. լայն. մեծ. բաց:

Ընդարձակեմ, եցի. } ն. լայնցընել. բանալ. մեծցընել:
Ընդարձակեցուցանեմ, ուցի. }

Ընդդէմ, նխ. դէմ. հակառակ. 2. դիմացը. առջեւը. դէպ ի:

— դառնալ, կալ, դէմ դնել. հակառակիլ:

Ընդէ՞ր, մ. ինչո՞ւ:

Ընդերեկս, տ. Երեկ:

Ընդհարկանիմ, հարայ. չ. զարնուիլ. իրարու զարնել:

Ընդմտատար, ի. ա. սիրտը դնող. հոգ ընող:

Ընդունայն, ա. մ. պարապ. անօգուտ. փուճ:

Ընդունայնանամ, ացայ. չ. պարապ բանի ետեւէ իյնալ:

Ընդունայնութիւն, գ. պարապ, փուճ բան:

Ընդունելի, ելեաց. ա. ընդունուելու. հաճոյ. 2. ընդունող. օգնական:

Ընդունիմ, ընկալայ. չ. ընդունիլ. առնուլ:

Ընդվայրասուն, ա. պարապ պտըտող. լկտի. անառակ:

Ընթանամ, ացայ. չ. վազել. շուտով երթալ:

Ընթեռնում, թերցայ. ն. կարդալ:

Ընթրիք, րեաց. գ. իրիկուան կերակուր:

Ընթրիս տալ, } կոչունք
Ընթրիս առնել, } ընել. սեղան տալ:

Ընծայ, ից. գ. ընծայ. պարգեւ:

Ընկենում, կեցի. ն. նետել. ձգել. մէկդի թողուլ:

Ընկեր, աց. գ. ընկեր. արգատաշ:

Ընկերսիրութիւն, գ. ընկերաց սէր. եղբայրսիրութիւն:

Ընկլնում, կլի. ն. կլլել. ընկղմել:

Ընտանի, անւոյ, անեաց. ա. գ. ընտանի. տան մարդ. տնեցի. մերձաւոր. ճանչուոր. բարեկամ:

Ընտասուն, ա. տունը մեծցած. տունը նստող:

Ընտիր, տրոց. ա. ընտրուած. ազնիւ. աղէկ. պատուական:

Ընտրեալ, ելոյ. ա. ընտրուած ազնիւ:

Ընտրեմ, եցի. ն. ընտրել. զատել. որոշել. զանազանել. դատաստան ընել:

Ընտրութիւն, գ. ընտրելը. ընտրուիլը. զանազանութիւն. որոշում. գատում:

Ըստ, նխ. ըստ. պէս. համեմատ. 2. մէկալ կողմը. անդին. դուրս. հակառակ. 3. ետքը. ետեւէն:

## Թ.

Թագ, աց, ից. գ. պսակ. Թաճ:

Թագաւոր, աց. գ. թագաւոր. արքայ. իշխան:

Թագաւորեմ, եցի. չ. թագաւոր ըլլալ. թագաւորութիւն ընել. տիրել:

Թագաւորեցուցանեմ, ուցի. ն. թագաւորեցընել. թագաւոր ընել, դնել:

Թագաւորութիւն, գ. թագաւորի մը իշխանութիւնը կամ երկիրը:

Թաթ, թից. գ. ձեռք. ոտք. ձեռքի կամ ոտքի հետք, նշան:

Թաթաւեմ, եցի. ն. թաթխել. թրջել. ջրի կամ հեղուկի մը մէջ խոթել:

Թախանձեմ, եցի. ն. շատ կամ սաստիկ աղաչել. բան մը ուզելով նեղութիւն տալ. ձանձրացընել:

Թաղեմ, եցի. ն. թաղել. հողին տակը կամ գերեզմանը դնել:

Թան,ից. գ. ապուր:

Թանամ, թացի. ն. թրջել:

Թարսիս, յտ. ան. գաւառի:

Թաւ, այ. ուց. ա. մազոտ. թանձր. խիտ:

Թաւալիմ, լեցայ. չ. գլորիլ. տապլտըկիլ. փռուիլ. պառկիլ:

Թափառիմ, ռեցայ. չ. պարապ պարապ պտըտիլ. ասդին անդին երթալ գալ:

Թափեմ, եցի. ն. պարպել. թափել. լեցընել. 2. ազատել. ձեռքէն առնուլ:

Թափիմ, փեցայ, չ. թափիլ. լինալ. փրթիլ. հեռանալ. ազատիլ. անցնիլ:

Թաքուստ, քստեան, քստի. գ. պահուըտիլը. պահուըտելու տեղ:

Թաքուցանեմ, ուցի. ն. ծածկել. պահել. գոցել:

Թաքչիմ, քեայ. չ. պահուըտիլ. ծածկուիլ. գոցուիլ:

Թեբէս, յտ. ան. քաղաքի:

Թեթեւ, ոյ, այ. ա. թեթեւ. ծանր չեղող. շուտ. արագընթաց. 2. դիւրին:

Թեթեւացուցանեմ, ուցի. ն. թեթեւցընել. ծանրութիւնը վերցընել. թուլցընել. քիչցընել:

Թերեւս, մ. գուցէ. կարելի է. արդեօք:

Թեւ, ոց. գ. թռչնոց թեւը. Գանատ:

Թզենի, ենւոյ, ենեաց. գ. թզի ծառ. Ինճիր աղաճը:

Թէ, շ. տ. Եթէ:

Թէպէտ եւ, շ. թէպէտ. թէեւ. այլ նէ:

Թիկունք, կանց. գ. կռնակ. ուս. ետեւի կողմ. 2. օգնութիւն. օգնական:

Թիւ, թուոց. գ. համրանք:

Թմբրութիւն, գ. թմրութիւն. ընդարմանալը. անզգայութիւն. քնոյ կամ գինովութեան պէս վիճակ:

Թշնամանասէր, սիրաց. ա. թշնամութիւն սիրող, ընող:

Թշնամանեմ, եցի. ն. խօսքով անարգել. նախատել:

Թշնամանող, աց. ա. նախատող. նախատական:

Թշնամանք, անաց. գ. նախատինք. անարգական խօսք:

Թշնամի, մւոյ, մեաց. գ. թշնամի. հակառակորդ. բարեկամ չեղող. Դիւշման:

Թշնամութիւն, գ. թշնամի ըլլալը. հակառակութիւն. ատելութիւն:

Թշուառական, աց. ա. թշուառ. տառապեալ. խեղճ. ողորմելի:



Թողում, ղի. ն. թողուլ. թող տալ. մէկդի ձգել. 2. թողութիւն տալ. ներել:

Թոյլ տալ, թող, հրաման տալ. թողուլ:

Թուեմ, եցի. ն. համրել. հաշուել:

Թուի ինձ, կը կարծեմ. կը համարիմ. ինծի կ'երեւայ:

Թոքառաջք. գ. թոքին առջեւի կողմը. թոք. Ագճիյէր:

Թռչուն, չնոց. գ. թռչուն. փետրաւոր ու թռչող անասուն. Գուշ:

Թրծեմ, եցի. ն. աղիւսը կրակով պնդացընել:

Թքանեմ, քի. ն. թքնել. (բերնէն) դուրս նետել:

Թօթափեմ, եցի. ն. թօթուել. նետել. մերժել. ցրուել:

Թօթափիմ, փեցայ. չ. թօթուիլ. լինալ. մէկդի քաշուիլ. ձգել երթալ. ցրուիլ:

## Ժ.

Ժամ, ուց. գ. ժամ. վաթսուն րոպէի միջոց. Սաաթ. 2. ժամանակ:

Ժամադիր, ա. գ. որոշուած, խօսք մէկ ըրած (ատեն, տեղ):

Ժամանակ, աց. գ. ժամանակ. ատեն:

Ժամանակեմ, եցի. ն. ատեն կորել. ժամանակ որոշել:

Ժանդոտ, ա. ժանգոտած. ժանգ կապած. Փասլը:

Ժանիք, նեաց. գ. (գազանի) ակռաներ:

Ժանկոտիմ, տեցայ. չ. ժանգ կապել. ժանկոտիլ. Փասլանմագ:

Ժանտ, ից. ա. անզգամ. չարագործ. անպիտան. չար. դէշ:

Ժանտաթզենի, ենւոյ, ենեաց. գ. մոլաթզենի. վայրենի թզի ծառ:

Ժառանգ, աց. ա. ժառանգ. Միրասխօր:

Ժառանգեմ, եցի. ն. ժառանգել. ժառանգութեամբ ձեռք բերել. ստանալ. վայելել:

Ժառանգութիւն, գ. ժառանգուած կամ ժառանգուելու ինչք. ստացուածք. կալուածք. Միրաս:

Ժիր, ժրաց. ա. քաջ. կորիճ. գործունեայ:

Ժլատ, ից. ա. ագահ. չկշտացող:

Ժողովեմ, եցի. ն. ժողվել. կուտել. հաւաքել. քաղել. 2. տունն առնուլ. հիւրընկալութիւն ընել:

Ժողովուրդ, վրդեան, վրդոց. գ. ժողովուրդ. ազգ. բազմութիւն. ամբոխ. ընտանիք. մարդիկ. 2. ժողովրդանոց:

Ժողովրդանոց, աց. գ. Հրէից ժողովարան:

Ժոյժ ունել,<br>Ժուժամ, ացի. ժեմ, եցի.<br>Ժուժկալեմ, եցի. } չ. համբերել. դիմանալ. ինք զինքը բռնել:

Ժուժկալ, ա. ինք զինքը բռնող, զսպող. զգաստ. ողջախոհ. պարկեշտ. սակաւապէտ. համբերող:

Ժպիրհ, պրհաց. ա. անամօթ. աներես. լիրբ. յանդուգն:

Ժպտիմ, տեցայ. չ. կամաց, պարկեշտութեամբ ծիծաղիլ. քմծիծաղ ըլլալ:

Ժրագլուխ, ա. քաջ. կորիճ. զօրաւոր. ժրաջան. գործունեայ. Ճարպիկ:

## Ի.

Ի, տրականի, բացառականի եւ ներգոյականի նախդիր:

Ի բաց, մ. հեռու. մէկդի:
— լինել, կալ, երթալ, հեռանալ. մէկդի երթալ:
— առնել, հանել, հեռացընել. մէկդի առնուլ:
— թողուլ, ընկենուլ, մերկանալ, թօթափել, մէկդի նետել. ձգել. վրայէն հեռացընել. հանել. նետել:
Իբրեւ, նխ. մ. պէս. 2. երբ որ:
Իբրեւ զի, շղ. որչափ. ինչպէս:
Իմ, իմոյ, իմում. դր. իմ. իմս:
Իմանամ, ացայ. ն. իմանալ. հասկընալ. մտածել. կարծել:
Իմաստնագոյն, գունից. ա. շատ կամ աւելի իմաստուն. խոհեմագոյն:
Իմաստնանամ, ացայ. չ. իմաստուն, խելացի ըլլալ. իմաստութիւն ձեռք բերել:
Իմաստութիւն, գ. իմաստութիւն. բարձր գիտութիւն. ուշիմութիւն. խելք. հանճար. ճարտարութիւն. խոհեմութիւն:
Իմաստուն, տնոց. ա. իմաստութիւն ունեցող. խելացի. գիտուն. հանճարեղ. խոհեմ:
Իմացուցանեմ, ուցի. ն. իմացընել. հասկըցընել. սորվեցընել. ծանուցանել:
Ի միասին, մ. մէկտեղ:
Ինձ, ընձուց. գ. ինձ. ֆոֆլան:
Ինն, իննունք, ունց. ա. ինը. տասնէն մէկ պակաս:
Իննսնամեան, մենի. ա. իննըսուն տարուան:
Ինչ, իրիք, իմիք, իւիք. գ. ա. մը. մէկ. քանի մը:
Ինչ, ընչի, գ. բան մը. բան:
Ինչք, ընչից. գ. ինչք. ստացուածք. հարստութիւն:
Ինքն, ինքեան, ինքեանք, ինքեանց. դր. ինք. ինքը. անիկայ:
Ինքնակամ, մ. իր կամօքը. ուզելով. յօժարութեամբ. առանց բռնութեան:
Ինքնին, մ. ինք իրմէ. ինք իրեն. 2. ինք:
Իշխան, աց. գ. իշխան. տիրող. հրամայող. գլխաւոր. առաջնորդ. պետ. մեծ. 2. կարող. իշխանութիւն ունեցող:
Իշխանութիւն, գ. իշխանութիւն. տէրութիւն. մեծութիւն. գլխաւորութիւն. կարողութիւն:
Իշխեմ, եցի. ն. իշխան ըլլալ. տիրել. կարող ըլլալ. 2. համարձակիլ. յանդգնիլ. ժպրհիլ:
Իջանեմ, իջի, էջ. չ. իջնալ. ենմէք:
Իջեւան, աց. գ. օթեւան. պանդոկ. ճամբորդութեան ատեն մնալու տեղ:
Իջուցանեմ, ուցի. ն. իջեցընել. վար առնուլ:
Իսահակ, յտ. ան. մարդու:
Իսկ, շ. իսկ. բայց. սակայն. 2. ուրեմն. արդ. հապա. 3. ստուգիւ. իսկապէս. ալ. նոյն իսկ:
Իսկ եւ իսկ, մ. անմիջապէս. շուտ մը. մէկէն ի մէկ:
Իսկարիովտացի, Յուդային մականունը:
Իսմայելացի, յտ. ան. ազգի:
Իսմայէլ, յտ. ան. մարդու:
Իսրայէլ, յտ. ան. մարդու եւ ազգի:
Իսպառ, մ. մինչեւ վերջը. բոլոր. բոլորովին:
Իր, իրի. } գ. բան. ինչ.
Իրք, իրաց. } իրք մը. բան մը:
Իրաւունք, ւանց. գ. իրաւունք. արդարութեան համաձայն բան. կարգաւորութիւն. հաքք:
Իրաւունս առնել, իրաւունք ընել. արդար դատաստան կտրել:
Իրերաց, իրեարս. դր. մէկ մէկու. իրարու:



Իւ, ինչո՞վ. ի՞նչ բանով:
Իւղ, ոց. գ. եղ. ձէթ. կարագ...:
Իւր, ոց. դր. իր. իրը. իրենը:
Իւր, եանց, եամբք. դր. իրեն. իրենց:
Իւրաքանչիւր, ա. գ. ամէն մէկ. ամէն մէկը:

## Լ.

Լամ, լացի, լաց. չ. ն. լալ. արտասուել. արցունք թափել:
Լայնեմ, եցի. ն. լայնցընել. մեծցընել. ընդարձակել:
Լապտեր, աց. գ. ճրագ. կանթեղ:
Լաւ, աց. ա. աղէկ. բարի:
Լաւախօս, ա. անոյշ խօսող. քաղցրաբան:
Լաւութիւն, գ. աղէկութիւն. բարութիւն. աղէկ բաներ:
Լափեմ, եցի. ն. լափել. լզել. ուտելով, խմելով լմընցընել. սպառել. հատցընել:
Լաւդիկ, գ. վերարկու. վրայի զգեստ:
Լեառն, լերին, լերանց. գ. լեռ. սար. երկրին բարձր մասերը. տաղ:
Լեարդ, լերդից. գ. լերդ. գարա ճիյեր:
Լեզու, զուաց. գ. լեզու. տիլ:
Լեզուանի, անւոյ. ա. շատախօս. լեզուագար. անսանձ ու յանդուգն լեզու ունեցող:
Լեղի, ղւոյ, ղեաց. գ. լեղի. էօտ:
Լի, ոց. ա. լեցուն. լիք. լեցուած. ամբողջ. կատարեալ:
Լիա, յտ. ան. կնոջ:
Լիբանան, յտ. ան. լեռան:
Լիզեմ, եցի. ն. լզել. լափել. լեզուովը մաքրել:
Լինիմ, եղէ, լեր, լեալ. է. էյ. ըլլալ. 2. մնալ. կենալ. 3. պատահիլ. 4. դառնալ. փոխուիլ:
Լիջիր իշխանութիւն ունել, իշխանութիւն ունեցիր:
Լիութիւն, գ. լեցուն ըլլալը. առատութիւն. ամբողջութիւն. կշտանալը:
Լիր.
Լրիւ իւրով, բոլոր. բովանդակ. ամբողջ:
Լիւդիա, յտ. ան. քաղաքի:
Լկտի, տւոյ, տեաց. ա. անպարկեշտ. անառակ. անամօթ. բաց:
Լնում, լցի. ն. լեցընել. 2. լմընցընել. գլուխ հանել. կատարել:
— լցայ. չ. լեցուիլ. կատարուիլ. լմնալ:
Լոյս, լուսով. գ. լոյս. պայծառութիւն. նշոյլ. ըշըգ:
Լորամարգի, գւոյ. գ. լորամարգի. պըլտըրճըն:
Լուանամ, ացի. ն. լուալ. ջրով մաքրել:
— ացայ. չ. լուացուիլ:
Լուծ, լծոց. գ. լուծ. եզանց վիզն անցուած փայտէ կազմածքը. 2. բեռ. ծանրութիւն:
Լուծք եզանց, զոյգ մը, ջուխտ մը եզ:
Լուծանեմ, ծի. ն. քակել. բանալ. արձակել. աւրել:
Լուծանիմ, ծայ. չ. բացուիլ. քակուիլ. 2. տեղ մը մնալ, գիշերն անցընել:
Լումայ, ից. գ. փող. մանր ստակ:
Լումայափոխ, ից. ա. ստակ փոխող. սեղանաւոր:
Լուռ, լռաց. ա. լուռ կեցող. ձայն չհանող. չխօսող. անձայն:
— լինել, լռել. ձայն չհանել. ձայնը քաշել:
Լուռ լուռ, անձայն. լռիկ մնջիկ:

Լուսաւոր, աց. ա. լոյս ունեցող կամ տուող. պայծառ. յստակ. յայտնի։

Լուսաւորագոյն, գոյնից. ա. շատ կամ աւելի լուսաւոր։

Լուսն, սունք. գ. աչքին լոյսը խափանող կեղեւ, վարագոյր. աչքի հիւանդութիւն մը։

Լուր, լրոց. գ. լսելը. լսուիլը. ձայն. հնչիւն. 2. համբաւ։

Լռեմ, եցի. չ. տ. Լուռ լինել։

Լռեցուցանեմ, ուցի. ն. լռեցընել. խօսքը դադրեցընել. հանդարտեցընել։

Լռութիւն, գ. լուռ կենալը. ձայն չհանելը։

Լսելի, ելւոյ, ելեաց. ա. լսող. մտիկ ընող։

— լինել, լսուիլ. իմացուիլ։

Լսեմ, լուայ, լուր, լուեալ. ն. լսել. հասկընալ. ականջ կախել. մտադիր ըլլալ. անսալ. հնազանդիլ։

Լսող, աց. ա. որն որ կը լսէ. մտիկ ընող. անսացող։

Լրումն, լրման. գ. լեցուիլը. լիութիւն. ամբողջութիւն. բովանդակութիւն։

Լրտես, աց. գ. լրտես. օտարին երկիրը կամ գործքերը դիտող. ճասուս։

Լրտեսեմ, եցի. ն. լրտեսութիւն ընել. դիտել. գաղտուկ քննել։

Լքանեմ, լքի. ն. թողուլ. մերժել. երեսը չնայիլ։

Լքանիմ, չ. վհատիլ. թուլնալ. յուսահատիլ։

Լքեալ, ա. վհատած. սրտաբեկ. անճրկած։

## Խ.

Խաբեմ, եցի. ն. խաբել. պատրել. խաբէութիւն, նենգութիւն ընել. աղէկը գէշի, պզտիկը մեծի տեղ կլեցընել. ալդաթմագ։

Խաբէութիւն, գ. նենգութիւն. ստութիւն. պատրանք։

Խածատեմ, եցի. ն. շատ անգամ խածնել։

Խաղալիկ, լկաց. գ. խաղացող. կաքաւող. պար բռնող. 2. խաղալիկ. խաղալու գործիք կամ նիւթ։

Խաղաղ, } ա. հանդարտ. հանգիստ։
Խաղաղական, }

Խաղաղակեաց, ա. խաղաղութեամբ ապրող. խաղաղասէր։

Խաղաղասիրութիւն, գ. խաղաղութիւն սիրելը։

Խաղաղարար, աց. ա. խաղաղութիւն ընող. հանդարտեցընող. հաշտեցընող։

Խաղաղութիւն, գ. հանդարտութիւն. հանգիստ. հաշտութիւն։

Խաղամ, ացի. ն. չ. խաղալ. օյնամագ. 2. շարժիլ. ճամբայ ելլել. յառաջ երթալ. վազել։

Խաղացուցանեմ, ուցի. ն. տեղը փոխել տալ. յառաջ տանիլ, քշել։

Խաղող, ոյ. գ. խաղող. որթատնկին, այգւոյն պտուղը. իւզիւմ։

Խայտառականք, անաց. գ. խայտառակութիւն. ամօթալի, անարգական գործք։

Խայտուց, գ. անասնոց մորթին գոյն գգոյն նիշերը. պէնէք։

Խան, ից. գ. մեծ ափսեայ. ուտելիք տանելու մեծ աման. թէփսի. սինի։

Խանդարեմ, եցի. ն. աւրել. ապականել. տակնուվրայ ընել։

Խաշն, շին, շանց. գ. ոչխարաց հօտ. ոչխարներու եւ այծերու բազմութիւն։

Խաշեմ, եցի. ն. խաշ հանել. խաշի վրայ մեռցընել։

Խառնակեմ, եցի. ն. խառնաշփոթ ընել. շփոթել. խառնել. տակնուվրայ ընել։



Խառնակիմ, եցայ. չ. անզգուշութեամբ, ընտանութեամբ վարուիլ. կենակցիլ. բարեկամութիւն ընել։

Խառնակութիւն, գ. շփոթութիւն. խռովութիւն։

Խառնաղանճ, ից. գ. ցած մարդիկներու բազմութիւն. խառնիճաղանճ մարդիկ. խաժամուժ. ամբոխ։

Խառնեմ, եցի. ն. խառնել. շփոթել. 2. միացընել. մէջէ մէջ անցընել. 3. գինի լեցընել։

Խարազան, աց. գ. մտրակ. չուանէ շինուած ծեծելու գործիք. գամչը։

Խարդախութիւն, գ. նենգութիւն. խաբէութիւն. դաւաճանութիւն. չարութիւն։

Խարխափեմ, եցի. չ. ասդին անդին շօշափելով ու շարժելով քալել։

Խարշեմ, եցի. ն. այրել. տոչորել։

Խարտեաշ, տեշի. ա. խարտեաշ. շէկ. բաց կարմիր. կարմրի զարնող դեղին։

Խաւար, աւ. գ. մութ. մթութիւն. լուսոյ պակասութիւն։

Խաւարանամ, ացայ. չ. մթննալ. լոյսը կորսընցընել։

Խափանեմ, եցի. ն. արգելուլ. արգելք ըլլալ. պարապ ձգել. անգործ ընել. դադրեցընել։

Խելամուտ լինել, իմանալ. հասկընալ. տեղեկանալ։

Խեղդեմ, եցի. ն. խղդել. հոգին հանել. սաստիկ նեղել։

Խեղկատակութիւն, գ. անպատշաճ կատակ. ծաղրածու, ծիծաղցընելու խօսք։

Խեցի, եցւոյ, եցեաց. գ. չորցած կաւէ, հողէ շինուած աման. նոյն ամանին նիւթը. չէօմլէք։

Խզեմ, եցի. ն. փրցընել. կորել. պատռել. քակել. կոտրել։

Խիղճ, խղճի. գ. տարակոյս. կասկած. սրտի անհանգստութիւն. յանցանք։

— մտաց, խղճմտանք։

Խիստ, խստաց, խստից. ա. կարծր. պինդ. դժուար. խըստասիրտ. անագորոյն։

Խլեմ, եցի. ն. փրցընել. բռնութեամբ, քաշելով հանել։

Խմբիմ, բեցայ. չ. (պատերազմի) ժողվիլ. զարնուիլ։

Խնամ, ոց. գ. խնամք. հոգացողութիւն. փոյթ. ջանք. գութ. սէր։

— ունել, } հոգալ. խնամ տանիլ. աղէկ նայիլ. հոգ տանիլ։
— տանել, }
Խնամեմ, եցի. ն. }

Խնամութիւն, գ. խնամութիւն. ամուսնութենէ ծագած ազգականութիւն. 2. խնամք. հոգացողութիւն։

Խնայեմ, եցի. չ. խնայել. գթալ. թողուլ. ներել. 2. զգուշութեամբ, ճշդելով գործածել։

Խնդամ, ացի. չ. ուրախանալ. խնդալ. զուարճանալ։

Խնդիր, դրոց. գ. փնտռելը. 2. վէճ. տարակոյս. քննութիւն. վէճի նիւթ։

Խնդութիւն, գ. ուրախութիւն. խնդում։

Խնդրեմ, եցի. ն. ուզել. փնտռել. հարցընել. աղաչել. պահանջել։

Խնդրուածք, ծաց, ծոց. գ. խնդիր. աղաչանք. պաղատանք. աղօթք։

Խնում, խցի. ն. խցել. գոցել։

Խոզ, ից, աց. գ. խոզ. տօնուզ։

Խոզենի, ենւոյ, ենեաց. գ. ա. խոզի մազ. խոզի [քըլ։

Խոյ, ոց. գ. արու ոչխար.

խոյս տալ. մէկդի երթալ. հեռանալ. տեղի տալ. զգուշանալ:

Խոնարհ, ած. տ. ցած. վար. 2. ստորին. նուաստ. 3. խոնարհ. հպարտ չեղող:

Խոնարհեցուցանեմ, ուցի. ն. ցածցընել. վար իջեցընել, առնուլ. ծռել. խոնարհեցընել. 2. մեղմացընել. չափաւորել:

Խոնարհիմ, հեցայ. չ. ցածնալ. վար իջնալ. ծռիլ. կքնալ. 2. խոնարհիլ. հպարտութիւնը թողուլ. խոնարհութեամբ վարուիլ:

Խոնարհութիւն, գ. խոնարհութիւն. հպարտ չըլլալը. չափաւորութիւն. պարկեշտութիւն:

Խոստանամ, ացայ. չ. խոստանալ. խօսք տալ:

Խոստովանութիւն, գ. դաւանութիւն. գոհութիւն. փառաբանութիւն:

Խոտ, ոց. գ. խոտ. դաշտի վրայ բուսած մանր բոյս. օթ:

Խոտորեցուցանեմ, ուցի. ն. մէկդի տանիլ. ճամբէն դարձընել. ծռել. մոլորեցընել. գլխէ հանել:

Խոտորիմ, րեցայ. չ. մէկդի դառնալ. հեռանալ. ծռիլ. ճամբէ ելլել. մոլորիլ:

Խոր, ոց. տ. խորունկ. 2. սաստիկ. արտաքոյ կարգի:

Խորագէտ, գիտաց. տ. խելացի. վարպետորդի. խոհեմ. խորամանկ:

Խորագիտութիւն, գ. խելացութիւն. խոհեմութիւն. խորամանկութիւն:

Խորան, աց. գ. վրան. տաղաւար. չադըր:

Խորդ, ոց. գ. քուրձ. հաստ, մազեղէն զգեստ. խարազ:

Խորեմ, եցի. ն. խորունկցընել. 2. գողնալ. ուրիշին բանն իրեն սեպհականել. մէկ մասը վերցընել:

Խորխոխ, խոխոյ. գ. մոմով մեղր. բճիճ:

Խորխորատ, ից. գ. վիհ. խորունկ փոս. գուբ:

Խորհիմ, հեցայ. չ. մտածել. 2. միտքը դնել. դիտաւորութիւն ունենալ:

Խորհուրդ, հրդեան, հրդոց. գ. մտածութիւն. միտք. 2. խրատ. 3. խորհուրդ. խօսակցութիւն. խորհրդակցութիւն. 4. գաղտնիք:

— առնել, — ի մէջ առնուլ, } խորհուրդ ընել. մէկտեղ մտածել:

Խորհրդական, աց. տ. գ. խելացի. խոհեմ. խորհուրդ, խրատ տալ կրցող. 2. խորհըրդեան, ժողովոյ անդամ:

Խորհրդակից, կցաց. գ. մէկտեղ խորհող. խորհուրդ տուող. գաղտնիքը ճանչցող. գործակից:

Խորշ, ից. գ. ծակ. անկիւն. փոս. խոռոչ. 2. զգեստի կամ երեսի ծալլուածք. խորշոմ. քօթ:

Խորշիմ, շեցայ. չ. ետ քաշուիլ. հեռանալ. զգուշանալ. մէկդի կենալ. 2. ամըչնալ. ակնածութիւն ընել. պատկառել:

Խորովեմ, եցի. ն. խորովել. քէպապ էթմէք:

Խորտակեմ, եցի. ն. կոտրել. ջարդել. ջախջախել:

Խորտիկ, տկաց. գ. կերակուր:

Խորք, գ. խորունկ տեղ, կողմ. փոս. վիհ:

Խոցեմ, եցի. ն. վիրաւորել. ծակել:

Խունկ, խնկոց. գ. խունկ. կիւնլիւք:

— արկանել, խունկ տալ. [խնկել:

Խուսեմ, եցի. չ. մէկդի երթալ. ետ կենալ. քաշուիլ. հեռանալ. փախչիլ:

Խռկեմ, եցի. ն. ժողվել. դիզել:

Խռովեմ, եցի. ն. շփոթել. տակնուվրայ ընել. վրդովել. գրգռել:

Խռովիմ, վեցայ. չ. շփոթիլ. այլայլիլ. տակն ու վրայ ըլլալ:



Խռովութիւն, գ. շփոթութիւն. խառնակութիւն. աղմուկ. վրդովում:

Խստանամ, ացայ. չ. պընդանալ. խիստ ըլլալ. խստութիւն ընել. 2. յամառիլ. միտքը դրածէն ետ չդառնալ:

Խստասիրտ, սրտաց. տ. խիստ սիրտ ունեցող. անգութ. անողորմ. 2. յամառ. յանդուգ:

Խստոր, ի. գ. սխտոր. սարմըսագ:

Խստութիւն, գ. կարծրութիւն. պնդութիւն. 2. սաստկութիւն. բռնութիւն. յանդըգնութիւն. խստասրտութիւն:

Խտրեմ, եցի. ն. զանազանել. որոշել. միտ դնել. քննել. զգուշանալ:

Խրախութիւն, գ. կոչունք. սեղան:

Խրատ, ուց. գ. խրատ. աղէկ խորհուրդ. ազդեցութիւն. 2. կրթութիւն. հրահանգ. դաստիարակութիւն. կրթութեան համար տրուած յանդիմանութիւն, պատուհաս, պատիժ...:

Խրատեմ, եցի. ն. խրատել. աղէկ խորհուրդ տալ. ազդեցութիւն ընել. 2. կրթել. դաստիարակել. յանդիմանել. պատժել:

Խրատեալ, ելոյ. տ. բարեկիրթ. կրթուած. աղէկ կրթութիւն ընդունած:

Խրտուցանեմ, ուցի. ն. խրտեցընել. վախցընել. փախցընել:

Խօթասիրտ, սրտաց. տ. թոյլ սիրտ ունեցող. ծոյլ. անպիտան:

Խօսիմ, սեցայ. չ. խօսիլ. խօսակցիլ. ըսել. զրուցել. պատմել. քարոզել. 2. նշանել. նշանուիլ:

Խօսք, սից. գ. խօսք. զրոյցք. խօսակցութիւն. սէօզ:

# Ծ.

Ծագ, ի, աց. գ. ծայր. ճոթ. վերջ. գլուխ:

Ծագեմ, եցի. չ. ծագիլ. ծայր տալ. երեւնալ. ծնանիլ. բխել:

Ծախեմ, եցի. ն. ծախք ընել. գործածել. վատնել. մսխել. հատցընել. անցընել. մաշել. կորսընցընել:

Ծածկեմ, եցի. ն. ծածկել. պահել. գոցել:

Ծածկիմ, կեցայ. չ. ծածկուիլ. պահուըտիլ:

Ծածկոյթ, կութի. գ. ծածկելը. գոցելը. ծածկութիւն. գաղտնութիւն. ծածկոց:

Ծածուկ, տ. մ. ծածկուած. գաղտնի. գող. անյայտ:

Ծակոտ, տ. ծակ. ծակծըկած. ծակ ծակ:

Ծաղիկ, ղկան, ղկի, ղկանց, ղկոց. գ. ծաղիկ. չիչէք:

Ծաղկեմ, եցի. } չ. ծաղկիլ. ծաղիկ բանալ. ծլիլ. բուսնիլ. 2. պայծառանալ. զուարճանալ:
Ծաղկիմ, կեցայ.

Ծաղր, ղու. գ. ծիծաղ. խնտալը. զուարթութիւն. 2. կատակ. 3. ծաղրական, ծիծաղելու բան:

— լինել, խաղք ըլլալ. խայտառակիլ:

— առնել, ծաղր ընել. ծաղրել. վրան ծիծաղիլ:

Ծանեայ, տ. ճանաչեմ:

Ծանր, նու, նունք. նունց. տ. ծանր. թեթեւ չեղող. աղըր. 2. ծանրաշարժ. դանդաղ. հանդարտ. 3. դժուար. խիստ. անհաճոյ:

Ծանրագոյն, գունից. տ. շատ կամ աւելի ծանր:

Ծանրանամ, ացայ. չ. ծանրնալ. ծանր ըլլալ. 2. ուրիշին ծանրութիւն ըլլալ. դժուարութիւն պատճառել:

Ծանրացուցանեմ, ուցի. ն. ծանրացընել. դժուարցընել. սաստկացընել:

Ծանրիմ, րեցայ. տ. Ծանրանամ:

Ծանօթ, ից, ոց. ա. գ. ճանչուոր. ազգական. մերձաւոր. 2. յայտնի. ճանչցուած. գիտցուած 3. ճանչցող. գիտցող:

Ծառ, ոց. գ. ծառ. աղաճ:

Ծառայ, ից. գ. ծառայ. սպասաւոր. պաշտօնեայ. գերի:

Ծառայակից, կցաց. գ. ծառայութեան, գերութեան ընկեր. պաշտօնակից:

Ծառայեմ, եցի. չ. ծառայութիւն ընել. ծառայ կամ գերի ըլլալ:

Ծարաւի, ւոյ, ւեաց. ա. ծարաւ. ծարուած. ջրոյ բաղձանք կամ կարօտութիւն ունեցող:

Ծեծեմ, եցի. ն. ծեծել. զարնել:

Ծեր, ոց. գ. ծեր. ալեւոր. հասակն առած. իխթիյար:

Ծերանամ, ացայ. չ. ծերանալ. պառաւնալ. հասակն առնուլ. հիննալ:

Ծերոյթ, } գ. ծերու-
Ծերութիւն, } թիւն. ծեր, հասակն առած ըլլալը:

Ծեփեմ, եցի. ն. ծեփել. ծեփ տալ. բռել:

Ծիծաղիմ, ղեցայ. չ. ծիծաղիլ. խնդալ. 2. ծաղրել. ծաղր ընել:

Ծիրանի, անւոյ, անեաց. ա. գ. ծիրանեգոյն. ոսկեգոյն. 2. ծիրանեգոյն, փառաւոր, թագաւորական զգեստ:

Ծխեմ, եցի. ն. ծուխ հանել. մուխ տալ:

Ծծումբ, ծծմբով. գ. ծծումբ. քիւքիւրթ:

Ծկոյթ, կուլթոյ, գ. պըզտիկ մատ: [սէրչէ:

Ծղնի, խնւոյ. գ. ծխնի.

Ծնանիմ, ծնայ, ն. չ. ծնանիլ. զաւակ ըլլալ, բերել. ծագիլ. յառաջ գալ:

Ծնող, աց. գ. ծնողք. հայր եւ մայր:

Ծնունդ, ծննդեան, ծնընդոց. գ. ծնանիլը. 2. ծնածը. որդի. զաւակ. բերք:

Ծոյլ, ծուլից. ա. ծոյլ. հեղգ. վատ. գործատեաց. թոյլ:

Ծով, ուց. գ. ծով. տէնիզ:

Ծորեմ, եցի. չ. վազել. հոսիլ. կաթիլ:

Ծոց, ոյ. գ. ծոց. գոգ. գիրկ. մէջտեղը:

Ծուլանամ, ացայ. չ. ծուլնալ. ծուլութիւն ընել. դանդաղիլ. տնտընալ:

Ծուլութիւն, գ. ծոյլ ըլլալը. դանդաղութիւն. անգործութիւն. վատութիւն. թուլութիւն:

Ծուխ, ծխով. գ. մուխ. թիւթիւն: [տէչ:

Ծունկ, ծնկաց. գ. ծունկ. Ծունր.

Ծունր դնել, ծնրադրել. ծունկ իյնալ. (ծունկ չոքիլ.) երկրպագութիւն ընել:

Ծրարեմ, եցի. ն. ծրարի, կապոցի մէջ դնել. կապել. փաթթել:

Ծրտեմ, եցի. ն. չ. ծըրտել. աղբ ձգել (թռչնոց):

Ծփիմ, փեցայ. չ. ծփալ. ալէկոծիլ. շարժիլ. խռովիլ:

## Կ.

Կա, տ. Ունիմ:

Կագ, ոյ, ի. գ. կռիւ:

Կազմեմ, եցի. ն. շինել. ընել. ստեղծել. շտկել. պատրաստել. նորոգել. կարգադրել:

Կաթեմ, եցի, չ. կաթիլ. վազել. կաթիլ կաթիլ իջնալ. իյնալ:

Կաթիլ, թլոց. գ. կաթիլ. շիթ. պուտ: [կաթ. տէ-տ:

Կաթն, թին, թանց. գ.



Կաթսայ, ից. գ. կերակուր եփելու (մետաղէ) աման:

Կալ, ոց. գ. կալ. ցորեն ծեծելու տեղ. 2. Նոր ժողվուած ու դիզուած ցորեն:

Կալայ, տ. Ունիմ:

Կալուած, ոց. գ. սեպհական տուն կամ երկիր. ստացուածք. ագարակ:

Կախեմ, եցի. ն. կախել. ասմագ:

Կախիմ, խեցայ. չ. կախուիլ. կախուած մնալ. կախում, կապակցութիւն ունենալ:

Կաղ, աց. ա. կաղ. մէկ ոտքը մէկալէն կարճ եղող. թօփալ:

Կաղամ, ացի. չ. կաղ ըլլալ. կաղի պէս քալել. երկու կողմը շարժիլ, յօժարիլ. ընելիքը չգիտնալ:

Կաղնի, նւոյ, նեաց. գ. կաղնի. մէշէ, ֆընտըգ աղաճը:

Կամ, կացի. չ. կենալ. 2. ըլլալ. գտնուիլ. 3. սպասել. 4. դադրիլ. գործողութիւնը կեցընել:

Կամակար, ա. մ. կամայական. յօժարակամ. կամաւոր. 2. յօժար կամօք. ուզելով. սրտանց. 3. տ. Կամակոր:

Կամակոր, աց. ա. ծուռումուռ. մոլորեալ. չար:

Կամիմ, մեցայ. չ. ուզել. ուզենալ. կամենալ. յօժարիլ:

Կամք, մաց. գ. կամք. յօժարութիւն. ուզուած բանը:

Կայ, ից. գ. կենալը. կեցած կամ կենալու տեղը:

Կային, յտ. ան. մարդու:

Կայծ, ից. գ. կայծ. կրակէն ցատքող պզտիկ մաս մը. կրակ. գըղըլճըմ:

Կայծակն, կան, կունք, կանց. գ. կայծ. վառած կրակ. կայծակ. շանթ:

Կայսր, սեր, սերք, սերաց. գ. կայսր. ինքնակալ:

Կայտառ, աց. ա. գեղեցիկ. աղուոր. զուարթ. աշխոյժ. առոյգ. եռանդուն:

Կանաչ, ա. կանաչ. եէշիլ. 2. կանաչեղէն. խոտ. բոյս:

Կանացի, ցեաց. ա. կնոջ վերաբերեալ. կնկան պէս. թոյլ. տկար. վատ:

Կանգնեմ, եցի. ն. ոտք հանել. կեցընել. տնկել. շտկել. 2. շինել:

Կանգուն, գնոց. ա. մ. շիտակ. ոտքի վրայ կեցած. հաստատուն:

— գ. կանգուն. երկայնութիւն չափելու ձող. արշըն:

Կանխեմ, եցի. չ. կանուխ ելլել. փութալ. արտորալ. շուտ շարժիլ, գործել:

Կանուխ, նխոց. ա. մ. նախ հասնող. առտուան. յառաջուան. հին. 2. կանուխ. ուշ չէ. էրքէն:

Կապանք, անաց. գ. կապ. պաղ:

Կապար, ար, ոց. գ. կապար. արճիճ. գուրշուն:

Կապեալ, ելոց. ա. գ. կապանքի տակ եղող. բանտարկուած. գերի:

Կապեմ, եցի. ա. կապել. պաղլամագ:

Կապիմ, պեցայ. չ. կապուիլ. փակչիլ. կցիլ. միանալ:

Կառապետ, աց. գ. կառապան. իշխանի մը կառապանը:

Կառափն, փունք, փանց. գ. գլուխ:

Կառք, ռաց. գ. կառք. արապա:

Կասեցուցանեմ, ուցի. ն. կեցընել. արգելուլ. խափանել. միջահատել:

Կասկածեմ, եցի. չ. կասկածիլ. տարակուսի երթալ. վախնալ:

Կատակեմ, եցի. ն. ծաղր ընել. ծաղրել. վրան ծիծաղիլ:

Կատարած, ից, աց. գ. վախճան. վերջ. ծայր. լմննալը:

Կատարեալ, ելոց. ա.

լմնցած. գլուխ ելած. պակսութիւն չունեցող. ամբողջ։

Կատարեմ, եցի. ն. վերջացընել. լմնցընել. գլուխ հանել, տանիլ։

Կատարիմ, րեցայ. չ. լմննալ. վախճանիլ. մեռնիլ։

Կար, իւ. գ. կարողութիւն. ոյժ. զօրութիւն։

Կարասի, սւոյ, սեաց. գ. կահ կարասի. աղխ. տան զարդերը. գործիք. 2. ինչք. ստակ. ստացուած։

Կարգեմ, եցի. ն. կարգի դնել. կարգադրել. շինել. կազմել. դնել. որոշել. սահմանել։

Կարդամ, ացի. ն. չ. կարդալ. ընթեռնուլ. օգումագ. 2. կանչել. գոչել. օգնութեան կոչել։

Կարեմ, րացի. չ. կարենալ. կարող ըլլալ։

Կարթ, ից. գ. ձուկ որսալու գործիք. օլթա։

Կարի, մ. խիստ. շատ. սաստիկ։

Կարծեմ, եցի. ն. կարծել. համարիլ. միտքը դնել. (սեպել)։

Կարծիք, ծեաց. գ. կարծիք. համարում. կասկած. երկբայութիւն. գըյաս. զանն։

Կարծիս ի մտի դնել, կարծել. համարիլ։

Կարկամ, ից. ա. կծկած. ծռած. 2. ագահ. կծծի։

Կարկառեմ, եցի. ն. երկընցընել. տալ։

Կարկառիմ, ռեցայ. չ. դէպ ի դուրս երկննալ. կախուիլ. ծռիլ։

Կարկատեմ, եցի. ն. կարկըտել. կարկըտան դնել. չիտկել. նորոգել։

Կարճ, ոյ. ա. կարճ. երկայն չեղող. կարճահասակ. գըսա։

Կարճամիտ, մտաց. ա. անհամբեր. նեղասիրտ. բարկացող։

Կարճմտութիւն, գ. անհամբերութիւն. նեղսրտութիւն։

Կարմեղոս, յտ. ան. լեռան։

Կարող, աց. ա. կրցող. կարողութիւն ունեցող. զօրաւոր։

Կարողութիւն, գ. կարող ըլլալը. զօրութիւն. ոյժ։

Կարօտանամ, ացայ. չ. կարօտութեան մէջ իյնալ. պակասութիւն կրել. պէտք ունենալ։

Կարօտեալ, ելոց. ա. կարօտութեան մէջ եղող։

Կարօտութիւն, գ. պէտք. հարկաւորութիւն. չքաւորութիւն։

Կացուցանեմ, ուցի. ն. կեցընել. կանգնել. դնել. հաստատել. ընել. կատարել. գլուխ տանիլ։

Կաւեայ, ա. կաւեղէն. կաւէ, հողէ շինուած։

Կափառնաում, յտ. ան. քաղաքի։

Կաքաւեմ, եցի. չ. պար բռնել. պարել. ցատքելով խաղալ։

Կեամ, կեցի, կեաց, կեցեալ. չ. ապրիլ. կենդանի մնալ. կենդանանալ։

Կեանք, կենաց. գ. կեանք. կենդանութիւն. ողջութիւն. ապրիլը. 2. վարք. վարմունք. ընթացք. 3. ստացուածք. ինչք. ապրուստ. ապրելու միջոց։

Կեղ, ոց. գ. վէրք. սպի. խաղաւարտ. եարա։

Կեղեւեմ, եցի. ն. կեղեւը հանել. կեղեւի պէս հանել։

Կեղեւիմ, եւեցայ. չ. կեղեւի պէս ելլել, իյնալ։

Կեղծաւոր, աց. ա. բարի ձեւացող. խաբեբայ. երկուերես։

Կեղծաւորութիւն, գ. բարի ձեւանալը. դրսէն բարի երեւցող գործք. խաբէութիւն։

Կեղտ, ա. կեղտոտ. աղտեղի. գէշ։



Կենդանի, անւոյ, անեաց. ա. կենդանի. կեանք ունեցող. ապրող. ողջ. կենաց պատճառ եղող։

Կենդանւոյն, մ. ողջ եղած ատեն. ողջ ողջ։

Կերակուր, կրոց. գ. ուտելիք. սնունդ։

Կերակրեմ, եցի. ն. կերցընել. սնուցանել. պահել։

Կերայ, տ. Ուտեմ։

Կերպարանք, նաց. գ. դէմք. տեսիլ. երես. նմանութիւն։

Կեցուցանեմ, ուցի. ն. ապրեցընել. կենդանացընել. ողջացընել. առողջացընել. ազատել։ [եաշաթ. եաշաթ։

Կէս, կիսով. ա. գ. կէս.

Կիսով, կէս թող տալով։

Կէտ, կետի, կիտի. գ. վիշապ ձուկ. մեծ ձուկ. տփա ղուլըղը. ղուլէնա։

Կին, կնոջ. գ. կին. կնիկ։

— առնել, ամուսնանալ. կարգուիլ։

Կիսամահ, ա. մ. կէս մեռած. մեռնելու վրայ։

Կլանեմ, կլի, կուլ. ն. կլլել. կուլ տալ. եութմագ։

Կնդակ, աց. ա. կունտ. ճաղատ. մազը թափած։

Կնիք, կնքոց. գ. կնիք. նամակի, ծրարի վրայ կոխուած նշան. կոխելու մատանի. մէօհիւր. 2. մկրտութիւն։

Կնութիւն.

Առնուլ կնութեան, ամուսնանալ. կին առնուլ։

Տալ կնութեան, ամուսնացընել. կին տալ։

Լինել ի կնութեան, մէկուն կինն ըլլալ։

Կնքեմ, եցի. ն. կնիք կոխելով գոցել. 2. գոցել. ծածկել. 3. լմնցընել. 4. մկրտել։

Կշիռ, կշռոց. գ. կշիռ. կշեռք. ծանրութիւն չափելու գործիք. թէրազի։

Կշիռ, ա. հաւասար. ճիշդ. համեմատ. նման։

Կշռեմ, եցի. ն. կշռել. ծանրութիւնը չափել. 2. համեմատել. քննել. չափել. 3. հաւասար չափով տալ։

Կոխեմ, եցի. ն. կոխել. ոտքը վրան դնել. ոտքին տակն առնուլ. արհամարհել. յաղթել։

Կոծեմ, եցի. ն. ծեծել. զարնել։

Կոծիմ, ծեցայ. չ. լալ. ողբալ. ծեծկուիլ։

Կոկորդ, աց. գ. վզին ներսի կողմը։

Կող, ից. գ. կող. կուշտ. եան. 2. կողմ. քովը. եզր։

Կողմն, մանց. } գ. կողմ. դի.
Կոյս, կուսաց. } թարաֆ։

Կոյս, կուսից. գ. կոյս. աղջիկ։

Կոչեմ, եցի. ն. կանչել. անունը տալ. անուն դնել. անուանել։

Կոչնական, աց. գ. կոչունքի հրաւիրուած. սեղանի նստող. բազմական։

Կոչումն, չման. գ. կանչելը. կանչուիլը։

Կոչունք, չնոց. գ. սեղան. խնճոյք. գինեբրուք։

Կոպիճ, պճով. գ. խիճ. մանր քար. մեծ աւազ. չագըլ։

Կոտորեմ, եցի. ն. կոտրել. կորել. խորտակել. ջարդել. բաժնել. կտոր կտոր ընել. մեռցընել։

Կորանամ, ացայ. չ. ծռիլ. 2. յաղթուիլ. մէջքը կոտրիլ. ամչնալ. խաղք ըլլալ։

Կորացուցանեմ, ուցի. ն. ծռել. 2. յաղթել. գլուխը զարնել. ամչցընել։

Կորխ, յտ. ան. մարդու։

Կործանեմ, եցի. ն. աւրել. փլցընել. վար առնուլ. քանդել. գետինը զարնել։

Կործանիմ, նեցայ. չ. փըլչիլ. իյնալ։

Քաղաք կործանեալ ի պարսպաց, պարիսպները կործանած քաղաք։

Կործանումն, նման. գ. կործանիլը. իյնալը. աւրուիլը։

Կործչիմ, րեայ. չ. կորսուիլ։

Կորովութիւն, գ. ճարտարութիւն. ճարպկութիւն. վարպետութիւն. խելացութիւն. սրութիւն։

Կորուսանեմ, ուսի, րո. ն. կորսընցընել։

Կորուստ, րստեան. գ. կորսուիլը. կորսնցընելը. վնաս. մահ. կորսուած բան։

Ի — լինել, կորսուիլ։

Կու, ով. գ. աղբ. քակոր. թրիք։

Կուպր, կպրով. գ. նաւթ. կպրաձիւթ. զիֆթ. գաթրան։

Կուռք, կռոց. գ. կուռք. չաստուածոց արձան. բութ։

Կուտեմ, եցի. ն. դիզել. ժողվել։

Կուտիմ, տեցայ. չ. դիզուիլ. ժողվուիլ։ [կէօթա։

Կուրծք, կրծից. գ. կուրծք.

Կռապաշտութիւն, գ. կուռք պաշտելը. դիցապաշտութիւն. բութփէրէսթլիք։

Կռիւ, կռուոց. գ. կռիւ. վէճ. կագ. ծեծ. ծեծկուիլը։

Կռուիմ, ուեցայ. չ. կռիւ ընել. կագել. վիճել. կռուըտիլ. ծեծկուիլ։

Կսկծեցուցանեմ, ուցի. ն. կսկիծ, ցաւ պատճառել. խշխշցընել. սիրտն այրել։

Կտուրք, տրոց. գ. ոչխարաց բուրդը խզելը, կտրելը. կտրուած բուրդը։

Կտրեմ, եցի. ն. կտրել. 2. ոչխարները խզել. ոչխարաց բուրդը կտրել։

Կտրող, աց. ա. ոչխարները խզող. բուրդը կտրող։

